

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹՎՅՈՒՆ
ԿՅՎՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՄԱՐՆ



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ՀԱՅՎԱՏԱՆԻ
ՎՈՎՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՅԻՍ 15-16 / 2018 / ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ
2018

**Կազմողներ՝ Նարե Միքայելյան
Մարի Մերտխանեան**

Խմբագիր՝ Հայարվի Խաչատրյան

Ժողովածուն հրատարակվում է «Կրթամշակութային կյանքը առաջին հանրապետության տարիներին» գիտա-ժողովի ծրագրային հանձնախմբի կազմի երաշխավորությամբ՝

Արամ Մինոնյան
Աշոտ Մելքոնյան
Արմեն Զյուտ Մուրաֆյան
Անահիտ Տեր-Մինասյան
Կարեն Խաչատրյան
Մենուա Սողոմոնյան
Միեր Հովհաննիսյան
Գուրգեն Կարդանյան

Կազմկոմիտե՝

Միեր Հովհաննիսյան
Վիգեն Թի.Ֆենքճեան
Նարե Միքայելյան
Հակոբ Մուրադյան
Նարինե Նուշերվանյան
Ռոբերտ Մուքիսյան
Ալեսիս Ափոշեան

Կրթամշակութային կյանքը առաջին հանրապետության տարիներին: Գիտաժողովի նյութեր: 2018թ. մայիս 15-16.- Եր.: Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2018. –276 էջ:

Ժողովածուն ներառում է Համազգային հայ կրթական և մշակութային միության, Երևանի պետական համալսարանի և ՀՀ ՊԱՍ նախաձեռնությամբ 2018թ. մայիս 15-16-ին տեղի ունեցած «Կրթամշակութային կյանքը առաջին հանրապետության տարիներին» գիտա-ժողովի նյութերը: Ժողովածուն օգտակար է և ուսանելի մշակույթի գործիչների, պատմաբանների և նրանց համար, ովքեր հետաքրքրված կլինեն Հայաստանի առաջին հանրապետության կրթամշակութային անցուղարձով:

ՀՏԴ 94(479.25):008:06
ՊՄԴ 63.3(5Հ)+72

ISBN 978-9939-9098-5-1

© ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2018



Հայոց լեզուն տածավելու է վարչապետներում, հասարակական, պետական հաստատություններում, դպրոցների, թատրոնի, գրականության և ամեն տեսակ ասպարեզների, ինչպես նաև ընկերային, օրենսդրական, գիվորական, տեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական և այլ մասնագիտական գրականության մեջ:

Նախ թարգմանական և ապա հայկական գրականություն պիտի զարգանա:

Նիկոլ Աղբալյան

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ժողովածուն ներառում է «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» խորագրով երկօրյա գիտաժողովի նյութերը:

2018թ. մայիսի 15-16-ին տեղի ունեցած գիտաժողովը, որ նախածեռնել էին Երևանի պետական համալսարանը, Համազգային հայ կրթական և մշակութային միությունը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին և Համազգային հայ կրթական և մշակութային միության հիմնադրման 90-ամյակին և նպատակ ուներ համակողմանիորեն, գիտական արդիական չափանիշներով քննելու և արժևորելու Առաջին հանրապետության տարիներին ձևավորված կրթամշակութային կյանքը, դրա առանձնահատկությունները, զարգացման միտումներն ու հեռանկարները:

Ժողովածուում ընդգրկված քսաներկու զեկույցներն անշուշտ, Առաջին հանրապետության տարիների կրթամշակութային կյանքի ողջ պատկերը և դրա համընդգրկուն քննությունը ներկայացնելու հավակնություն չունեն, բայց վստահաբար անդրադառնում են այնպիսի կարևոր ուղղությունների, ինչպիսիք են գիտության և կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմքերը, այդ թվում՝ ձևավորվող հանրակրթական համակարգը, բարձրագույն կրթական օջախների կազմակերպումն ու դրանց կրթական գործունեությունը, գիտության տարբեր ճյուղերի զարգացումն ու հիմնական գիտական նվաճումները, պարբերական մամուլին և հրատարակչական գործին, նոր հայացքով արժևորվում է հանրապետության հոգևոր-մշակութային գործիչների, լուսավորիչ-մանկավարժների ծավալած գործունեությունը:

Եվ հաշվի առնելով, որ Հայաստանի առաջին հանրապետության կրթամշակութային կյանքի համակողմանի քննությունը դեռ նոր-նոր է հասնում ցանկալի գիտական մակարդակի, կարծում ենք, որ ժողովածուն օգտակար կլինի մեր անկախ պետականության այս կարևորագույն շրջանի կրթամշակութային կյանքով զբաղվող բոլոր հետազոտողների համար:

Դրական տեղաշարժեր կատարվեցին մշակութային կյանքում: Հայոց անկախ պետականության վերա-

կանգնումը հայրենիք վերադառնալու նպատակովոր պայմաններ ստեղծեց հայ մտավորականության համար: Հայաստան եկան կամ տեղում գործում էին գիտության ու մշակույթի բազում գործիչներ՝ Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Թորամանյանը, Հովհաննես Աբեյանը, Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Յուրի Ղամբարյանը, Ստեփան Մալխասյանցը և շատ ուրիշներ: Նրանք լծվեցին գիտակրթական գործի բարելավմանը:

Առաջընթաց ապրեց կրթական գործը: Դպրոցական համակարգը դարձավ երկաստիճան՝ տարրական և միջնակարգ: Եթե 1918/19 ուստարում Հայաստանն ուներ 130 տարրական դպրոց՝ 11 հազար աշակերտով, ապա 1919/20 ուստարում՝ 450 դպրոց՝ 41 հազար աշակերտով: Հանրապետությունում գործում էր 20 միջնակարգ դպրոց՝ 5000-ից ավելի սովորողներով: 1920թ. հունվարից տարրական դպրոցներում սահմանվեց անվճար կրթություն:

Հայաստանի ազգային-մշակութային կյանքում նշանակալի իրադարձություն էր պետական համալսարանի հիմնադրումը: 1920թ. հունվարին, համալսարանի հանդիսավոր բացման ժամանակ, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը արտահայտեց հետևյալ միտքը, որ մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը փշրելու տգիտության շղթան: Համալսարանի ռեկտոր նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր Յու. Ղամբարյանը: Հայաստանի համալսարանի ծնունդը խորհրդանշեց հայ ժողովրդի վերածնունդը:

Համազգային արժեք էր պետական պատկերասրահի, ազգային գրադարանի, հնագիտական, ազգագրական և այլ թանգարանների բացումը: Ծրագրվում էր Երևանում հիմնել կոնսերվատորիա, պետական թատրոն, բժշկական, գյուղատնտեսական կրթօջախներ, Ալեքսանդրապոլում՝ գեղարվեստի ուսումնարան, Կարսում՝ ռազմական գիմնազիա և այլն:

Այսպիսով՝ Հայաստանի ներքին տնտեսական և մշակութային կյանքում փոփոխությունները ակնբախ էին: Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրությանը՝ այնուամենայնիվ, կարճ ժամանակում հնարավոր եղավ դնել տնտեսության հիմքերը, հայացնել հայրենիքը, տեղաշարժեր արձանագրել կրթամշակութային ոլորտում, բացել համալսարան և այլն:

Համազգային հայ կրթական և մշակութային միություն
կեդրոնական վարչության արձանագրություն

ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔ

Շուրջ տարի մը առաջ, երբ ԵՊՀ-ի մեր գործակիցներուն առաջարկեցինք այս օրերուն, Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100-ամեակի և Համազգայինի հիմնադրման 90-ամեակի զոյգ առիթներով, մօտաւորապէս ներկայ վերջնական թեմայով, այս գիտաժողովը կազմակերպել, թեթեւ, քաղաքավար, բայց-եւայնպէս նկատելի ժպիտ մը նշմարեցինք մեր խօսակիցներու դէմքին: Ինչ մշակոյթ, ինչ կրթութիւն հանրապետութեան հիմնադրութեան քառասուն ժամանակաշրջանին: Այդ օրերու կեանքի ու մահուան միջեւ տարութեւոտող, հայկական վերջին հողակտորին վրայ մաքառող հայկական խայտաբղէտ հասարակութեան միտքէն ինչ գաղափար կրնար ծնունդ առնել, որպէսզի կարելի ըլլար այսօր, գիտաժողովի մը արժանի մակարդակով, խօսիլ այդ շրջանի կրթական և մշակութային նուաճումներուն մասին: Նիկոլ Աղբալեանի նախարարական ստորագրութիւնը կրող համալսարանի հիմնադրութեան որոշումը եւ իր նախարարութեան մէջ իր գաղափարական մեծատաղանդ հակառակորդը՝ երիտասարդ Եղիշէ Չարենցի ապրուստը ապահովող պաշտօնով մը օժտելը բաւարար էին գիտաժողովի մը օրակարգը լեցնելու եւ անոր կազմակերպումը արդարացնելու չափ:

Այս հարցին մեր պատասխանը դրական եղաւ, մէկէ աւելի պատճառներով, որ սակայն կարելի է ամփոփել մէկ յայտարարութեան մէջ. այս նիւթը բաւարար չափով չէ ուսումնասիրուած տակաւին. չէ պեղուած: Այդ խնդիրը հանգամանօրէն քննելու առիթը պէտք էր ստեղծել:

Արդարեւ, հայրենի հողին վրայ օտարներու կողմէ ճանչցուած պետական անկախ կառոյցի մը գոյառումն ու երկամեայ գոյութիւնը հայ հասարակութենէն ներս

եօթանասունամեայ վիճաբանութիւններու եւ վէճերու առարկայ հանդիսացած է քաղաքական ու հասարակական բեմերուն վրայ: Երբ հայրենիքէն ներս միակուսակցական համակարգի տրամադրութեան տակ գտնուող ամբողջատիրական բոլոր միջոցները լծուած էին անկախ Հայաստանի կերտիչներու վարկաբեկման եւ անոնց քաղաքական հաւատամքի էութեան ամբողջական մերժումի աշխատանքին, կարելի չէր ակնկալել, որ խօսուի անկախութեան ժամանակաշրջանի մշակոյթին մասին: Որովհետեւ մշակոյթի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ փոփոխութեան, դրական հոլովոյթի, յառաջդիմութեան մասին: Իսկ, կ'երեւի կը մտածուէր, «քաղքենիութեան եւ արեւմտեան կայսերապաշտութեան» հնազանդ կամակատարները ինչպէս կրնային այդպիսի դրական յատկանիշներու տէր եղած ըլլալ:

Չարմանալի կերպով մշակոյթի մասին արտերկրի իրենց աշխատութիւններուն մէջ շատ չէն խօսած նաեւ առաջին հանրապետութեան տարագրեալ ղեկավարները: Ասոնք իրենց հրապարակախօսական ու պատմագրական ճիգը կեդրոնացուցին գաղափարական գետնի վրայ հակազդելու իրենց դէմ կատարուած տեղի ու անտեղի ամբաստանութիւններուն եւ մեղադրանքներուն. նաեւ իբրեւ հիմնական դերակատարներ՝ ներկայացնելու հանրապետութեան ստեղծման շրջանը, ինչպէս նաեւ՝ մինչեւ խորհրդայնացում անոր հոլովոյթը: Կասկածէ վեր է, որ անբարենպաստ պայմաններու մէջ կատարուած այս աշխատանքը ծառայեց հայութեան մտքին մէջ վառ պահելու անկախ պետականութեան վերստեղծման գաղափարը: Տեղ-տեղ, սակայն, յուշագրական գրականութեան մէջ կարելի է նոյնպէս հանդիպիլ մշակութային սրամիտ մանրամասնութիւններու: Այսպէս, Սիմոն Վրացեան կը վկայէ, որ Լեւոն Շանթ Հայաստանի խորհրդայնացման թոհօքոհին մէջ աւարտած է իր «Շղթայուածը» թատրերգութեան աշխատանքները:

Վայրկեան մը մտաբերելով Հայաստանի Ա. հանրապետութեան հետ առնչուող անունները՝ պիտի տեսնենք, որ այդտեղ դերակատարներու մէկ կարեւոր մասը միաժամանակ հայ մտաւորականութեան փայլուն ներկայացուցիչներէն են: Եթէ Հայաստանի հողին վրայ մշակութային մարզէն ներս տարուած աշխատանքնե-

րու մասին երկար ատեն անդրադարձ չէ եղած, ապա, միս կողմէ, ակնբախ է, որ Յեղասպանության ընթացքին դէպի արտասահման տեղահան եղած հայկական զանգուածներու կազմակերպման եւ անոնց կրթական ու մշակութային կեանքի ղեկավարման մէջ հիմնական աշխատանք տարած է Հայաստանի խորհրդայնացման պատճառով փախստական դարձած մտաւորականութիւնը: Համազգայինը, որուն 90-ամեակը կը նշենք այս տարի, այդ մարդոց մտայղացման արգասիքն է. Հայաստանի Հանրապետության իր ժամանակի խորհրդարանի նախագահ Լեւոն Շանթ, կրթական նախարար Նիկոլ Աղբալեան ու վարչապետ Համօ Օհանջանեան Համազգայինի առաջնակարգ հիմնադիրներէն հանդիսացան:

Ահա անելի քան քառորդ դար է, որ կարելիութիւնը կայ ազատօրէն ու մանրամասնօրէն ուսումնասիրելու այդ շրջանի հայկական պետութեան կեանքի բոլոր ոլորտները: Անկախ հանրապետութեան 100-ամեակին առիթով ցայսօր տեղի ունեցող գիտաժողովներու թիւն ու անոնց մասնակից գիտնականներու բազմութիւնը փաստ է, որ այդ շրջանի պատմութեան վերաբերեալ հետաքրքրութիւնը մեծ է: Նոյնը կը փաստէ նաեւ այսօր սկսող՝ հանրապետութեան կրթամշակութային կեանքը շօշափող գիտաժողովին ներկայացած զեկոյցներուն թիւն ու անոնց վերնագիրներուն զանազանութիւնը:

Այս բոլորով հանդերձ, կարելի չէ յաակնիլ, որ ատենին Հայաստանի պետականութեան՝ պատմութեան մութ վիհերէն տեսանելի ու շօշափելի մակերես բարձրացած ըլլալու կարելութիւնը լիովին գիտակցուած է հայկական հաւաքականութեան կողմէ: Այլապէս, ինչպէ՞ս բացատրել քայլերգ-օրհներգի մասին մերթ ընդ մերթ բարձրացող եւ իսկոյն մարող հարցի պարագան. կարծես թէ օրհներգի գեղարուեստական արժէքը անելի կարելի ըլլար, քան՝ անոր մարմնաւորած խորհուրդը: Այս իմաստով, լուրջ ընելիք կայ ժողովրդային մակարդակի վրայ, բայց մանաւանդ՝ կրթական ոլորտէն ներս: Հայաստանի Ա. հանրապետութեան իրական պատմութիւնը՝ իր հերոսական դրուագներով ու գաղափարական հոյակապ ու օրինակելի տիպարներով, աստիճանաբար պէտք է վերածուի իւրաքանչիւր հայ

պատանիի եւ երիտասարդի գիտակցական եւ զգացական աշխարհներու՝ ազգային կազմաւորման նպաստող գլխաւոր առանցքներէն մէկը: Համահայկական կրթական նուազագոյն ծրագրի մը որդեգրումը պիտի նպաստէր անկասկած ճշմարտութեան վրայ հիմնուած մէկ տեսակի հայրենասիրութեան ընդհանրացման:

Անհրաժեշտ է, որ պատմութենէն անցնելով մերօրեայ իրականութեան՝ այս մշակոյթը հետետողականօրէն ժողովրդականանայ: Մէկէ անելի ազգային հիմնական հայեցակարգերու գոյակցութիւնը, որոշ պայմաններու մէջ, վտանգաւոր կրնայ ըլլալ հասարակութեան մը համար: Ատենն է կազմելու համահայկական նուազագոյն հայագիտական կրթական ծրագիր մը՝ բազմացնել կարենալու համար հայութեան զանազան ու այլազան մասնիկներուն մէջ հայկական ինքնութիւնը յատկանշող տարրերու քանակը: Այս ձեւով ժամանակի ընթացքին, համբերութեամբ, աստիճանաբար կը ստեղծուի համահայկական քաղաքացիական հասարակութիւնը:

Երեւան, 15 Մայիս 2018

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Դարերի ընթացքում հայ ժողովուրդն աշխարհին սովել է ավելին, քան կարող է իրեն թույլ տալ փոքր ժողովուրդը: Ժողովուրդ, որը մշտապես մաքառել է իր ազատության, անկախության և պետականության ստեղծման ու պահպանման համար: Չնայած Առաջին հանրապետության գոյության ահավոր պայմաններին, այնուամենայնիվ, մեր հասարակական, քաղաքական և մշակութային գործիչները երբեք վայր չդրեցին իրենց գրիչը, երաժշտական գործիքը և կարողացան մեծ հետք թողնել հայկական մշակույթի պատմության էջերում: Այսօր կարող ենք հպարտանալ այդպիսի մարդկանց գործունեությամբ, փաստել, որ նրանք դժվարին պայմաններում ստեղծեցին ԵՊՀ-ն, կրթական համակարգը՝ հիմք դնելով հայկական ծաղկուն մշակույթի սկզբնավորմանը, որը հետագայում հպարտանալու բազմաթիվ առիթներ պարգևեց մեզ և այսօր էլ շարունակում է պարգևել:

Հուսով եմ, որ այս գիտաժողովը կդառնա այն մի շարք գիտաժողովներից մեկը, որոնցով հարուստ է լինելու մայիս ամիսը, և որոնք նվիրված են լինելու Հաստատանի առաջին հանրապետության 100-ամյակին ու մեր պետականությանը:

ԳԻՏԱՎՈՂՈՎԻ
ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

**ԿՐԹԱԿԱՆ ԵՒ
ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ 1918-1920 ԹԹ.
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Առաջին հանրապետության շրջանը մեր ժողովրդի համար ամենից բարդ ու հակասական, բայց եւ միաժամանակ՝ ամենից նուիրական ծեղրքերումներից մէկն էր նշանաւորում: Վերջապէս, վեցդարեայ պետականազուրկ մեր հաւաքականութիւնը իր փոքրիկ հողակտորի վրայ վերականգնում, վերածնունդ էր իր մարդկային ու ազգային իրաւունքները, միաժամանակ փորձում տէրը լինել իր անժամանցելի Դատի՝ պետականաշինութեան դժուարին աշխատանքի կողքին արդարութեան համար բախելով նաեւ այլոց դռները: Արեւմտահայ հատուածի համար նոյնպէս շրջանը, մեղմ ասած, հեշտերից չէր: Չմոռանանք, որ չնայած այդ տարիները համընկան Չինադարի հետ, բայց որբահաւաքի, ողնաշարը շտկելու ճիգերով յատկանշուեցին: Այս շրջանում էր, որ հայոց նորաթուփ պետութիւնը Ազգային Պատուիրակութեան հետ փորձում էր ելոյթաներում «գլուխ բերել» Հայկական հարցի խնդիրը, նրա հետ եւ նրա կողքին արեւմտահայ այն գրողներն ու մտաւորականները, ովքեր հանգրուանել էին Եւրոպայում եւ մաս էին կազմում Պօղոս Նուպարի ղեկավարած Ազգային Պատուիրակութեան, ինչպէս Արշակ Չօպանեանը, Վահան Թէքեանը եւ ուրիշներ, եւ որոնք Առաջին Հանրապետութեան հետ ոչ միագիծ յարաբերութիւնների մթնոլորտում, բայց փորձում էին միասնական ուժերով պաշտպան կանգնել հայութեան դատին:

Յօդուածը նուիրուած է Առաջին հանրապետութեան կրթական եւ մշակութային կեանքը երեւան հանող ներհակ հարցադրումներին՝ դիտուած հայ գրողների նամակագրութեան մէջ, որտեղ, պայմանաւորուած նաեւ ժանրային առանձնայատկութիւններով եւ նամակների՝ յաճախ խիստ ներանձնական բնոյթով, երեւոյթների գնահատութիւններն ու մտահոգութիւնները երեւան են գալիս առաւել անմիջական ու «առանց փողկապների», բայց առաւել պարզութեամբ ու ճշմարտութեանը մօտեցող:

Ուշագրաւ է այն փաստը, որ չնայած քաղաքական դժուարին ժամանակներին՝ հենց այս շրջանում է առաւել արտայայտուած եղել մշակոյթի եւ պետականութեան միասնական ճանաչողութեան գերխնդիրը, թէկուզ եթէ յիշատակելու լինենք Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի բացառիկ դերակատարութիւնները:

Եթէ անկեղծ լինենք, կարող ենք հաստատել, որ Առաջին հանրապետութիւնը իր դիմագծով հենց մշակութային էր՝ ինչ-որ տեղ մեր մտաւորականութեան՝ 20-րդ դարասկզբից հրապարակ նետած մշակութային կամ Հոգեւոր Հայաստան հասկացութիւնների իւրօրինակ կերպաւորումը: Պատահական չէ, որ Յովհաննէս Թումանեանը, ելնելով այդ շրջանում մտաւորականութեան ոչ այնքան մխիթարական դրութիւնից, հենց այս էր յիշեցնում Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Արուեստի նախարար Նիկոլ Աղբալեանին. «...Խնդրում եմ արտակարգ կերպով օգնութեան հասնելք մեր էդ թանկագին ուժերին (նկատի ունի «գրական մարդկանց» - Բ.Ա.), որոնք կազմում են հոգեւոր Հայաստանը»¹:

Այդպէս պետականութեան ծննդաբանութիւնը բանաստեղծական երազի իրագործում էր համարում հենց այդ պետականութեան դիրքերում կանգնած Լեւոն Շանթը, երբ կուսակցական-պետական գործիչ Արտաւազ Հանըմեանին Լոզանից ուղղուած 1918-ի Յունիս 30 թուագրուած նամակում գրում էր. «Վերջապէս ծնաւ մեր բանաստեղծներու այնչափ երգած «Մանուկն Հայաստանը». ծնաւ արեան ծովերի մէջ, բայց մարդկային ճակատագիրն է այս. ինչպէս ամէն մարդ, այնպէս ալ ամէն ժողովուրդ իր անհատականութիւնը կը ստանայ ծննդեան ցաւերով եւ արեան միջոցով: Ես կը հաւատամ մեր նորածինի մեծ ապագային»²:

Ռոմանտիկ Լ. Շանթն այստեղ այժը քթթում էր դեռ 19-րդ դարի առաջին կէսին այդ երագանքով ապրող, հայրենասիրական շնչով առանձնացած մեր միառոմանտիկ բանաստեղծին՝ Ռափայէլ Պատկանեանին.

*Կեցցէ՛ շար օրեր մանուկ – Հայաստան
Նա՛ որ դեռ միայն մեր սրբոյի խորքում
Ունի իւր հիմքը, ո՛չ փուն, ո՛չ կայան
Չունի փակաւին բուն Հայաստանում»³:*

Նոյնքան բանաստեղծական է Յովհաննէս Թումանեանի բնութագրումը: Ի պատասխան իր ծննդեան 50 ամեակի առթիւ կառավարութեան անունից ուղարկուած հեռագրի՝ Ալեքսանդր Խատիսեանին գրուած նամակը մի կողմից ցոյց է տալիս Յովհաննէս Թու-

մանեան արուեստագէտի արժէքի ընկալումը պետական շրջանակներում, միա կողմից բացայայտում բանաստեղծի ու հայրենիքի յարաբերութիւնը. «Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուք:

Էս բոլոր զգացումները ես բացատրում եմ ոչ թէ իմ գրական գործերի արժէքով, այլ ազգային ոգու անպարտելի հզօրութեամբ մեր ժողովրդի...

Էս անգամ էլ, առասպելական ֆենիքսի նման, [Հայաստանը] պիտի յառնի իր օճախների մոխիրներից նոր կեանքով ու անելի տաղանդաւոր բանաստեղծների զուարթ երգերով: Եւ եթէ բանաստեղծի աղօթք էք ուզում դուք ինձանից (իսկ գրութեան մէջ Կառավարութիւնը հայ գրականութեան Ջարդից բանաստեղծի աղօթք էր ակնկալում – Ք.Ա.), ապա ես միայն մի աղօթք ունեմ նրա համար, որ նա, հայ ժողովուրդը, կենդանի մնայ ֆիզիքապէս, մնացածը ձեռք կը բերի ինքը. ինքը, որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրաանդակին, երկնից էնքան մօտիկ, իր խոհուն ճակատը դէմ տուած աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դէպի իր մեծ ու լուսաւոր ապագան»⁴:

Նմանօրինակ զգացումները Յովհաննէս Թումանեանի աշխարհում պարբերաբար ծաւալում են ժողովրդի համար բախտորոշ ժամանակներում եւ ուղղակի դարձնում բանաստեղծութեան ու նամակագրութեան միջտեքստային կապերը: Լաւագոյն օրինակը մեզ տալիս են նշուած նամակի ու 1915-ին գրուած «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան զուգադրումները, երբ վերջինիս մէջ յայտարարում էր.

*Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարարի սուրբ լանջին,
Կենսաժըպիտի իր շողերը պիտի ժրպտան առաջին,
Ու պօէփներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անէծքով,
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով»⁵:*

Եթէ եղեռնի ահասարսուտ օրերին բանաստեղծը աշխատում էր արուեստագէտներին զերծ պահել շուրթերն «անէծքով պղծելու» գայթակղութիւնից, ապա այժմ՝ ազատ հայրենիքի առկայութեան պայմաններում, արդէն իր անունից յիշուաւ կարող է աղօթք մը մնջալ:

Ի դէպ, գրողական հրաշալի երկխօսութիւն է պարզում «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան հետ այդ շրջանում Աւետիս Ահարոնեանի «Հայրենիքիս համար» յուշագրութիւն-ակնարկի (Բոս-

տոն, 1920)՝ նամակ յիշեցնող «Հայրենիքը իմ, ներիր ինձ» հատուածը, որտեղ խոշորագոյն պետական գործիչը աչք է քթաւում ամենայն հայոց բանաստեղծին ու սրտայոյզ արձագանգում. «Հաւատման, Հայրենիք, վիրաւոր ու արհիւնաքամ, դու դարձեալ պիտի ապրիս, վասն զի անապատների բոլոր ոռնացող խուժաններն իսկ անզօր են սպաննել Լոյսը, որ մի բարի աստուած, մի գթօտ աստուած մի օր քո կարկառուն բազուկների մէջ դրեց, ո՛վ դու Յոյսի Հայրենիք, Լոյսի Հա- յրենիք...»⁶:

Վերադառնալով Թումանեանին՝ նշենք, որ բուռն է նաեւ ամենայն հայոց բանաստեղծի արձագանգը Ալեքսանդրապոլի Հայկական Համալսարանի բացման առթիւ իրեն յղուած հրաւերին ի պատասխան, որն անփոփում է ժողովրդի ու պետականութեան, կրթութեան դերի մասին նրա ամբողջական պատկերացումը. «Թէ՛ Հայ Գրողների Ընկերութիւնը, եւ թէ՛ ես անձամբ ստացանք էն ամենաթանկ հրաւերը, որ կարող էինք երագել: ...Սրտագին շնորհաւորում եմ հայկական առաջին համալսարանի բացումը ազատ Հայաստանում: Մեր ժողովրդին բռնակալներից ազատելուց յետոյ պիտի ազատել նրա միտքն ու հոգին եւ հաղորդակից անել լուսաւոր մարդկութեան ու տիեզերքի մեծ կեանքին: Մեր դարաւոր մաքառումներով մենք դրան ենք ձգտել ամբողջ ցեղով...: Հայ գրողների կեանքն ու բախտը անխաբիւսօրէն կապուած են հայոց համալսարանի կեանքի ու բախտի հետ»⁷:

Եթէ վիճակագրօրէն նայելու լինենք Յովհ. Թումանեանի եւ առ հասարակ հայ գրողների այդ շրջանի նամակների հասցէատէրերին, ապա դրանք հիմնականում ուղղուած են Առաջին հանրապետութեան կառավարութեանը, առաջին այրերին՝ Ալեքսանդր Խատիսեան, Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջանեան եւ ուրիշներ: Այդ բոլոր նամակներում, այդ թում եւ սեփական ընտանիքներին ուղղուած, կարմիր թելի պէս անցնողը հենց ժողովրդի ու պետութեան, արուեստագէտի ու երկրի յարաբերութեան հարցադրումներն են:

Այս պայմաններում եթէ փորձենք խօսել զուտ գեղարուեստական արտադրանքի մասին, ապա կարող ենք նկատել, որ առանձնապէս շատ չեն նուաճումները. պիտի արձանագրել, որ այս շրջանում լոյս է տեսել, եթէ կարելի է այդպէս կոչել, «ծրագրային» գրականութիւն, ինչպէս օրինակ Ջապէլ Եսայեանի⁸ թարգմանութիւնները («La situation des arméniens de Turquie exposée par des documents» / Հանրի Բարբի հետ), Արամ Անտոնեանի «Այն սեւ օրերուն» գիրքը (Բոստոն, 1919), հայկական ջարդերի մասին մէկ այլ գործի ֆրանսերէն թարգմանութիւնը («Documents officiels concernant les massacres arméniens; reproductation photographique d'un grand

nombre de documents”, Paris, 1920), Սմբատ Բիւրատի «Արիւնի ծորը» Կիլիկեան կեանքից վերցուած վիպակը (Բոստոն, 1919), Միքայէլ Շամտանճեանի «Հայ մտքին հարկը եղեռնին» (աքսորականի մտածումներ եւ զգացողութիւններ) գիրքը (Պոլիս, 1919), պոլսահայ մամուլում Երուանդ Օտեանի՝ մինչեւ Դէր-Չօր կատարած ահասարուտ ճամբորդութիւնների մասին «Թիւ 17 Խաֆիէն» վէպը, որ առանձին գրքով լոյս տեսաւ միայն 1937-ին, Պէլլութում: Դրանք հիմնականում պատմում էին Թուրքիայում ժողովրդի կրած տառապանքների մասին եւ անլի շատ տեղեկատուական բնոյթ ունէին: Ղարիւն գեղարուեստական գրականութիւն այդ շրջանում գրեթէ չի տպագրուել՝ բացառութեամբ Աւետիք Իսահակեանի «Հայրենի աղբիւրից» բանաստեղծութիւնների ժողովածուի (Բոստոն, 1920), Եղիշէ Չարենցի «Սօմա» (Թիֆլիս, 1918) եւ «Ամբոխները խելագարուած» պօէմների (Թիֆլիս, 1919) եւ մի քանի այլ գործերի:

Ի դէպ, այդ ժամանակ Պոլսում հանգրուանած Երուանդ Օտեանը իր հերթին «Ժամանակ»ի եւ «Վերջին լուր»ի համար միայն քաղաքական լուրեր հասցնող թղթակիցների կարիքն ունէր, ինչի շուրջ ակնկալում էր Արշակ Չօպանեանի, Աւետիս Ահարոնեանի, Վահան Թէքէեանի օգնութիւնը. այդ են վկայում Ա. Չօպանեանին նրա յղած նամակները⁹:

Եւ այս պայմաններում, ի հարկէ, գրողների համար դժուար էր գրական աշխատանքով զբաղուելը: Աւետիք Իսահակեանը, օրինակ, Համօ Օհանջանեանին 1919-ի Մայիսի 30-ին յղած նամակում գրում էր. «Վէպս եմ գրում զօր ու գիշեր (խօսքը «Ուստա Կարօ»-ի մասին է – Ք. Ա.), որ պատրաստ լինի մինչեւ տուն գնալս»¹⁰: Ի հարկէ, վէպը կիսատ մնաց, հեղինակի իսկ նկատառումով. «Վերջերս ընդհատեցի, եւ գրում եմ հիմա Սասունցի Դափի որդու՝ Միտերի պօէման, իմ վարիանտի Միտըրը, որը բոլշեւիկ է»¹¹, իսկ բանաստեղծի տունդարձը տեղի ունեցաւ շատ անելի ուշ: Մէկ այլ Բառնաբաս Պիլեգիքեանին 1919-ի Յունիսի 7-ին ուղղուած նամակում, շարունակելով վերադարձի յոյսը փայփայել, ուրախութեամբ յայտնում էր, որ Փարիզի փողոցներից մէկը կոչուել է Հայաստանի անունով, եւ անելացնում. «Տա Աստուած, շուտով արժանանանք իրար ազատ հայրենիքում տեսնելու եւ հիւր լինել Ձեր վանքում՝ Շիրակի կամ Տարօնի նուիրական տաճարներից մէկում, ուր մեծ Աբբահօր՝ Մխիթարի գործը շարունակենք մեր տանը»¹²:

Սակայն այնուամենայնիւ գրականութեամբ զբաղուել չի հասցնում, ինչպէս վկայում է Սիմոն Յակոբեանին ժնեւից գրուած նամակում. «Մի երկու օր է՝ վերադարձել եմ Գերմանիայից: Շատ տպաւորութիւններ ունեմ ասելու, բայց հաաս չկայ գրելու: Հայոց հարցի

լուծման այս սրտամաշ ձգձգտումը մաշում է ամէն եռանդ ու աշխոյժ. ձեռքս ոչ մի բանի տաք չէ, նոյնիսկ իմ սիրած նիւթերի (գրական) վրայ»¹³:

Այս առումով հետաքրքրական է Արշակ Չօպանեան-Աւետիք Իսահակեան երկխօսութիւնը, որտեղ երեւան են գալիս Չօպանեանի՝ Բրեստ Լիտովսկի պայմանագրի հետ կապուած յուսահատական տրամադրութիւնները եւ միաժամանակ գրողների եւ արուեստագէտների պատասխանատուութիւնը երեւան բերող տրամադրութիւնները. «Կ'ըմբռնեմ, որ այդ տրամադրութեանց մէջ Ձեզ անկարող զգաք բան մը գրելու. երբ կարենաք, անշուշտ չէք մոռնար «Վերածնունդ»ը: Մի վիատիք, սակայն: Մեր ազգը եւ մեր cultur-ը չեն կորչիր: Անոնք նոյնիսկ հակառակ բոլոր աղէտներուն՝ մեծ ապագայ կրնան ունենալ՝ եթէ մենք՝ արտասահմանի հայերս կորովով եւ թաքթով գործենք»¹⁴:

Նոյն անբաւարարութիւնն էր ապրում նաեւ ամենայն հայոց բանաստեղծը՝ Դաիթ Անանունին 1919-ի Յունուարին գրած նամակում, երբ գրական գործով զբաղուելը անհնարին էր թւում, ինչի մասին հումորախառն, բայց խորքի մէջ ցաւով յայտնում էր. «Ուր մնաց հալա դեռ ճամփիցն էլ դուրս գաս ու դէս-դէն ջիրիդ խաղաս»¹⁵: Տրամադրութիւնը շարունակում է նաեւ Հանրապետութեան առաջին տարեդարձի օրերին, երբ իբրեւ գրող, ճիշդ է, զգում էր իր արածի անբաւարարութիւնը. «Ոչ միայն ժամանակս է անց կենում, այլեւ հենց ինքս էլ եմ անց կենում», բայց միաժամանակ մխիթարական, «արդարացուցիչ» հանգամանքներ է բերում. «Բայց ինձ ուժեղ կերպով էսպէս է դրդում ու տրամադրում մեր նոր կեանքը, նոր Հայաստանը: Ամէն մարդ այժմ պէտք է իր տեղը ամուր կանգնի եւ անլի եռանդով անի իր անելիք գործը: Եւ մենք շատ բան պէտք է անենք ու կարող ենք անել: Ես զարմանալի մեծ հաւատ ունեմ ու մեծ կարծիք մեր ցեղի հոգեւոր ու բարոյական կարողութեան (պոտենցիա) վրայ»¹⁶:

Ստեղծագործական առանձնակի լիցքեր չի գտնում 1918-ի Հոկտեմբերին Հայոց Ազգային Պատուիրակութեան մէջ «յոյժ պատուաբեր» պաշտօն զբաղեցնող՝ եգիպտահայոց ներկայակացուցիչ ընտրուած Վահան Թէքէեանը, երբ Արշակ Չօպանեանին Երուսաղէմից 1918 թ. Յուլիս 20-ին ուղղուած նամակում «արդարանում է», թէ՛ «Կ'ուզէի ոտանաւոր մըն ալ ես դրկել «Վերածնունդ»ին համար, բայց թուղթերս աչքէ անցուցի եւ բան մը չգտայ, որ այսօրուան յարմարէր (այսօրուան-ը հեղինակի ընդգծումն է – Ք.Ա.): Պէտք է թողուլ ատոնք հատորիկի մը, որ իբրեւ վկայարան մը մեր այս քանի մը տարուան մէջ կրած յուզումներուն, ժամանակագրական արժէք

մը ունենայ թերեւս»¹⁷: Խօսքը 1919-ին Փարիզում լոյս տեսած «Կէս-գիշերէն մինչեւ Արշալոյս» խորհրդանշական ժողովածուի մասին է:

Ափսոս, որ այդ Արշալոյսը տեական չեղաւ, եւ այդ նոյն արուեստագէտները արձանագրեցին նաեւ Առաջին հանրապետութեան անկումը, ինչպէս Աւետիք Իսահակեանը. «Ուղղակի, անհայրենիք դարձանք, եւ Հայաստանն աւելի երեւակայական դարձաւ, քան երբեւէ»¹⁸, ինչպէս Լեւոն Շանթը, որ այդ ցաւալի անկումը կերպատրեց մի փոքր աւելի ուշ՝ արդէն բուն գրականութեան մէջ՝ «Ինկած բերդի իշխանուհին» դրամայով (1921):

Բայց անկախ այդ անկումից, միանշանակ է, որ Առաջին հանրապետութիւնը նոր դարագլուխ էր հայոց պետականութեան պատմութեան մէջ, որը հրացոյքի էր նման, եւ որի տեսլականը մեզ բոլորիս պիտի բերէր կանգնեցնէր Երրորդ Հանրապետութեան դարպասների առջեւ, ինչը թոյլ է տալիս ասելու, որ մենք բոլորս Առաջին հանրապետութեան շարունակականութիւնն ենք:

Բանալի բառեր – *Առաջին հանրապետութիւն, կրթական եւ մշակութային կեանք, նամակագրութիւն, արեւելահայ եւ արեւմտահայ գրողներ, գրական հարցադրումներ, Մշակութային Հայաստան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան, Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան, Չապէլ Եսայեան:*

SUMMARY

Knarik Abrahamyan

PhD

The Questions of Education and Culture in the Correspondences of Armenian Writers during 1918-1920

The article is dedicated to questions of education and culture in The First Armenian Republic through correspondences of Armenian writers. We point that, in spite of political difficulties typical for the period, cognition of cultural unity and statehood were highly emphasized. We can see that through phenomenal roles Levon Shant and Nikol Aghbalyan took in the creation of our state. In fact, we can establish that The First Republic was cultural in its nature: we can say that it reflected the concepts of “Cultural Armenia” or “Spiritual Armenia” brought over by the prominent thinkers of the first half of the 20th century.

In this article we have tried to show the role our cultural and literary figures had on the perspective of development in the period of independent statehood establishment. The choice of correspondence can also be quite fascinating, because in letters, conditioned by their genre and impersonal nature, the opinions on certain phenomena in the society, as well as particular concerns are expressed in a more direct and informal way, at the same time clearly and close to reality.

Through creating the educational and cultural map, the author of the article tried to keep the “counterweight” of issues that Western and Eastern Armenian literary persons brought over in their letters (Levon Shant, Hovhannes Tumanyan, Nikol Aghbalyan, Zabelle Esayan and others).

Keywords: *The First Republic, educational and cultural life, correspondence, Western and Eastern Armenian writers, literary questions, Cultural Armenia, Levon Shant, Nikol Aghbalyan, Hovhannes Tumanyan, Avetik Isahakyan, Zabelle Esayan.*

1. Յ. Թումանյան, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 10 / Նամակներ, Եր., 1999, էջ 344-347:
2. Լ. Շանթ, Երկերի ժողովածու ինը հապորով, հ. 9 / Նամակներ եւ բացիկներ, Եր., 2017, էջ 278:
3. Ռ. Պապկանյան, Երկեր, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 84 (լրեն «Հայ պատանին երգում է» բանաստեղծությունը):
4. Յ. Թումանյան, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 10, էջ 659-660:
5. Նոյնը, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 1 / բանաստեղծություններ, Եր., ԳԱ հրատ., 1988, էջ 270:
6. Ա. Ահարոնյան, Երկերի ժողովածու, հ. եթաներորդ, Վենետիկ-Ս. Ղազար, 1948, էջ 366:
7. Յ. Թումանյան, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 10 էջ 344-345:
8. Չապել Եսայեանը՝ աշխարհի հինգ ամենանվախ կանանցից մեկը, Կիլիկիայում փազնապալի օրերին, զբաղուած էր որբահաւաքման եւ նրանց համար աւելի ապահով վայրերում հանգրուաններ որոնելու մաշող աշխատանքով՝ ձգտելով փրկել հայ ժողովրդի այդ փոքրիկ «մնացորդաց»ը: Այդ մասին կարողում ենք նրա՝ 1920 թ. Փետրուարի 24-ին Ալեքսադրիայից Ազգային Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարին ուղղուած նամակում. «Վաղը կը մեկնիմ «Սֆինքս» շոգենատվ դէպի Կիլիկիա. ներկայ պայմաններուն մէջ անշուշտ անհնար է դպրոցներու գործով զբաղիլ. բայց մրածեցի, որ այստամենայնի պարտաւոր եմ չի յետաձգել ճամբորդութիւնս...» (2. Եսայեան, Նամակներ, Եր., Երեւանի Համալսարանի հրատ., 1977, էջ 154): Ուշագրաւ է այն, որ այս պայմաններում նա իւրօրինակ «որբութեան» էր դատապարտել սեփական զաւակներին, որոնց համար փորձում էր նաեւ փոխար մօր օրինակ ծառայել. ահա Սօֆի եւ Հրանդ Եսայեաններին Մերփինից 1920-ի Մարտի 27-ից նրա ուղղած նամակը. «Եթէ այս վրտագաւոր օրերին ես հեռանայի, մարդիկ պիտի կարծէին, թէ ինչ-որ պարտականով փախուար եմ րտել: Դուք, անշուշտ, պիտի չուզենայիք, որ նման կասկածի թէկուզ նշոյն ունենային իմ նկատմամբ» (Նոյն տեղում, էջ 157):

Այս հոգեբանական վիճակը, ընդհանրական անկումային տրամադրութիւնը բնութագրում է այդ շրջանի գրեթէ բոլոր մտաւորականներին՝ հայրենիքում կամ նրա սահմաններից շար ու շար

հեռու, ինչպէս օրինակ՝ Աւետիք Իսահակեանի պարագայում: Անգամ անձնական, ընտանեկան նամակագրութեան մէջ առաջին հորիզոնականում ազգային ընդհանուր մտահոգութիւններն են. այնպիսի մի ցաւալի իրողութիւն, ինչպէս Թումանյանի որդու կորուարն էր, դարձեալ նոյն այդ օրերին նրան ետ չի պահում ազգային տանջալի մտահոգութիւններից, ինչի մասին կարողում ենք 1918-ի Դեկտեմբերին Անդրանիկին յղուած նամակում (Յ. Թումանյան, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 10, էջ 298-299):

9. Ե. Օրեան, Նամակներ, Եր., ԳԱԹ հրատ., 1999, էջ 244-245:
10. «Աւետիք Իսահակեանի նամակները», Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 78:
11. Նոյն տեղում, էջ 86 (լրեն Սիմոն Յակոբեանին ուղղուած նամակը):
12. Նոյն տեղում, էջ 81:
13. Նոյն տեղում, էջ 82:
14. Ա. Չոպանեան, Նամականի, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 135:
15. Յ. Թումանյան, Երկերի լիակազար ժողովածու փասը հապորով, հ. 10, էջ 343:
16. Նոյն տեղում, էջ 350:
17. Վ. Թէքէեան, Նամականի / կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելոս, հրատ. Թէքէեան Մշակութային Միութեան, 1983, էջ 200:
18. «Աւետիք Իսահակեանի նամակները», էջ 94:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը լի է հաջողությունների ու վերելքների դրվագներով, անկումներին ու կոտորածներին հաջորդող հաղթական ձեռքբերումներով: Այդպիսի մի հաղթանակ, ձեռքբերում էր նաև ավելի քան հինգ հարյուրամյակ անց հայոց պետականության՝ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը: Այսօր, արդեն հարյուր տարվա հեռավորությունից, երբ ուսումնասիրում ենք պատմական այն պայմանները, որոնցում իրենց թե՛ ֆիզիկական գոյությունը, թե՛ ազգային ինքնությունը չկորցնելու համար ստիպված են եղել մաքառելու մեր հայրենակիցները, հասկանալի է դառնում, թե մարդկային քանի բյուր կյանքերի գնով, ինչ մեծ երազանքների ու նպատակների, հոգեմտավոր ճիգերի շնորհիվ է ձեռք բերվել այնքան բաղձալի ազատությունը, ստեղծվել Հայաստանի առաջին հանրապետությունը: Իսկ Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործում, ինչպես մեր ժողովրդի պատմության գրեթե ողջ ընթացքում (սկսած 4-րդ դարից), իր ուրույն տեղն ու դերն է ունեցել հայոց եկեղեցին՝ ստանձնելով «էական գործառույթներ հանրային կյանքի կազմակերպման, կարգավորման, կառավարման գործում, մշակույթի, կրթության, բարոյական դաստիարակության ասպարեզներում»¹: Քանի որ 5-րդ դարից ի վեր վանքերին ու եկեղեցիներին կից առաջին դպրոցների հիմնադրմամբ, թարգմանական ու ինքնուրույն գրականության ստեղծմամբ հայոց եկեղեցին եղել և հետագա դարերում դարձել է գրի, դպրության ու գիտության տարածման ջատագով, փորձենք առանձնացնել Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Հայոց եկեղեցու կրթամշակութային գործունեության որոշ տեսանկյուններ:

Այսպես, անկախության հռչակումը Հայոց եկեղեցու համար բացեց թե՛ քաղաքական, թե՛ մշակութային-կրթական ձեռնարկնե-

րում հայրենի իշխանությունների հետ համագործակցելու նոր հեռանկարներ, հոգևոր հաստատությունների աշխատանքն սկզբունքորեն վերակառուցելու նոր հնարավորություններ: Իսկ Գևորգ Ե Կաթողիկոսը (1847-1930թթ.) ուշադիր էր ու հոգատար կրթության գործի նկատմամբ առհասարակ: Նրան հավասարապես հուզում էին թե՛ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերաբացման աշխատանքները, թե՛ հայոց դպրոցը ոտքի հանելու, թե՛ ժամանակի պահանջներին համահունչ եկեղեցի և հոգևորականներ ունենալու խնդիրները:

Սակայն, պատմական հանգամանքների բերումով, քաղաքական ու ռազմական անբարենպաստ պայմանների հետևանքով Գևորգ Ե կաթողիկոսը 1917թ. դեկտեմբերի 21-ին առժամանակ ստիպված դադարեցնում է պարապմունքները և ճեմարանի շենքը տրամադրում զինվորական հրամանատարությանը: Հայաստանի անկախ հանրապետության երկուսուկես տարիների ընթացքում կաթողիկոսը ճեմարանը վերաբացելու նպատակով անընդհատ բանակցություններ է վարում Հանրային կրթության նախարարության հետ: Նման բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալու անհրաժեշտությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ «հայ մտքի, քաղաքակրթության և ստեղծագործության մի շատ կարևոր բաժինը կրօնական բնույթ ունի, կամ կրօնական-հոգևոր շարժումների հետ է կապուած, որ լիովին գիտական մշակութան կարող է ենթարկուել աստուածաբանական գիտութիւնների մէջ հմտութիւն ձեռք բերած գիտնականների ձեռքով, օրինակ՝ եկեղեցական մատենագիտութիւնն ու պատմութիւնը, կրօնական արուեստն ու բանաստեղծութիւնը»²: Բազում բանակցություններից հետո, նկատի ունենալով Ճեմարանի 45-ամյա գործունեությունը «հայ ժողովրդի լուսատրութան, հայագիտութան եւ հայ գեղարուեստի օգտին», օրինագիծ է կազմվում, ըստ որի՝ Գևորգյան ճեմարանը վերածվելու էր Աստվածաբանական ֆակուլտետի՝ քառամյա դասընթացով, «որով այդ ուսումնական հաստատութիւնը փակ չմնալուց եւ հնարատր է կ'ունենայ անլի բարգաւաճ գիտական եւ ուսումնական աշխատանք զարգացնել»³: Սակայն այդ օրինագիծն ինչ-ինչ պատճառներով կյանքի չի կոչվում, և ճեմարանի վերաբացման բոլոր ճիգերը ինչպես առաջին հանրապետության գոյության, այնպես էլ հետագա տարիներին, անցնում են ապարդյուն⁴:

Ի վերջո, «համակերպուելով կատարուած իրողութան»⁵, բայցև շարունակելով ճեմարանը վերաբացելու ուղղությամբ աշխատանքները, ինչպես Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, այնպես էլ մի շարք ականավոր ճեմարանական հոգևորականներ մեծ ցնծությամբ են ընդունում Հայաստանի առաջին Համալսարանի բացման հան-

գամանքը՝ պատրաստակամություն հայտնելով հնարավորինս աջակցելու համալսարանի կայացման և ընթացիկ աշխատանքներին: Համալսարանի բացման առթիվ ողջույնի և օրհնանքի խոսքով է հանդես գալիս Վեհափառ Հայրապետը՝ շեշտադրելով այն հանգամանքը, որ դեռևս հինգերորդ դարում, երբ սկզբնավորվեց հայ դպրությունը, ս. Թարգմանիչները նպատակ ունեին ոչ միայն ս. Գրքի գիտության միջոցով լուսավորելու, այլև հայ մանուկներին և առհասարակ հայերին մասնակից դարձնելու այն ուսմունքներին և գիտություններին, որոնք գոյություն ունեին հեյլենների, եգիպտացիների և բոլոր արևմտյան ազգերի մեջ: Ուստի, մեր հայրենիքի զանազան վանքերում հիմնադրված դպրոցները տարբեր ժամանակներում լուսատու ջահեր և արդի ըմբռնմամբ համալսարաններ եղան մեր հայրենիքում: Նա հույս է հայտնում, որ նորաբաց համալսարանի ինչպես ուսուցչապետներն ու դասախոսները, որոնց մեծ մասը Էջմիածնի ճեմարանի սաներ են եղել, այնպես էլ ուսանողները, հետևելով մեր նախնյաց օրինակին, կատարելագործվելով ու հմտանալով գիտության և ուսմունքի մեջ, մեր հայրենիքի ու հայ ժողովրդի կրթության անդաստանում կլինեն բարի ու ժրաջան մշակներ⁶:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Էջմիածնի երկու միաբաններ՝ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը և Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանն ի սկզբանե ներառվում են Համալսարանի կազմակերպչական աշխատանքներում՝ որպես դեռևս 1918թ. հուլիսին Թիֆլիսում կազմված համալսարանական հանձնաժողովի անդամներ⁷: Այս Մեսրոպ եպիսկոպոսը նշանակվում է նորաբաց համալսարանի միակ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկան, իսկ Գարեգին եպս. Հովսեփյանը հրավիրվում է Երևանի համալսարանում դասախոսելու⁸: 1920թ. սեպտեմբերի 21-ի՝ Հանրային կրթության և արվեստի նախարարի հրամանով հոկտեմբերի 1-ից Գարեգին եպս. Հովսեփյանը նշանակվում է Երևանի համալսարանի պրոֆեսոր⁹: Թե՛ Մեսրոպ եպիսկոպոսը և թե՛ Գարեգին Հովսեփյանը շատ լավ կրթություն էին ստացել ժամանակի հայտնի համալսարաններում: Մեսրոպ եպիսկոպոսը բանասիրության մագիստրոս էր և 130 գիտական աշխատությունների հեղինակ¹⁰, իսկ Գարեգին եպիսկոպոսը փիլիսոփայության դոկտոր էր, բազմաթիվ աշխատությունների հեղինակ ու հայ հնագրագիտության, գրչության արվեստի ու ձեռագրային ժառանգության, հայ մանրանկարչության ուսումնասիրության հիմնադիրներից էր¹¹:

Այսքանով, անշուշտ, չի սահմանափակվում հայոց եկեղեցու մասնակցությունը Հայաստանի անդրանիկ համալսարանի աշխատանքներին. հայ հոգևորականները հողավաճներով հանդես են

գալիս «Էջմիածին» շաբաթաթերթում՝ կարևորելով, քննարկելով, երբեմն նույնիսկ քննադատելով Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատության աշխատանքի այս կամ այն տեսանկյունները, մասնակցում են համալսարանի գրադարանի¹² համալրման աշխատանքներին՝ հույս ու հավատ ունենալով, որ Հայաստանի առաջին համալսարանը, բացելով դռները ուսման, հոգևոր կյանքի ծարավի պատանեկության առջև, ոչ միայն կարևորագույն դերակատարություն կունենա մեր ազգային հոգևոր անկախ կյանքի վերածնության գործում, կծառայի հայ սերնդի զարգացմանը¹³, այլև «իբ շոշափելի լուման գցելու վիճակի մէջ կը լինի մարդկութեան յառաջադիմութեան գանձանակի մէջ»¹⁴:

Այսպիսով, փաստորեն, Հայոց եկեղեցին ակտիվորեն ներառվում է Հայաստանի առաջին հանրապետությունում բարձրագույն կրթության կազմակերպման ու գիտության զարգացման գործընթացներում: Իսկ գիտության ու լուսավորության նկատմամբ նման վերաբերմունքը եկեղեցու կողմից, ինչպես հայտնի է, ձևավորվել էր Հայաստանում քրիստոնեության տարածման առաջին իսկ դարերից: Չէ՞ որ քրիստոնեության տարածումը Հայաստանում ուղեկցվում էր դպրոցական կրթության լայն ծավալմամբ և թարգմանական գործունեությամբ, որի նպատակը, ինչպես նշվեց, ոչ միայն Աստվածաշնչի և սուրբգրային մեկնությունների թարգմանությունն ու ուսուցանումն էր, այլև փիլիսոփայության դասական հեղինակների («արտաքին գրոց») երկերի թարգմանության, մեկնությունների միջոցով հայ ժողովրդին ժամանակի քաղաքակիրթ ժողովուրդների մակարդակին հասցնելը: Ահա թե ինչու կարճ ժամանակում ստեղծվեց հայերեն բարձրարվեստ թարգմանական և ինքնուրույն մի ամբողջ գրականություն, ինչի շնորհիվ հայ մշակույթն իր ներքին կարողականությունները ծավալեց մշակութային ամբողջ տարածության մեջ՝ ազատորեն երկխոսության մեջ մտնելով ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մշակույթների հետ¹⁵: Այս երևույթը շա տունակվեց նաև հետագա դարերում: Կրոնադավանաբանական պա շարը հատկապես կաթոլիկ գործիչների և հայոց եկեղեցու տեսաբանների (միաբարականներ և ոչ միաբարականներ) միջև հանգեցրեց նրան, որ տեղի ունեցավ հոգևոր ներուժի կենտրոնացում ու համախմբում, ազգային արժեքները, համադրելով եվրոպական ավանդույթների, մտածողության սկզբունքների հետ, վերաիմաստավորվեցին ու ներկայացան նոր մակարդակով ի դեմս հատկապես Գլաճորի և Տաթևի համալսարանի ներկայացուցիչների¹⁶: Համանման երևույթի հանդիպում ենք նաև հետագայում՝ ինչպես XVII դարի հայ հռոմեական եկեղեցական հարաբերությունների աշխուժացման

ժամանակ¹⁷, այնպես էլ 19-րդ դարում, երբ հայ մտավորականությունն սկսեց ծանոթանալ հատկապես լուսավորականության գաղափարների հետ¹⁸:

Եվ ահա, հայոց եկեղեցին, հավատարիմ մնալով նախնյաց ավանդույթներին և հետևելով նրանց, այժմ արդեն բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրման հետ է կապում ժամանակակից քաղաքակրթությունների ձեռքբերումները յուրացնելու, սեփական ներդրումն ունենալու գործընթացները:

Բայց իբրև ուսումնական գործի բազմադարյան կազմակերպիչ՝ հայոց եկեղեցին քաջ գիտակցում էր, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը չի կարող հավուր պատշաճի իրականացնել իր առջև դրված նպատակները, եթե չկազմակերպվեն ու չգործեն համալսարանական կրթությանը նախորդող հանրային կրթության համապատասխան օղակները: Այս առնչությամբ Մայր Աթոռի միաբանները «Էջմիածին» շաբաթաթերթում քննարկում, վերլուծում և երբեմն էլ քննադատում են դպրոցական գործի կազմակերպմանն առնչվող զանազան խնդիրներ: Հատկապես ուշադրության է արժանի Հանրային կրթության և արվեստի նախարարության ձևավորման ու գործունեության վերաբերյալ վերլուծությունը: Գյուտ ծ. վարդապետը, ներկայացնելով այդ նախարարության ձևավորման ու գործունեության սկզբունքները, մեկ տարվա ընթացքում վեց նախարարի փոփոխությունը, այն եզրակացությունն է անում, որ կառավարությունն անտարբեր է ու անուշադիր հանրային կրթության գործի կազմակերպման նկատմամբ: Չնայած նման վերաբերմունքի պատճառը, ինչ-որ իմաստով, պարզ էր ու հասկանալի, քանի որ գիրն ու դպրությունը, մտավորն ու հոգևորը մոռացված էր առժամապես թշնամու դեմ մաքառման և նյութական գոյության մեծ պատերազմի հանդեպ¹⁹, այնուամենայնիվ, հայ հոգևորական-մտավորականի պատկերացմամբ, իր կարևորության տեսանկյունից, «հանրային կրթության աշխատանքը սրբազան աշխատանք է»²⁰, այն առաջնային տեղ պետք է զբաղեցնի երկրի վերաշինության գործում և այդ աշխատանքի նկատմամբ պետք է պետական հոգաձություն դրսևորվի:

Չբավարարվելով, բնականաբար, զուտ քննադատությամբ՝ հայոց եկեղեցին, իբրև դպրոցների կազմակերպման բազմադարյան փորձառություն ունեցող կառույց, առաջարկում է հանրակրթության կազմակերպման իր մոդելը:

Նախ անհրաժեշտ էր վերաբացել փակված և գինանոցների, գաղթականական ապաստարանների, որբանոցների կամ հիվանդանոցների վերածված դպրոցները: Հայաստանի անկախության հռչակ-

մամբ կյանքը կարծես սկսում էր հանդարտվել, և հոգևոր պահանջներն իրենց գոյության իրավունքն էին հիշեցնում: Գյուտ ծ. վարդապետն իր «Ժողովրդական դպրոցի կազմակերպության խնդիրը» հոդվածներում առանձնակի կարևորությամբ շեշտադրում է ժողովրդական (տարրական) դպրոցների դերն ու նշանակությունը Հայաստանի առաջին հանրապետությունում: Ժողովրդական դպրոցը ծառայում է պետության ամենաշատ տարրին՝ բուն ժողովրդի մեծագույն տոկոսին և ամենից առաջ գյուղացիներին, քանզի գյուղացին այնտեղ է ուղարկում իր երեխաներին գրաճանաչ դառնալու, գիտությունների հիմունքներին ծանոթանալու: Այդտեղից հազիվ 15-20 տոկոսն են անցնում միջնակարգ դպրոցներում սովորելու, որովհետև միջնակարգ դպրոցի ծախսը գյուղացու ուժերից վեր է, իսկ ինչ վերաբերում է համալսարաններին, ապա էլ ավելի քչերին է հաջողվում բարձրագույն կրթություն ստանալ: Ուստի հայ հոգևորականին առավելապես հուզում են ժողովրդական կամ տարրական դպրոցների նախ՝ վերաբացման, ապա նաև արմատապես փոփոխելու հարցերը: Ըստ նրա՝ տարրական դպրոցը պետք է այնպես կազմակերպվի, որ համապատասխանի սովորողների կյանքի պահանջներին: Մինչդեռ «մեր ընտանիքը եւ դպրոցը իրար ներհակ ոյժեր են, հասարակական միջավայրը եւ դպրոցը իրար հակադիր են եւ ոչ լրացնող, այդ պարզ է մանաւանդ գիւղում»²¹: Դպրոցում «երեխան անգիր է անում Եւրոպայի գետերի, լճերի, քաղաքների անունները, այս ու այն ժողովրդների թագաւորների թուականները, սովորում է բոյսի սննդառութեան օրգանները, բայց ոչ կարտօֆիլ, կաղամբ եւ այլ բանջարեղէն ցանել եւ կատարելագործել գիտէ, ոչ իր հօր տանը մի սեղան, աթոռ շինել, ոչ հողը պարարտացնել ու վարել»²², այսինքն՝ երեխան գործնական գիտելիքներ չի ստանում, դպրոցն ավարտելուց հետո իր կյանքի կանոնավորման, բարգավաճման համար ոչ մի գործնական միջոց չունի: Ահա թե ինչու տասնյակ տարիներով գյուղացու տնտեսությունը, կենցաղը չի փոխվում: Ուստի ժողովրդական (տարրական) դպրոցը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ ժողովրդի մշակութային ու տնտեսական զարգացման մակարդակը, աշխարհագրական վիճակը: Եվ քանի որ 20-րդ դարասկզբի անկախ Հայաստանը պատերազմների, սովի ու այլազան աղետների հետևանքով տնտեսապես քայքայված էր ու հետամնաց, արդյունաբերություն գրեթե չկար, տարրական դպրոցը, գրագիտություն սովորեցնելուն զուգահեռ, ըստ Էջմիածնի միաբանի, պետք է որոշակի արհեստ, գործնական աշխատանք սովորեցնէր աշակերտներին (տղաներին, օրինակ, պարզ գյուղատնտեսական գիտելիքներ ու արհեստներ՝ դարձնություն, կոշկակա-

րության, իսկ աղջիկներին՝ կար ու ձև, տնպահություն ու խոհարարություն): Ընդ որում, ուսուցումը դպրոցում պետք էր հիմնել գործնական-առարկայականի վրա: Դպրոցները սեփական այգին, բանջարանոցը, ծաղկանոցը պետք է ունենային, խնամեին կենդանիներ ու թռչուններ...²³: Ներկայացնելով ուսուցիչներին կատարելագործվելու, ինքնակրթվելու նպատակով արտասահման գործուղելու անհրաժեշտությունը, դասագրքերի և տեխնիկական մի շարք փոփոխություններ՝ խիստ կարևորվում է դպրոցական ծրագրերում երգեցողության ու նկարչության պարտադիր պարապմունքների ներառման միջոցով սովորողի հոգևոր ներաշխարհի զարգացումը, իսկ վերածննդի դարաշրջանից եկող «առողջ հոգին ու միտքը առողջ մարմնում» սկզբունքով հատկապես կարևորվում է սովորողների ֆիզիկական պատրաստվածության հանգամանքը: Հայաստանի քաղաքացին, ըստ հայ հոգևորականի, արդեն տարրական դպրոցից պետք է ձևավորվի «սառնարին, հաասարակշռուած, ֆիզիքապես պնդակազմ, հոգեպես՝ իրատես»²⁴:

Բայց բուն դպրոցական աշխատանքն այսքանով չի կարող ամբողջական համարվել: Այն երկու լրացուցիչ տարրի կարիք ունի՝ նախադպրոցական և մեծահասակների համար կրթություն: Մանկապարտեզներում երկուսից վեց տարեկան երեխաների մտավոր ու ֆիզիկական զարգացումը խիստ կարևոր է դպրոցական ծրագրերն ընկալելուն պատրաստ լինելու համար: Հետևապես այդ օղակի բացթողումը ոչ միայն դժվարացնում, այլև բավականին անարդյունավետ է դարձնում տարրական դպրոցի աշխատանքը: Ինչ վերաբերում է արտադպրոցական և հատկապես մեծահասակների համար կրթությանը, ապա առաջարկվում է ծնողների համար կազմակերպել կիրակնօրյա դպրոցներ, գրագիտության երեկոյան դասընթացներ, ինչն էականորեն կնպաստի ընտանիքի և դպրոցի, հասարակության և դպրոցի միջև գոյություն ունեցող վերոնշյալ հակադրության վերացմանը: Քանի որ կրթվելով՝ ծնողները կօգնեն երեխային յուրացնել, ամրապնդել դպրոցում տեսածն ու սովորածը: Բացի այդ՝ առաջարկվում է շրջաններում արհեստավորների պակասը լրացնելու նպատակով արհեստագիտական աշխատանոցներ բացել 18-25 տարեկանների համար, իսկ ժողովրդի հոգևոր պահանջմունքները բավարարելու նպատակով՝ կենտրոնական գրադարան հիմնել իր ճյուղերով, ունենալ շրջանի թատրոն, երաժշտական խումբ և այլն²⁵:

Միով բանիվ՝ հայ հոգևորականը, հայոց եկեղեցին ցանկանում էին տեսնել ժամանակների պահանջներն ընկալող կրթական համակարգ, որի տարբեր օղակների արդյունավետ աշխատանքի ու

համագործակցության դեպքում միայն հնարավոր կլիներ ժամանակի պահանջներին համահունչ հասարակության, մտածողության ու գիտակցության ձևավորումը:

Այդ նպատակի իրականացման համար Մայր Աթոռը նաև տեսական բավականին լուրջ աշխատանք է կատարում՝ ոչ դյուրին պայմաններում պատշաճ ուշադրություն դարձնելով նաև գրահրատարակչական գործին: Սակայն մինչ գրահրատարակչական գործը ներկայացնելը, ի պատիվ եկեղեցու, հարկ է ասել, որ եկեղեցին երբեմն գրահրատարակչական, կրթական գործը զոհել է հայ ժողովրդի գոյությանն անմիջականորեն սպառնացող վտանգներին որևէ լուծում տալու, հատկապես նշված ժամանակահատվածում գաղթական հայերին ապաստանելու, սովից ու մոլեգնող համաճարակներից որևէ կերպ պաշտպանելու նպատակով: Ինչպես նշվեց, Մայր Աթոռի կառույցների մի մասը վերածվել էին որբանոցների, հիվանդանոցների ու զինանոցների: Փորձելով նվազագույնի հասցնել նյութական ծախսերը՝ Մայր Աթոռը փակել էր նաև տպարանի շենքը՝ թողնելով միայն մեկ գրաշար՝ անհրաժեշտ գործերը շարելու և տպելու համար²⁶: Միեւնոյն ժամանակ նոյն այդ տպարանն իր լայն աջակցութիւնն էր ցոյց տալիս Ճեմարանում զետեղուած զինուորական շտաբին՝ հրատարակելով ժողովրդին ուղղուած նրա կոչերը²⁷, տալով զինուորականներին կահ կարասիներ²⁸: Իր ունեցած միջոցներով փորձում էր օգտակար լինել նաև ՀՀ կառավարությանը՝ վերջինիս տպարանին տրամադրելով Մայր Աթոռի տպարանի տանրերից²⁹: Բայց քանի որ անկախ Հայաստանում կյանքն աստիճանաբար սկսում էր խաղաղվել, ստեղծագործական աշխատանքի համար որոշակի պայմաններ էին ստեղծվում, Հայոց եկեղեցին ևս փորձում է վերագարթոնքի փորձեր անել: 1920թ. հունվարի 28-ին Էջմիածնի ուսումնական խորհուրդը որոշում է անկախության տարեդարձը նշանավորել՝ հրատարակելով «Շողակաթ» ժողովածուի ծավալով մի ժողովածու, իսկ մարտին Վանական խորհուրդը որոշում է Հայաստանի Հանրապետությանը նվիրված նոր գիտական ժողովածու հրատարակել³⁰: Նույն այդ շրջանում վերսկսվում է «Արարատ» ամսագրի տպագրությունը, սկսում է հրատարակվել «Էջմիածին» շաբաթաթերթը³¹:

«Արարատ» ամսագիրն սկսել է հրատարակվել 1868-ից: Այն կանոնավորապես լույս է տեսել մինչև 1918թ. մարտը: Առժամանակ դադարեցնելով տպագրությունը՝ 1918 և 1919 թվականների համար տպագրվել է մեկական համար, որոնք, ցավոք, դարձան «Արարատի» ամենավերջին համարները: Տարբեր տարիների ընթացքում տպագրելով բազմաթիվ վավերագրեր, ձեռագրեր ու

հիշատակարաններ, նշանավոր հայագետների (Ն. Ադոնց, Հր. Աճառյան, Հ. Մանանդյան, Մ. Աբեղյան) հոդվածներ՝ այն մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը, իսկ Ֆ. Շիլլերի, Ն. Նեկրասովի, Հոմերոսի, Շանդոր Պետեֆիի թարգմանությունների հրատարակությամբ հայ ընթերցողին ծանոթացրել է համաշխարհային գրականությանը: «Արարատ» ամսագիրն իր հրապարակումներում լայնորեն անդրադարձել է նաև հայ հասարակական-քաղաքական կյանքին, սոցիալ - տնտեսական և կրթական վիճակին: Հայաստանի առաջին հանրապետության տարիներին «Արարատ» ամսագրի հրապարակումների մեջ կարելի է առանձնացնել հատկապես Մեսրոպ Եպիսկոպոսի «Շապուհ Բագրատունի», «Արձանագրություններ Տաթևի վանքի և շրջակայքի» և Գարեգին Եպիսկոպոսի «Հովասափ Սեբաստացի», «Գրիգորիս Աղթամարցի» և մի շարք հայագիտական այլ արժեքավոր հոդվածներ:

Հայագիտական արժեքավոր հոդվածների և առհասարակ հայ հասարակական կյանքի տարբեր բնագավառների կարևոր խնդիրներին կատարած անդրադարձի տեսանկյունից հատկապես ուշագրավ են «Էջմիածին» շաբաթաթերթի հրապարակումները: Եկեղեցին համարելով հայոց հասարակական կյանքի անքակտելի մասը՝ «Էջմիածին»-ի խմբագրականը իր պարտքն է համարում անդրադառնալ հասարակական կյանքի կարևոր խնդիրներին, իր սկզբունքներն ու մոտեցումներն արտահայտել: Ավելին, կոչ է անում «փոխադարձ սիրո, ազնիվ, դրացիության և համերաշխ գործակցության սկզբունքով» քննադատական մոտեցման, մտքերի շփման, ինչից «կ'օգտուի մեր ժողովուրդը, մեր երկիրը»³²:

Եվ որպես կարևորագույն կրթական օջախ՝ Էջմիածինն իր շաբաթաթերթում չէր կարող չանդրադռնալ կրթական, հայագիտական ու մշակութային հարցերի: Այդ են փաստում Երևանի համալսարանի բացման և գործունեության առնչությամբ տպագրված հոդվածները, Հայաստանում դպրոցական գործի կազմակերպման արմատական փոփոխությունների վերը նշված առաջարկները: Բացի այդ, «Էջմիածին» շաբաթաթերթի 12 համարների վերլուծությունից ինչպես տեսնում ենք, Մայր Աթոռի որոշ միաբաններ գիտական լուրջ աշխատանք են կատարել՝ մեր պատմության որոշ էջերի վրա լույս սփռելով, հայերեն ձեռագրերի ցանկեր կազմելով: Այսպես, Մեսրոպ Եպ. Տեր-Մովսիսյանը Հայաստանի անկախությանը նվիրված «Հայ մտքի մաքառումը իր ազատության ճանապարհին» խորագրով երկու հոդված է հրատարակում «Էջմիածին» շաբաթաթերթում: Առաջին հոդվածում հայտնում է, որ տարիներ շարունակ ուսումնասիրել է հայ մտքի ընթացքը և այն վերածել բազմահատոր վիթխարի մի

գործի: Այդ աշխատանքը թույլ է տալիս «համարեա քայլ առ քայլ հետետելու հայի մտաւոր շարժմանը, տեսնելու նրա քաղաքական ճգնաժամների իրական պատկերը, գործ դրած միջոցները, ստացած արդիւնքները» և եզրակացնելու, որ «եւրոպական գիտնականների ստուգած բանաստեղծական, ճարտարապետական եւ քաղաքական ընդունակութիւններին զուգընթաց է եղել նաեւ հայի մտաւոր, հոգեկան բարձր ճգնաժամների բռնած ուղին», ուստի անկախ Հայաստանի քաղաքացին «պարտաւոր է իւր անցած կեանքի ճշգրիտ պատկերի հետ ծանօթ լինել: ...Այդ անցեալից նա պիտի հասաստիացում ստանայ իւր մտաւոր ունակութիւնների մասին եւ հաստատուն համոզում կազմի թէ հայ ցեղը մարդկութեան ընտանիքի մէջ, ապրելու կատարեալ իրաւունք ունի, որովհետեւ նա այդ մարդկութեան յառաջադիմութեան համար աշխատել է, գործեր ունի կատարած եւ այսուհետեւ, ազատուած օտարի անասելի լծից, նոր թոհչքներ, նորանոր գրաւումներ պիտի կատարի մարդկութեան քաղաքակրթութեան շաւղի վրայ»³³: Այդ նպատակով Մեսրոպ Եպիսկոպոսը, ինչպես «Արարատ» ամսագրում, այնպես էլ «Էջմիածին» շաբաթաթերթում տպագրում է Շապուհ Բագրատունու պատմությունը³⁴, ինչի բնագիրը գտել էր այդ ժամանակ արդեն հանգուցյալ միաբան դպիր Գալուստ Տեր-Մկրտչյանը, արտագրել և լուսաբանությամբ հրատարակության պատրաստել: Իսկ տպարանի տեսուչ Արսեն ծ. վարդապետը գրությամբ խնդրում է Վեհափառ Հայրապետի թույլտվությունը՝ տպագրելու Շապուհ Բագրատունու պատմության՝ «իրատարակութեան կարօտ» բնագիրը, որը «նախ գիտական աշխարհի համար մի մեծ նուէր է, Հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար մի նոր աղբիւր, եւ երկրորդ՝ ս. Էջմիածնի համար պատիւ, որ նրա հրատարակութիւնը կատարուի Մայր Աթոռի անուամբ եւ նրա տպարանում»³⁵: Փաստորեն, մեր ժողովրդի պատմության մինչ այդ անհայտ էջերի լուսաբանումն այնքան կարևոր նշանակություն է ունեցել հայոց եկեղեցու համար, որ, տպագրության անհրաժեշտությունը շեշտադրելուց զատ, հայագիտական այդ կարևոր գործի իրականացումը պատվաբեր է համարվել Էջմիածնի տպարանի համար:

«Հայ մտքի մաքառումը իր ազատութեան ճանապարհին» խորագրով երկրորդ հոդվածում³⁶ Մեսրոպ Եպիսկոպոսը հայտնում է, որ կազմել է հայ ձեռագրերի ցանկ՝ ցուցակագրելով ոչ միայն Էջմիածնի վանքի, այլև մի շարք վանքերի և քաղաքների ձեռագրերը՝ ի մի բերելով բոլոր տեղեկությունները տպագրված և ձեռագիր աշխատություններից: Խոսելով հայ գրականության ձեռագիր ու տպագիր շուրջ 20000 օրինակի մասին՝ դրանք համարում է հայ

մտքի, արվեստի, անձնագոհության ու աշխատասիրության իրական ու անխարդախ վկայարաններ, որոնք մեծապես կնպաստեն «հայ անցեալ կեանքի ճշգրիտ պատկերի վերականգնման» գործին:

«Էջմիածին» շաբաթաթերթում, վերոնշյալ հարցերից զատ, քննարկվում են նաև եկեղեցական, ներքաղաքական, տնտեսական զանազան հարցեր, առանձին խոհեր ու մտորումներ հայկական հարցի, վտանգված հայրենիքի, ներքին ու արտաքին թշնամիների մասին: Շաբաթաթերթն անտարբեր չի մնում մամուլի էջերի նկատմամբ: Հայկ Աճեմյանը հողված է գրում (գրախոսական) Թեոդոկի «Ամենուն տարեցոյցը» 1916-1920 թթ. տարեգրքի մասին³⁷: Խոսելով ժողովածուի առավելությունների և որոշ թերացումների մասին՝ նա ցանկություն է հայտնում, որ այն իր հրատարակած նյութերով այնքան արժեքավոր լինի, որ դառնա «Ազատ հայու փոքրիկ հանրագիտարան»³⁸: Իսկ «Մշակ»-ի քննադատությանն ի պատասխան, թե էջմիածնում «ամէն ինչ խորշում, փախչում է նորութիւնից, նոր օրերից, նոր մարդկանցից», թերթը գրում է. «Ինչո՞ւ էջմիածինը նորութիւն չի սիրում. նրա համար, որ համալսարանում դասախոսներ տուողը նա է, միթէ երուպական համալսարանների վկայութիւններով գիտական աստիճան ունենալը եւ հայկական համալսարանում ասանդեւիլը հնութեան նշան է. խղճուկ հասկացողութիւն գիտութեան մասին եւ այդ պաշարով էլ երեւան գալ յանուն գիտութեան, խօսել ճիշդ որ հնութեան փոշու տակից հագիւ տնքալ կը նշանակէ»³⁹:

Հայ հոգևորականի այսպիսի զայրույթը պայմանավորված էր այն հակասությամբ ու պայքարով, որ ձևավորվել էր հոգևորականների և մտավորականության միջև դեռևս նախորդ դարից⁴⁰: Շփվելով, ծանոթանալով մի կողմից ռուսական, մյուս կողմից եվրոպական մշակույթի, մտածողության, հատկապես լուսավորականության գաղափարների հետ՝ հայ մտավորականությունը բաժանվել էր երկու՝ աշխարհիկ և կրոնական ուղղությունների: Աշխարհիկ ուղղության ներկայացուցիչները, հենվելով գերազանցապես լուսավորականության գաղափարների և գիտական մտքի նվաճումների վրա՝ գիտությունը հակադրում էին կրոնին, քննադատում կրոնաաստվածաբանական պատկերացումները՝ ցույց տալով դրանց առաջացման պատմական, սոցիալական, իմացաբանական ու մարդաբանական պատճառները: Մինչդեռ կրոնական ուղղության ներկայացուցիչները, քննադատելով լուսավորականության գաղափարները, բայցև գիտակցելով հասարակական առաջընթացի, մտածողության սկզբունքների փոփոխության անխուսափելիությունը, փորձում էին հաշտեցնել գիտությունը և կրոնը, պահպանելով հավատի գերազանցությունը բանականության նկատմամբ՝ շեշտում էին կրոնի և եկեղեցու անփոխարինելի դերը ազգի պատմության,

կրթության ու դաստիարակության գործում⁴¹: Այս է պատճառը, որ «Էջմիածին» շաբաթաթերթում հրատարակվում են նաև այնպիսի հոդվածներ, որոնք մի կողմից արտահայտում են հայ մտավորականության ունեցած վերաբերմունքը դեպի եկեղեցին, մյուս կողմից կոչ են անում եկեղեցու նկատմամբ անտարբեր, արհամարհական ու թշնամական վերաբերմունք ցուցաբերելու փոխարեն սրտացավություն դրսևորել, օգնել հայ եկեղեցականին բարեկարգելու հայոց եկեղեցին՝ «այդ դարաւոր, ճիւղաւորուած, բազմապիսի արժէքներով հարուստ հիմնարկութիւնը»⁴²: Չէ որ «ժամանակները փոխում են, որոնց հետ նաեւ համայնքների, ազգերի եւ մարդկութեան աշխարհայեացքը: Անհրաժեշտ է, որ ազգերի եւ մարդկութեան ծոցում ծնունդ առած հաստատութիւններն էլ միշտ ժամանակի հետ կատարելագործուելով փոփոխուին՝ պահպանելով կենսունակ հիւնը եւ վերանորոգելով փտածն ու անպէտքը, որպէս զի ազգերի ու մարդկութեան կեանքի մէջ կենդանի դեր կատարեն եւ պատմութեան դիւանն ընկնելու, թանգարանների զարդ դառնալու պատուին չարժանանան»⁴³: Այսօրինակ կոչերն ու հորդորները, անշուշտ, վկայում են, որ հայ եկեղեցին, հայ հոգևորականը իր հասարակության, ժողովրդի հոգևոր պահանջմունքները բավարարելու համար պատրաստ էր երկխոսության, բանավեճի, մտքերի փոխանակման, ի վերջո՝ ժամանակի պահանջներին համապատասխան փոփոխության:

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության գոյության երկուսուկես տարիների ընթացքում հայոց եկեղեցին շարունակում է իրեն ընձեռված հնարավորությունների շրջանակում որոշակի դերակատարություն ունենալ հայ գիտակրթամշակութային կյանքի կազմակերպման գործընթացներում: Այդ նպատակով հայոց եկեղեցին ներգրավվում է Հայաստանում առաջին համալսարանի հիմնադրման աշխատանքներին, իր դիրքորոշումն արտահայտում հանրային կրթության գործի կազմակերպման վերաբերյալ: Եվ ինչպես նախորդ դարերում, հայ հոգևորականը շարունակում է նաև հայագիտական, տեսական-հետազոտական անգնահատելի աշխատանք կատարել՝ լույս սփռելով հայ ժողովրդի պատմության անհայտ էջերի վրա և շեշտադրելով մեր ժողովրդի արժանի տեղը մարդկության ընտանիքում: Ընդ որում, գիտակցելով հասարակական գիտակցության, մարդկանց աշխարհայացքի փոփոխությունը, նա փորձում է ինքնակրթվել, ծանոթանալ ժամանակի մտածողության առանձնահատկություններին ու գիտական ձեռքբերումներին, եկեղեցու դարավոր ավանդույթները փորձում համադրել և հարմարեցնել ժամանակի մտածողությանն ու հոգևոր պահանջմունքներին:

Բանալի բառեր - Հայոց եկեղեցի, Հայաստանի առաջին հանրապետություն, համալսարան, կրթություն, դպրոց, հայագիտություն, գրագրություն, հոգևոր պահանջմունքներ:

SUMMARY

Hayarpi Aghakhanyan

PhD in Philosophy

Participation of the Armenian Church in the Educational and Cultural Life of the First Republic of Armenia

In the report the author tries to represent some aspects of the participation of the Armenian Church in the educational and cultural life of the first Republic of Armenia. The author especially focuses on the attitude and support of the Armenian Church in the processes of organization of higher and public education in Armenia, tries to represent some researches in the field of Armenian Studies made by the Armenian clergy, discusses the relationships between the Armenian intellectuals and the clergy, the attitude of the Armenian Church concerning the process of change of people's thinking and outlook. And a conclusion is made that the Armenian Church, within its possibilities, was involved in different processes of organization of the cultural and educational life of the first Republic of Armenia. Thus, being faithful to their ancestors' traditions and following them, the Armenian Church highly contributed to the organization of the first Armenian Uni-

versity. The Church was sure that the adoption of achievements of modern civilizations and having a proper investment in the modern processes was possible by founding a higher educational institution. But being a centuries-old organizer of the educational process, the Armenian Church was sure that the new founded University couldn't realize its goals if there was not a proper level of public education. That is why a new model of organization of public education was suggested, which aimed at giving the students practical knowledge, as well as theoretical one. On the other hand, the Church realized some printing activities, especially trying to print researches concerning Armenian Studies made by the Armenian clergy. At the same time the Armenian clergy was trying to combine and adjust the traditions of the Church to the modern way of thinking and spiritual needs. That is why they invoked the intellectuals to dialogues and exchange of ideas.

Keywords: *The Armenian Church, the first Republic of Armenia, University, education, school, Armenology, printing, spiritual needs.*

1. Հ. Գևորգյան, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, եր., 2005, էջ 111:
2. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, եր., 1999, էջ 171:
3. Այդ մասին տե՛ս նույն տեղում, էջ 190-191:
4. Ճեմարանը վերաբացվում է միայն 1945թ.:
5. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, եր., 1999, էջ 171:
6. Տես Երևանի համալսարան. 1918-1920թթ., Վավերագրերի ժողովածու, Կազմողներ՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ա. Սիրզոյան, եր., 1995, էջ 310:
7. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, եր., 1999, էջ 154:

8. Նույն տեղում, էջ 177:
9. Նույն տեղում, էջ 477:
10. Այդ մասին տես <http://ysu.am/persons/hy/Mesrop-Ter-Movsisyan>
11. Այդ մասին տես <http://ysu.am/persons/hy/Garegin-Hovsepyan>
12. Տե՛ս՝ Երևանի համալսարան. 1918-1920թթ., Վավերագրերի ժողովածու, Կազմողներ՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Եր., 1995, էջ 171, 313:
13. Այդ մասին տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության փարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Եր., 1999, էջ 275-276:
14. Նույն տեղում, էջ 337:
15. Այդ մասին մանրամասն տես Հ. Գևորգյան, Եզվ. աշխ., 2005, էջ 90-93:
16. Այդ մասին տես Ս. Ջաքարյան, Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի կառուցարկման ու գործառնման պատմափիլիսոփայական տեսանկյունները, «Հայոց փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում, Հայոց ինքնության հարցեր», Եր., 2017, էջ 23-28:
17. Այդ մասին տես Հ. Միրզոյան, Կրոնադավանաբանական պայքարի խաղացած դերը հայոց ինքնության պահպանման գործընթացում, «Հայոց ինքնության հարցեր», Եր., 2014, էջ 25-43:
18. Այդ մասին մանրամասն տես Ն. Մովսիսյան, Կրոնական ինքնության փոխակերպման լուսավորական հարացույցը, «Հայ փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում, Հայոց ինքնության հարցեր», Եր., 2017, էջ 159-189:
19. Այդ մասին տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության փարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Եր., 1999, էջ 291:
20. Նույն տեղում, էջ 258-262:
21. «Էջմիածին» շաբաթաթերթ, 8 Փետրուարի, 1920թ., հմր. 5., էջ 73:
22. Նույն տեղում, էջ 75:
23. Գյուղական դպրոցներին հողամասեր հատկացնելու խնդիրը քննարկվել էր նաև Հայաստանի Հանրապետության Հանրային Կրթության նախարարությունում 1919թ. հունվարի 25-ին: Տես Երևանի համալսարան. 1918-1920թթ., Վավերագրերի ժողովածու: Կազմողներ՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Եր., 1995, էջ 17:
24. «Էջմիածին» շաբաթաթերթ, 15 Փետրուարի, 1920թ., հմր. 6., էջ 90:
25. Այդ մասին տես «Էջմիածին» շաբաթաթերթ, 4 Ապրիլի, 1920թ., հմր. 8., էջ 117-121:

26. Այդ մասին տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության փարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Եր., 1999, էջ 30-31:
27. Տես օրինակ, Թեթևի հրեպարզորի շարքի կանոնագիրը, հայ ռուսերէն բառացուցակով, Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1920:
28. Այդ մասին տես «Էջմիածին» շաբաթաթերթ, 11 Յունուարի, 1920թ., հմր. 2, էջ 27:
29. Այդ մասին տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության փարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Եր., 1999, էջ 61, 67:
30. Նույն տեղում, էջ 331:
31. Շաբաթաթերթը, ցավոք, հասցնում է ընդամենը 12 անգամ լույս տեսնել:
32. «Էջմիածին» շաբաթաթերթ, 1 Յունուարի, 1920թ., հմր. 1, էջ 1-3:
33. «Էջմիածին» շաբաթաթերթ, 1 Յունուարի, 1920թ., հմր. 1, էջ 5-6:
34. Շապուի Բագրավորնու պատմության մասին հոդված է տպագրում նաև Հայկ Աճեմյանը: Տես, «Էջմիածին» շաբաթաթերթ, 8 Փետրուարի, 1920թ., հմր. 5, էջ 77-78:
35. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետության փարիներին (1918-1920թթ.), Կազմեց՝ Ս. Բեհրուդյան, Երևան, 1999, էջ 508-509:
36. «Էջմիածին» շաբաթաթերթ, 8 Փետրուարի, 1920թ., հմր. 5, էջ 68-70:
37. «Էջմիածին» շաբաթաթերթ, 4 Ապրիլի, 1920թ., հմր. 8, էջ 121-124:
38. Նույն տեղում, էջ 124:
39. Նույն տեղում, էջ 125-126:
40. Այդ մասին մանրամասն տես Ն. Մովսիսյան, Կրոնական ինքնության փոխակերպման լուսավորական հարացույցը, Հայ փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում, Հայոց ինքնության հարցեր, Եր., 2017, էջ 159-189:
41. Այդ մասին տես Ս. Ջաքարյան, «Հայ փիլիսոփայության պատմության համատար ալկնարկ», Երևան, 2004, էջ 62-63:
42. «Էջմիածին» շաբաթաթերթ, 11 Յունուարի, 1920թ., հմր. 2, էջ 20:
43. «Էջմիածին» շաբաթաթերթ, 1 Փետրուարի, 1920թ., հմր. 4, էջ 54:

Թափերագետք

ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1918 թվականին Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը մեր երկրի համար կարևորվեց ոչ միայն քաղաքական, տնտեսական ու ազգային հաղթանակով, այլ նաև իր ներդրումն ունեցավ ազգային մշակույթի, կրթության և գիտության զարգացման, դրանց հետագա կարգավիճակի կայացման գործում:

Հայաստանի անկախության հռչակումը պատմական անհրաժեշտություն էր հայ ժողովրդի համար: Վրաստանն ու Ադրբեջանն արդեն անկախացել էին, գտնվում էին Գերմանիայի և Թուրքիայի հովանավորության ներքո: Հայ ժողովուրդն այլընտրանք չուներ, պետք էր միավորվել և նույնպես անկախանալ: «Անդրկովկասի ժողովուրդներից հայությունը միակն էր, որ իր անկախությունն ստանում էր ոչ թե ի հաշիվ գերմանական հովանավորության կամ թուրքական առատածեռն նվիրատվության, ինչպես տեղի ունեցավ Վրաստանի և Ադրբեջանի դեպքերում, այլ շնորհիվ ռազմի դաշտում թափված արյան»¹: Անկախություն ստանալու միակ միջոցը պայքարն էր. նրա բազմադարյան պատմության էջերում գրվեցին բախտորոշ հերոսամարտերի՝ Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաբաղի սայի պատմությունները, որտեղ համախմբված հայությանը հաջողվեց թշնամուն հակահարված տալ և վերջնականապես ձախողել երիտթուրքերի արյունոտ ծրագիրը:

«Սարդարապատի, Ղարաբաղի սայի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերում մէջ,- գրում է Դրոն,- իր տարած անօրինակ յաղթանակներով հայ ժողովուրդը տիրացաւ ազատ եւ անկախ ապրելու անփոխարինելի բարիքին: Այդ ճակատամարտերը եղան պատճառը, որ տաճիկները հարկադրուեցին դաշինք կնքել հայերի հետ եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը»²:

Հարյուրամյակների անպետական ու անառագաստ նավարկությունից հետո հայոց նավը կրկին լեռան վրա էր:

Քաղաքական զարգացումները և դրանց հանգուցալուծումը մեզ համար բախտորոշ պատմական իրողություններ են, այդ իրողությունների համատեքստում մենք քննության կանոններ անկախ հանրապետության մշակութային և հատկապես թատերական ոլորտում կատարված տեղաշարժերը: Ինչ շահեց հայ թատերական մշակույթը անկախացումից, որոնք եղան առաջին պետական թատրոնի հիմնադրման նախադրյալները, որոնք հայ թատրոնի նորագույն պատմության հիմնաքարերը դարձան:

1919 թվականին, հայ մշակութային գործիչների, ՀՀ նախարարապետին ուղղված հանրագրում, ստորագրված Հովհ. Թումանյանի, Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի, Ս. Մալխասյանցի, Մ. Աբելյանի, Ն. Աղբալյանի. Օ. Սևումյանի, Եղ. Թադևոսյանի, Լեոյի, Վրթ. Փափազյանի կողմից ներկայացված էր առաջարկ, որտեղ ասվում էր. «Ազգային քաղաքակրթության հնոցը հանգչելու վրա է և կհանգչի, եթե օր առաջ մի սրտացավ շունչ չհրահրի նրան կրակը, և մի հզոր ձեռք նոր վառելանյութ չմատակարարի նրան: Այդ շունչը հայրենի պառլամենտի շունչը միայն կարող է լինել, և այդ ձեռքը՝ ազգային կառավարության բազուկը: Մասնավոր անհատների ու խմբակցությունների, մեկենասների ու ընկերների ուժից վեր է այդ: Գործը պիտի պետականորեն կազմակերպել և պետականորեն վարել: Պետությունը պիտի իր հովանավորության տակ առնի գիտությունը, գրականությունը, գեղարվեստը և նրանց գործիչներին:

Հովանավորություն ասելով, իհարկե, մենք բնավ չենք հասկանում խնամակալություն, այլ ստեղծումն այնպիսի պայմանների, որ գիտության, գրականության և գեղարվեստի գործիչները գործելով միանգամայն ազատ ու անկաշկանդ՝ կարողանան իրենց բոլոր ունակությունները դնել ի սպաս ժողովրդի... տարածել իրենց լուսավորիչ գործունեությունը Հայաստանի բոլոր անկյուններում և հայ ժողովրդի բոլոր խավերում, փրկել հայկական դարավոր կուլտուրայից ինչ-որ կարելի է փրկել... ստեղծել համայն հայության համար մի լեզու և վերջապես, ասել աշխարհին այն նոր խոսքը, որ հազարավոր տարիների ընթացքում պատրաստվում է ասել հայ ցեղի հանճարը»³:

Այս խնդրի իրագործման համար առաջարկվում էր «կազմակերպել... ժողովրդական լուսավորության կից մի առանձին բաժին փոխ-մինիստրության ձևով»: Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով մշակույթի գործիչների վերը նշված խնդրագիրը, պետական հովանավորությամբ այն իրականացնելու նախագիծ է մշակում: Կազմվում է հատուկ ծրագիր: Ծրագիրն իրականացնելու համար ստեղծված խմբում ընդգրկվում են նաև վերոնշյալ մշակույթի գործիչները:

Մինևույն ժամանակ, 1919 թվականի մայիսի 19-ին, Հանրային կրթության մինիստր Ն. Աղբալյանը դիմում է Մինիստրների խորհրդին՝ առաջարկելով այսուհետ Հանրային կրթության մինիստրությունը անվանել Հանրային կրթության և գեղարվեստի մինիստրություն: Հանրային կրթության և գեղարվեստի մինիստրությունը պիտի ունենար փոխմինիստրության երեք բաժին (գրական-գիտական, գեղեցիկ արվեստների և արտադրողական կրթության)⁴: 1919թ. հուլիսի 1-ին կազմավորվում է Հանրային կրթության և արվեստի մինիստրությունը: Այն իր գործունեության ծրագրերում ընդգրկել էր միջնակարգ և տարրական դպրոցների բարելավման հարցը, արվեստի և հնագիտական կառույցների ստեղծման և պահպանման հարցը, հատուկ ուշադրության էր արժանացել թատերական արվեստը: Այնուհետև Հանրային կրթության և գեղարվեստի մինիստրության՝ Արվեստի վարչությունը, թատերական ոլորտի բարելավման մասով կազմում է ծրագիր, որով Երևանի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Աշտարակի քաղաքային վարչություններին, Էջմիածնի, Փամբակի, Իջևանի գավառական կոմիսարներին Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Վաղարշապատի համայնական ժողովներին առաջարկում է թատերական շենքեր կառուցելու համար ձրի հողեր հատկացնել և հնարավորության դեպքում հոգավ ծախսերի մի մասը⁵:

Որոշվել է խորհրդարանի տնօրինության ներքո գտնվող Երևանի պետական թատրոնի և Խնամատարության վարչությանը հանձնված Ջանիդլադյանների ժողովրդական թատրոնի շենքերը ծառայեցնել ըստ նպատակի: Այնուհետև ճարտարապետ Ա. Թամանյանին հանձնարարվել է կազմել հին շենքում թատերական դահլիճի վերանորոգման նախագիծը, որը և կատարվել է⁶:

1919 թվականի հունիսին Հայոց դրամատիկական ընկերության խորհրդի նախագահ Բ. Ն. Արղության Երկայնաբազուկը դիմում է Մինիստրություն Թիֆլիսում և Երևանում 1919-1920թթ. թատերաշրջանի կազմակերպման հարցով և կառավարությանը խնդրում դրամատիկական թատրոն պահելու վերաբերյալ որոշում ընդունել: 1920թ. սկզբին Մինիստրությանը հաջողվում է Գրական ընկերության փոխնախագահ Վ. Ահարոնյանի օգնությամբ կազմակերպել թատերաշրջանի գործը: Այսինքն՝ առաջին անգամ հայ թատերական մշակույթի կարգավորման հարցը պիտի կարգավորվեր պետական աջակցությամբ:

Խնդրի կարևորությունը ընդգծելու համար փորձենք հստակեցնել, թե ինչ կարգավիճակում էր հայ թատրոնը մինչև Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը, որտեղ էր կենտրոնացած թատերական մշակույթը:

Մինչև Հայաստանի առաջին հանրապետության կազմավորումը՝ հայ թատերական խոշոր կենտրոններ էին Թիֆլիսը և Բաքուն: Հայաշատ այս քաղաքներում են գրվել հայ թատրոնի փառավոր էջերը, որոնք զարդարված են Պ. Աղամյանի, Սիրանուշի, Գ. Չմշկյանի, Հովհ. Աբեյանի, Հովհ. Չարիֆյանի և ուրիշների անուններով: Մինչև 20-րդ դարի 20-ական թվականները հայկական թատերական մշակույթը գործել է առանց պետական որևէ աջակցության՝ չունենալով թատերական շենք, հույսը դրած առանձին բարեգործների հովանավորության, դերասանական խմբի հաջողությունների վրա: Ներկայացումները տեղի էին ունենում վարձակալած թատերական շենքերում՝ «աղքատ ազգականի իրավունքով»⁷, շաբաթվա ամենամաքաբեհաջող օրերին, դերասանները չնչին վարձատրությամբ, սակայն անմնացորդ նվիրումով ծառայել են հայ բեմին, կերտել փառահեղ պատմություն: Ոճական ուղղությունների առումով 20-րդ դարասկզբին հայ թատրոնում դեռևս տիրում էր նախորդ դարից ժառանգած սունդուկյանական ռեալիզմի, այսինքն՝ կենցաղային ռեալիզմի ու դասական ռոմանտիկական ոճերը, իրենց ճանաչված վարպետ կատարողներով, որոնք ազատորեն գոյատևում էին՝ չներժելով ավելի «արդիական մի ոճի»՝ հոգեբանական ռեալիզմի»՝ արմատավորումը հայ բեմում: Այսինքն՝ հայ թատրոնը, որպես ինքնուրույն շենքային կառույց, ըստ էության, չկար, կային առանձին խմբեր՝ դարասկզբին դեռևս դերասանակենտրոն ուղղվածությամբ, որոնք, ահռելի ջանքեր գործադրելով, գոյատևում էին ներքաղաքական՝ օր օրի սրվող իրավիճակում, որի ևս մեկ փորձությունը անպետական ժողովրդի աղետալի կարգավիճակն էր, ինչը շարունակվեց մինչև 1918 թվականը:

Հայ թատրոնի այս կարգավիճակից ելնելով էր, որ 20-րդ դարասկզբը վճռորոշ շրջան դարձավ հայ թատրոնի պատմության համար: Պետական հովանավորությամբ ազգային թատրոն պահելու հարցը վերջնական լուծում էր պահանջում: Հարցի ուղիղ ճանապարհը մեկ ընդհանուր կենտրոն հիմնելու և այնտեղ հաստատվելու ծրագրի իրագործումն էր, իսկ այդ կենտրոնը Երևանն էր:

1919թ. հայ թատերական գործիչները Թիֆլիսից և Բաքվից սկսեցին ավելի հաճախ հյուրախաղերով մեկնել Երևան: «Դրամատիկական թատրոնի վիճակը դառնում էր ավելի ու ավելի դժվարին: Վրաստանի և Ադրբեջանի ազգայնական կառավարությունները բարյացակամ վերաբերմունք չունեին հայ թատրոնի հանդեպ: Դա էր պատճառներից մեկն այն տեղաշարժի, որ կատարեց հայ թատրոնն իր ավանդական կենտրոններից դեպի Երևան»⁸:

Այս տեղաշարժերը դեպի Երևան և այն, որ 1917-1921թթ. տարբեր հայաշատ վայրերում հիմնադրվեցին թատերական խմբեր,

որոնց համար ներքաղաքական նպաստավոր պայմանները, պետական հովանավորությունը ազգային պետական թատրոնի ստեղծման առաջին հիմնաքարերը դարձան: Օրինակ՝ Պլատիգորսկում գործող հայկական թատերախումբը՝ Հայկական պետական դրաման, որի նախաձեռնողը հայ թատրոնի բարեփոխիչ, ռեժիսոր Օվի Սևումյանն էր՝ Վերգինե Մամուլյանի (Ռ. Մամուլյանի մայրն է) և Գրիգոր Մեդնիկյանի աջակցությամբ, այդ թատերախմբերից մեկն էր: Մի փոքր շեղվելով բուն խնդրից՝ հարկ եմ համարում նշել, որ Հայ թատրոնի պատմության այս շրջանում իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում դերասան, ռեժիսոր Օվի Սևումյանի կատարած աշխատանքը: Օվի Սևումյանը, օգտագործելով ոուսական թատերական կրթության փորձը, իր խմբի հետ աշխատում էր նույն մեթոդներով՝ փորձելով կարգավորել խմբի մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Մամուլյան հանդես գալով հայ թատրոնի բարեփոխման վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով՝ նորից ու նորից շեշտում էր թատերական կրթության կարևորության հարցը: Կոչ էր անում հիմնել ստուդիաներ, թատերական դպրոցներ, որտեղ կրթություն կստանային և երիտասարդ, և փորձառու դերասանները: Առաջարկում էր թատրոնում կատարել արմատական փոփոխություններ, որոնց իրագործման ուղիների մասին խոսվում են նրա բոլոր հոդվածներում:

1918թ. հուլիսին հեղկոմի կարգադրությամբ Օ. Սևումյանը Հանրային կրթության ու Գեղարվեստի մինիստրության կողմից նշանակվում է արվեստի լիազոր անձ, իսկ թատերախումբը անվանվում է «Հյուսիսային Կովկասի շրջիկ թատերախումբ»: Որպես մեջբերում նշեմ, որ միևնույն ժամանակ Հեղկոմի երաժշտության կոմիսար էր նշանակվել Ռոմանոս Մելիքյանը, իսկ նկարչության կոմիսար՝ նկարիչ Սարգիս Խաչատրյանը⁹:

Օ. Սևումյանի խմբի խաղացանկը հիմնականում կազմված էր ազգային դրամատուրգիայից. Դ. Դեմիրճյան «Դատաստան», Լ. Շանթ «Հին աստվածներ», Ա. Աբելյան «Մարվող ճրագներ», Ա. Շիրվանզադե «Պատվի համար»:

Նույնպիսի հայկական թատերախումբ էր կազմակերպվել Նոր-Նախիջևանի (Դոնի Ռոստով) հայկական թաղամասում՝ դերասան և ռեժիսոր Շահենի (Հնայակ Շահինյան) ղեկավարությամբ: Նրանց խաղացանկը նույնպես կազմված էր ազգային պիեսներից. Ա. Շիրվանզադե «Արհավիրքի օրերին», «Կործանվածը», «Չար ոգին», «Նամուս»:

Նորաստեղծ հանրապետության պետական թատրոնի կազմավորման ծրագիրը մինիստրությունը նախատեսել էր հետևյալ ճանա-

պարհով. առաջինը՝ հիմնել թատերական ստուդիաներ, որը «ժողովելու է իր շուրջը արևելահայ և արևմտահայ բեմական երիտասարդ ուժերը», որտեղ թատերական կրթություն ստացած երիտասարդները պետք է ձևավորելին առաջին պետական թատրոնի դերասանակազմը. «Անհրաժեշտ են նոր ձևեր, նոր դերասաններ, երիտասարդ ուժեր, որոնք ծնունդ կտան նոր թատրոնին, ապագայի թատրոնին»¹⁰:

Իրարից անկախ, սակայն մեկ նպատակի շուրջ համախմբված, որն է ազգապահպանման, ազգային ինքնագիտակցության ձևավորման գաղափարը, Թիֆլիսում, Պոլսում, Երևանում և Մոսկվայում թատերական գործիչները հիմնեցին ստուդիաներ, որտեղից հետագայում կազմավորվեց Առաջին պետական թատրոնի դերասանակազմը՝ հայ թատրոնի չորրորդ սերունդը¹¹:

Երևանում իր ստուդիան հիմնեց դերասան Վարդան Միրզոյանը. «1919 թվականի հոկտեմբերի 2-ին Դիվանը ինձ մի գրություն տվեց, թե Հանրային կրթության և արվեստի նախարարությունը իրավունք է տալիս Երևանում բանալու դրամատիկական դասընթացները»¹²:

Թիֆլիսում Սուրեն Խաչատրյանի, Ռուբեն Մամուլյանի և Լևոն Քալանթարի նախաձեռնությամբ կազմակերպվեց ևս մեկ ստուդիա:

Հայկական գաղթօջախներում հիմնված թատերական ստուդիաները մշակույթի ինքնապահպանման ճիգեր էին, որոնք, անշուշտ, տվեցին իրենց արդյունքը: Ստուդիաներում ուսանած երիտասարդ ուժերը հետագայում տեղափոխվեցին Երևան, դրվեց հայ թատրոնի գաղափարական, կազմակերպական ու ստեղծագործական ծրագրերի իրագործման նախահիմքերը: 1919 թվականի սեպտեմբերին, թատերական հարցի կարգավորման համար, նախարարության կողմից կազմվում է պաշտոնական գրություն-հանձնարարական՝ Օ. Սևումյանի Կ. Պոլիս մեկնելու և այնտեղ նրա անելիքների վերաբերյալ: «...Նիկոլ Աղբալյանը սեպտեմբերի 11-ին Մինիստրների խորհրդին առաջարկել է՝ հիմք ընդունելով Սևումյանի կազմած նախահաշիվը (խոսքը Կ. Պոլիս մեկնելու և այնտեղից դերասաններ բերելու ճանապարհաձևի և աշխատավարձի հաշվի մասին է)՝ հայոց թատերական վարժարանի մասին օրինագիծը ներկայացնել խորհրդարանի հավանությանը: Խորհրդարանը սեպտեմբերի 19-ի նիստում ընդունել և հաստատել է մի օրենք՝ թատերական վարժարանի նախնական ծախսերը հոգալու մասին: Թատերական վարժարանի վարիչ նշանակվել է Օ. Սևումյանը, և նրան հանձնարարվել է պետական թատրոնի ստեղծման աշխատանքների կազմակերպումը...

Ըստ նախատեսված ծրագրի, հավաքելով տեղի լավագույն ուժերին, Օ. Սևումյանը պետք է կազմակերպեր ուսանողների ծրի դասավանդումը, աշխատավարձը հոգալու էր կառավարությունը: Պարապմունքները տևելու էին մինչև 1920 թվականի մայիսի վերջը, որից հետո նա ընտրյալ 10 դերասանների հետ պետք է վերադառնար Երևան: Նորեկները, նշանակվելով պետական թատրոնի դերասաններ, միաժամանակ պիտի շարունակեին հաճախել թատերական վարժարանը՝ նույնպես անվճար, իսկ թատրոնում կտրվեր աշխատավարձ»¹³:

Ցավոք, ազգային պետական թատրոնի համար Օ. Սևումյանի սկսած աշխատանքը անավարտ մնաց, սակայն դարձավ պարարտ հողում գցված այն հատիկը, որը հետագայում աճեց ու ամրացավ՝ որպես մի մեծ կառույց, որպես ուղեցույց պետական թատրոն ունենալու ճանապարհին: Հիվանդության պատճառով նա չառաջնորդեց հայ թատրոնի նոր սերնդին դեպի Երևան, բայց ցույց տվեց նրանց ազգային մշակույթին անմնացորդ նվիրվելու ուղիղ ճանապարհը:

Մեծ եղավ նաև հայաշատ տարբեր վայրերում ստեղծված թատերական խմբակների դերը հայրենիքի թատերական մշակույթի կառուցման գործում:

Հյուսիսային Կովկասում՝ Վաղարշ Վաղարշյանի, Աստրախանում՝ հայկական թատերական խմբի ղեկավար ու ռեժիսոր Վավիկ Վարդանյանի, Ղրիմում և Ուկրաինայում Յուլյա Ամերիկյանի ղեկավարած ստուդիաների ուժերի մեկտեղմամբ ձևավորվեց առաջին պետական թատրոնի կազմը. նրանք 20-րդ դարի 10-ական թվականներից Թիֆլիսի, Պոլսի, Հյուսիսային Կովկասի առաջնակարգ ուժերն էին, ովքեր եկել էին կառուցելու իրենց նոր հայրենիքի նորագույն պատմությունը: Կայացած արտիստներ Վահրամ Փափագյանի, Հասմիկի, Իսահակ Ալիխանյանի, Օլգա Գուլագյանի, Միքայել Մանվելյանի կողքին կանգնած էր թատերական նոր սերունդը՝ Արուս Ոսկանյան, Վաղարշ Վաղարշյան, Լևոն Քալանթար, Մկրտիչ Զանան, Հրայր Ներսիսյան, Ավետ Ավետիսյան, Գուրգեն Զանիբեկյան, Արմեն Գուլակյան, Վարդան Աճեմյան և ուրիշներ:

Դերասանական տարբեր նկարագրի և խառնվածքի արտիստները հավաքվեցին՝ միասնական ուժերով ստեղծելու մի նոր մշակույթ, թատերական նոր մթնոլորտ: Նորաստեղծ թատրոնի շենքը՝ Երևանի Առաջին պետական թատրոնը կառուցվեց անցյալի ամուր հիմքի վրա: Թատրոնի բացումը կապվում է 1921-ին Ստ. Շահումյանի անվան «Որոնումների թատրոնի» Երևանյան հյուրախաղերի հետ:

1921թ. Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատում է Երևանում պետական թատրոն հիմնելու առաջարկը¹⁴:

«Թատրոնին տրամադրվեց նախկին դաշնակցական պառլամենտի շենքը, որ հարկավոր էր հիմնովին վերակառուցել, դա տևեց երեք ու կես ամիս, մինչև 1922-ի հունվարը»¹⁵:

Թատրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1922 թվականի հունվարի 25-ին: Հայաստանի առաջին հանրապետությունն իր կարճատև գոյության ընթացքում հայ ժողովրդին վերադարձրեց ինքնորոշման իրավունքը, ազգային, կրթական ու մշակութային այն մեծ հավատամքը, որ հայը ունի իր ինքնուրույն վերաբերյալ: Թեև առաջին պետական թատրոնի կազմավորման հետագա ընթացքը վերաբերում է Հայաստանի Խորհրդային շրջանին, սակայն պատմական անդրադարձը մեզ ապացուցեց, որ դրա արմատները ձգվում մեն շատ հեռու անցյալ, իրենց վերջնական լուծումը ստանում Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին՝ բացելով հայ մշակույթի նորագույն փառավոր էջը:

Բանալի բառեր - Առաջին պետական թատրոն, Հայաստանի առաջին հանրապետություն, սրբուղիական շարժում, մշակութային կյանքը Հայաստանում, Օլի Սևումյան:

SUMMARY

Susanna Brikyan

Theatrical expert

Preconditions for the Establishment of the First State Theater of Yerevan in the Years of the First Republic of Armenia

The proclamation of the First Republic of Armenia in 1918 was highlighted for the country not only by its political, economic and national victory, but also by its contribution to the development of national culture, education and science and the establishment of their further status.

Political developments and their solutions are crucial historical facts for us; in the context of these realities the changes in the cultural and theatrical sphere of Independent Armenia have been presented in this report.

What gained the Armenian theatrical culture from the independence? Which were the pre-conditions of the foundation of the first state theater? Which were the cornerstones of the modern Armenian theater history?

Keywords: *Theater, first state theater, First Republic of Armenia, studio movement, cultural life in Armenia, Ovi Sevumyan.*

1. Հայոց պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր /ուս. ձեռնարկ/, խմբ. Հ. Ռ. Սիմոնյան, Եր., «Ձանգակ-97» հրատարակչություն, 2000, էջ 337:
2. Տես «Հայ Կենտրոն» Ազգային հասարակական մշակութային պարբերական, Պէլյուրոֆ, փարի Ա, թիւ 1, 20 Յունիսի 2016թ., էջ 18:
3. ՀՀ պետական պատմության արխիվ, ֆոնդ 207, ցուցակ 1, գործ 218, թերթ 188:
4. Նույն տեղում, թերթ 11:
5. Նույն տեղում, թերթ 188:
6. ՀՀ պետական պատմության արխիվ, ֆոնդ 207, ցուցակ 1, գործ 251, թերթ 171-173:
7. Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, Եր., 1980, էջ 19:
8. Նույն տեղում, էջ 341:
9. «Սովետական արվեստ» ամսագիր, 1956, թիվ 11, էջ 45-47:
10. Б. Арутюнян "Сурен Хачатурян: стати, воспоминания, письма, документы", 1969, стр. 9.
11. Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, էջ 342-344:
12. Վ. Միրզոյան, Թատրոնական օրագրեր, Եր., 1966, էջ 121:
13. Ս. Էվոյան, Օվի Սևումյան. Հայ բեմադրական արվեստի նորարարը, Եր., 2016, էջ 118:
14. Հայ սովետական թատրոնի պատմություն, Եր., 1967, էջ 18:
15. Նույն տեղում, էջ 19:

**ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Առաջին համաշխարհային պատերազմը և 1917թ. Ռուսաստանի արմատական տեղաշարժերը փոփոխություններ առաջացրին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում: 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարեց, որ հայ ժողովրդի ազատ լինելու համար, հայկական առանձին, անջատված մասերը միավորվում են՝ ստեղծելով անկախ պետական միություն:

1918 թվականին Հայաստանում քաղաքական, սոցիալական, կրթամշակութային հիմնարար փոփոխություններ տեղի ունեցան: Հայաստանում ժամանակին բնորոշ նոր փուլ սկսվեց:

1918թ. հայ հասարակության գլխավոր նպատակներից մեկը այն էր, որ առաջին պլան մղեր արդյունաբերությունը և նյութական բարիքների արտադրությունը: Դրանով էլ հենց պայմանավորված էին սոցիալական խոր փոփոխությունները: Տնտեսության զարգացման հզոր միջոցներից մեկը՝ կրթությունը, պետք էր նորովի կազմակերպել և իրականացնել: Այս բոլորը ստեղծում է նոր իրավիճակներ, որոնց հարմարվելու և արդյունավետ գործելու ունակ մարդու պահանջ է առաջանում: Հասարակությանը անհրաժեշտ էին կիրթ մարդիկ: Նոր որակի մարդու ձևավորումը կրթության խնդիրն էր: Արմատական փոփոխությունները պետք է համապատասխանեին ժամանակի պահանջներին:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին օդուժի կազմակերպման ուղղությամբ որոշակի քայլեր կատարվեցին: Այդ ոլորտում ամբողջ աշխարհում առաջին քայլերն էին արվում: Հայաստանը օդաչուների կարիք ուներ, ինչի համար համապատասխան ուսումնական հաստատություններ պետք է գործեին: Հայաստանի առաջին հանրապետության ավիացիայի առաջին իրամատար դարձավ օդաչու Վոիպովը: Հայկական օդուժն ուներ «Վառազեն» և «Մոռան» ինքնաթիռներ:

Ինչպիսիք էր Հայաստանի առաջին հանրապետության դպրոցական նոր համակարգը:

1918թ. դպրոցներին կառավարության կողմից ներկայացվող պահանջները. դպրոցը պետք է ունենա ուսուցչական կադրեր, կարևոր են դպրոցի շենքային պայմանները, դպրոցում պետք է լինեն համապատասխան թվով դասարաններ, դասագրքեր, ձեռնարկներ:

Հանրակրթությունը պահանջում էր, որ բոլոր դպրոցական տարիքի երեխաներին պետք է հնարավորություն տրվի հաճախել դպրոց: Հայաստանի առաջին հանրապետությունում դպրոցները երկաստիճան էին՝ տարրական և միջնակարգ: 1919թ. հանրապետությունում գործում էր 431 տարրական դպրոց՝ 1000-ից ավելի ուսուցիչներով ու 38000 աշակերտներով, 20 միջնակարգ դպրոց՝ շուրջ 300 ուսուցիչներով և 5200 աշակերտներով¹:

Երևանում կան ուսումնական հաստատություններ, որոնք ունեն հարուրամյակների պատմություն: Օրինակ՝ Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 դպրոցը հիմնադրվել է 1832 թվականին²: 1919թ. այստեղ ուսուցանվում էին թվաբանություն, ռուսաց լեզու, կրոն, հայերեն: Պրոգիմնագիայում երեխաները սովորում էին լատիներեն, ֆրանսերեն, պատմություն, աշխարհագրություն, գիմնագիայում՝ հունարեն, ֆիզիկա և այլն: Գիմնագիան լրիվ միջնակարգ հանրակրթական դպրոց էր:

Երևանի թիվ 84 դպրոցը հիմնադրվել է 1864 թվականին որպես ծխական դպրոց: Ծխական դպրոցների կանոնադրությունը հրատարակվել էր դեռևս 1868-ին, որը մշակել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ IV-ի կողմից 1867թ. ստեղծված հանձնաժողովը: Ծխական դպրոցներն ունեին մեկ, լավագույն դեպքում՝ երկու դասարան: Ուսուցումը տևում էր 2-3 տարի:

Դպրոցական համակարգի զարգացմանը անհրաժեշտ էր հանրակրթության մասին օրենքի ընդունումը: Պետք է նշել, որ այդ ժամանակ՝ 1918-1920թթ. մի շարք երկրներում այդ օրենքն արդեն ընդունված էր. Ավստրիայում՝ 1774թ., Միացյալ Նահանգներում՝ 1852-1900թթ. ընթացքում, Ճապոնիայում՝ 1872թ., Մեծ Բրիտանիայում՝ 1880թ., Ֆրանսիայում՝ 1882-ին³:

Հայաստանի առաջին հանրապետությունում նախատեսվում էր 1920-1921 ուսումնական տարում մտցնել պարտադիր տարրական կրթություն: Սակայն դա տեղի չունեցավ:

2018թ. կրթության ոլորտը համարվում է պետության կարևորագույն ոլորտներից մեկը, և մեր գործադիր իշխանությունը այդ ոլորտը ուշադրության կենտրոնում է պահում: Այսօր միջնակարգ կրթությունն ունի երեք աստիճան, ունենք հանրակրթության մասին

օրենք, բայց այսօր էլ դպրոցներն են համար կարևորվում են ուսուցչական կադրերը, առարկայական ծրագրերի մշակումը, դպրոցներին նոր դասագրքերի և դասավանդման այլ ռեսուրսների հատկացումը:

Ուսումնասիրելով Հայաստանի առաջին հանրապետության հանրակրթական համակարգը՝ 100 տարի անց մենք կարող ենք ավելի արագ կողմնորոշվել, կազմել կրթական համակարգի բարեփոխումների ճկուն և արդյունավետ ծրագրեր, ինչն էլ հանրապետության կայուն զարգացման գրավականն է:

Բանալի բառեր - Հայաստան, հանրապետություն, կրթամշակութային, արդյունաբերություն, դպրոց, ուսուցիչ, աշակերտ, ֆիզիկա, դասագիրք, ծրագիր:

Alisa Gasparyan

PhD in physical and mathematical sciences

School System in the Years of the First Armenian Republic

World War I and drastic movements in Russia in 1917 resulted in changes in the social-political life of Armenia. On May 28, 1918 the Government of the Republic of Armenia declared that the separated Armenian parts should unify, creating an independent state union.

In 1918 one of the principal distinctive features of the Armenia society was its focusing on the importance of industry, which induced also deep social changes. Education, which was one of the means of economic development, was to be organized and carried out anew. All this brought about new situations, and the need of an individual capable of adjusting and acting efficiently under such circumstance became apparent.

In 1918 the requirements of the Government to schools were the availability of qualified school teachers, proper buildings, and the sufficient number of rooms, textbooks and manuals in schools.

General education required that all children of school age be enrolled in school. Schools in the First Armenian Republic had two degrees: elementary and secondary.

In Yerevan, there are educational institutions that have a history of hundred years. For example, School No. 2 was founded in 1832. In 1919 they taught here Armenian, Russian, arithmetic, and religion. Children studied Latin, History, Geography in pro-gymnasium, while in gymnasium they studied Greek, Physics, etc. Gymnasium was a full secondary comprehensive school.

In 2018 secondary education has three degrees, and today the need for qualified school teachers, development of curricula, provision of textbooks and other teaching resources to schools is highlighted.

Having studied the education system of the First Armenian Republic at the lapse of 100 years we can better orient ourselves, draw up flexible and effective educational reform programs and ensure the sustainable development of the country.

Keywords: Armenia, republic, educational-cultural, industry, school, teacher, pupil, program, physics.

1. «Հայոց պատմություն» Հր. Ռ. Սիմոնյանի խմբ., եր., ԵՊՀ հրատ., 2012:
2. https://hy.wikipedia.org/wiki/Խաչատուր_Արուսյանի_անվան_թիվ_2_դպրոց
3. *Российская педагогическая энциклопедия*, Т.1, М., 1993.

**1918-1920 ԹԹ.
ՊԱՏՄԱԿԱՆ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԴՐԱԴԱՐՁԸ
ԺԱՄԱՆԱԿԻ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

1918-1920թթ. պատմական իրադարձությունները ձևավորվեցին շարունակվող Առաջին համաշխարհային պատերազմի տեսադաշտում: Ամեն ինչ նոր շրջադարձի ենթարկվեց 1917թ. Ռուսաստանում նախ փետրվարյան հեղափոխությունից, այնուհետև հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Կարճ ժամանակ անց տապալվեց նաև Օսմանյան ինքնակալությունը: Եվ այս փլատակների վրա հայ ժողովուրդը պետք է դժվարին դիմակայությամբ գրեր իր պատմության նոր էջը:

Իրադարձությունները հաջորդում էին մեծ արագությամբ: Հայաստանի Հանրապետությունն ստեղծվեց շատ մեծ դժվարություններով և անցավ ծանր փորձությունների ճանապարհ: 1918-1920թթ. հայոց պատմության ամենաբեկումնային տարիներն էին, որոնք չէին կարող իրենց անմիջական անդրադարձը չունենալ հայ հոգևոր կյանքում, հատկապես գրականության մեջ:

Գրական-մշակութային կյանքը չդադարեց: Գրական քննադատ, այդ տարիներին նաև պետական գործիչ՝ խորհրդարանի անդամ, 1919-ին լուսավորության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը նույն թվականի սեպտեմբերի 28-ին հիմնադրեց Հայ գրական ընկերությունը, որի առաջին ձեռնարկումներից մեկը հոկտեմբերի 16-ին Չարենցին նվիրված նրա դասախոսությունն էր՝ «Մի նոր բանաստեղծ»: Նորաստեղծ երկիրն իր նոր բանաստեղծի հայտնությունն էր ավետում:

Այս տարիների իրադարձությունները երբեմն ուղղակի հավաստիությամբ արտահայտվում են Թումանյանի, Շանթի, Ահարոնյանի, Աղբալյանի, Կ. Չարյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Լեռ Կամսարի, Մահարու և մի քանի այլ գրողների ժառանգության մեջ:

Չարենցի սերտ կապվածությունը 1918-1920թթ. իրադարձություններին, ակնհայտ է ինչպես կենսագրական, այնպես և ստեղծագործության հավաստիությամբ: Եվ ահա պատկերը. այդ տարիների մասին գրել է 17 պոեմ, բանաստեղծական 4 շարք, 1 վեպ, 1 հոդված և շուրջ 30 բանաստեղծություն:

Ժամանակի դեմքը քաղաքական դիրքորոշումն էր՝ պայմանավորված ռուսական հեղափոխության հանդեպ վերաբերմունքով: **Ինքնակալության տապալումը խանդավառել էր ոչ միայն Չարենցին, այլև քաղաքական տարբեր ուժերի, որովհետև հոգնել էին ինչպես ինքնակալի, այնպես և փոխարքաների կամայականություններից, ովքեր հազվապես բացասական գործելակերպ էին դրսևորում հայության հանդեպ:**

Չարենցը ողջունեց հեղափոխությունը և առանձնապես այն հույսով, որ այդ նոր ալիքը փրկություն կբերի իր ժողովրդին («Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ»):

«Չարենց-նամե»-ում որոշակի վերաբերմունքով բանաստեղծն ուրվագծում է իր կյանքի ուղին: Առաջին սիրո պես նրա համար նաև հայրենիքի սերն էր, որ «Եկավ – // Ուներիս վրա // Մի անհուն տխրություն բարդեց»: Հիմա, ահա, 1918 թվականն է: Հիշում է իր «Ողջակիզվող կրակ» շարքի ենթաշարքերը: Այնուհետև. «Ազատվեց հին կապանքից // Հոգի՛ վիթխարի ցավով»: Ի՞նչ նկատի ունի այս տողերով՝ հայրենիքի նկատմամբ սե՛րը... Դեռևս շարունակում է. «Տասնըութ՝ // Թվական հրի: // Ողջակեզ – կարմրակեզ բոցում»: Այսինքն՝ նվիրում հեղափոխությանը. «Արթնացավ արև – նայիրյան // Իմ հոգու նո՛ր զնգոցում»: Աչքի առաջ իրական հայրենիքն էր. «Հորդե էր: Անհատնում կրակ: Արնաքամ վերքեր կարևեր» և «Նո՛ր հայրենիք»-ի երազային հույս:

Այստեղ արդեն խորհրդային կարմիր բանաստեղծի թարմ արձագանքն է մոտիկ անցյալին: Բայց առաջիկա գաղտնագրված տողերը այլ բան են հուշում: Ահա 1919-ի վերջին նա Կարսում է. «Նույն երկինքն է՝ կաթսա արևի // Նույն խշշոցը քսիչան ջրի... // Բայց արևը իզուր է փորում // Կուրացած աչքերը շենքերի: // Իզուր է նայիրյան հեռուն // Ունկնդրում քսիչան ջրին (2, 172): Ի՞նչ է ասում խոսուն պատկերների այս գաղտնագիրը. Սա ակնարկ է հեղափոխությանը և թուրքերի ու բուլղարների գաղտնի բանակցություններին: Չարենցն սթափվում է և այստեղ է, որ հիշում է, թե ինչպես «մի լուրջ քննադատ մի օր», այսինքն՝ Նիկոլ Աղբալյանը. «Սարսեղով դահիճն ու ֆոյեն – // Ավետեց ամբողջ աշխարհին, // Որ ծնվել է – մեծ մի պոետ»:

Համենայնդեպս խորհրդային առաջին տարիներին, երբ ինքն իրեն համարում էր հեղափոխության բանաստեղծ, ծանր ծաղր կա

մոտիկ անցյալի ողբերգական իրադարձություններին, որ երևում է «Ամենապոեմ»-ում: Ծաղրում է ազգային երազանքը, այն, որ վարժապետ Սողոն «Դարերի մշուշի վրա // Գրում էր «**Վեց վիլայեթ**»: Ասածն այս է՝ ցանկալին դառնում է ծիծաղելի, երբ իրականն է ձեռքից գնում:

Որքան էլ Չարենցը փորձում է 1920-1921թթ. անցման օրերին գրած այս պոեմում թաքցնել իր նախրյան մորմոքը, այնուամենայնիվ ակնարկները կան. «Իսկ եթե հույսերից իմ այս վառ // Իմ սրտում պիտ մնան վերքեր...»: Այդ վերքերը մնացին, ժամանակի հետ խորացան, ու մրմուռը չանցավ:

Չարենցը 1920թ. դեկտեմբերին ընդունվել էր կոմունիստական կուսակցության շարքերը: Նախ գաղափարապես, այնուհետև քաղաքացիական դիրքորոշմամբ ընտրեց այդ ճանապարհը: Փետրվարյան ապստամբության օրերին Արտաշատի դիրքերում էր՝ նախ որպես «շարքային կարմիրբանակային, վերջում՝ «Ազատամարտ» զրահագնացքի քաղղեկ»²: Այդ ծառայության համար նրան տրվել է կարմիր պարտիզանի վկայական:

Իրականության հանդեպ Չարենցի ծաղրը, **անգամ կծու հեգնանքն այլ բան չէր, քան վշտի ծիծաղը**: Հենց այդ վշտի ծիծաղն աներևույթ քողով ակնհայտ ողբերգության վերածվեց «Երկիր Նայիրի» վեպում: **Մահվան այս աշխարհում Չարենցն ինքն իրեն տեսավ որպես խեղկատակ**. «Ես երգում եմ – ակամա: // Ի՛նչ էլ երգեմ. կուզեք – սեր, // կուզեք – մահ: // Ես խեղկատակ եմ հիմա» (1, 218): Կյանքին ուղղված այս հայացքով չգիտես՝ լալի՞ս է, թե՞ ծիծաղում: Ահա այդ հոգեբանական ապրումներով էլ գրեց «Երկիր Նայիրի» վեպը: Ինչպե՞ս կարող էր «Մահվան տեսիլ» (1920) եղերերգի ինքնագոհաբերման ծայրահեղ հոգեվիճակն ապրած բանաստեղծը մեկ տարի անց սկսել ծաղրել իր ամենասրբազան ապրումները: Չէ՛ր կարող, և վերջ: Շունչը պետք է ճիշտ զգալ՝ իրեն տեսնել որպես կամավոր զոհ, որպես անհեթեթության հասնող ցնորական վիճակի մատնված խեղկատակ, ով ամեն ինչ անում էր հայրենիքը փրկելու համար. 1915-ին կամավորական խմբերում էր, 1921-ին՝ բոլշևիկյան դիրքերում: Չարենցն ապրում էր հայրենիքի փրկության տազնապաններով և ապրում էր փակուղուց ելք որոնողի ճգնաժամ: Ահա այս թրթիռներով է գրված «Երկիր Նայիրի» վեպը:

«Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերը Կարսի ճակատում: Այստեղ գործում էին զորավար Հովսեփյանի բրիգադը – առաջին գունդ, գնդ.՝ Մազմանյան <...>: Կարսի ճակատում գործում էին սավառնակներ և «Ազատամարտ» զրահագնացքը: <...>: Կարսի զորախմբի ընդհանուր հրամանատարն էր զորավար Սիլիկյանը: <...>:

Չորրի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված Ռոս հրացանով, որոնց վարժ չէր: Թիկունքը լավ կազմակերպված չէր, և հակապետական տարրերը՝ բոլշևիկները, կարողանում էին դժվարություններ առաջացնել: Այսպես հոկտ. 2-ին <...> խորտակվեց ճակատը զինվոր տանող գնացքը՝ 14 վագոններ ջարդվեցին, սպանվեց 12 և վիրավորվեց 43 հոգի: Բոլշևիկների գործն էր այս: <...>: Համաձայն տրված հրամանի՝ հոկտ. 30-ի առավոտյան մեր զորքերը պիտի անցնեին հակահարձակման Վեզեբոյը գրավելու նպատակով: Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը և տեղից չջարժվեց: Հուսահատ և անզոր՝ գնդ. Մազմանյանը ամենքի առջև մատուցեց երկու գնդակից ինքնասպանություն գործեց: Այս ևս չազդեց զորքի տրամադրության վրա: Այդ միջոցին մեծ ուժով հարձակման դիմեցին թուրքերը: Սկսվեց խուճապային փախուստ: <...>: Մեր սավառնակը թռավ Երևան: Կարսն ընկավ թշնամու ձեռքը: Գերի մնացին <...>, 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ և մոտ 3000 զինվորներ»³:

Երեք օր շարունակ քաղաքը թալանի ու արյան մեջ էր: Հինգերորդ օրը գերիներին այցելում են հայ կոմունիստներ «և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին: Հեղկոմի անդամներ էին: Այնպես էին հավատացրել սրանց տաճիկ սպաները, որ իբր թե Կարսը պիտի հանձնեն բոլշևիկյան իշխանության: Եվ ամեն կերպ փայփայում էին կոմունիստ տակալներին. փոխարենը սրանք մատնություն էին անում և ցուց տալիս պահեստների տեղերը և անհրաժեշտ տեղեկություններ էին տալիս հայ զորքի և երկրի վերաբերյալ: <...>: Չոհ գնացին Կարսում միմիայն 6000 հայեր»⁴:

Չարենցին հայտնի էր Մազուֆի Համոյի նախատիպ Համբարձում Նորհատյանի հայրենասիրական բարձր նկարագիրը, հայտնի էր, որ 1918թ. ապրիլի 12-ին Կարսի կռիվներում Մազուֆի մոտ նահանջի ճանապարհը պաշտպանելիս հերոսի մահով ընկել էր Կարսի քաղաքագլխի որդին՝ Գևորգ Նորհատյանը: Սա ոչ թե խուքի, այլ գործի բարձր բարոյականություն էր, որի սահմանը Չարենցը երբեք չանցավ և խորհրդային գրաքննության պայմաններում ստեղծեց խորհրդանշական շատ թաքնված հանգույցներ ու գաղտնագրեր ունեցող մի վեպ, որը պետք է ճիշտ կարդալ և այդ դեպքում, ինչպես ինքն է ակնարկում, «Հասկացողը կհասկանա»⁵:

Չարենցի պես անմնացորդ հայրենասեր բանաստեղծն ուղիղ անդրադարձ չունի հայոց պետականության վերականգնման կապակցությամբ: Ո՛ր էր նա 1918թ. մայիս-հունիս ամիսներին: Ամենայն հավանականությամբ՝ Մայկոպում, ուր, 1918-ին Կարսն ու նահանգը թուրքերի վերահսկողության ներքո անցնելուց հետո,

տեղափոխվել էր Սողոմոնյանների ընտանիքը: Իսկ նրա՝ Հյուսիսային Կովկասում լինելու հավանականությունը հուշում են մի քանի տվյալներ. այցելել է ընտանիքին, «Սոմա»-ն թվագրված ու տեղագրված է. «1918, հունիս-հուլիս, Յարիցին»: Ահա նաև իր վկայությունը. «1918թ. Հյուսիսային Կովկասում՝ Մայկոպում եղել եմ կամավոր կարմիրբանակային»⁶: Այս օրերին անպայման եղել է նաև Թիֆլիսում, ուր առանձին գրքով տպագրել է «Սոմա» պոեմը: Այս ճշտումն անհրաժեշտ է այնքանով, որքանով առաջնային է անմիջական ներկայության հարցը:

Հայոց պետականության վերականգնման անդրադարձն այսպես, թե այնպես հենց «Սոմա» պոեմն է: Սա քնարական պոեմ է՝ առանց դիպաշարի, բայց ամեն ինչ ակնհայտ է: Եթե հայրենիքի որոնում չեն, հապա ի՞նչ են այս տողերը. «Դարեր շարունակ, անվերջ, անդադրում, // Ու սիրտս – գարուն, // Կյանքս երգ շինած՝ քե՛զ էի փնտրում // Այս չար աշխարհում» (2, 71): Սոման և՛ որպես հնդկական դիցաբանության գլխավոր աստվածներից մեկը, և՛ որպես արբեցնող «սրբազան խմիչք», «սրբազան սեր» այս դեպքում ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հայրենիքի ոգու մարմնավորում: Դա են հուշում մեջբերված հատվածի հաջորդ տողերը. «Բայց ես գիտեի, որ մեռնում է նա, // Ով որ քեզ սիրե: // <...>: // Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին // Այս աղջամուղջում»: Սա հենց հայրենիքի դեմքն է. «Քո դեմքը տեսա, որպես սրբազան // Մի զոհաբերում, // Քո դեմքը տեսա աշխարհասասան // Այս հրդեհներում» (2, 72): Նույնն է նաև հաջորդող տողերում. «Օ, Սրբազան հա՛րս դու ազատության, // Դու – ազատությո՛ւն, // Դու – վերջին ցնորք վերջի՛ն քաղցրության, // Դու – ոգու խնդում»: Ինչո՞ւ է օրհնում «Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար». մի կողմից՝ հեղափոխություն, մյուս կողմից՝ ազգային վիճակ: Դար ու դարեր մխացող սպասման պահը վերարժարծովում է հաջորդաբար: Նույնն են ասում նաև գիշերվա թանձր մթնում գերեզմանից դուրս թռչող հրե սրի, երկունքի ու մահվան պատկերները: Իսկ մի՞թե ճակատագրական պահին համայն հայությանն ուղղված կոչ չեն այս խոսքերը. «<Ե՛յ հեռավոր ընկերներ ու եղբայրներ, – // Դուք չե՛ք լսում. Ձե՛զ ենք կանչում, – // Չվարթ ու սեզ, // Եկե՛ք, մտե՛ք շուրջապարը մեր– // Եկե՛ք, եկե՛ք»: Նույնն է 8-րդ գլուխը. «Ու գալիս են անվե՛րջ անվե՛րջ // Ամբոխները ահագին...» (2, 78): Նույնն են և եզրափակիչ տողերը. «Կյանքս կմարի՛ հին, չչչին մի կայծ // Քո ոսկի հրում– // Բայց վառվի՛ պիտի սիրտս մոխրացած // Քո բոլոր գալիք արշալույսներում» (2, 79):

Սա հայոց պետականության վերականգնման օրհներգն է՝ փարած հեղափոխության արշալույսին: Նույնն է նաև «Ամբոխ-

ները խելագարված» դարձյալ քնարական պոեմը: Սարդարապատի ճակատամարտը երկաթուղու կայարանում էր: Չարենցի պոեմի գլխավոր խորհրդանշանը դարձյալ երկաթուղու կայարանն է, որ ոտքի ելած ուժերը պետք է գրավեն: Սարդարապատում ժողովրդական ցասումն իրոք հասել էր խելագարության աստիճանի, որովհետև հայությունը բոլորեքյան շրջապատված էր հակառակորդի ուժերով, փրկությունը միայն միաբանված ու ինքնամոռաց կոխվել էր: Նաև երգ կար կովողների շուրթերին. ժողովուրդը հայրենասիրական երգերով էր գնում կովի: Պոեմի 8-րդ մասում երգի ձայնը նմանեցվում է զանգի՝ «...զանգ էր կարծես ձայնը նրա»: Հիշենք՝ Սարդարապատի ճակատամարտի ժամանակ անընդհատ հնչում էին Մայր տաճարի ու մյուս եկեղեցիների զանգերը:

Այս մասին մանրամասն գրում են պատմագիրներն ու հուշագիրները: 1918-ի մայիսի կեսերին Արարատյան դաշտն ամեն կողմից շրջապատված էր թշնամիներով: Փախուստի ելք չկար: Միակ կարգախոսն էր՝ մահ կամ ազատություն: Ընդհանուր հրամանատարը զորավար Մովսես Սիլիկյանն էր, զորքի թիվը հասնում էր 10000-ի: Մայիսի 23-ին Սիլիկյանը տալիս է հարձակման հրաման: Նա ժողովրդին դիմում է սրտառույզ կոչով: Որպես մի նոր Ղևոնդ Երեց զորքի մեջ ոգևորիչ խոսք էր ասում Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը: «Ճակատի զինվորը չէր միայն – ամբողջ երկիրը, մի մարդ, մի շունչ դարձած, կովում էր թշնամու դեմ՝ ազատություն կամ մահ վճռական կամքով»⁷: Մայիսի 24-ին թուրքերը դիմում են փախուստի, որ շարունակվում է մինչև մայիսի 28-ը: Սիրիկյանը ժողովրդին կոչով դիմում է նաև հաղթանակի օրը՝ մայիսի 29-ին: Կոչերն ուղեկցվում էին հաղթական կանչերով ու երգերով:

Այս ոգեշունչ ուժը նաև «Ամբոխները խելագարված»-ի մեջ է, ուստի այն ևս հայոց պետականության վերականգնման օրհներգ է՝ ներծծված ընդհանուր հեղափոխական տարերքի բարձր ոգևորությամբ:

Խորհրդային գրականագիտությունն այդ պոեմնե ընդհատարկում էր որպես հեղափոխության ազդականչ՝ առանց ազգային հիմքի, որովհետև պաշտոնական գաղափարախոսությունն ուղղված էր Առաջին Հանրապետության դեմ: Վաղուց այդ սխալն ուղղելու ժամանակն է:

Նույն ոգին առկայծում է նաև երեք ռադիոպոեմներում և «Խաղաղության ռադիո» պոեմում: Այս ռադիոն ամենևին պաատահական չէ: 1919թ. «հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բասրա, Թաշքենդ ու Հաշտարխան»⁸: Երևանում կառուցված ռադիոկայանը

ռադիոկայան է դառնում նաև Չարենցի պոեզիայի համար: Սրանք ամենևին պատահական զուգահեռություններ չեն: Եվ իզուր չէր Չարենցն աշխարհով մեկ աղաղակում. «Ռադիոկայան է իմ հոգին հիմա // Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ...» (2, 100):

Ըստ թուրքական աղբյուրների՝ «Քյազիմ Կարաբեքիր փաշան իր բանակով կատարելապես դեպի համայնավարություն էր գնում»: Մինչև 1921թ. գործնական քայլեր էր անում կոմունիստ Մուստաֆա Սուբհին: «Այս փաստերը կասկած չեն թողնում, որ բոլշևիկների և թուրքերի միջև գոյություն ուներ սերտ բարեկամություն և գործակցություն», և պատահական չէ, որ «Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա անխառն հրճվանք առաջ բերեց բոլշևիկների շարքերում»⁹:

Կառավարությունը «խիստ օրենքներ սահմանեց դասալիքների դեմ: <...>: Զինվորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղաններ»¹⁰: Այդուամենայնիվ Կարսն ընկավ: «Կարսի անկումից հետո պատերազմի ընթացքը հայերի համար այլևս դարձավ հուսահատական»¹¹:

Վերջին զոհի գիտակցությունը չէր լքում ինչպես զինվորականին, քաղաքական գործիչին, այնպես և բանաստեղծին: Գնդապետ Մազմանյանի ինքնասպանությունը հուսահատության վերջին ճիչն էր թուրքից ու բոլշևիկից խաբված զորքի առաջ: Խելագարության պահն էլ ինչպես պետք է լիներ: Վերջին զոհի նույն զգացողությունն էր համակել բոլոր նվիրյալներին: Ահա և քաղաքական գործիչ կերպարը: 1920թ. հոկտեմբերին՝ ծանր պարտությունից հետո, Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց: Վարչապետի պաշտոնում նորից առաջարկվեց Քաջազնունին. «Քաջազնունին մեծ դժվարությամբ համաձայնեց ընդունել այդ պարտականությունը: «Դուք զոհ եք փնտրում ալեկոծության մատնված նավը փրկելու համար և ուզում եք, որ ես լինեմ այդ զոհը»¹²: Ազգային համաձայնության կառավարություն կազմելու Քաջազնունու փորձերը ձախողվում են, նա ներկայացնում է հրաժարական և իր կողմից վարչապետի թեկնածու առաջադրում նախարար Սիմոն Վրացյանին: Այնուհետև. «Զոհ էր պետք, և եթե այդ էր հայ ժողովրդի կամքը, որևէ մեկը իրավունք չուներ հրաժարվելու: Վրացյանը ստիպված եղավ ընդունելու այդ տարապայմանորեն ծանր պարտականությունը»¹³:

Ահա երկու ծայրակետեր. մի կողմից՝ ազգային զոհի գիտակցությունը, մյուս կողմից՝ դավաճանությունն ազգային գործին և դասալիքների համար նախատեսված կախաղանները, Չարենցի մեջ միավորվում և ծնունդ են տալիս «Մահվան տեսիլ» բանաստեղծությանը: Պատմական իրողությունները վերածվում են ոգու կանչի: Ահա այդ բանաստեղծության վերջին հատվածը.

*Երթամ մարող ու մարմող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
Տամ պարանոցս կարողին այն երկնուղեջ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ուրքեր կախաղանին թող մուր չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի,
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,-
Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի սրվեր կախաղանին թող մուր չգա (1, էջ 324-325):*

Խորհրդայնացումը եկավ Հեղկոմի իշխանությամբ, իր ցանցը հյուսեց չեկան, և ինչ թուրքերը չէին հասցրել, շարունակեցին հայ բոլշևիկները: Չեկայի առաջին գործը նախկին ղեկավարների՝ վարչապետների, նախարարների, խորհրդարանի պատգամավորների, խմբապետների ձերբակալությունն էր: Դեկտեմբերի վերջին Բաքու արքայությունը 70 սպա: Հունվարի 10-ին զինակիցների հետ Ռուսաստան արքայությունը Դրոն, հունվարի 24-ին նույն ճանապարհով ուղարկեցին 1200 զինվորականի, որոնց մեջ էին ազգային բանակի սյուները՝ սպարապետ Նազարբեգյանը, զորավար Սիլիկյանը: Սկսվեցին բռնազրավումները, այլ կերպ՝ թափ առավ ալան-թալանը. «Գրավում էին ամեն ինչ - բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչև իսկ թել ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնություն, այժմ իրենից էր խլվում հացի վերջին պատառը և ուղարկվում Ռուսաստան»¹⁴:

Այս պայմաններում բռնկվեց փետրվարյան ապստամբությունը: Սկսվեց 18-ին, Երևանում լռեցվեց ապրիլի 2-ին, ծայրամասերում՝ հուլիսի 10-ին: Այս ընթացքում իշխանությունն անցավ Հայրենիքի փրկության կոմիտեին, որի նախագահը վերջին վարչապետ Սիմոն Վրացյանն էր:

Հետո եկավ Ալեքսանդր Մյասնիկյանը, ձևավորվեց նոր Հեղկոմ, երկիրն ընկավ քաղաքական նոր հոսանքի մեջ. Մյասնիկյանին և նրա գործակիցներ Լուկաշինին և Ս. Տեր-Գաբրիելյանին Վրացյանը համարում է «լուսամիտ և անպայման ավելի հայրենասեր բոլշևիկներ»¹⁵: Այս վերաբերմունքն անհետևանք չէր անցնելու՝ Մյասնիկյանը պետք է դառնար կազմակերպված ինքնաթիռային աղետի զոհ, իսկ Լուկաշինին ու Տեր-Գաբրիելյանին 1937-ը պետք է հոշոտեր:

Չարենցը սգաց Մյասնիկյանի կորուստը, Թուրքիային՝ իր վաճառեց երկերեսանի քաղաքականության համար համարեց «Միջագային պոռնիկ», և նշված քաղաքական գործիչների հետ մեկտեղ դարձավ ստալինյան հալածանքների զոհ:

Ռուսների արտաքին հայանպաստ խոստումների ներքո թուրքերն իրականացնում էին ցեղասպանությունը: Ռուսներն առաջաճում էին ու նահանջում, որի ընթացքում «խսպառ քարուքանդ եղան և իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը»¹⁶: Այս ամենի կենդանի հայելին Չարենցի «Դանթեական առասպել» (1915-1916) պոեմն է՝ Մեռած Քաղաքի, այսինքն՝ Վանի հրդեհված տների, սրածված ժողովրդի պատկերներով: Ինքն է՝ որպես կամավոր կամավորական խմբի մեջ և ժաղովրդի մոտիկ օրերի արյունոտ պատմությունը:

1916թ. գարնանը Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը մշակել էին Թուրքիայի բաժանման գաղտնի ծրագիր, ըստ որի՝ հայկական տարածքները պիտի բաժանվեին Ռուսաստանի (Էրզրում, Վան, Բիթլիս, Տրապիզոն) և Ֆրանսիայի (Կիլիկիան մինչև Խարբերդ) միջև: «Այսպիսով իրականանում էր Գոլիցինների և Լոբանով-Ռոստովսկիների երազը – Հայաստանն առանց հայերի»¹⁷:

Հայության հույսերը հօդս ցնդեցին: Երկիրն ավերված էր, ժողովուրդը՝ ջարդված, ազգային գաղափարախոսությունն ու դիվանագիտությունը՝ անզոր: «Եվ ո՞վ գիտե, ինչ կլիներ վախճանը, եթե վրա չհասներ հրաշքը – 1917 թվի փետրվարի 28-ին, անսպասելի կերպով պայթեց Ռուսական Մեծ Հեղափոխությունը»¹⁸: Վրացյանը շարունակում է. ինչպես ամբողջ ինքնակալությունը, այդպես և ամբողջ Անդրկովկասը «խելահեղ ոգևորությամբ տոնեց բռնապետության անկումը», որովհետև այդ ալիքը «սրբեց-տարավ և կովկասյան սատրապներին»¹⁹:

Ինչպես քաղաքական գործիչը՝ այս դեպքում Վրացյանը, այնպես և բանաստեղծը՝ այս դեպքում Չարենցը, ազգային նույն մտահոգությամբ հեղափոխության հանդեպ նույն հավատն էին տածում («Ողջակիզվող կրակ» շարքը): Նույն ոգևորությունն ապրեց նաև Տերյանը (1917-1920թթ. առանձին բանաստեղծություններ):

Ըստ ՀՅԴ-ի պահանջների՝ «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական վեց վիպիթները և Կիլիկիան»:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ռազմականության համար առաջարկվեց հակառակորդ զինվորների «եղբայրացման սկզբունքը» և կողմերին առաջարկվեց անցնել բանակցությունների²⁰: Քաղաքական այս վիճակը պատկերվել է **Ստեփան Ջորյանի** «Ջրհորի մոտ» պատմվածքում, որտեղ ավստրիական ճակատում

ուս և գերման զորքերն էին դիմակայված: Ծարավը հակառակորդ զինվորների դիրքերի միջև գտնվող ջրհորը եղբայրացման է տանում հակառակորդներին: Իսկ գլխավոր հերոսը Լոռու կողմերից «Ավստրու ճակատը» հասած Բաղդասարն էր: Արևմտյան ճակատում, որտեղ Ջորյանի Բաղդասարն էր, կար 80000 հայ զինվոր:

1918-1921թթ. պատմական ժամանակաշրջանը համակողմանիորեն արտացոլված է նաև Ջորյանի «Ցանկապատ» (1923), «Պատերազմ» (1925) պատմվածքների ժողովածուներում, «Հեղկոմի նախագահը» (1923), «Գրադարանի աղջիկը» (1925) վիպակներում, «Ամիրյանի ընտանիքը» (գրվել է 1921-ին, տպագրվել 1969-ին) վեպում:

Ռուս զինվորները լսելով, որ Լենինը հողը տալիս է գյուղացիներին, արագորեն լքում են ճակատը, որպեսզի գնան և ստանան իրենց բաժինը: Հեռացող զորքերը տեղերում դիմում էին հերթական տնաքանդության՝ հայ ազգաբնակչությանն ստիպում են հեռանալ իրենց հետ: Այս պահը՝ դեպի Վան և նորից հեռացում Վանից, առկա է **Մահարու** «Պատանեկություն» վիպակում:

Լքվող դիրքերում վերահաստատվում էր «դարավոր ոսոխը»: Ընկնում են Երզնկան, Էրզրումը, Կարսը: Ահա այս ամենի ոչ թե մեղմ երգիծանքը, այլ ահարկու ծաղրուծանակն է Չարենցի «Ազգային երազ» (1917-1918) պոեմը, թե ինչպես վստահությունը մատնվեց ամոթալի պարտության: Չարենցն այս երկը բնորոշել է («Պոեմ երգիծական և ողբերգական»): Այս օրերի արձագանք է նաև նրա «Հատված» պոեմը: Ազգային համատարած շվարումի կեղեքիչ պահն է. «Հեյ ո՞ր եմ հիմա ես – // Էս ո՞ր եմ – // Ես ո՞ր եմ հասել. // Եվ ո՞ր է, // Երկիր իմ, // Քո հուրը – // Փրփուրը – // Լուսե: // Մենք, լուս, շվարել ենք, // Լույսերս // Մարել ենք – // Հույսերս էն ո՞ւմ ենք տվել... // Եվ ո՞վ մեզ, // Էլ ո՞վ մեզ, // Էն ո՞վ պիտի տա – // Երկիր իմ, թո՛հչք ու թևեր...» (2, 68-70):

1918թ. ապրիլի 12-ին՝ երեկոյան ժամը 9-ին (նոր տոմարով՝ 25-ին, որ մտցվեց 1918թ. ապրիլի 17-18-ի գիշերը) Կարս մտավ թուրքական 11-րդ դիվիզիան: Նույն թվականի մայիսի 15-ին թուրքերն արդեն Ալեքսանդրապոլում էին: Չարենցն այս ամենը գիտեր և վեպը հյուսելիս չէր կարող չմտաբերել այս փաստերը:

Պատմական հայրենիքում նորից հաստատվում է թուրքը՝ իր հետ մեկտեղ գյուղերում ու քաղաքներում վերահաստատելով իր թափառական աշիրաթներին: 1918-ի փետրվարին «թուրքերն արդեն բոլշևիկների հետ կնքել էին հաշտություն»²¹, որ վերջնականապես վերածվեց հայակործան դաշինքի:

1918թ. մայիսի 26-ին տեղի է ունենում Անդրկովկասյան սեյմի «վերջին ողբերգական նիստը»²²: Նույն օրը Անդրկովկասի Դաշնային Հանրապետությունը քայքայվում է, և հաջորդաբար անկախություն հռչակելու հերթը հասնում է Հայաստանին: Օրը հայտարարել են մայիսի 28-ը, բայց իրական օրը մայիսի 30-ն է: Այդ օրն էլ ընդունվել է «Հայտարարություն», որով, մինչև կառավարություն կազմելը, իրավիճակի տնօրինությունն անցնում է Ազգային Խորհուրդին: «Հայտարարություն»-ի հեղինակը **Նիկիոլ Աղբալյանն** էր:

«ԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց Ազգային Խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային Խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար:

Հայոց Ազգ. Խորհուրդ

1918թ. մայիս 30 Թիֆլիս»²³:

Եվ ինչ էր այդ հաշտության դաշնագիրը. Հայաստանը հռչակվում է անկախ պետություն, տարածքը մոտ 12000 քվմ, բնակչության թիվը՝ մոտ մեկ միլիոն գաղթական, տնանկ, սոված ժողովուրդ: Իսկ «մայրաքաղաքից յոթ կիլոմետր հեռու՝ Երևում էին թյուրքական թնդանոթները»²⁴:

Անկախ Հայաստանի ծնունդն ընդունվեց ծանր մտահոգությամբ, անգամ հեգնանքով՝ ինչ անկախություն, ինչ հանրապետություն: Չկային ո՛չ ցնծության աղաղակներ, ո՛չ ծափեր: Իսկ Ազգային Խորհուրդը Թիֆլիսից Երևան տեղափոխվեց ոչ թե անմիջապես, այլ հուլիսի 17-ին՝ շուրջ 50 օր հետո, որովհետև վիճակ չկար, չկային կեցության նվազագույն պայմաններ: Վրացիները կարծես մի կերպ ազատագրվեցին հայերից:

Լուրեր էին շրջում, թե թուրքերը կարող են մտնել Թիֆլիս: Մի կերպ Թիֆլիսում ապաստանած հայությունը հիմա էլ փախուստի ուղղությունը վերցրեց դեպի Վլադիկավկազ: Ահա պատմական վկայությունը. «Թյուրքերի հյուսիս շարժվելու հետևանքով անասելի իրարանցում առաջ եկավ և Թիֆլիսում <...>: Անտանելին, սակայն, հայ

ժողովուրդի <...> բազմահազար գաղթականության վիճակն էր: <...>: Թուրքական յաթաղանից ազատվածները Հյուսիսային Կովկասում ընկան բուլղարիկյան դժոխքը»²⁵: Պատմական այս իրավիճակի անդրադարձը **Մահարու** «Երիտասարդության սեմին» վիպակում է՝ փախուստ Թիֆլիսից, ճանապարհի դժվարություններ, Վլադիկավկազ, ունևորներին համակած բուլղարիկյան սարսափ, տեղական բարքեր ու միջավայր²⁶:

Արտաքին թուրքին ավելանում է նաև ներքին թուրքը, որ հակահայ գործունեություն էր ծավալում հայոց վերահսկողության գոտիներում: Նրանք հատկապես հարձակողական էին գնացքի կայարաններում: Օրինակ՝ Ուլուխանլուում հայերին գնացքից իջեցնում ու սպանում էին: Հայոց ուժերն ստիպված են եղել դիմելու մաքրագործունեների ու զսպման. «Երևանի կառավարության, ի վերջո հաջողվեց բանալ <...> ճանապարհները՝ մաքրել խռովությունների չույն ծառայող մահմեդական վայրերը և որոշ կարգ ու կանոն հաստատել»²⁷: Այս իրողություններից մեկի գեղարվեստական արձագանքը Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմում թուրքական Թալիսի ազատագրման տեսարանն է:

«Մի խոսքով պետք էր ոչնչից պետություն ստեղծել»²⁸:

«Բեյուք-Վեդիի կոիվների ժամանակ հայ կոմունիստները Երևանում բաց թողեցին կառավարության դեմ ուղղված մի թռուցիկ, որով դասալքության էին հրավիրում զինվորներին: Թռուցիկների հեղինակները ձերբակալվեցին և արտաքսվեցին Հայաստանից»²⁹: Այս խառնակիչ գործունեության անդրադարձը ևս առկա է Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում՝ Մարուքե Դրաստամատյանի և օրիորդ Սաթյոյի գործունեության քննադատությամբ:

1919թ. փետրվարի 12-ին Հայաստանի պատվիրակությունը Հաշտության վեհաժողովին ներկայանում է այսպիսի պահանջներով. «Ճանաչումը հայկական անկախ պետության, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի և Տրապիզոնի 7 վիլայեթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարավակողմը և Օրդու-Սեբաստիա գծից դեպի արևմուտք գտնվող շրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել-Բերքեթեթ և Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ. 3) Կովկասի հայկական հանրապետությունը՝ Երևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի»³⁰: Խոսքը նախապատրաստվող Սևրի հաշտության պայմանագրի մասին է: Ինչ եղավ՝ 1915-1916թթ. ցարը հետաքրքրվեց հայությամբ, և երկիրն ու ժողովուրդը ոչնչացան, 1920-ին Սևրի պայմանագրով Վիլսոնը

գծեց Հայաստանի սահմանները, և թուրքը զենքով վերացրեց այդ ծրագրի իրականացման ամենայն հույս: «Բարեկամները» «մտահոգվեցին», թուրքը հարցերը լուծեց:

Հայ գրողների միության նախագահ **Հ. Թումանյանը** դիմում է ՀՀ կառավարությանը՝ գրողներին օգնություն հատկացնելու հարցով: 1919թ. հուլիսի 9-ի որոշմամբ՝ այդ նպատակով կառավարությունը հատկացնում է 100000ռ., որ բաժանվում է 8 ամենակարիքավոր գրողների:

1921թ. փետրվարյան ապստամբությունից հետո բոլշևիկները լուրեր են տարածում ժողովրդի ծանր կացության մասին: Թիֆլիսում գումարված հայ մտավորականների ժողովը որոշում է Երևան ուղարկել Թումանյանին՝ տեղում իրադրությունը պարզելու հանձնարարությամբ: Օրջոնիկիձեի արտոնությամբ (Վրացյանը երգիծանքով սրան համարում է «Կովկասի կարմիր փոխարքա») Թումանյանը Երևան է գալիս մարտի 20-ին: Նույն օրը Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Վրացյանը հեռագրում է Օրջոնիկիձեին, ըստ որի՝ Հայաստանում իրականացված հեղաշրջումը «անպատասխանատու մարդկանց գործ էլ, այլ բառացի կերպով ամբողջ ժողովրդի», և որ «Թումանյանին տրվում է լիակատար հնարավորություն՝ ծանոթանալու իրերի իսկական դրության և տեղեկացնելու ձեզ»³¹: Մարտի 24-ին Թումանյանը հեռագրում է.

«Թիֆլիս, Օրջոնիկիձեին.

Հինգերորդ օրն է՝ ես Երևանում եմ: Ծանոթանալով գործերի դրության՝ համոզվեցի, որ մեզ մոտ, Թիֆլիսում, կազմված համոզումը Հայաստանի դեպքերի մասին չի համապատասխանում իրականության: Շարժումը սկսվել է գյուղացիության մեջ, զանազան շրջաններում, տարածվել է մինչև Երևան և իր հետևից քաշել է մտավորականությանը: Ստեղծվել է հետևյալ դրությունը. զենքը ձեռքին միայնաց դեմ են դուրս եկել մի կողմից՝ Հայաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացիները, մյուս կողմից՝ կոմունիստների զինված խմբերը, և հոսում է արյունը առանց որևէ հիմքի թշնամության և փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքին կարմիր բանակը ավելի անմիտ կոհիվ չի վարել: Այդ պատճառով ջերմորեն խնդրում եմ ձեր հեղինակավոր միջամտությունը, որպեսզի շուտափույթ կերպով վերջ տրվի այս ոչ ոքի համար պետք չեղած արյունահեղության: Անիրաժեշտ եմ համարում ավելացնել, որ հեղաշրջումից հետո ձերբակալված կոմունիստներից և ոչ մեկը և ոչ մի ռազմագերի այստեղ չէ գնդակահարված: Նման հաղորդագրություն անում եմ և ռազմա-

ճակատում գտնվող ընկեր կոմունիստներին: Եթե կպահանջվեն լրացուցիչ տեղեկություններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիոյի մոտ: Հովհաննես Թումանյան»³²:

Բայց վտանգավոր խժոժությունները շարունակվում էին:

Ալեքսանդրապոլը բոլշևիկների կենտրոնն էր, ուր մայիսի 1-ին տեղի է ունենում բուռն ցույց: «Հակապետական շարժման կենտրոն էր «Վարդան Ջորավար» գրահագնացքը: Լուրը Երևան հասնելուն պես զինվորական նախարարը կարգադրեց, որ «Վարդան զորավար»-ի պետ գլխապետ Մուսայեյանը գնացքը առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը: Մուսայեյանը ոչ միայն չկատարեց իր բարձրագույն իշխանավորի հրամանը, այլև կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապես Ալեքսանդրապոլ մեկնի գրահապատ գնացքի մի մասը, որ պահում էր Հայաստանի սահմանները Վեդի-Բասարի թուրքերի դեմ: Հրամանը կրկնվեց և սպարապետ զոր. Նազարբեգյանի կողմից, բայց Մուսայեյանը նորից չենթարկվեց: Ընդհակառակը գրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշևիկյան դրոշը, որից հետո նույն Մուսայեյանի նախագահությամբ կազմվեց Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե, որը հայտարարեց իրեն երկրի գերագույն իշխանություն»³³:

Չարենցի «Ջրահապատ «Վարդան Ջորավար»» պոեմը պատմական այս իրադրության գեղարվեստական վավերացումն է:

Այս խառն ու հակասական քաղաքական պայմաններում անկախ երկրի կառուցման նախաձեռնություն են հանդես բերում շատ հայեր. ցանկանում են կառուցել երկաթգիծ, կրի ու ցեմենտի գործարան, արդիականացնել գյուղատնտեսությունը: «...ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախությամբ ոգևորվում էին և Հայաստանից դուրս գտնվող հայերը, որոնցից շատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխվել Հայաստան»³⁴:

Այս իրավիճակի հնչյալես վավերական, այնպես և գեղարվեստական իրակությունները զարմանալի նույնությամբ համընկնում են: Ահա պատմական վկայությունը. «Կառավարության հոգաձության առարկա էր և Սևանա լճի նավարկությունը: Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին շոգեմակույկը: Մի քանի շաբաթ հետո սկսեց գործել «Աշոտ Երկաթ» «ռազմանավը» մի արագահարված թնդանոթով: Հիմք դրվեց մի ավելի մեծ շոգեմակույկի շինության: Սեպտեմբերի 3-ին Շահթախթից Երևան բերվեց «Սեստրիցա Նյուշա» շոգեմակույկ, որ ռուսները տանում էին Վան և թողել էին կես ճանապարհին: Նավը վերանվանվեց «Գեղանույշ» և նույնպես պիտի փոխադրվեր Սևան: Ենթադրվում էր Սևանի բոլոր եզերքները կապել նավային հաղորդակցությամբ և հետզհետե

զարգացնել նավագնացությունը: Սևանի նավագնացության օգտին էր <...> երիտասարդ ծովային սպա Թումանյանը, որ այնպես դաժանորեն սպանվեց բոլշևիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը: Հոր՝ պրոֆ. Թումանյանի հետ եկել էր Բեսարաբիայից: Հայրը վարում էր դրամների տպագրության գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով նվիրվել էր «հայկական նավատորմի» ստեղծման»³⁵:

Բառացիորեն նույն պատկերն է **Կոստան Չարյանի «Նավը լեռան վրա»** վեպում, որ ամբողջությամբ արտացոլում է Առաջին Հանրապետության այդ ժամանակները: Երկրի կառուցման նույն եռանդը, նույն դժվարությունները, Սևանը նավարկելի դարձնելու նույն ծրագիրը, և անգամ հոր ու որդու Թումանյան ազգանունն է ընդհանուր թե՛ իրական գործիչի, թե՛ գրական կերպարի համար: Նաև նավը Սևան հասցնելու ջանքերը, որ գործադրում է գլխավոր հերոս Արա Հերյանը³⁶:

Շանթի գլխավորաժ պատվիրակությունը Մոսկվայում մնաց 4 ամիս 10 օր (4.05.-14.09.1920): Բանակցությունները չհասան տրամաբանական ավարտի, որովհետև անկախ Հայաստանի փոխարեն, որ կարող էր դառնալ Լեհաստանի ու Ֆինլանդիայի նման մի երկիր, որոնք՝ որպես ինքնուրույն պետություններ, առանձնացան նախկին ինքնակալությունից, ռուսները Հայաստանի խորհրդայնացման ծրագիր ունեին և աշխատում էին այդ ուղղությամբ: Բացի դա, հայ-ռուս դաշինքի վավերացմանը ռազմաքաղաքական տարբեր գործողություններով խանգարում էին թուրք-ադրբեջանցիները: Պահպանվել են **Շանթի նամակները՝ գրված Վրացյանին**: Դրանք անհրաժեշտ են ինչպես պատմական իրավիճակի մեջ ճիշտ կողմնորոշվելու, այնպես և Շանթի կենսագրության որոշ մանրամասների տեղյակ լինելու համար:

Այս ամենը վկայում է մի շատ կարևոր իրողություն՝ ինչպիսին ժամանակի քաղաքական իրադարձություններն են, այնպիսին էլ գրականության պատմությունն է:

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետություն, 1918-1920թթ., անկախություն, հայ ժողովուրդ, պատերազմներ, Չարենց, Թումանյան, Շանթ, Կ. Չարյան, Մահարի:

SUMMARY

David Gasparyan

Doctor of Philological Sciences, Professor

The Reflection of the Historical Events of 1918-1920 in Armenian Literature

Reporting Provisions

The historical events of 1918-1920 developed in the purview of the ongoing World War I. In 1917 everything took up a new turn in Russia, first after the February Revolution, and then after the October Upheaval. The events followed one another with great speed.

The Republic of Armenia was established with great difficulty and underwent big trials. Nevertheless, literary-cultural life did not stop. The press was published, and the State University was founded. Literary critic, a state figure, a member of parliament in those years, Minister of Education and Culture (1919) Nikol Aghbalyan founded the Armenian Literary Company on 28 September of the same year, one of the first undertakings of which was his lecture "A New Poet" devoted to Charents. The newly-created country was announcing the revelation of a new poet.

The 1918-1920 years were a turning point in the Armenian history, which could not have been but reflected in the Armenian literature. In some literary works everything is clearly expressed with certainty. From this point of view separate pages of Hovhannes Tumanyan, Avetik Isahakyan, Vahan Teryan, Levon Shant, Avetis Aharonyan, Nikol Aghbalyan, Kostan Zaryan, Ler Kamsar, Yeghishe Charents, Aksel Bakunts, Vahan Totovents, Gurgun Mahari and several other writers are remarkable.

The article touches upon some works of Tumanyan, Shant, K. Zaryan, Mahari and covers more widely Charents's works of that period.

Armenian newspapers published in Yerevan and Tiflis in those years, as well as historiographical works and the works of these authors, will serve as a primary source.

Keywords: *The Republic of Armenia, the 1918-1920 years, independence, the Armenian people, the wars, Charents, Tumanyan, Shant, K. Zaryan, Mahari.*

1. Եղիշե Չարենց, Եժ, 6 հատորով, Եր., 1962-1968, հ. 2, էջ 159 (այսուհետև միայն հատորն ու էջը կնշվեն):
2. Եղիշե Չարենց, Գիրք մնացորդաց, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2017, էջ 305 (այսուհետև՝ ԳՄ):
3. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 479-480 (այսուհետև՝ ՍՎ, ՀՀ և էջը):
4. ՍՎ, ՀՀ, էջ 481:
5. Ավելի հանգամանորեն տե՛ս Դ. Գասպարյան, «Երկիր Նայիրի» վեպը, «Հայ գրականություն», գիրք 6, Եր., 2017, էջ 241-283:
6. ԳՄ, էջ 305:
7. ՍՎ, ՀՀ, էջ 140:
8. Նույն տեղում, էջ 353:
9. ՍՎ, ՀՀ, էջ 449, 473:
10. Նույն տեղում, էջ 477:
11. Նույն տեղում, էջ 497:
12. Նույն տեղում, էջ 487:
13. Նույն տեղում, էջ 488:
14. ՍՎ, ՀՀ, էջ 511:
15. Նույն տեղում, էջ 567:
16. Նույն տեղում, էջ 12:
17. Նույն տեղում, էջ 14:
18. Նույն տեղում, էջ 16:
19. Նույն տեղում, էջ 14, 27:
20. Նույն տեղում, էջ 52:
21. ՍՎ, ՀՀ, էջ 112:
22. Նույն տեղում, էջ 150:
23. Նույն տեղում, էջ 153:
24. Նույն տեղում, էջ 156:
25. Նույն տեղում, էջ 117-118:
26. Ավելի մանրամասն տե՛ս Դ. Գասպարյան, Գուրգեն Մահարի, Եր., «Չանգակ» հրատ., 2013, էջ 157-164, 307-316:
27. ՍՎ, ՀՀ, էջ 137:
28. Նույն տեղում, էջ 182:
29. Նույն տեղում, էջ 301:
30. Նույն տեղում, էջ 341-342:
31. Նույն տեղում, էջ 540-541:
32. ՍՎ, ՀՀ, էջ 541, նաև Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 10, Եր., 1999, էջ 375:
33. ՍՎ, ՀՀ, էջ 388-389:
34. Նույն տեղում, էջ 438:
35. Նույն տեղում, էջ 435:
36. Ավելի հանգամանորեն տե՛ս Դ. Գասպարյան, Հայ գրականություն, գիրք 1, Եր., 2000, էջ 106-131:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ. ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ժամանակին, երբ Հրանդ Մատթեոսեանից դժգոհում էին, թե ինչու չի գրում ցեղասպանության կամ ազգային-պատմական հերոսամարտերի մասին, նա համեստօրէն խոստովանում էր, թէ ինքը, իբրեւ գրող, տէր պիտի կանգնի իր ժողովրդի պատմության, բայց Տէր չէ, թէ ինքը պիտի տէր լինի իր հերոսների ճակատագրին, բայց խել եմ իրենից ճշարտության բանալիները, ուրեմն՝ ինչպէս գրի այն, ինչի տէրը չի կարողանում լինել:

Մենք այսօր հպարտութեամբ յիշատակում ենք Առաջին Հանրապետության մասին եւ առիթով Ա. Ահարոնեանի, Լ. Շանթի, Ն. Աղբալեանի, Կ. Զարեանի, Վ. Շուշանեանի, Ծ. Շահնուրի եւ սակաւ ուրիշների՝ որոշ վերապահումներով տիրական դերակատարութիւնը, սակայն հարկ է լրջմիտ գնահատության արժանացնել յատկապէս Պոլսից եկող գրական-քաղաքական մտայնության արձագանգը՝ որպէս արեւմտահայ գրական բնօրրանի թուացեալ լուկեացութեան բացորոշ շահագրգռութիւն: Մենք անընդմէջ ձգտում ենք զօրացնել նրա ենթագիտակցական կեցութեան սահմանները, քակել ապրողի ու վերապրողի բարդոյթների համակարգը, ցոյց տալ կամ ընդգծել մտածողութեան հետեւողականութիւնը, որին բանաստեղծութեան ճանապարհով, ի դէմս Զարեհ Խրախունու, հասել է Դանիէլ Վարուժանից մեկնած արեւմտահայ էպիքական շարունակական երգը:

Ազգային ճշմարտութեան բանալիները, այսինքն՝ 20-րդ դժնդակ դարի առաջին քսան տարիների պատմութիւնը, ներառեալ Առաջին հանրապետութեան ծնունդն ու անկումը, թնճուկների անվերջանալի շղթայ էին կազմել եւ կազմում տասնամեակներ շարունակ: Այդ բանալիները, արեւմտահայերէն ասենք, «կորսնցուցած էին» մեր գրականութեան եւ յատկապէս պատմութեան գոր-

ծիչները Հայաստանում: «Դարապատում» քերթողագրքում, որը լոյս տեսաւ Երեւանում 2001-ին, հարցը արութեամբ էր քննուում պուստահայ բանաստեղծ Զարեհ Խրախունին՝

Դուք գիտէք
Այս պատմութիւնը գիտէք –
Պատմութիւնը

Յուսախարութեան – խաբես-խուրես խաբէութեան
եւ պարանքի ու խաբկանքի
պարզամիտ ու անփորձ

Յուսաբեկութեան – անդառնալի սրտաբեկութեան
ցրեխ ցրեխ բեկանուելու անդարման

Յուսալքութեան – թէ՛ մարդոցմէ, թէ՛ Աստուծմէ լքումի...

.....
Պատմութիւնը
Յուսահարութեան...

.....
Պատմութիւնն է
Համակերպութեան – անկերպարան աստանդական բեկորներուն
կերպ կերպ ձեւ ձեւ ապփակներու
մտրակներու
պաղերու եւ փաքերու

Հանդուրժողութեան...
...Հապարկութեան...

.....
Պատմութիւնն է
Լուռ համբերութեան...

.....
եւ վերջապէս
Քիչ մը փարբեր այս պատմութիւնն ալ գիտէք –
Հերոսականութեան – հարիւր յիսուն հազար հոգեակ
հարիւր յիսուն կոպէկի պէս ծախսուած
եւ փոխարէն երկու չոր խօսք

.....
Ի՞նչ կ'ըսէք...
Բայց եթէ այս պատմութիւններն արդէն ծանօթ են ձեզի
Լաւ սերտած էք բոլոր դասերն ու մոոցած –
Կարարեալ է ամէն ինչ
Ընդունայն է ամէն ճիգ
Ի՞նչ հարկ նոր նոր պատմելու...!:

Պարզում է, անշուշտ, որ հարկ կայ նոր մտայնության, յանիրաւի «մոռցածը» վերականգնելու: Եւ գրական յաջորդող սերունդները փորձում են ճշմարտութեան աղարտուած էջերն ու գլուխները վերակազմակերպելու: Դրանց թում՝ առաջիններից Չարեհ Խրախունին:

«Դարապատում» չափածոյ ծաւալուն համանուագի մէջ հայկական պետական խորհրդի քննութիւնը կազմում է ընդգրկումի ու մեկնութեան զգալի բաժին՝ քաղաքական միւս իրադարձութիւնների կողքին: Նախ, հեղինակը շարունակում է իր դժգոհութիւնը մշակոյթի պատմութեան մէջ ամրագրումի անբաւարարութիւնից՝ թէ՛ մատուցման գեղարուեստական որակներից, թէ՛ վաւերական արժեւորման անկատարութիւնից.

*Եթէ այդպէս պիտի գրուած ըլլար ան
Երանի թէ գրողները փարբեր մարդիկ ըլլային
գրել փոռոն ուրիշ բաներ գրել փար
փուն փուածներն փարբեր կերպով հասկնային գէթ ոմանք
լաւ էր խոյլ համր ու նաեւ կոյր ըլլային
չկրնային ընել այն ինչ որ ակամայ կամ կամաւ
կսկսալով ծածմալով կափարեցին ի վերջոյ
մինչդեռ գուցէ ճիշդ հակառակն ընել պէտք էր համարձակ
թէպէտ այդ ալ կրնար նոյնքան ճիշդ չըլլալ
քանի ոչինչ յայտնի կ'ըլլայ առաջուց
ըլլալիքն ալ գրուելիքն ալ անծանօթ է բացարձակ.
Երանի թէ գրուած չըլլար ոչ մէկ բան...
Եթէ պիտի բան մը գրուէր անպայման
Երանի թէ վէպ գրէին կամ քերթուած կամ թարգման -
ոչ պարմութիւն.*

.....
*բայց անոնք ալ գերօ առին
ծանր դասէն քաղաքական գիտութեան.
Երանի թէ սուրի ծայրով կամ սուր ծայրով յստակ գրուէր ամէն
բան...²:*

Եւ անդոհանքի բուն մեխը հերոսական պատումի մէջ յաղթանակած համայնավար վաւերականութեանը մեր գրական մշակոյթի կոյր հպատակութիւնն էր: Երկու տարուայ մէջ ինչպէս մոռացուցին «լեռնցի հայրուկները» եւ 1918-ի ազգապահպան հերոսամարտերը: Ու վրայ են հասնում ճշմարիտ վաւերականութեան հեռագնայ բնութագրերը, որոնք բանաստեղծը նախընտրում է սիգաճեմ հիացումներից, որոնցով հարուստ էր տուեալ ժամանակի գրական

նութիւնը, ի շարս որոնց՝ Կոստան Չարեանի նշանաւոր վէպի խառնակնթոր վերածեւումը անցեալ դարի վաթսունականներին:

Ատուածի թերեւս լաւագոյն ապացոյցը Կարսի հայ համայնավարների նահանջի դաւաճանական քայլի գեղարուեստական սթափ գնահատութեան քայլն էր, որը տալիս էր թուրքերի մէջ միշտ ապրած Չ. Խրախունին, ինչից տարիներ շարունակ գաղափարի թելադրութեամբ խոհեմաբար խրտնում էին Արաքսի այս ափին ծուարած մեր բոլոր այն մտաւորականները, որոնք փառաբանում էին դուկաս դուկասեաններին.

*...երկու տարուան մէջ ինչպէս ալ ժանգոտեցան ու բթացան
փայլուն շեղքերը բոլոր*

*սուր գերանդի մանգաղ բռնող օրհնեալ ձեռքերն ալ թուցան -
սուփնին ծայրն սպիտակ մեծ թաշկինակ
վզին շուրջն ալ կարմիր դենջակ
դռներուն մօտ չարենցածին քաղաքին
- Դու դեռ խփիր, ընկեր Թրեւց, Հաճընցի ես՝ լաւ ես խփում
մենք վերջացրինք, մենք գնում ենք եղբայրութեան
արեգակին նորածագ -
կը գոչէին կը մեկնէին՝ գէնք համազգեստ մէկդի ներած
անբանացած ամբոխացած խելագարած կ'երթային
գրաւելու ոչ թէ քաղաք մը սեւամաղձ
կամ կայարան բոցավառ
այլ արջառի ֆուրկոններով աքսորուելու
դէպի աստղը կարմրալոյս հիւսիսի...³*

Այս խորքի վրայ տարակուսելի յամառութեամբ տեսական միջոցան, սկսած անցեալ դարի եօթանասնական թթ., առաւելապէս խորհրդահայ գրականագիտական որոնումներում եւ շեշտադրութիւններում պոլսահայ նորագոյն գրական զարգացումների մէջ մերժում էր ազգային դիմագծի որեւէ արտայայտութիւն: Եւ դա այն ժամանակ, երբ բարձրակարգ բանաստեղծ Չարեհ Խրախունին դարձել էր ազգային կեանքի գեղարուեստական համահայկական չափումների, մեկնութեան խոր զգայաչափ:

Ի մասնաւորի ընդգծենք, որ նա բերում է առարկաների եւ բանաստեղծների յարաբերութեան ծանրակշիռ ենթախորք, այսինքն՝ ներքին հարուստ երակների շերտեր՝ յայտնի նիւթի բացախօս, զգացական գնահատութիւնների դիմաց, ինչով, ընդունենք, գերյագեցած է աժան էֆեկտների մեր համահայկական գրական դաշտը անցեալ դարի 20-ական թթ. ի վեր:

2. Խրախուճու համար իմացական մեկնությունը աշխարհաճանաչումի գեղարուեստական ասպարեզ է: Իբրև կառուցողական սկզբունք՝ այն գալիս է 20-րդ դարի ամենախորունկ փիլիսոփայի՝ Անրի Բերգսոնի ինտուիցիայի հայեացքի, մեր թարգմանությունը՝ ներքնատեսության լայն փորձից, որն առաջնային էր համարում գեղարուեստական կոահման շնորհի իմացական ձեռքբերումները:

Ահա այս նկատառումով առանձնանում են փիլիսոփայ բանաստեղծի ծրագրային երեք ժողովածուներ՝ «Տոնակարգ» (Իսթանպուլ, 1973), «Ստուեր եւ արձագանգ» (երկու հրատարակություններ՝ Փարիզ, 1973, Մոնրեալ, 1988) եւ «Դարապատում» (Երեւան, 2001), որոնցում ըստ էության ամբողջանում է բանաստեղծի պատմաքաղաքական բարձր ընկալումների համակարգը: Ուշադիր աչքը դրանց կողքին իրաւունքով կարող է յաւելել ինստունականներին հրատարակուած «Ազատերգութիւն», «Քար Հայաստանի» քերթողագրքերը:

Քսաներորդի դարապատումը Խրախուճին դիտում է իբրև իրատեսակ տարեգրութիւն եւ այդ իսկ պատճառով չի տարանջատում ժամանակագրութեան միջնադարեան շրջանից եկող «ժանրային» պատկերման համընդհանուր եղանակներից: Նկատենք, որ դրանք հայութեան արեւմտեան թելի համար առանձին-առանձին ներկայացնում էին համիդեան անագորոյն կայսրութեան տապալումը, Ադանայի եւ շրջակայքի հայութեան աննախադէպ սրածումը, վրայ հասած ցեղասպանութեան անատոմիայի ահասարսուտ համապատկերը, իսկ տարիներ անց՝ Արեւելեան Հայաստանի քաղաքական խոշորագոյն իրադարձութիւնները՝ Սարդարապատը, Առաջին հանրապետութեան ձեւաւորումը, Խորհրդային Հայաստանի՝ ըստ էութեան՝ ւաւերներ գործած դիկտատուրայի հաստատումը՝ ինտերնացիոնալ կոչուած հովերի ներքոյ: Առարկայորէն դրանք ազգային քաղաքական ծաւալումների՝ ենթակայականից դուրս ընկալումներն են՝ բանաստեղծի ապրած եւ վերապրած հոգերը, տազնապները, ողբերգութիւնն ու յարատետութեան խորհրդի առթիւ երկրնտրանքի ոգորումները:

Հարկ ենք համարում ընդգծել, որ «ծաւալումներ» արտայայտութեան տակ նկատի ունենք անցեալի գրապատմական դասերի իրացումները, որոնք առանձին-առանձին բացում են վարագոյրից այն կողմ մնացած ազգային մշակութային հարցադրումների շուրջ էպիքական բանաստեղծի դրսետորած զօրութիւնը՝ կորսուած կամ կատարուած քայլերի «ստուերն» ու ժամանակի՝ ապտակի զօրութիւն ունեցող «արձագանգը»:

Ընդ որում՝ «Տոնակարգ» ժողովածուից նշանաւոր «Դոնբացէք» քերթուածում մեր յիշատակած «ծաւալումները» պատմաքաղաքա-

կան ազգային մեկնութեան այլասաց ենթախորք են ձեռք բերել: Ինքներդ դատեցէք երգի ներքին ծալքերի մասին:

Շար նեւրուեցանք դէս ու դէն

Կրկներելոյթ հալածուեցինք անդադար

Դրախարավայր արքայութեան խոստումներով օրօրուեցանք դարէ դար...

Ինկանք ելանք արիւնեցանք բուժուեցանք

Հիմա հոն ենք ուր որ ենք

Ալ չենք ուզեր հոս հոն քշուիլ – մտնել բացուող խորհրդաւոր դռներէ

Անցնիլ նեղիկ կասկածելի անցքերէ

Եթէ նոյնիսկ անոր ետեւ եդեմը կայ սկիզբի...⁴:

Ինչի առաջ են ճոնչոցով բացում «խորհրդաւոր», ասել է թէ ապագայի անկախատեսելի դռները, որ ինչը գայ՝ ազատութեան պատգամը, արդար դատաստանի կրկներելոյթը, երկար սպասուած դանիւլեան դատաստանը, թէ՛ աւելի փորձառու, շեղքի վրայ ճարտարախաղի բռնուած նոր վարպետորդիները՝ գայի իրենց ւաւետարանիչ վճիռներով: Երբ պիտի ազատագրուենք «դրախտավայր արքայութեան» օրօրերգու բառերից, որոնք մեզ թոյլ կը տան գրկաբաց ընդունելու «երկար երկար ժամանակէ փնտռուած», մեզ սրտաբաց սիրելու եկած ազատութեան եղբայրներին, որոնց սպասում է, ինչպէս «Արեւագալ»ի մուտքը՝

Որովհետեւ գիտեմ թէ

Յերեկն ինչպէս գիշերին՝ բոցն ալ ծուխին ետեւէն

Արդարօրէն պիտի գայ – հրաշք բոցը պիտի գայ...⁵:

2. Խրախուճին հմուտ ու բացախօս ռճաւորումով ստեղծել է անցեալ դարի ազգային տարեգրութեան գեղարուեստական վաւերագիր, քաղաքական սթափ գնահատութիւններով ազգային «դարապատում», միջնադարեան բառամթերքով՝ ժամանակագրութիւն: 1918-ի վաղ գարնանը ռուսները համաձայնում են Բրեստ-Լիտովսկում Թուրքիային զիջել Արդահանը, Ղարսը եւ Բաթումին: Բանաստեղծը մի կողմ է դնում ազգային-պատմաքաղաքական առարկայացումները եւ գործողութեան առաջին պլան է բերում խօսքի հոգեբանական նպատակադիր սրութիւնը՝ այն կառուցելով ռուսական պատուիրակութեան երեք անդամների հոգեբանական բարդ քննութեան ենթաշերտերում, որոնցից երկուսը հայ են՝ Լ. Կարախանը եւ Վ. Տէրեանը: Ընդ որում՝ առաջին գծի վրայ Գ. Չիչերինի ան-

հաւասարակշիռ թուացող խառնուածքն է, նրա անկեղծանալու բնաբուխ ձգտումը օղու շշի հետ եւ երկու հայ դիւանագէտների սառնասիրտ անդիմութիւնը ռուսի՝ տամբովեան յախումն հոգու՝ հայերի համար անսպասելի անհանգստութեան դիմաց:

Այն խաղաղութեան որուն կը ցանկանք ամէնքս հոգելին որմէ կախեալ է յաջողութիւնը յեղափոխութեան

Ոչ թէ ամէնուս նշանաբան ու դրօշ

Այլ անէծք կ'ըլլայ – կրակէ շապիկ բոլորիս...⁶:

Հաւատարիմ իր մշակած գրական տեսողական այն սկզբունքին, որ «ստուերը» մերն է, իսկ «արծազանգները»՝ օտարներինը, Ջ. Խրախունին Գէորգի Չիչերինին դարձնում է ակամայ խեղկատակ կանխագուշակ, որը համաշխարհային պատմութեան հոլովոյթի արանքներում պտտեցնում է հայոց կոյր պատմութեան դարձանիւղ, իսկ Լեւոն Կարախանի ու Վ. Տէրեանի հպատակ լուսաբանութիւնը բանաստեղծի համար այլեւս եւ մէկընդմիջտ՝ պատմութեան վկայի մնջիկ, իրականութեան մէջ խաբուսիկ ակնարկութիւնն է, մինչդեռ Չիչերինին տրուած է գնահատութեան անողորմ եղանակը: Բանաստեղծը եզրակացնում է՝ ճակատագրեր հիասող ռուսական քաղաքական միտքը քաջ հասկանում էր, թէ ինչ էր կատարուել երեք տարի առաջ, եւ կողմնորոշում է 1918-ի դեռ գալիք Գարունին:

*...Միայն ինչպէս չխորհիլ թէ
մենք կիկոպեան աչքին առջեւ ենք մեծագոյն վկային
գոր չենք կրնար խաբել՝ ինչպէս պիտի ջանանք ընել մարդոց –*

*Մեծ գրողը ինչ եւ ինչպէս պիտի գրէ
եղածներուն, ըլլալիքին, մեր մասին.
հապա ընդհուպ պատահելիք դժխեմ դէպքերը բոլոր
հեղեանքներն ահասարսուտ որ անպայման կը յաջորդեն
փլուզումի մ'այսքան խոշոր, այսքան ծանր
որուն տակ ի՞նչ կը մնայ, կը ճզմուի նորաբողոք
տունկի պէս
որոն գլխուն քար մը կ'իյնայ մահացու
ի՞նչ կ'ազարի փոշեթաթաւ մազապործ...⁷*

Բանաստեղծի ու նրա կերտած ռուս խորհրդային արտաքին գործերի հմուտ գործչի՝ պատմական ողբերգական կերպարի խօս-

քերում, - չմոռանանք, 1936-ին նրա զանգակն էլ քաշուեց, - յիշատակուած «փլուզումը» 1915-ն է, որի մասին մէկ ուրիշ տեղ՝ «Դար Հայաստանի» նշանաւոր քերթուածում, եղեռնի ուսումնամեակի օրերին, 69-ամեայ բանաստեղծը յանդգնում է ապաւինել իր հեղինակային մտքի կառոյցին:

Հապա եթէ տասնըհինգը եղած չըլլար

Այ ինչպէս

Աստուծոյ աչքը կրնայինք մենք մտնել

եւ ընդունուիլ Գաբրիէլէն իբր յաւերժի, արքայութեան ուխտարար

Ճակտին դրած նահապարակի լուսապսակն աստղավառ...⁸:

Խուլ ու գրաւեալ Բրեստ-Լիտովսկի խարխուլ պանդուկում Գ. Չիչերինն է աւետում նաեւ Հայաստանի Առաջին հանրապետութեան ծնունդը, թէւ «համեստօրէն» շեշտում է, թէ «նախատեսել կարելի չէ», այնուհանդերձ՝

*Անորոշ է, անծանօթ է, խարխաւիում է խաւարի մէջ անթափանց
ուրկէ գիւրնք թէ ինչ ճիւղ պիտի ցատքէ դուրս յանկարծ*

Թերեւս ալ խաղաղութեան ազատութեան հրեշտակ...

Հա՛ ինչ կ'ըսէք – կրնայ ըլլալ որ այս ահեղ մղձաւանջէն

քաղցրաժպիտ լուսափթիթ բան մը ծնի.

Ի՞նչ կը սպասէք սա սառնաշունչ գիշերէն

Գարնան արնէ, անոյշ հովիկ, ծառ ծաղիկ...⁹:

«Ազատութեան հրեշտակը» եկաւ ի հեճուկս ժամանակի եւ տարածաշրջանի քաղաքական հակամարտ ուժերի յայտնի խաղերի, եկաւ նաեւ իբրեւ քաղաքական շահի շարունակականութիւն, բայց վերջին խորհրդով՝ իբրեւ անշրջելի իրողութիւն, եկաւ իբրեւ այնքան սպասուած «գարնան արնէ», որը բանաստեղծը ողջունում է՝ թէկուզ հակամարտ դաշնակցի շուրթերով, որը «խաղերի» խաղարկումով հայեացքն անքթիթ ուղղելով Վ. Տէրեանին՝ այնուհանդերձ յայտարարում է հայկական հողերի օտարումի ռուսական նախաձեռնութիւնը:

Կ'երեւի թէ բաւական պիտի խաղանք ետ առաջ

սահմաններու հողերու հետ ազգային

ինչ որ բնաւ հաճելի չէ պիտի չըլլայ անկասկած

ընկեր Տէրեանին...¹⁰:

«Ստուերի» որոնումը ռուսական քաղաքական ուժի դիմաց Վ. Տերեանի ու Լ. Կարախանի լուռ համակերպության մէջ պիտի որոնել, որը թելադրում է քաղաքական դաշնակցի անճար ընտրութիւնը,- գտնում է պոլսահայ բանաստեղծը: Իսկ այս պարագայում անուններից անելի կարելուրում է քաղաքական երկընտրանք-կռուանի բացակայութիւնը, որը խորքային արմատներ ունի ցայսօր: Յիշենք Կ. Ռադեկի հետ Վ. Լենինի ուրախ-անմիջական համաձայնութիւնը, թէ լեհական կամ հայկական ժողովուրդների յետագայ ճակատագրի խնդիրը հաւաքնի արժէք ունեցող երկրորդական հասկացութիւն է համաշխարհային յեղափոխութեան տեսլականի առաջ: Եւ դա ասում էր Ստեփան Շահումեանին: Եւ դա ասում էր նոյն 1918 թուականին: Ազգային գործոնների համադրումն ինքնին միֆագերծումի լրջմիտ քաղաքական դաս է, անգամ՝ այս օրերին:

Վերադառնանք «արծազանգի» տրամաբանութեան ընթացքներին. ուշադրութիւն դարձնենք հեզնանքի գեղարուեստական հմուտ կիրառումին: Եթէ Գ. Չիչերինը յիշում է, թէ ինչպէս է յաղթանակած թշնամին սուրը դրել պարտուած ռուս կարմիր տէրութեան կոկորդին, ապա դա առիթ է բարեգութեաննալ ու յընթացս մտահոգուել Վ. Տերեանի կոկորդի հիւանդութեամբ («բեզ շատ գունատ կը տեսնեմ / տկար լոյսէն է արդեօք, թէ լրջօրէն հիւանդ ես. / Այսքան ծխելով սխալ ըրինք մենք - կը ներես / բայց չծխես ու չխմես այս կացութեան մէջ - ինչ ընես...»): Եթէ հարկ է, ծխի մէջ կորած սենեակի պատուանը կարելի է բացել / «...մէկդի քաշեցէք / սա թանձրախիտ վարագոյրները որոնք / կը կախուին կարծես մեր վիզերն ի վար / խղճմտանքներու նման յանցապարտ»¹¹: Անդրադարձն անելի քան տիպական է՝ մեղքը մերն է, մերն է նաեւ կորսուած խղճմտանքը, որն ուզենք թէ ոչ՝ պիտի շրջանցենք:

Պատմութեան տարբեր շրջաններում ազգային իրադարձութիւնների մէջ ստուերի տրամաբանութեան շարունակական փնտռուութիւնը եւ դաստիարակման քննական-գեղարուեստական արծազանգները Զարեհ Խրախունու մօտ բացում են 1915-ի եւ 1918-1920-ի եւ 1922-ի (Լոզանի կոնֆերանս) յարացոյցով, ուր ինքը յաճախ թաքնում է օտար գնահատութիւնների տակ եւ ըստ էութեան՝ համաձայնում է այդ գնահատականներին կամ առ նուազն ընդունում է օրինաչափութիւններ նրանց «ոչ հայկական» դիտողութիւններում եւ դատողութիւններում: Ելիսէան պալատում, հաւանաբար, արդէն վարչապետի կարգավիճակով Ռայմոն Պուանկարէն ընդունել է շնորհագուրկ քաղաքական գործիչ, վտարանդի հանրապետութեան Նախագահ Աւետիս Ահարոնեանին եւ մտերմիկ զրոյցի նստել նրա հետ: Մեր ժողովրդի ու պետականութեան երերուն

շրջանում (1913-1920) նա Ֆրանսիայի յաղթանակած Նախագահն էր, կողմնորոշում էր հակառուս ուժերին, ֆրանսիական մանդատով խոստումներ էր տուել՝ խրախուսելով հայերի վերադարձը Կիլիկիա ու անմիջապէս լքել միայնակ մնացած անոք ժողովրդին: Ենթադրաբար, երկու՝ արդէն երբեմնի դարձած նախագահների այս հանդիպումը մնում է երեակայածին, ոչ վաւերական. եթէ թոյլ տրուի ասելու՝ կայացել է «ետիրադարձային» շրջանում: Աւելացնենք, որ զրոյցի ընթացքին Ռ. Պուանկարէն ուժի դիրքերից է խօսում տապալուած հայ քաղաքական գործիչի հետ: Այստեղ, ընդունենք, ժամանակագրական առարկայական վրէպներ են առկայ: Նախ, նրանք, հաւանաբար, հանդիպում, գուցէ եւ հանդիպումներ, ունեցած պիտի լինէին անցեալ դարի 20-ական թթ., ընդհուպ մինչեւ երեսնական թթ. առաջին կէտը, քանի որ երկու գործիչների համար ճակատագրական է դարձել 1934-ը. Ահարոնեանը կաղնու պէս տապալուեց Փետրուարի 11-ին, իսկ ֆրանսիացի քաղաքական հսկան մահացել է Հոկտեմբերի 15-ին: Այդ դէպքում ինչո՞ւ է Զ. Խրախունին Ռ. Պուանկարէի բերնով ակնարկում «երազ հիւսող» Կոստան Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպի լոյսընծայումի փաստը, որը կատարեալ անախրոնիկ բան է թում, չէ՞ որ այն առանձին գրքով լոյս է տեսել Բոստոնում միայն 1943-ին, մինչդեռ Ռ. Պուանկարէն հաւանաբար, նուէր է ստացել դրա հայերէն օրինակը՝ «Շնորհակալ եղէք իրեն իմ կողմէ / գիրքը առի, մեծ հաճոյքով պիտի կարդամ / եթէ մէկը թարգմանէ...»:

Մի վրձնախաղ եւս. ակնյայտ է Ռ. Պուանկարէի՝ Կիլիկիան լքելու առթիւ բանաստեղծի ապրած խոր դժգոհութիւնը, որ երեւան է եկել եւրոպական օգտապաշտ մտածողութիւնից, թէ ինչու իբր ստիպուած էին զօրքերը «...ետ քաշել / ինչպէս գիտէք բազմաթիւ լուրջ պատճառներու ճնշման տակ»: Իրականում զրոյցի ընթացքում «ակամայ շատախօս դարձած» ֆրանսիական վարչապետը ինքն էլ հայ բանաստեղծի պարտադրութեամբ խոստովանում է՝

*մինչդեռ անշուշտ փարբեր կ'ըլլար ամէն ինչ
եթէ այդքան քարի տեղ
քիչ մը քարիւղ ունենայիք մեզի փայիք...¹²*

Եւ եթէ կայ անկեղծ սրտակցութիւն ֆրանսիացու կողմից, անակնկալ պոռթկումն է՝

*...սպեղծագործ ոգի ունիք ամէնքդ ալ
շահր երանի ու շահր ափսոս ձեր հաշտոյն*

- Լաւ աշակերտ գէշ դպրոցի մէջ ինկած -
Արժանի էք ամէն տեսակ մրցանակի
Բայց ձեռնունայն պիտի մնաք

Ու դուք նորէն

Պիտի զարնէք ձեր գլուխներն խաչքարերուն սրբապաշտ...¹³:

20-րդ դարի առաջին պետականութեան անկման հետեւանք-
ների մասին է խօսքը, ասուած է ցաւով ու տրտմութեամբ՝ հայկա-
կան պատուհանի՝ յաճախ բարձրաձայն չարտասանուող գնահա-
տութեամբ, Ձ. Խրախունու սուր ու հատու տեսողութեամբ: Ակնար-
կը միշտ ուղեցոյց է եղել բանաստեղծին. աւելին՝ դրանով է նա չա-
փել ազգային յանգրտական ընթացքը: Այդ նկատել է նաեւ իր գրչ-
եղբայր Ռոպէր Հատտեճեանը, որը մոնրէալեան հրատարակու-
թեան առաջաբանում իրայատկութիւնը դիտում է բանաստեղծի
առաւելական ընկալումների շարքում. «Այստեղ, իրաքանչիւր կտո-
րին մէջ, գրիչը թաթխուած է մեր ճակատագրական սա կամ նա
պահուն նկատմամբ օտարին ցոյց տուած մեծխօսիկ անտարբե-
րութիւնը ձաղկող սպաննիչ հեզնանքի մը մէջ: Բայց այդ հեզնան-
քը ուղղուած չէ միայն օտարին: Ուղղուած է նաեւ մեր բախտին:
Թերեւս այլ հերոսներու սխալներուն եւ անբարարութեան»¹⁴:

Նոյն տրամաբանութեամբ՝ ինչո՞վ բացատրել Ֆրանսիայի ազ-
գային հերոս Միսաք Մանուշեանի հանդէպ պոլսահայ բանաստեղ-
ծի անսպասելի ժխտական մօտեցումը, երբ անգամ Վէնսէնի ան-
տաղի մէջ ծուարած, գնդակահարումից վայրկեաններ առաջ, ստոյգ
մահուան առջեւ, ահազղեցիկ հին ամրոցի լայն բակի մէջ գերանին
կապկպուած, «ձեռքերը ետին», գերմանացիներին նետում է իր
անվեհեր խօսքը՝ «Վիվ լա Ֆրանսը»՝ «...կեցցէ կեցցէ երախտաւոր
Ֆրանսասն»: Բայց արդէօք հերոսական է նրա մահը: Ու հնչում է
բանաստեղծի զայրալից արտայայտութիւնը՝

Կեցցէ ան որ կը մեռնի ամէնուն ... ուրիշներուն համար
որպէսզի յաղթեն ուրիշներն ուրիշներուն...¹⁵:

«Ստուեր եւ արծազանգ»ի երկրորդ հրատարակութիւնից երեք
տարի առաջ՝ 1985-ի Օգոստոսին, Ձ. Խրախունին «Դրօշ» բանա-
ստեղծութեան մէջ եռագոյն դրօշը եւ նոյն միտքը ընդհանրական
այլ հարթութեան մէջ ներկայացնում է՝ իբրեւ հայոց պետականու-
թեան կայուն խորհրդանիշ.

Եւ ոչ մէկը կարիք կը զգայ զայն ուրիշէն կորզելու
անոր համար կոռուելու
անոր համար - կամ ուրիշին - մեռնելու¹⁶:

Պարզապէս Մանուշեանի օրինակը խիստ ցցուն է «կամ ուրի-
շին», «ուրիշներուն համար» մեռնելու գաղափարը տեղ հասցնելու
ճամբին, երբ ազգայինի պաշտպանութիւնը մթազնուած է անգամ
հայ քաջորդու տեսլապատկերում: «Հեռանալով» Մ. Մանուշեանից,
իրականում մօտենալով նրան՝ Ձ. Խրախունին յանգում է տխուր
հետեւութեան.

Այրի՛ հայր որ փասն անգամ խաչ է հանուած օտարէն
բայց եւ այնպէս դաս չէ առած ամենեւին
Նորէն խաչը կը հանէ ու կը նեպոյի կրակին մէջ ի հարկին
Կուրծք կը բանայ փոթորիկին ու դէմ կ'ելլէ հոսանքին...¹⁷:

Արուեստագէտ Ձ. Խրախունին մեր յիշատակած ծրագրային իր
ժողովածուներով կերտում է պատմութեան անխարդախ, բայց մո-
գական հայելու մոդէլը, ուր առաջնային են մնում պետականութե-
ան խորհուրդն ու ազգային մնայուն արժէքների իրատես դասդա-
սումները:

**Բանալի բառեր եւ արտայայտութիւններ - Առաջին
Հանրապետութիւն, պարմական եւ գեղարուեստական
ըննութիւն, սփիտքահայ մեկնական փորձ, Չարեհ Խրա-
խունի, «Դարապատում», «Սփուեր եւ արծազան»,
«Ազատերգութիւն» քերթողագրքեր, Առաջին Հանրա-
պետութեան եւ Խորհրդային Հայաստանի համադրա-
կան ճանաչողութեան գրական զուգահեռներ, ազգային
յիշողութիւն, անցեալի ընկալման փիլիսոփայական պա-
հանջ, ներքնապետութիւն, Անրի Բերգսոն:**

SUMMARY

Suren Danielyan

Doctor of Philological Sciences, Professor

Immanences (Shapes) of Statehood in the Poetry of Zareh Khrakhouni:

Allegory and Validity

The analysis of the concepts of national way of thinking and the statehood issue were a topic of discussion in Istanbul Armenian literature for decades. This was done mainly to contribute to the establishment of the Third Armenian Republic and elimination of major mistakes of the past based on both historical and literary experience of the First Armenian Republic. That was the main creative aim of Istanbul Armenian epic poet Zareh Khrakhouni and described the development of Newest Armenian poetry, in parallel with the Eastern Armenian one. It is reflected in the poetry book "Song of Liberty" published at the beginning of the Third Armenian Republic (1999), also in poems "Shadow and Echo" (1973-1988) and "History of the Century" all written by Zareh Khrakhouni.

Relying on recognition of historical experience and its continuity in depths of our first statehood through artistic parallels, Zareh Khrakhouni shows the creators of the Third Republic what mistakes to avoid and what way to go to achieve the desired goals.

Our article is dedicated to the main points mentioned above.

Keywords and phrases: *The First Republic of Armenia, historical and artistic analysis experience, Diasporal Armenian interpretation, Zareh Khrakhouni, "History of the Century", "Shadow and Echo", "Song of Liberty", poetry collection, literary parallels of comparative cognition of The First Armenian Republic and Soviet Armenia, national memory, philosophical requirement of past perception, intuitive, Henri Bergson.*

1. **2. Խրախունի, Դարապարտ, Եր., «Ձանգակ»** հրատ., 2001, էջ 31:
2. *Նոյն տեղում, էջ 33:*
3. *Նոյն տեղում, էջ 33-34:*
4. *Նոյնը, Տոնակարգ, Իսթանպուլ, 1973, էջ 52:*
5. *Նոյն տեղում, էջ 52:*
6. *Նոյնը, Սպուրեր եւ արձագանգ, Մոնրեալ, 1988, էջ 51:*
7. *Նոյն տեղում, էջ 53:*
8. *Նոյնը, Քար Հայաստանի, Պէյրոս, 1997, էջ 11:*
9. *Նոյնը, Սպուրեր եւ արձագանգ, էջ 53:*
10. *Նոյն տեղում:*
11. *Նոյն տեղում:*
12. *Նոյն տեղում, էջ 55:*
13. *Նոյն տեղում:*
14. *Նոյն տեղում, էջ 9:*
15. *Նոյն տեղում, էջ 61:*
16. *Նոյնը, Ազատեղադրւթիւն, Եր., 1993, էջ 53:*
17. *Նոյնը, Սպուրեր եւ արձագանգ, Մոնրեալ, էջ 61:*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Բանասիրակ գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրակ գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԼԵՉՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

**«Ազգային կարծրացումի»
գաղափարաբանությունը**

Նիկոլ Աղբալյանը քսաներորդ դարասկզբի նշանավոր հայ քաղաքական գործիչներից է, որը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին բացառիկ ազդեցություն և մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպման, հայկական կրթօջախների հիմնադրման ու կրթական նոր ծրագրերի մշակման ազգանվեր գործում: Կրթական ոլորտում ծավալած վերանորոգչական ու արմատաքի գործողությունները, ինչպես նաև ներկայացված նախագծերը ազգային բազմաստիճան դպրոցներ հիմնելու նպատակ էին հետապնդում ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս:

Անդադրում աշխատանքի, անմնացորդ նվիրման, աննկուն պայքարի ու ուղեղնային վառ օրինակ է Նիկոլ Աղբալյան գիտնական-մանկավարժի կենսագրությունը: Նա վարել է հասարակական-քաղաքական բեղուն գործունեություն. եղել է Հանրային պետական պաշտոնների նախագահ Թեհրանի համայնական խորհրդում, Հայ գրողների ընկերության փոխնախագահ Թիֆլիսում, Հայաստանի խորհրդարանի անդամ, Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության և արվեստի նախարար, ՀՅԴ եռանդուն գաղափարախոս և գործիչ: Իր բնորոշմամբ՝ Դաշնակցության «դուլ ու դադար» չունեցող անդամներից էր, մեծ հայրենասեր, որի երազանքը հայոց ազգին իր պատմական հայրենիքը վերադարձնելն էր և առաջադեմ ու զարգացած, գիտելիքահեն ազգ դարձնելը:

Նիկոլ Աղբալյանի գործունեության վճռորոշ ուղղություններից է եղել ուսուցչությունը. ուսուցչությամբ նա զբաղվել է իր փոթոր-

կուն կյանքի գրեթե ողջ ընթացքում՝ Հայաստանի և սփյուռքի բազմաթիվ վայրերում՝ Կաղզվան, Ագուլիս, Շուշի, Թեհրան, Ալեքսանդրիա, Բեյրութ, այստեղ եղել է Նշան Փալանջյան ճեմարանի տնօրենը: Նոր սերնդի կրթության և հայադավան դաստիարակության խնդիրը մշտապես եղել է նրա հասարակական, գիտական և հրապարակախոսական գործունեության առանցքում:

Նշանավոր մտավորականը համոզված էր, որ միայն ազգային լեզվի վրա խարսխված հիմնավոր կրթությունը կարող է ձևավորել համաշխարհային մրցակցությանը դիմակայելու ունակ արդիական ազգ: Լեզվական նպատակալաց ազգային-պետական քաղաքականությունը, Դաշնակցության գաղափարախոսի համոզմամբ, կարող է լեզվակիր հանրույթի հաղթանակների գրավականը դառնալ ազգային և համամարդկային միահյուսման շնորհիվ: Ինչպես իրավացիորեն նշում է Ն. Աղբալյանի կյանքի և գործունեության ուսումնասիրողներից Գ. Անանյանը. «Օտար ազգերի ծովում» հայության բեկորները հայ պահելու համար ոչ միայն ազգային ինքնատիպ մշակույթ պետք է ունենալ և փարած լինել հայոց լեզվի ամենազոր օգնությանը, այլև պետք է կարողանալ վեր բարձրանալ «հացի խնդրի» ու վայելքների տենչերից և կյանքը ապրել «ոգեկան վայելքի համար», որ նշանակում է գործունեության ելակետ ունենալ ժողովրդի ու հայրենիքի ապագան»:

«Ազդարար»-ում 1945թ. նա կգրի վերժամանակյա իր կոչը երիտասարդ հայերին. «Ես ծեր եմ արդեն և ասում եմ երիտասարդ հոգիներուն՝ ուտող ու վայելող երկուտանու վիճակից վերանալ դեպի մարդը սավառնող, այս պետք է լինի երիտասարդության հոգն ու ճիգը, որովհետև այս է նրա կոչումը տիեզերքի մեջ»:

Իր սկզբունքներին և գաղափարներին հավատարիմ Նիկոլ Աղբալյանը 1918-1920թթ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային խորհրդի, ապա՝ խորհրդարանի անդամ: Առաջին հանրապետության օրերին՝ 1919-1920թթ., դարձել է Հայաստանի Հանրապետության կրթության և արվեստի նախարար: 1919թ. հոկտեմբերին մշակելով Հայաստանի Հանրապետության առաջնահերթ կրթական խնդիրները՝ Ն. Աղբալյանը մինիստրների խորհրդին օրինագիծ է ներկայացնում, որտեղ հայ պաշտոնյաների համար առաջնահերթ է համարում հայոց լեզվի հիմնարար իմացությունը: Մեջբերենք այդ կարևորագույն օրինագծի հիմնական կետերը, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել նաև այսօր 21-րդ դարի Հայաստանի Հանրապետության համար. «1. Հայաստանի Հանրապետության պաշտոնեության համար երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում հիմնվում են հայոց լեզվի երեկոյան ծրագրերը:

2. Հայոց լեզվի դասընթացներին ավանդվում են հայոց լեզու և գեղագրություն, շաբաթական առնվազն 4 օր և ոչ ավել, քան շաբաթը 6 ժամ:

3. Դասընթացների տևողությունը 12 ամիս է:

4. Դասընթացների ունկնդիրները բաժանվում են 4 կարգի՝ նախձ նրանց հայոց լեզվի գիտության աստիճանին, որ որոշում են դասատուները:

5. Ամեն մինիստրություն ինքն է անվանում այն պաշտոնյաներին, որ պարտադրաբար հետևելու են հայոց լեզվի դասընթացներին: **Ծանոթություն. ա.** Դասընթացներին կարող են հետևել նրանք, որ մտադիր են պաշտոնյա դառնալու:

6. Դասընթացներն ավարտողները ենթարկվում են ստուգման և ստանում են վկայական:

7. Հայերեն բնավ չիմացողները պարտավոր են վերջնական ստուգման ենթարկվելու 12 ամիս հետո, սակավ իմացողները՝ 6 ամիս հետո:

8. Երեք ամիսը մեկ անգամ ունկնդիրները կարող են ենթարկվել ստուգման ստուգիչ հանձնաժողովի առջև»³:

Այսպիսով, նորանշանակ նախարարի համոզմամբ, մայրենի լեզվի իմացությունը և պատշաճ պետական գրագրությունն առաջնային խնդիրներ են անկախ պետականություն կառուցելու մեծ ճանապարհին, և դրանց թերազնահատումը լուրջ վտանգ է, որի գիտակցությամբ համակվեց ողջ կառավարությունը: Ն. Աղբալյանի պաշտոնավարության օրոք իրականացվեց պետական համալսարանի ստեղծելու հայոց վաղեմի նպատակը, հիմնվեց Հայաստանի գրողների ընկերությունը. կրթություն և արվեստ՝ ահա այն երկու հիմնասյուները, որոնց վրա պետք է բարձրանար հայոց ինքնուրույն պետականությունը: Հայաստանի համալսարանի բացման իր ճառում նա վճռորոշ գաղափարախոսական շեշտադրումներ էր կատարում. «Չնայած որ մեր երկիրն ավերված է... մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Մենք վերաշինում ենք մեր տունը և շինում կրթության տաճարներ... Դեռ մեզ համար բոլոր վտանգներն անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք»⁴: Աղբալյանի երազանքն էր տեսնել մեզ քաղաքակրթ ազգերի ընկերակցության մեջ. այդ մեծ քաղաքակրթության սալին մեր փոքրիկ մուրճը խփել. «Եվ կստեղծվի համամարդկային մի միություն, երբ բոլոր ազգերը կաշխատեն կողք կողքի, և այսօր մեր սահմաններում կեցած բանակների տեղ մենք կստեղծենք նոր բանակներ մեր երկրի տգիտության և խավարի դեմ»⁵:

Ն. Աղբալյանի լեզվաքաղաքական հայացքները վերլուծելիս պետք է մի կարևոր հանգամանք էլ նշել, որի վրա նա միշտ սևեռել է իր ու նորանկախ պետության ուշադրությունը՝ ուսուցիչների աշխատավարձը: Մինիստրների խորհրդին ներկայացրած Աղբալյան նախարարի մի շարք օրինագծեր վերաբերում են ուսուցիչներին արժանապատիվ աշխատավարձ սահմանելու հիմնախնդրին, ընդ որում, այս կերպ նախարարը ձգտում էր Հայաստան բերել դրսում ապրող և աշխատող կրթված և փորձառու մասնագետներին, քանի որ միայն կրթված ազգը կարող է համաշխարհային մրցակցության մեջ հաջողել, ուստի Հայաստանի Առաջին Հանրապետությունը օրենսդրորեն ամրագրում էր որակյալ ուսուցիչներին համեմատաբար ավելի մեծ պետական հոգաժողություն ցույց տալու անհրաժեշտությունը, քան այլ ասպարեզներում: Աղբալյանի համոզմամբ, Հայաստանի ռազմական, քաղաքական, տնտեսական հաջողությունները մեծապես պայմանավորված կլինեն որակյալ հանրակրթությամբ և արվեստի զարգացմամբ, իսկ դրա համար անհրաժեշտ էր ապահովել ուսուցիչների համար բարվոք նյութական կեցություն և պատշաճ վարձատրություն⁶: Այս ոլորտներում նրա ներդրումը չափազանց մեծ էր:

Ցավոք, բուլշևիկյան հեղաշրջումը նրան տարագիր դարձրեց, բայց իր ազգային լեզվաշինարարական գործունեությունը նա չդադարեցրեց, դարձավ հայկական սփյուռքի կրթական և մշակութային նվիրյալ գործիչը, ազգային ինքնության, հայապահպանության գաղափարախոսը:

Ուսուցչությանը զուգահեռ՝ Ն. Աղբալյանը գործուն գբաղվել է գրական-հրապարակախոսական գործունեությամբ: Գրել է բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ, դասախոսություններ, քաղաքականությանը նվիրված աշխատություններ և այլն: Քննադատի հոդվածները տպագրվել են «Մուրճ», «Հորիզոն», «Հայրենիք», «Հանդես ամսօրեայ», «Սիոն» և այլ հայտնի հայկական պարբերականներում: Աղբալյանը համոզված էր, որ յուրաքանչյուր գործչի, գրողի գործունեությունը գնահատելիս պետք է նախևառաջ նկատի առնել նրա ազգային պատկանելությունը՝ *ցեղը*, ապա՝ *միջավայրը*, որտեղ ապրել է նա, և *ժամանակը*, երբ ծավալվել է իր գործունեությունը: Հենց այս հայեցակետից էլ այս զեկուցման մեջ փորձել ենք համախմբել և արժևորել Աղբալյանի՝ հայոց լեզվին, նրա դերին և ազգային կրթությանը վերաբերող հայացքները: 1924թ. «Յուսաբեր»-ում Աղբալյանը ձևակերպել է այսօր էլ արդիական «ազգային կարծրացումի» իր տեսլականը. «Ձուլումի վտանգը ամէն կողմէ կայ ու կը մեծանայ. մենք պէտք է հակազդենք, ազգայնօրէն կարծրա-

նանք չլուծուելու համար: Այս բարերար կարծրացումը կ'իրագործուի, եթէ հաւաքականօրէն գիտակցինք կրթական կեանքի, ազգային ոգիի մշակման այս անհրաժեշտութիւնը եւ հաւաքական ճիգերով ալ ընդառաջ երթանք այս նպատակին իրագործմանը»⁷:

Ն. Աղբալյանը, ինչպէս իր ժամանակի մտավորականները, որոնք հայտնվել էին հին ու Նոր աշխարհների բախման խաչմերուկներում, փորձում էր գտնել հայ ժողովուրդը ազգային տենչերի իրականացման հնարավոր ուղիները՝ խուսափելով ծայրահեղականությունից: Հեռատես և բազմանշանակ է բոլշևիկների, ապա ընդհանրապես կոմունիստների իշխանությանը «Ազատամարտի» էջերում տպագրված Աղբալյանի սթափ գնահատականը: Նրա համոզմամբ, բոլշևիկները «գառանցողների և ստահակների թատերախաղ» են իրականացնում, բայց նրանց հետ պետք է հաշվի նստել, քանզի ազատ են «թոկամորթ խղճահարությունից», ուստի քրթմնջյունով և անզոր դժգոհանքով պետք է համակերպվել՝ պահելով վերադարձի հույսը⁸: Իրատես գործնականությունը մշտապես ուղեկցել է Աղբալյանին, որը հայրենիքից հեռու՝ սփյուռքում, շարունակում էր ազգային մեր զարթոնքի գաղափարաբանության որոնումները, որոնք զերծ էին հոռետեսությունից և հուսահատությունից, թեև իրականությունը շարունակաբար հայկական ինքնությունը մեծ մարտահրավերների առջև է կանգնեցրել. «Պատմությունն աներեր վարում է իր ընթացքը, և, ավաղ, փրկության ուղիները երբեմն կարծես թե տանում են դեպ... փակուղի: Եվ, այնուամենայնիվ, հուսահատվել չի կարելի, միշտ պետք է որոնել, կռահել գալիքը և պատրաստ լինել դրան: Աշխարհի բախտը մեր ձեռքին չէ, բայց նրա անիվը մեզ համար էլ է պտույտ գալիս»⁹:

Սփյուռքում ազգային գոյատևումից դեպի գործուն վերարտադրություն գնալու ճանապարհին Աղբալյանը կարևորում էր հայ անհատի և միջավայրի փոխկապակցվածությունը՝ համոզված, որ անհատը կրում է միջավայրի ազդեցությունը, բայց ինչ-որ տեղ էլ այդ միջավայրից անկախ, միջավայրով չպայմանավորված երևույթ է, որի շնորհիվ օտար միջավայրում էլ հնարավոր է ոչ միայն պահպանել ազգային ինքնագիտակցությունը, այլև առաջ տանել հայ դատի գաղափարները: Այս համոզումն այսօր էլ ուղղորդում է սփյուռքում գործող հայկական ազդեցիկ կառույցներին՝ ՀՅԴ Հայ դատի գրասենյակներին և ԱՄՆ «Հայկական համագումարին»: Վերջինս ստեղծվեց 1972 թվականին՝ խտացնելով աղբալյանական ազգային կարծրացումի և հետևողական վերադարձի սկզբունքները: «Հայկական համագումարի» ակունքներում կանգնած այրերը՝ Ստեփան Մուկարը, Հրայր Հովնանյանը, Ռոբերտ Գալուս-

տյանը, Հայկ Տեր-Մանվելյանը, Հայկազ Գրիգորյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը և նրանց հետևորդներն իրենց ամենօրյա գործունեությամբ արդեն 21-րդ դարում կյանքի են կոչում Նիկոլ Աղբալյանի տեսլականը, որն արդեն ընդլայնվել է՝ Յեղասպանության միջազգային քաղաքական ճանաչմանը զուգահեռ՝ ներառելով արցախյան հիմնախնդրի խաղաղ հանգուցալուծումը ազգերի ինքնորոշման սկզբունքի համաձայն, միջազգային ազդեցիկ քաղաքական և տնտեսական կառույցներին ու միություններին Հայաստանի Հանրապետության անդամակցելու իրավական գործընթացը:

Բանալի բառեր - Նիկոլ Աղբալյան, Հայաստանի առաջին հանրապետության կրթության և արվեստի նախարար, լեզվի վճռորոշ դերը ազգային-պետական քաղաքականության մեջ, դպրոց, կրթություն, հայապահպանություն, «ազգային կարծրացումի» գաղափարաբանություն:

SUMMARY

Narine Dilbaryan

PhD, Associate professor

Alvard Khachatryan

PhD, Associate professor

Nikol Aghbalyan's Linguistic and Political Views:

The Ideology of "National Hardening"

Nikol Aghbalyan was one of the prominent politicians of the early twentieth century who played an exceptional role in organizing the spiritual and cultural life of the Armenian people, establishing Armenian educational institutions and elaborating new educational programs during the first Armenian Republic. The educational and recreational activities in the educational field were aimed at establishing national schools not only in Armenia, but beyond its borders.

N. Aghbalyan was convinced that only a solid education based on national language could create a modern nation able to withstand world competition. The language-oriented national-state policy, the opinion of a great intellectual could be a guarantee of the victory of the linguistic community through the unification of national and universal.

During the days of the First Republic he became Minister of Education and Culture of the Republic of Armenia (1919-1920). During his term in office, Aghbalyan's long-term goal was to establish a university. Unfortunately, the Bolsheviks replaced him, but he did not stop the process of national language construction and became an educated and cultural figure in the Diaspora.

Parallel to teaching, N. Aghbalyan was engaged in literary-publicistic activity. He wrote numerous articles, reviews, lectures, works on politics and more. The critically acclaimed articles were published in "Murj", "Horizon", "Hayreniq",

"Handes Amsoreay", "Sion" and other well-known Armenian magazines. N. Aghbalyan was convinced that while evaluating the activities of a writer, one should first of all refer to his nationality, the environment where he lived and the period when his activity began. From this point of view, in this report we have tried to bring together and evaluate Aghbalyan's views on the role of the Armenian language and national education. 1924 Aghbalyan formulated his vision of "national hardening" in "Yughaber", which is actual even nowadays: "The danger of assimilation is omnipresent and it keeps increasing; we must counteract, harden as a nation in order not to assimilate. This beneficial hardening will be accomplished if we collectively assume this need for educational life, national spirit and accomplish this goal with collective efforts".

Keywords: *Nikol Aghbalyan, Minister of Education and Culture of the First Republic of Armenia, decisive role of language in national-state policy, school, education, preservation of Armenian identity, ideology of "national hardening".*

1. Գ. Անանյան, Նիկոլ Աղբալյան, Եր., ԵՀ հրատ., 2002, էջ 86:
2. «Ազդարար», Բեյրութ, 1945, 29 դեկտեմբերի, №1965:
3. Նիկոլ Աղբալյան, Նամակներ, պաշտոնական գրություններ, Եր., «Հայաստան» հրատ., 2003, էջ 214-215:
4. Նիկոլ Աղբալյան, Ընտրանի, Եր., ԵՀ հրատ., 2005, էջ 300:
5. Անդ, էջ 301:
6. Տես անդ, էջ 188-197:
7. Նիկոլ Աղբալյան, Ընտրանի, Եր., ԵՀ հրատ., 2005, էջ 314:
8. Գ. Անանյան, Նիկոլ Աղբալյան, Եր., ԵՀ հրատ., 2002, էջ 300:
9. Նույն տեղում, էջ 3:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ**

Իր ժողովրդի կյանքի բազմաբնույթ խնդիրներով մտահոգ բանաստեղծը դեռևս 1910-ական թվականներից սկսում է մի շարք լուրջ ծրագրերի իրագործում՝ կապված ազգային կրթության և մշակույթի պահպանման ու զարգացման հետ: Գրական և մշակութային կյանքի կազմակերպման հզոր լիցքերով և ունակություններով օժտված մտավորականը, աշխատանքային գործունեությունն սկսելով Հայոց հրատարակչական ընկերությունում, ի սկզբանե առնչվում էր մշակութային մի շարք խնդիրների, որոնք չունեին իրավական կարգավորում, վերահսկողություն և կազմակերպում: Հայագիտությունը կանգնած էր կորստի լուրջ վտանգի առջև: Եվ 1912թ., երբ ուժերի մեծ կենտրոնացում կար լրջորեն նշելու հայոց գրատպության 400-ամյակը և գրերի գյուտի 1500-ամյակը, Թումանյանը, քիչ թե շատ բարենպաստ պայմանները հաշվի առնելով, Պետերբուրգյան դատավարությունից նոր-նոր ազատ արձակված, հանդիպում է տեղի հայ գաղութի մշակութային գործիչների հետ, քննարկում հայոց պատմության և հնագիտության, հայագիտական ազգային ֆոնդ ստեղծելու հարցը: Նպատակն իրագործելու համար ընտրվում է հանձնաժողով, որի կազմում էին Հ. Թումանյանը, Ն. Մառը, Ն. Ադոնցը, Ս. Տիգրանյանը, Վ. Սուրենյանցը և այլ մտավորական գործիչներ: Նախաձեռնությամբ ոգևորված՝ Թումանյանը, Թիֆլիս հասնելուն պես, սկսում է նամակագրությամբ ակտիվ քննարկումներ անցկացնել Ն. Մառի հետ՝ գոհունակություն հայտնելով, որ հայագիտության զարգացման գործում գլխավոր պատասխանատվությունը Մառն իր վրա է վերցրել. «Ես սրտանց ուրախ եմ, որ հայագիտության զարգացման գործը մեր մեջ հաջողելու է ձեր ձեռքով, կապվելու է ձեզ հետ», - գրում է բանաստեղծը Մառին ուղղված նամակում: Միաժամանակ Թումանյանը շարունակում է իր ակտիվ բանակցություններն այլ հայ գիտնականների

հետ ևս՝ Մովսես Եպիսկ. Տեր-Մովսիսյան, Գալուստ Տեր-Մկրտչյան, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան և այլք: Նույն շրջանում Թումանյանը «Հորիզոն» թերթում իրատարակում է «Հայագիտության ազգային ֆոնդը» վերնագրով հոդվածը², որում նախանշված դրույթները հետագայում հիմք պիտի ծառայեին Հայկազյան ընկերության կանոնադրության շարադրման համար: Եվ ահա այդ շրջանում ձևավորվում է հայագիտության ազգային ֆոնդը, մի փոքր ուշ նաև՝ Հայոց պատմության և հնագիտության ֆոնդը: Գալուստ Տեր-Մկրտչյանին այդ օրերին ուղղված նամակում Թումանյանը գրում է. «Սրանից էլ լավ դեպք չի կարող լինել, որ մենք էլ ազգովին շարժվենք գիտության համար: Ախր շատ ենք անգետ ու կույր - գյուղից մինչև քաղաք, հոգևորական-աշխարհական, գրող և ընթերցող տգետ, տգետ, ամեն բանից, սկսած մեզանից, մեր պատմությունից, մեր կյանքից...»³:

Նույն թվականին հիմնվում է Կովկասի Հայոց գրական ընկերությունը (նույն է՝ Հայ գրողների կովկասյան ընկերություն), որը 1921 թվականին վերանվանվեց Հայ Գրչի մշակների միություն, այնուհետ՝ Հայ գրողների միություն: Հարկավոր էր հատուկ ուշադրություն դարձնել հայ գրողին, նրա սոցիալական, հեղինակային իրավունքի, հասարակության մեջ որոշակի դիրքի հաստատման և պահպանման համար: «Այսօր հայ գրողն ունի հիմնարկություն, որին նա կարող է ապավինել կարիքի ժամանակ և մի ժամադրավայր, ուր հայ գրականության հարցերն ու խնդիրները կարող են պարզաբանվել ու հանգել բանավոր լուծման»⁴:

Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծումը և վարչության նախագահի պաշտոնի ստանձնումը լայն հնարավորություններ ստեղծեցին Թումանյանի համար հայագիտական ասպարեզում իր նախընթաց ծրագրերն ավելի ընդլայնելու և դրանց իրագործման ճանապարհներ գտնելու համար:

Մշտառկա խնդիր ունենալով գրական լեզվի հարցը՝ Թումանյանը նաև վեր էր հանում դասագրքերի բարեփոխման խնդիրը՝ նախօրինակ տալով ավելի վաղ ստեղծված «Լուսաբեր» դասագիրքը՝ հեղինակությամբ Ստ. Լիսիցյանի, Լ. Շանթի և Թումանյանի, որը նախատեսված էր տարրական դասարանների երեխաների համար: Մշտապես կապը պահպանելով և մեծ կարևորություն տալով դպրոցական կրթական որակի ապահովմանը, ուսուցիչների լուրջ պատրաստմանը՝ դեռ 1914 թ. նոյեմբերին, երբ Թումանյանը հատուկ առաքելությամբ պատրաստվում էր մեկնել ռազմաճակատ, Բաքվում եղած օրերին այցելում է տեղի հայկական դպրոց: Հանդիպելով դպրոցի հոգաբարձության ներկայացուցիչների, բազմա-

թիվ աշակերտների և ուսուցիչների հետ՝ Թումանյանը, իր խոսքում հատուկ կարևորություն տալով կրթությանը՝ նշում է. «Հայ գրողին, հայ բանաստեղծին այսօր ոգևորողը հայ դպրոցը պետք է լինի: Տղա կրթել, նշանակում է մարդ կրթել, և աղջիկ կրթել, նշանակում է մայր կրթել, ընտանիք կրթել: Դարերի ավերակների վրա նոր-նոր շենքեր պիտի կառուցել և մայրենի խոսքը կենդանի պահել միշտ: - Ապա դիմելով աշակերտությանը նշում է՝ Ձեր ուսուցիչները ձեզ առաջնորդում են ոչ թե երկրներ, հողեր գրավելու, այլ հոգեկան նվաճումներ անելու և լուսավորության դռները բանալու ձեր առաջ: Հայ գրողը, հայ բանաստեղծը միշտ կոզևորվի, տեսնելով այն կառուցվածքը, որի վրա աշխատելու է սերունդը»⁵: Սակայն դպրոցական-մանկավարժական գործերի տնօրինումը Թումանյանը հարմար էր գտնում թողնելու հատուկ ստեղծված դպրոցական ֆոնդի գործունեությանը:

Այնուհետև նա սկսում է զբաղվել գեղարվեստի տարբեր ճյուղերի՝ թատրոնի, երաժշտության, նկարչության և այլնի պահպանման և զարգացման հարցերով: Մեծ ոգևորությամբ ողջունելով Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության հիմնադրումը՝ նա ուներ մի հավատ, թե երբ հնչի երգչի աստվածային ձայնը, գազանը մարդ կրառնա:

Հուսահատությունը երբեք չդարձավ նրա ուղեկիցը, ոչ էլ կարողացավ խոչընդոտել առաջ գնալու, նոր ծրագրեր կազմելու և դրանք իրագործելու ճանապարհին: Թումանյան մարդը հստակ հավատամք ուներ իր ազգի կենսական ուժի, մաքառումի, վերընձյուղման ու արարման անսպառ ունակությունների նկատմամբ: Ու չնայած դեռ բզկտված հայությունը ուշքի չէր եկել պատմական սարսափեղի արհավիրքներից, միննույն է, ինչպես իր ողջ գործունեության ընթացքում, այս շրջանում էլ Թումանյանն առաջ էր նայում՝ հող նախապատրաստելու ապագայի համար: Իր ազգի տեսակը լավ ճանաչող բանաստեղծը գիտեր այն բացարձակ ճշմարտության մասին, որ «հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին: Եվ սրա մեջ է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման»⁶:

1916թ. աշնանից նա վերսկսեց գրողների ընկերության հանդիպումները, երբ լայն արձագանք էր գտել նրա հայտնի հոդվածներից մեկը՝ «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի»⁷ վերնագրով: Կարևորելով գիտության զարգացումը և այդ բնագավառի աշխատավորների նյութապես ապահովելու հարցը, կրկին կարևորվում էր ստեղծելու մշակութային կյանքն ամբողջությամբ իր մեջ կենտրոնացնող և համակարգող ընկերություն: Նույն

թվականի հոկտեմբեր ամսին Ն. Մառին ուղղված նամակում Թումանյանն ակնարկում է մի խոշոր ընկերության կազմավորման մասին, որը «գրողների ընկերությունից անկախ նպատակ ունի ապահովելու և զարգացնելու առհասարակ հայկական կուլտուրան և մասնավորապես հայագիտությունը՝ իր բոլոր ճյուղերով» ակնկալելով Մառի մասնակցությունը և ակտիվ դասախոսությունները հատկապես հայագիտական և կովկասագիտական թեմաներով: Թումանյանը գրեթե նույնաբովանդակ նամակ էր հղում նաև Հրաչյա Աճառյանին, Մեսրոպ Եպիս. Տեր-Մովսիսյանին, Մ. Աբեղյանին, Ստ. Լխիցյանին... Սկսվում է դասախոսությունների մի բեղուն շրջան՝ հանրությանը նախապատրաստելու ապագա նոր, չափազանց կարևոր ծրագրի կազմակերպմանը և իրականացմանը:

Խոսքը Հայկազյան ընկերության մասին է, որ նախընթաց բոլոր նախաձեռնությունների գագաթն էր՝ երկար մշակումների ճանապարհ անցած, հղկված և պետականության ստեղծման նախաշեմին կրթամշակութային դաշտը լիովին կարգավորող ծրագիր: Առաջին հանրապետության ստեղծման նախաշեմին այս ծրագրով Թումանյանը ոչ միայն բարձրաձայնում էր կրթամշակութային լուրջ խնդիրների մասին, այլև առաջարկում իր տեսլականը՝ հիմք նախապատրաստելով ապագայի համար: Անշուշտ, դեռևս պետականության բացակայության պարագայում, Թումանյանը նաև քաջ գիտակցում էր, որ նման կարևորություն ունեցող և մեծածավալ աշխատանքի իրագործումը վեր է անհատի, նույնիսկ մասնավոր ընկերության ուժերից: Ուստի այն պետք է հիմնված լիներ համայն հայության բարոյական, գիտական և նյութական ուժերի վրա:

Հայկազյան ընկերության նախապատրաստական աշխատանքները հիմնավոր սկսվում են 1917թ. ապրիլից: Մի ընկերություն, որը կոչված էր համախմբելու հայ ունևորին, գիտնականին և գեղարվեստագետին մեկ նպատակի շուրջ՝ ի մի բերելու անցյալի հարուստ մշակութային ժառանգությունը, և հիմք դնելու հայկական համալսարանի և ապա՝ «հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ» Հայկական Ակադեմիայի»: Թումանյանը մտածված էր ընկերության անդամակիցների շրջանակներն այդչափ լայնացրել՝ դրանով հիմնավորելով գիտության կաճառի ազգովին ստեղծելու խորհուրդը: Կարճ ժամանակի ընթացքում բազմաթիվ արձագանքներ ստանալով՝ կազմվեց անդամակցողների ընդարձակ ցուցակ՝ մոտ հարյուր տասը հոգի՝ այդ թվում՝ գրողներ, հրապարակախոսներ, գրականագետներ, թարգմանիչներ, մանկավարժներ, ներկայացուցիչներ Մխիթարյաններից, գիտնական-լեզվաբաններ, գեղարվեստ-նկարիչներ, արձանագործներ, ճարտարապետներ, երաժշտագետներ, դերասաններ:

Բոլոր դեպքերում, պիտի համագործակցեին երկու հիմնական բաժին՝ ազգի ընդհանրության առջև հարգ ու դիրք ունեցող մարդիկ՝ նյութականի, հոգսի ու հսկողության համար, ապա գիտնականների, հայագետների մի լավ խումբ, որը գնահատելու և հրատարակելու է արդեն գործողների աշխատանքները:

Ըստ կանոնադրության՝ մեծագույն հարցերից մեկը մշակութային արժեքների հավաքչական աշխատանքի կազմակերպումն էր՝ քաղված հայկական և օտար աղբյուրներից, այլ երկրների պետական դիվաններում պահվող հայոց պատմությանը վերաբերող վավերագրերի, հայկական ձեռագրերի, վանքերի հին հիշատակարանների արձանագրությունները, հայ և օտար մամուլից քաղված նյութերը, հայ գաղութներում, մշակութային կենտրոններում, կաթողիկոսական դիվաններում պահվող հին ձեռագրերի կենտրոնացումը և այլն: Մշակութային այս ծրագիրն ուներ անշուշտ նաև քաղաքական ենթատեքստ, այն է՝ բարձրացնել ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և արժանապատվության զգացումը: Այսպիսի փորձեր Թումանյանը դեռ երիտասարդ տարիներից էր փորձարկում՝ դասախոսություններ կարդալով «Ծիածան» գաղտնի խմբակի ուսանողների համար, համագործակցելով Ս. Շահումյանի, Դ. Դեմիրճյանի, Ն. Աղբալյանի հետ՝ ի շահ մայրենի լեզվի, մշակույթի, ազգային ինքնագիտակցության բարձրացման, քանի որ Թումանյանը համոզված էր, որ «անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփին անմոլոր գնալու համար»:

Մշակութային արժեքների հավաքագրման աշխատանքներին Թումանյանն առաջարկում էր մասնակիցը դարձնել նաև գավառում աշխատող ուսուցիչներին, որոնցից յուրաքանչյուրն իր բնակության վայրում կարող էր հավաքել նյութեր և տրամադրել ազգագրական ժողովածուների հրատարակիչներին:

Կանոնադրության մյուս կարևոր կետերից էր *Ազգի գիտական ճշմարիտ պատմության կազմումը՝ դուրս բերելով վանքերում կուտակած ձեռագրերն ու հիշատակարանները,*

Այնուհետև կազմել հայոց կենդանի լեզվի բառարան ու ստեղծել մի ընդհանուր գրական լեզու՝ առաջորդեն հավաքելով հայոց բարբառները՝ օգտվելու դրանց բառային և ոճական հարուստ պաշարներից:

Եվ այս ամենն անելու համար նախ և առաջ հարկավոր էր համախմբել օտարության մեջ ապրող հայ գիտնականներին, որոնք, ժամանակի ընթացքում մի կողմ դնելով հայերենը, ստիպված էին իրենց գիտական աշխատանքն օտար լեզուներով կատարելու, և

նպաստավոր պայմաններ ստեղծել նրանց վերադարձի ու հիմնավոր աշխատանք կատարելու համար: «Դուրս է գալիս՝ բավական թվով ծագումով հայ գիտնականներ կան, որ հայերեն չգիտեն, այժմ, Հայկազյան ընկերության բացվելով, պատրաստ են հայերեն սովորել և հայ գիտնական դառնալ»⁸, - գրում էր Թումանյանը Հայկազյան ընկերության պատվավոր նախագահ Կոստանդին Ալիխանյանին:

Ի վերջո, այս ամենի նպատակը միայն հայագիտությունը մշակելը չէր, այլ հայերեն գիտություն տարածելը:

Չնայած որ 1917 թվականի դեկտեմբերի վերջերին փաստացի դադարեց Հայկազյան ընկերության գործունեությունը, սակայն արդեն այս հիմքի վրա կանգնեցվում էին հայկական համալսարանի սյուները: Հայաստանի առաջին հանրապետության մշակութային գործիչներին, որոնք համախոհներն էին Թումանյանին ընկերության կազմակերպման ողջ ընթացքում, հաջողվեց 1919 թվականին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) ստեղծել համալսարան:

Որպես ամփոփում մեջբերենք Թումանյանի ողջույնի խոսքը այս կարևոր իրադարձության առիթով՝ «Թե հայ գրողների ընկերությունը, և թե ես անձամբ ստացանք էն ամենաթանկ հրավերը, որ կարող էինք երագել: Թե ընկերության անունից, թե իմ կողմից սրտագին շնորհավորում եմ հայկական առաջին համալսարանի բացումը ազատ Հայաստանում: Մեր ժողովրդին բռնակալներից ֆիզիկապես ազատելուց հետո պիտի ազատել նրա միտքն ու հոգին խավարի ու տգիտության բռնակալությունից և հաղորդակից անել լուսավոր մարդկության և տիեզերքի մեծ կյանքին: Մեր դարավոր մաքառումներով մենք դրան ենք ձգտել ամբողջ ցեղով: Հայ գրողների կյանքն ու բախտը անխզելիորեն կապված են հայոց համալսարանի կյանքի ու բախտի հետ:

Կեցցե՛ ազատ Հայաստանը, կեցցե՛ ազատ Հայաստանի ազատ համալսարանը:

Հայ գրողների ընկերության նախագահ՝ Հովհ. Թումանյան»⁹:

Բանալի բառեր - Հայկազյան ընկերություն, Թումանյան, համալսարան, դասագիրք:

SUMMARY

Ani Yeghiazaryan

PhD

Hovhannes Tumanian's Educational and Cultural Programs on the Threshold of Formation of the First Republic

Since the beginning of 1900s the poet, being concerned with the diverse issues of his people's lives, implemented a number of serious projects related to the development and preservation of national education and culture. Facing the problem with the literary language, Tumanian first raised the issue of textbook reform, firstly by authoring the textbook "Lusaber" for children of elementary grades. Then he started dealing with the preservation and development of different branches of art - theater, music, painting, and so on.

The peak of his initiatives was the creation of Haigazian Company. This was a company the ultimate goal of whose charter was to create an Armenian University and later an Academy. On the threshold of the first Republic of Armenia Tumanian not only raised serious educational and cultural issues, but also offered his vision for the future. Certainly, Tumanian was well aware that the implementation of such important and large-scale work was beyond the power of an individual, even beyond the power of a private company. Therefore, it should have relied on the moral, scientific and material forces of all Armenians.

Keywords: *Haygazyan Company, Tumanian, University, textbook.*

1. Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, /այսուհետք՝ ԵԼԺ/ հ.10, Եր., 1999, էջ 146:
2. Հորիզոն, Թիֆլիս, 1912, 2 մայիսի, № 91:
3. ԵԼԺ, հ. 10, էջ 129:
4. Հարված Հովհ. Թումանյանի «Կոչ» հորվածից, ԵԼԺ, հ. 6, էջ 379:
5. ԵԼԺ, հ. 7, էջ 129:
6. ԵԼԺ, հ 7, էջ 324:
7. Հորիզոն, Թիֆլիս, 1916, 6, 8, 10, 12 մայիսի, №№ 99, 101, 102, 104:
8. ԵԼԺ, հ 10, էջ 273:
9. ԵԼԺ, հ 10, էջ 343:

ՎԱՀԱԳՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌՈՒՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ (1991-2018 թթ.)

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյա հոբելյանը լավագույն առիթ է՝ ուսումնասիրելու Հայաստանի երրորդ հանրապետության անկախության հռչակումից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում հայաստանյան հեռուստա-եթերում ունեցած անդրադարձը Հայաստանի առաջին հանրապետությանը: Բնականաբար, խորհրդային տարիներին Հայաստանի առաջին հանրապետությունը կամ դուրս էր մնացել լրատվամիջոցների ուշադրությունից, կամ էլ հնարավորինս բացասական տոնայնությամբ էր ներկայացվել: Հեռուստաընկերությունների եթերներում պատկերացնելն անգամ աներևակայելի էր, որ Հայաստանի առաջին հանրապետության գործունեությունը կարող էր ուշադրության արժանանալ: 1990-ականների սկզբին հասարակարգի փոփոխությունն ու Հայաստանի անկախացումը միանգամայն նոր իրավիճակ ձևավորեցին, որը բնականաբար ենթադրում էր նաև հեռուստաեթերում ամբողջական անդրադարձ Հայաստանի առաջին հանրապետությանը: Խորհրդային 70 տարիներից հետո վերջապես նպաստավոր պայմաններ էին ձևավորվել, որպեսզի Հայաստանի առաջին հանրապետության մասին տրվեր ամբողջական և անաչառ հեռուստատեսային նյութ: Հիշյալ ժամանակահատվածում հայաստանյան իրականության պայմաններում դեռևս սաղմնավորման փուլում էին գտնվում մասնավոր հեռուստաընկերությունները և միակ հեռուստատեսային լրատվամիջոցը Հայաստանի պետական հեռուստատեսությունն էր, որը հետագայում վերանվանվեց Հայաստանի ազգային հեռուստատեսության, իսկ ավելի ուշ ստացավ Հանրային հեռուստատեսության կարգավիճակ: Հայաստանյան միակ հեռուստատեսային լրատվամիջոցը, 1990-ականների սկզբներին գործելով էներգետիկ ճգնաժամի պայմաններում

և երկար ժամանակահատված եթեր հեռարձակվելով 2-4 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներով, հասկանալի պատճառներով չէր կարող ուշադրության կենտրոնում ունենալ փաստավազարագրական նյութը և Հայաստանի առաջին հանրապետության աննշվող տեսանյութեր, տեսաֆիլմեր այդ ժամանակահատվածում չեն հիշատակվում: Միայն առանձին հաղորդատեսակներում եղել է անդրադարձ Հայաստանի առաջին հանրապետության գործունեությանը: Մասնավորապես հեռուստամեկնաբան, հարցազրուցավար Ռոբերտ Մավիսակալյանի մի քանի հաղորդաշարերում հարցազրույցների ձևաչափով որոշակի անդրադարձ եղավ Առաջին հանրապետությանը, նույն տարիներին «Կարծիք» հաղորդաշարի հեղինակ Սերգո Երիցյանը, Սփյուռքի հայաշատ գաղթօջախների գործունեությունը ներկայացնելիս, մասնակի անդրադարձ ունեցավ նաև Հայաստանի առաջին հանրապետությանը¹:

Մի կարևոր հանգամանքի մասին անպայման արժե հիշատակել: Հայաստանի առաջին հանրապետությունում վավերագրություն որպես այդպիսին չի եղել: Առաջին անգամ տեսախցիկ աշխատել է 1919թ. աշնանը, երբ ամերիկյան պատվիրակությունը ժամանել է Հայաստան, երկրորդ անգամ նկարահանում կատարվել է 1920 թվականին, երբ ռուսական Կարմիր բանակը մտել է Երևան: Առաջին հանրապետությանն առնչվող շատ աղքատիկ վավերագրություն ունենք, ինչպես տեսանյութերի, այնպես էլ լուսանկարների, փաստական տվյալների տեսքով: Այդ պատճառով 1990-ականների սկզբներին Առաջին հանրապետության նյութը հեռուստատեսություն բերելու մեծ դժվարություն կար: Ինչ մասնիկներ էլ եղել են աշխարհի տարբեր երկրներում, հիմնականում անձնական արխիվներում են եղել, և համախմբելը բավականին դժվարություն է ներկայացրել: Այստեղ հավելենք նաև գաղափարախոսական խնդրի առկայությունը: 1990-ականների սկզբներին Առաջին հանրապետության զինանշանն ու դրոշը դարձան նորանկախ Հայաստանի խորհրդանիշները, սակայն բուն գաղափարը և Առաջին հանրապետության արժևորումը, ցավոք, տեղի չունեցավ: Բացառապես մի քանի հեռուստահաղորդումներում ներկայացվեցին Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրները: Մինչ օրս շատ դեպքերում ներկայացվում և Հայաստանի Առաջին Հանրապետության մասին թյուր կարծիք են ձևավորում բացառապես խորհրդային այն ֆիլմերը, որոնցում բացասական լույսի ներքո են ներկայացվում 1918-1920-ական թվականները²:

1990-ականների առաջին կեսերին հայաստանյան հեռուստա-եթերում որոշակի սահմանափակումներ դրվեցին Հայաստանի առաջին հանրապետության նյութի վրա՝ հաշվի առնելով այն հան-

գամանքը, որ ՀՅԴ գործունեությունն այդ տարիներին կասեցվեց. Հայաստանի առաջին հանրապետության մասին կամ ոչինչ չէր ասվում, կամ էլ այդ նյութին անդրադարձը բացասական երանգներով էր արվում: Ամփոփելով 1991-1998թթ. հայաստանյան հեռուստաեթերում Հայաստանի առաջին հանրապետության վերաբերյալ անդրադարձը՝ պետք է փաստենք, որ հիշյալ ժամանակահատվածում նշանակալի փաստավավերագրական նյութեր, տեսաֆիլմեր չստեղծվեցին: Իրավիճակը միանգամայն այլ ընթացք ստացավ 1999 թվականից հետո, երբ ստեղծվեցին և ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել հայաստանյան մասնավոր հեռուստաընկերությունները: ՀՅԴ-ն արդեն վերսկսել էր գործունեությունը Հայաստանում, իսկ 2004 թվականին հիմնադրվեց նաև «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը, որը գործունեության հենց սկզբից լայնորեն ներկայացրեց Հայաստանի առաջին հանրապետությանն առնչվող նյութը, առանձին հաղորդաշարերով անդրադարձ եղավ Առաջին հանրապետության հիմնադրներին³: «Երկիր Մեդիա»-ին դեռևս կանդադառնանք, սակայն կարևոր է նաև արժանի գնահատական տալ 1990-ականների հայաստանյան մասնավոր հեռուստաընկերությունների շարքում առաջամարտիկ համարվող «Ար» հեռուստաընկերությանը: «Ար»-ը տարբեր առիթներով պարբերաբար անդրադարձել է Հայաստանի առաջին հանրապետությանը, իսկ վերջին մի քանի տարիներին «Մեր մեծերը» հաղորդաշարում ներկայացվում են Առաջին հանրապետության հիմնադիրներին նվիրված տեսաֆիլմեր⁴: Խոսելով հայաստանյան հեռուստաեթերում Առաջին հանրապետությանն առնչվող նյութի մասին՝ կարևոր է նշել, որ հատկապես 2000 թվականից սկսած առավել ընդգրկուն ֆիլմաշարեր պատրաստվեցին, որոնցում ծանրակշիռ մասնակցություն ունեցան պատմաբաններ Ամատունի Վիրաբյանը, Աշոտ Մեղքոնյանը, Ավագ Հարությունյանը, Արտավազդ Դարբինյանը, Աշոտ Ներսիսյանը և այլք: Հիշարժան է Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում «Մայրաքաղաք» ստեղծագործական խմբի կողմից 2005 թվականին ներկայացված «Առաջին այրեր» հեռուստաշարը: Արամ Մանուկյանի, Նիկոլ Աղբալյանի և Հայաստանի առաջին հանրապետության մյուս նվիրյալների մասին ամբողջական պատկերացում տրվող տեսաֆիլմերում հեղինակ Անահիտ Մուրադյանի կողմից ներկայացվում էր ոչ միայն առաջին այրերի կյանքն ու գործը, այլև դրամատուրգիական ինքնատիպ լուծումներով անդրադարձ էր լինում Հայաստանի առաջին հանրապետության պատմությանը: Այս հաղորդաշարում առաջին անգամ լայնորեն սկսեցին օգտագործվել Հայաստանի ազգային արխիվում պահվող փաս-

տագրական նյութերը, որոնք առնչվում էին Հայաստանի առաջին հանրապետությանը. պատմագիտական նյութի հիման վրա առավել դիտարժան էր դառնում հաղորդաշարը⁵: Հայաստանի հանրային հեռուստատեսության «Ծննդավայր» հաղորդաշարի հեղինակ Ջուլիետ Կաժոյանը նույնպես Առաջին հանրապետության հիմնադիրներին պարբերաբար անդրադարձ էր կատարել⁶: Հանրային հեռուստատեսության եթերում «Ինչո՞ւ է աղմկում անցյալը» պատմավավերագրական հաղորդաշարում 2013թ. անդրադարձ եղավ Հայաստանի առաջին հանրապետությանը: Այս շարքի առաջին հաղորդումը նվիրված էր Մայիսյան հերոսամարտերին: Հիշարժան է Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում 2013 թվականին ներկայացված մեկ այլ ծավալուն տեսաֆիլմ, որը նվիրված էր 20-րդ դարասկզբի պետական քաղաքական նշանավոր գործիչ, հայոց նոր պետականության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդյան 130-ամյակին: Այս տեսաֆիլմում Արամ Մանուկյանի կյանքն ու գործը ներկայացվեց՝ դիտակետում ունենալով նրա գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման ժամանակահատվածում⁷: Կարևոր է փաստել, որ Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում վերջին տարիներին Առաջին հանրապետությանը նվիրված հաղորդատեսակները ժանրային բազմազանություն են ստացել: Այս նյութը ներառվում է հեռուստատեսային մանկապատանեկան ճանաչողական հաղորդումներում, ինչպես նաև համերգային ծրագրերում: Մասնավորապես 2017թ. «Երգ երգոց» հաղորդաշարի հաղորդումներից մեկը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության օրվան⁸: Ներկայացվեցին երգեր, երաժշտական կատարումներ, որոնք նվիրված են Հայաստանի առաջին հանրապետությանը, իսկ հաղորդման հեռուստաէջերում ներկայացվեց ուշագրավ փաստագրական նյութ:

Խոսելով հայաստանյան հեռուստաընկերությունների այն հաղորդումների մասին, որոնք անդրադարձ են ունեցել Հայաստանի առաջին հանրապետությանը՝ պետք է առանձնացնենք նաև «Արարատ» հեռուստաալիքի գործունեությունը նույնպես: Վերջին մի քանի տարիներին այս հեռուստաընկերության եթերում պատմաբան Ավագ Հարությունյանը «Հայրողիներ» հեռուստաշարով պարբերաբար անդրադառնում է Հայաստանի առաջին հանրապետությանը. պատմաբանների մասնակցությամբ կազմակերպվում են հարցազրույցներ, որոնցում ներկայացվում, բացահայտվում են հանրության լայն շերտերին անհայտ փաստեր, պատմական իրողություններ: Միգուցե այս հաղորդատեսակն այնքան էլ մեծ լսարան չունի, սակայն խորքային ուսումնասիրության առումով, մեծապես գնահատելի է⁹:

Առավել մանրամասն անդրադառնանք «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության գործունեությանը և հատկապես Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված հեռուստաարտադրանքին: «Երկիր Մեդիա»-ն առաջին անգամ եթեր է հեռարձակվել 2004 թվականի մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրը: Լրատվական թողարկմանն անմիջապես հաջորդել է Գեղամ Մանուկյանի հեղինակած 40 րոպեանոց «Մեծ ճանապարհի սկիզբը» ֆիլմաշարի առաջին մասը, որը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրմանը: «Մեծ ճանապարհի սկիզբը» 4 մասանոց ֆիլմաշարը երկարատև աշխատանքի արդյունք է: Ֆիլմաշարի վերջին ֆիլմը խորագրվել է «Ռուսական սալի և թուրքական պայտի արանքում»: Հեղինակը մտադրություն ունի հետագայում այս նյութին դարձյալ անդրադառնալու, և այս անգամ ոչ թե պատմական նյութն է ներկայացվելու, այլ Հայաստանի առաջին հանրապետության հիմնաքարային արժևորում պետք է կատարվի: Անդրադառնալով «Երկիր Մեդիա»-ի գործունեության 14 տարիներին՝ պետք է նշենք, որ տասնյակ հաղորդաշարերում ներկայացվել են Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրները: Առանձին տեսաֆիլմերով անդրադարձ է եղել մեր պատմության այդ կարևոր ժամանակահատվածին: Մասնավորապես «Մեր մեծերը», «Գաղտնի թղթապանակ», «Անդրադարձ», «Այս օրը» հեռուստաշարքերում պարբերաբար ներկայացվել է Հայաստանի առաջին հանրապետությանն առնչվող նյութը: Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված 2017-2018 թթ. ընթացքում «Երկիր Մեդիա»-ն նաև առանձին տեսաֆիլմերով ներկայացրեց 1918-1920թթ. պատմական ժամանակաշրջանը: Եթեր հեռարձակվեցին հետևյալ տեսաֆիլմերը՝

Սիմոն Վրացյան. Ժամանակի վկան
Առաջին հանրապետություն. 1919 Վերելք ու համախմբում
Լևոն Շանթ. Ինկած բերդի իշխանը
Քաջազնունի. կյանք հանուն Հայաստանի
1919-ի առաջին ամիսները
Դրոյի Ժամանակը
Առաջին Հանրապետություն. ավարտվում է 1918թ.
1918թ. ամառը և աշունը
Սերունդներ դուք ձեզ ճանաչեք Սարգսրապատից
Անկախության ակունքներում
Ավետիս Ահարոնյան. Ազատության ճանապարհին
Արևածագ մայրամուտից առաջ

Այսքանը «Երկիր Մեդիա»-ի մասին, սակայն ամբողջացնելով Առաջին հանրապետության մասին պատրաստված հեռուստատեսային նյութի մասին մեր դիտարկումը՝ անհրաժեշտ է նշել նաև, որ տարիներ առաջ ՀՀ մշակույթի նախարարության պատվերով Հայաստանի առաջին հանրապետության մասին ծավալուն տեսաֆիլմ նկարահանեց ռեժիսոր Տիգրան Խզմալյանը, սակայն նախարարությունն այդ տեսաֆիլմը ցուցադրության չարտոնեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խեղաթյուրված էին պատմական փաստերը:

Ամփոփելով նյութը՝ պետք է նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյա հոբելյանը լավագույն առիթն է, որպեսզի հեռուստատեսությունն անդրադառնա մեր պատմության այդ կարևոր ժամանակահատվածին, արժանի գնահատական տրվի պատմական փաստերին ու իրողություններին: Առաջին հանրապետության մասին խոսելը, ներկայացնելն անչափ կարևոր են նաև այն առումով, որ այս տարբերակով մեր հեռուստաընկերությունների եթերում մեկ անգամ ևս փաստվում է այն կարևոր ճշմարտությունը, որ պետականությունն ու անկախությունն են բարձրագույն արժեքները:

Բանալի բառեր - Հեռուստատեսություն, Ռադիո, Տեսաֆիլմ, Հեռուստահաղորդում, Հայաստանի հեռուստատեսություն, Հայաստանի առաջին հանրապետություն:

SUMMARY

Vahagn Zakaryan

PhD, Associate professor

The First Republic of Armenia in the Outlook of Armenian TV Companies (1991-2018)

Vahagn Zakaryan's article entitled "The First Republic of Armenia in the Outlook of Armenian TV Companies (1991-2018)" presents the coverage of the Armenian TV companies on the First Republic of Armenia. A comparative analysis of video films and TV programs made during different years has been made, as well as documentaries about the founders of the First Republic of Armenia have been observed.

Keywords: *Television, Radio, video film, TV show, Armenian TV, First Republic of Armenia.*

1. **Ս. Երիցյան**, *Խոհեր կադրից դուրս, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, էջ 165:*
2. <https://www.panorama.am/am/news/2008/01/30/vhovhannisian/1354553>
3. <http://yerkirmedia.am/contact/>
4. <https://www.youtube.com/watch?v=j3H8LbLeklw>
5. <https://www.youtube.com/watch?v=-5VdMgcoeX0>
6. <https://www.youtube.com/watch?v=hA9QT37KzCW>
7. https://www.youtube.com/watch?v=I9Z4pbo72_M
8. <https://www.youtube.com/watch?v=BXRua958RvA>
9. <https://www.youtube.com/watch?v=pYrcltfeGSY>

**ԱՇԽԱՐՀԻԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայ ազգը իր մշակութակիր և մշակութաստեղծ բնույթին համապատասխան դարերի ընթացքում միշտ մեծ ուշադրություն է հատկացրել կրթամշակութային կյանքի կազմակերպմանը: Փոխվել են կազմակերպման եղանակներն ու մեթոդները, ուղղությունները, կազմակերպիչները, գործունեության հնարավորությունների շրջանակները, բայց կրթամշակութային կյանքի զարգացման նպատակադրումը միշտ առկա է եղել: Հայ ժողովրդի պատմության Նորագույն ժամանակաշրջանի սկզբում անկախության նվաճումը առաջացած ծանրագույն մարտահրավերների կողքին ստեղծում է հնարավորությունների ավելի լայն շրջանակ՝ վերակառուցելու ազգային կյանքը իր բոլոր ոլորտներով, այդ թվում՝ նորովի ձևավորելու և զարգացնելու կրթական համակարգը: Նախորդ դարերին բնորոշ կրթության կազմակերպման հոգևոր առանցքը աստիճանաբար փոխարինվում էր աշխարհիկով. հիմնական կազմակերպիչի դերը ստանձնում է պետությունը:

Սույն հոդվածով ներկայացնելու ենք եկեղեցական-ծխական դպրոցները պետականի վերածելու, կրթական գործի կազմակերպման համար պետական կառույցների ստեղծման ու համապատասխան օրենքների ընդունման, ծրագրային փոփոխությունների, կրթական նոր օղակների ստեղծման հարցերը:

Կրթական գործի կազմակերպման նպատակով անկախացումից հետո ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվում է կրթական բաժին՝ Արշալույս Աստվածատրյանի ղեկավարությամբ: Վերջինի հիման վրա 1918թ. նոյեմբերին ստեղծվում է առանձին նախարարություն՝ Միքայել Աթարբեգյանի նախագահությամբ¹: Միաժամանակ Հայաստանի խորհրդում Ս. Տիգրանյանի նախագահությամբ ստեղծվում է դպրոցական հանձնաժողով՝ նպատակ ունենալով մշակելու օրենսդրական ակտեր կրթական գործը կանոնա-

վորելու համար: 1918թ. օգոստոսին հանձնաժողովը մշակում և Հայաստանի խորհրդի քննարկմանն է ներկայացնում «Դպրոցի կառավարման մասին» օրինագիծը²: Վերջինը հաստատվում է 1918թ. սեպտեմբերի 11-ին: Օրենքի հիմքում դրվում է հասարակական սկզբունքը: Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն, ընկերակցություն, ինչպես նաև անհատ անձ իրավունք էր ստանում դպրոց բացելու: Մերժվում էր դպրոցների պետականացման մոտեցումը, պետությանը վերապահվում էր պետական գանձարանից նպաստ ստացող դպրոցների ընդհանուր ղեկավարումը³: Չնայած դպրոցական գործի ազատականացման վերաբերյալ օրենքի ընդունմանը՝ Հայաստանի Հանրապետության ծանր դրությունը հնարավորություն չէր տալիս կրթական գործի կազմակերպման մեջ ներգրավելու տարբեր կազմակերպությունների ու անհատների, և կազմակերպման ծանրությունը մեծ մասամբ ընկնում է պետության վրա: 1918-1919 ուստարում պետությունը բացում է շուրջ 70 տարրական դպրոց, որոնց կողքին շարունակում էին գոյատևել 62 եկեղեցական-ծխական տարրական դպրոցներ: Սակայն պետք է նշենք, որ նրանց գոյությունը հնարավոր էր դառնում միայն պետական նպաստի ստացման շնորհիվ: 1918-1919 ուստարվա համար եկեղեցական-ծխական դպրոցները ստացել են 270.000 ռուբլի նպաստ, որը կազմում էր նրանց բյուջեի շուրջ 80 տոկոսը⁴:

Հաշվի առնելով այլ անձանց և կազմակերպությունների կողմից դպրոցներ բացելու անհնարինությունը՝ 1919թ. հունիսի 17-ին Հանրային կրթության և արվեստի նախարարությունը Նախարարների խորհրդին առաջարկում է, որ պետությունը ստանձնի երկրում գոյություն ունեցող և իր անցյալով օգտակար ճանաչված բոլոր տիպի դպրոցների վերաբացման և կառավարման իրավասությունը⁵: Առաջարկը հավանության է արժանանում, և սկսվում է դպրոցների պետականացման գործընթացը:

Աստիճանաբար պետականի էին փոխակերպվում բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները: 1920թ. հունվարի 15-ին Հանրային կրթության և արվեստի նախարարի՝ Նախարարների խորհրդին ուղարկած գրության մեջ կարդում ենք. «Այսօր մեր բոլոր դպրոցները պետական են»⁶: 1920թ. մարտին ընդունված օրենքով պետականացվում են նաև եկեղեցական-ծխական չվերաբացված դպրոցների կայքերն ու գույքերը: Վերջինները դրվում են Հանրային կրթության և արվեստի նախարարության տրամադրության տակ, որը պետք է դրանք օգտագործեր դպրոցական նպատակների համար⁷:

Փոփոխությունների են ենթարկվում նաև դպրոցական ծրագրերը: Կրոնը դուրս է բերվում պարտադիր առարկաների ցանկից: Եթե համայնքը կրոնուսույց պահելու ցանկություն ունենար, ապա կարող էր իր ծախսերով հրավիրել: Ծրագրից դուրս էին հանվելու Ռուսաս-

տանի պատմության և աշխարհագրության առարկաները, ուժեղացվելու էին հայոց պատմության և աշխարհագրության առարկաները: Կիսով չափ կրճատվելու էին երգեցողության և նկարչության դասերը: Ըստ առաջնահերթության՝ ուշադրություն պետք է դարձվեր հայոց լեզվին, ապա թվաբանությանը, գյուղատնտեսական գիտելիքներին, հայոց պատմությանը և բնական գիտություններին⁸:

Առաջին հանրապետությունը քայլեր է ձեռնարկում դպրոցը կյանքին կապելու ուղղությամբ: Առաջին պլան է մղվում աշակերտներին «օգտակար գիտելիքներով» զինելու մտտեցումը: Երևանի գավառային ինքնավարության վարչության գրության մեջ կարդում ենք. «Արդի ժողովրդական դպրոցը պետք է թողնի հին ուղին և նոր ուղի բռնի: Նա պետք է դառնայ մի գործանոց, մի փերթակ, որտեղ ամբողջ աշակերտությունը մեղուների պես եռ ու զեռ աշխատանքի մեջ հետամտելու է իրական, շոշափելի արդիւնքի»⁹: «Օգտակար գիտելիքները» պետք է բխեին տեղական պայմանների պահանջներից: Որպես այդպիսի գիտելիքներ տվող առարկաներ՝ դպրոցներում դասավանդվում են մեղվաբուծություն, կոշկակարություն, կավագործություն, ատաղձագործություն, դարբնություն և այլ արհեստներ ու գյուղատնտեսական նշանակություն ունեցող առարկաներ: Կարևորվում է նաև էքսկուրսիաների հաճախակի կազմակերպման դերը:

Կարևոր խնդիր էր նաև կրթությունը պարտադիր դարձնելու հանգամանքը: Հարցը քննարկվում է բազմաթիվ խորհրդակցություններում, պաշտոնական գրագրություններում, և որոշվում, որ հանրապետության ներքին ու արտաքին հանգամանքները թույլ չեն տալիս ուսումը դարձնել պարտադիր: Խնդրի մասնակի լուծման տարբերակ էր դպրոցական ցանցի ընդլայնումը: 1919-1920 ուստարում դպրոցների թիվն հասավ 434-ի, որտեղ սովորում էր ավելի քան 40.000 աշակերտ:

Քայլեր են ձեռնարկվում նաև նոր դասագրքերի պատրաստման և տպագրման համար: 1919թ. հունիսին կառավարությունը որոշում է Հանրային կրթության նախարարությանը հատկացնել 500 հզ. ռուբլի՝ դասագրքերի հրատարակման համար: Սեպտեմբրին Երևանում տպագրվում են «Դասընկեր» և «Փայլուն արև» դասագրքերը: Հրատարակման էին պատրաստվում «Հայոց պատմություն», «Ռուսահայ գրականության պատմություն» և այլ դասագրքեր: Այդ նպատակով հատկացվում է մոտ 3 մլն. ռուբլի: Նախատեսվում էր տարրական դպրոցների համար տպագրել 20 հզ. դասագիրք¹⁰:

Տարրական դպրոցների վերակառուցման գործում խոչընդոտող հանգամանք էր ուսուցիչների մասնագիտական մակարդակի անբավարարությունը: 1919թ. հուլիսի 14-ին Հանրային կրթության և արվեստի նախարարության տարրական դպրոցների բաժնի վարիչը նախարարին գրած գրության մեջ քննության է առնում ուսուց-

չական սեմինարիա բացելու հարցը: Նախատեսվում էր մասնագիտացված համապատասխան ուսուցիչներ պատրաստելու համար հիմնել սեմինարիա՝ միջնակարգ դպրոցի իրավունքներով և չորսամյա դասընթացով: Ծրագիրը համարվում է կարևոր, բայց երկարաժամկետ-իրագործելի¹¹: Առկա ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու համար 1920թ. ամռանը մանկավարժական դասընթացներ են կազմակերպվում Ալեքսանդրապոլում և Կարսում:

Տարրական դպրոցների վերակառուցման հետ միասին քայլեր են ձեռնարկվում նաև նախադպրոցական, միջնակարգ և բարձրագույն կրթության կազմակերպման ուղղությամբ:

Նախադպրոցական կրթության ապահովման ուղղությամբ ակտիվ քայլեր է ձեռնարկում Հանրային կրթության և արվեստի նախարար, գրականագետ և մանկավարժ Նիկոլ Աղբալյանը: Նա նախաձեռնում է մանկապարտեզների բացման գործընթացը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տեսչության մեջ բացվելու էին մեկական, իսկ Երևանում և Ալեքսանդրապոլում՝ երկուական մանկապարտեզներ¹²: 1920թ. հունվարի 2-ին Խորհրդարանը օրենք է հաստատում, որով 22 հզ. ռուբլի վարկ է հատկացվում 15 վայրերում նոր մանկապարտեզներ բացելու համար:

Առավել արդյունավետ էին քայլերը միջնակարգ կրթության կազմակերպման ուղղությամբ: 1918թ. նոյեմբերի 19-ի օրենքով պետությունը իր վրա է վերցնում Հայաստանի սահմաններում գտնվող բոլոր միջնակարգ դպրոցներն անմիջապես բացելու և պահելու հոգսը¹³: ՀՀ-ն ընդհանուր առմամբ ժառանգություն էր ստացել 12 միջնակարգ դպրոց, որոնցից 1918-1919 ուստարում գործել է 10-ը՝ 177 ուսուցչով և 3137 աշակերտով¹⁴:

1919թ. Հանրային կրթության և արվեստի նախարարությունը քայլեր է ձեռնարկում ինչպես վերը նշված 12 դպրոցները վերաբացելու, այնպես էլ նոր միջնակարգ դպրոցներ կառուցելու ուղղությամբ: 1919թ. սեպտեմբերի սկզբին հաստատվում է միջնակարգ դպրոցների՝ 1919-1920 ուստարվա նոր դասատախտակը, որում ընդգրկված առարկաների ցանկը վկայում է աշխարհիկ և ազգային կրթության կազմակերպման մասին¹⁵: Նոր դասատախտակով ավելացվում են բնագիտա-մաթեմատիկական առարկաների դասաժամերը, հատուկ ուշադրություն է դարձվում հայոց լեզվին և հայոց պատմությանը, այլևս պարտադիր չի համարվում 2 օտար լեզուների դասավանդումը:

Միջնակարգ դպրոցներն օգտագործվում էին երկրի համար առաջնահերթ համարվող ոլորտներում աշխատելու նպատակով մասնագետներ պատրաստելու համար: Առաջին հանրապետությունը միջնակարգ դպրոցներ է բացում մասնագիտական այնպի-

սի ուղղվածությամբ, որը առաջնային նշանակություն ուներ պետության համար: ՀՀ անբաժան ուղեկիցներն էին համաճարակային հիվանդությունները՝ տիֆը, խոլերիան, մալարիան: Այդ հիվանդություններից պաշտպանվելու և հիվանդներին օգնելու համար անհրաժեշտ էին բժշկական համապատասխան գիտելիքներ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ էին բուժքույրեր և բուժեղբայրներ՝ այդ հիվանդությունների դեմ կազմակերպված պայքար մղելու համար: Այս հանգամանքներով պայմանավորված՝ 1918թ. սեպտեմբերին հիմնվում է միջնակարգ բժշկական դպրոց՝ երկու բաժանմունքներով՝ ֆելդշերական և մանկաբարձական¹⁶:

ՀՀ տնտեսության մեջ գերիշխող դիրք էր գրավում գյուղատնտեսությունը, ուստի անհրաժեշտ էր միջոցներ ու ջանքեր ուղղել դեպի գյուղ՝ գյուղատնտեսության վերականգնման և զարգացման համար: Այս ուղղությամբ կատարվող լավագույն միջոցառումներից մեկն էլ լինելու էր համապատասխան մասնագետների պատրաստումը: Եվ ահա 1920թ. փետրվարին Ալեքսանդրապոլի մի խումբ գյուղատնտեսների և ուսուցիչների նախաձեռնությամբ հիմնվում է միջնակարգ գյուղատնտեսական դպրոց¹⁷: Նման դպրոցներ են բացվում նաև Նոր Բայազետում և Դիլիջանում:

Հայ ժողովուրդը իր անկախությունը ձեռք բերեց և պիտի պաշտպաներ պատերազմների միջոցով: Այս պարագայում, բնականաբար, կարևոր նշանակություն է ստանում բանակը: Բանակի մարտական ուժը բարձրացնելու համար անհրաժեշտ էին որակյալ սպայական կադրեր: 1920թ. սեպտեմբերի 16-ին Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում զինվորական գիմնազիա և ուսումնարան բացելու մասին: Բացվում է Ալեքսանդրապոլի զինվորական ուսումնարանը¹⁸:

Կազմակերպված աշխատանքների շնորհիվ 1919-1920 ուստարում Հայաստանի Հանրապետությունում գործում էին 20 միջնակարգ դպրոցներ, որոնցում ուսանում էին 5063 աշակերտ¹⁹:

Հայաստանի առաջին հանրապետության շրջանում սկսվում է նաև միջնակարգ դպրոցների ազգայնացման գործընթացը: 1918-1919 ուստարվանից ազգայնացվում են 1-ին և 2-րդ դասարանները: Հայոց լեզվով պիտի դասավանդվեին բոլոր առարկաները՝ բացի թվաբանությունից: 1919-1920 ուստարում ազգայնացվում են նաև 3-րդ և 4-րդ դասարանները²⁰:

Հայաստանի Հանրապետությունում աշխարհիկ կրթության համակարգն ամբողջացավ բարձրագույն կրթության կազմակերպմամբ: 1919թ. մայիսի 16-ին Հայաստանի խորհուրդն օրենք է ընդունում «Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300.000 ռուբլի հատկացնելու մասին», որով գործնականացվում է Երևանի համալսարանի հիմնա-

դրման գործընթացը: Հրավիրվում են արտասահմանում գտնվող հայազգի բազմաթիվ գիտնականներ, ովքեր իրենց հետ Հայաստան էին բերում միջազգային գիտական ձեռքբերումներն ու փորձը: 1920թ. փետրվարի 1-ին ականավոր հայագետ Ստեփան Մալխասյանցի առաջին դասախոսությամբ իր աշխատանքներն է սկսում համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետը:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետությունում ձևավորվում և գործում է բազմաստիճան կրթական համակարգ՝ նախակրթական, տարրական, միջնակարգ և բարձրագույն աստիճաններով: Ի դեպ, յուրաքանչյուր հաջորդ աստիճանի անցման համար (բացառությամբ տարրական դպրոց ընդունվելու) անհրաժեշտ էր համարվում նախորդ աստիճանի կրթության առկայությունը:

Աշխարհիկ կրթության բաղադրիչ պետք է համարել նաև ոչ համակարգային կրթության՝ դասընթացների և ժողովրդական համալսարանների կազմակերպումը: 1920թ. հունվարի 5-ին օրենք է ընդունվում «Գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին», համաձայն որի՝ «Ժողովրդի կրթութանը նպաստելու համար հիմնում են՝ ա. անգրագետ հասակաւորների համար՝ գրագիտական դասընթացներ, բ. թերավարժ հասակաւորների համար՝ գրավարժական դասընթացներ և գ. գրագետ հասակաւորների համար՝ ժողովրդական համալսարաններ»²¹: Առաջին 2 խմբերի համար պետք է դասավանդվեին հայոց լեզու, գրություն և թվաբանություն, իսկ 3-րդ խմբի համար՝ հայոց պատմություն, հայոց գրականություն, աշխարհագրություն, բնագիտություն, հասարակական գիտություններ, քաղաքացիական ուսմունք, առողջապահություն: Դասընթացները ծրի էին. կարող էր հաճախել յուրաքանչյուր ոք՝ առանց ազգության, կրոնի և սեռի խտրության²²:

Հայագիտական դասընթացներ են կազմակերպվում նաև պաշտոնյաների համար: Դասընթացների ընթացքում պաշտոնյաները պետք է ուսանեին հայոց լեզու, հայոց պատմություն, հայ գրականություն և Հայաստանի աշխարհագրություն: Դասընթացները տևելու էին մի քանի ամիս:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետությունը ձեռնարկում է մի շարք նշանակալի քայլեր հասարակության բոլոր խավերի համար աշխարհիկ կրթության ապահովման ուղղությամբ: Փոխվում են կրթական ծրագրերը, կրթության առանցք է դառնում աշխարհիկ մտեցումը, կրթությունը կապվում է կյանքի պահանջների հետ, հիմնադրվում են կրթական նոր օղակներ: Հնարավորություններ են ստեղծվում կրթություն ստանալը դարձնել համաժողովրդական իրավունք և հնարավորություն:

Բանալի բառեր - Կրթության աշխարհականացում, ծխական դպրոցների գործունեության դադարեցում, նոր ծրագրերի ու մեթոդների ձևավորում, փարրական, միջնակարգ և բարձրագույն կրթություն, անգրագիտության վերացում:

SUMMARY

Gevorg Kesoyan

*Post-graduate student at the Chair
of the History of Armenia of YSU*

Organization of Secular Education in the First Republic of Armenia

The proclamation of independence in 1918 gave new opportunities for a new organization of education. A new format for organizing education at the state level replaced the system of organizing the church-religious education system.

Nationalization of church-parish schools took place, which led to taking steps towards upgrading and modernizing school programs, introducing new subjects, restricting religion teaching, linking education with life, publishing new textbooks, making elementary education mandatory, as well as creating educational opportunities for orphans and foreigners.

The RA also paid attention to the organization of secondary education. In the organization of secular education a great achievement was the organization of the university, which was launched from the beginning of 1920.

Another significant fact was the organization of short-term courses on elimination of illiteracy. They were aimed at conveying some knowledge to adults.

Keywords: *Secularization of education, termination of activities of parish schools, formation of new projects and methods, elementary, secondary and higher education, elimination of illiteracy.*

1. Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 341, թ. 14:
2. Տե՛ս Գ. Վարդանյան, Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920թթ.), Եր., 2003, էջ 8:
3. Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատված օրէնքները, 1918-1919 թթ., Մաս I, Երեւան, 1919, էջ 5-6:
4. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 123, թ. 56:
5. Տե՛ս նույն տեղում, թ. 56 շրջ.:
6. Նույն տեղում, թ. 75:
7. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 93, թ. 12:
8. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 341, թ. 11 և շրջ. և ֆ. 307, ց. 1, գ. 118, թ. 99 շրջ.:
9. Տե՛ս նույն տեղում, գ. 274, թ. 9:
10. Տե՛ս Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 34:
11. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 119, գ. 8 և շրջ.:
12. Տե՛ս Գ. Անանյան, Նիկոլ Աղբալյան, Եր., 2002, էջ 7:
13. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 14, թ. 124:
14. Տե՛ս նույն տեղում, գ. 341, թ. 43 շրջ.:
15. Տե՛ս նույն տեղում, գ. 125, թ. 12:
16. Տե՛ս Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 92:
17. Տե՛ս նույն տեղում, էջ 91:
18. Տե՛ս նույն տեղում, էջ 92:
19. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 341, թ. 15:
20. Տե՛ս նույն տեղում, գ. 125, թ. 8 շրջ. և 10:
21. Հայաստանի Հանրապետութիւն, Օրէնքների հաւաքածու, № 3, 14 նոյեմբերի 1919, էջ 7:
22. Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

**ՀԵՐՈՍՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐԻՑ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄ.
«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԳՐԱՌՎԱԾ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ**

Ներածություն

Ներկայացվող հոդվածում կատարվում է «Սասնա ծռեր» էպոսի՝ 1919 թվականին գրաված երկու պատումների համեմատական քննություն: Այս պատումները հնարավորություն են տալիս խոսելու ինչպես էպոսի տարբերակների առանձին խմբի՝ Սասնո պատումների, տիպաբանական առանձնահատկությունների, այնպես էլ՝ արդի էպոսագիտության համար կարևոր այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են՝ գրագետ և անգրագետ ասացողների տարբերակների յուրահատկությունները բնագրերի տարբեր մակարդակներում, գրավոր տեքստերի ազդեցություն, ասացող-ունկնդիր, պատումի ներկայացման միջավայր ու հասարակական-քաղաքական իրադրության հարաբերություն: Փորձ է արվում էպոսի այս տարբերակները քննել Հայաստանի առաջին հանրապետության, անկախ պետականության գոյության համատեքստում:

Ա. Պատումների գրառման հանգամանքները

Առաջին հանրապետության կարճատև գոյության ընթացքում, հասարակական-քաղաքական բարդ պայմաններում թեև չենք կարող խոսել բանահավաքչական, ի մասնավորի, էպոսի գրառման համակարգված ընթացքի մասին, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1919 թվականին էպոսի երեք պատում է գրառվել: Հայտնի հայագետ Սենեքերիմ Տեր-Հակոբյանի գրառած

այս պատումներից երկուսը առաջին անգամ հրատարակվել են միայն 1999 թվականին «Սասնա ծռեր» մատենաշարի 7 հատորում (պատումներ Ա և Բ), մեկը դեռևս անտիպ է:

Այս պատումների հրատարակության պատրաստողը՝ բանագետ Ա. Սահակյանը, մատենաշարի 7 հատորի առաջաբանում սակավ տվյալներով, մասամբ ենթադրաբար վերականգնում և ներկայացնում է դրանց գրառման պատմությունը: Այսպես, ըստ Ա. Տեր-Հակոբյանի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ֆոնդի ձեռագրերի՝ 1919 թվականի նոյեմբերի 12-ին էջմիածին են բերվել ծագումով Սասունի Խուջարենք, Արծվիկ, Ճախրկանք գյուղերից: Այդ ժամանակ Թալինի ու Աշտարակի գյուղերում ապրում էին Օհան Գասպարյանը, Ղազար Տեր-Մկրտչյանը և Թովմաս Արեյանը: Առաջին երկու ասացողները պատմել են էպոսը, իսկ երրորդը՝ ոչ: Ա. Սահակյանը ենթադրում է, որ երրորդ ասացողը՝ Թովմաս Արեյանը, հայտնի բանասաց Թամո Դավթյանն է, ումից հետագայում՝ 1932-ին, մեծ դժվարությամբ պատում է գրառել հայտնի բանագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը:

Օհանի և Թամոյի պատումները էպոսի Սասնո տարբերակների խմբին են դասվում և կարևոր նշանակություն ունեն այս տիպի պատումների ուսումնասիրության համար, քանի որ բանահավաքչների վկայությամբ՝ Սասնո պատումների մեծ մասը սերում կամ այս կամ այն կերպ առնչվում է Օհան Գասպարյանի և Թամո Դավթյանի պատումների հետ: Այդ առնչությունը նախևառաջ արտահայտվում է էպոսը նրանցից լսելու հանգամանքով:

Արծվիկցի Օհան Գասպարյանը եղել է Թամո Դավթյանի մտերիմ ընկերը: Սակայն Օհանն ու Թամոն, մտերմության և միմյանց պատումներին ծանոթ լինելու հանգամանքից անկախ, երկու առանձին վիպասանական ճյուղեր են ստեղծում. «Թալինի շրջանում վերաբնակված, Սասնո տարբեր գյուղերից 1915-ին գաղթած տարեց ու միջին սերնդի վիպասացները գրեթե միաբերան նշում էին երկու աղբյուր՝ Սասնո Ճախրկան գյուղից Թամո Դավթյանին և Սասնո Արծվիկ գյուղից՝ Օհանին: ...Օհանն ու Թամոն հաճախ են հյուր եղել միմյանց և քաջատեղյակ՝ մեկը մյուսի վիպելու արվեստին»¹, - կարդում ենք էպոսի պատումների Գ հատորի առաջաբանում:

Մյուս պատումի ասացող Ղազար Տեր-Մկրտչյանի մասին տվյալներ գրեթե չկան: Նրա մասին հետագայում չեն հիշում այլ վիպասացներ: Պատումի փաստացի գեղարվեստական որակից ենթադրվում է, որ նա եղել է հոգևորական և գրագետ: Ընդ որում, ըստ պահպանված ձեռագրերի՝ նախ իր պատումը շարադրել է գրավոր, ապա նրանից լսել ու գրառել է Սենեքերիմ Տեր-Հակոբյանը:

Բ. Գրագետ և անգրագետ վիպասացներ

Համեմատելով անգրագետ ասացող Օհանի և գրագետ Ղազարի պատումները՝ տեսնում ենք մի շարք տարբերություններ, որոնք ընդհանրապես բնորոշ են նմանատիպ այլ պատումների:

Ղազար Տեր-Մկրտչյանի գրագիտությունն արտահայտվում է գրքային տեքստերից հայտնի մոտիվների, արտահայտչամիջոցների կամա, թե ակամա օգտագործմամբ, էպիկական կամապատմականությունները պատմական տվյալներին համապատասխանեցման ձգտմամբ, ասացողի ակտիվ մեկնաբանական-վերլուծական միջամտությամբ: Պատումում հանդիպում են գրքային-գրական բառեր, արտահայտություններ, հատուկ ժամանակաձևերի կիրառություն, նկարագրություններ, երկխոսություններ և այլն: Սրան հակառակ՝ Արծվիկցի Օհանի պատումն աչքի է ընկնում ժողովրդական մտածողությանը, բառ ու բանին հարազատությամբ, Սասնո պատումներին բնորոշ սեղմությամբ, սակայն՝ բանաձևայնությամբ:

Ավանդաբար հայ բանագիտության մեջ բարձր են գնահատվել, գրառվել, հրատարակվել և ուսումնասիրվել են էպոսի այն տարբերակները, որոնք ասվել են անգրագետ ասացողների կողմից: Համարվել է, որ դրանք ավելի բարձր գեղարվեստական որակ ու արժեք ունեն, առավել անխաթար են պահել նախնիներից ավանդված վիպաստեղծման ավանդույթները, և դրանցում առավել խորությամբ են արտահայտվել ժողովրդական ստեղծագործություն լավագույն հատկանիշները:

Ըստ այսմ էլ՝ մասնագիտական գրականության մեջ շատ քիչ են ուսումնասիրվել գրագետ ասացողներն ու նրանց պատումները, ընդհանրապես բանավոր ու գրական ավանդույթների հարաբերությունները: Այս դեպքում համարվել է, որ էպոսի կամ այլ ստեղծագործությունների այն բոլոր տարբերակները, որոնք ներկայացվում են գրագետ մարդկանց կողմից, երկրորդական արժեք ունեն: Այս մասին բազմաթիվ փաստեր կարելի գտնել էպոսի գրառումների պատմության մեջ: Շատ դեպքերում բանահավաքներն ուղղակի չէին գրառել այն պատումները, որոնք ասվել են գրագետ մարդկանց կողմից: Եվ նույնիսկ էպոսի պատումների ակադեմիական հրատարակություններում այդ պատումները հրատարակվել են ոչ ամբողջությամբ՝ համարվելով ոչ արժեքավոր:

Ըստ էպոսների հայտնի ուսումնասիրողներ Մ. Պերրի ու Ա. Լորդի տեսության՝ գրքային ու բանավոր ավանդույթների միջև հիմնական տարբերությունն այն է, որ անգրագետ ասացողը մտածելու ու մշակելու ժամանակ չունի, իսկ գրագետը, գրողը մշակում է կառուցում: Ասացողը ժամանակի բացակայությունը լրացնում է արդեն պատրաստի բանաձևերի կիրառությամբ: Ըստ այդմ էլ՝ բանավոր էպոսի հիմնական միա-

վորը ոչ թե բառն է, այլ բանաձևը, որը բնորոշվում է որպես բառերի խումբ, որոնք պարբերաբար վիպասացների կողմից օգտագործվում են երգերի նմանատիպ հատվածներում որոշակի միջադեպի, գաղափարի կամ մոտիվի արտահայտության համար²:

Այս առանձնահատկությունները տեսանելի են ինչպես գրագետ մարդկանցից գրառված մեր էպոսի մոտ մեկ տասնյակ պատումներում, այնպես էլ Ղազար Տեր-Մկրտչյանի պատումում: Այս պատումի առնչությամբ խոսելով գրագետ և անգրագետ վիպասացների տարբերակների հարաբերության մասին՝ Ա. Սահակյանը նշում է. «Բոլոր կին վիպասացները ու նաև տղամարդկանց մեծ մասը հեռու են պատմության իմացությունից, իսկ նրանք, ովքեր ի մոտո տեղյակ են պատմությանը, խախտում են ժանրային առանձնահատկությունները: Պատմության և կրոնի մասին նրանց ճշգրիտ իմացությունները խանգարում են երևակայության տրամաբանությանը, խաթարում վիպաստեղծման երևակայական կերպարային աշխարհը»³:

Մասնակիորեն համաձայնելով վերոգրյալին՝ պետք է նշել, սակայն, որ այս մոտեցումը ճիշտ է միայն այն դեպքում, երբ էպոսը սահմանվում է որպես միայն բանավոր ստեղծագործություն՝ ձևավորված ամբողջապես անգրագետ միջավայրում, առանց որևէ միջամտության կամ գրական ազդեցության: Սակայն, իրականում շատ դժվար է պնդել, որ նույնիսկ անգրագետ ասացողները գրավոր որևէ աղբյուրից ազդեցություն չեն կրել: Այդ ազդեցությունը կարող հստակ տեսանելի չլինել, բայց այն մշտապես առկա է: Հարցը միայն այն է, թե երբ է այն եղել, ինչ վաղեմություն ունի:

Այս խնդիրներին անդրադարձներ կան ռուսական բանագիտության մեջ: Գրականախառը կամ գրագետ ասացողների կողմից ասված բիլինաները՝ ռուսական էպիկական երգերը, դիտարկվում են որպես բանավոր ու գրքային ավանդույթների միջև գտնվող վիպական պատումի յուրահատուկ ձևեր, որոնց ուսումնասիրությունը կարող է նոր ու արժեքավոր բացահայտումների հնարավորություն տալ. «Երգացանկի հարստացման տարածված աղբյուրներից էր գիրքը: Ասացողական արվեստին տիրապետելը գրքով անհնար էր, բայց նա, ով տիրապետում էր այդ արվեստին, կարող էր դիմել գրքին նոր թեմաների համար: Սերբական, չեռնոգորական երգիչների պրակտիկայում գրավոր աղբյուրները հայտնվում են դեռևս 19-րդ դարավերջին: Նույնը վերաբերում է և հյուսիսուսսական բիլինաների ասացողներին: Էպոսի գրքային ավանդույթը Միջին ու Կենտրոնական Ասիայում գնում է ժամանակների խորքը: Ընդ որում, պետք է առանձնացնել երկու տիպի գրքային աղբյուր. մեկը՝ բանավոր էպիկական պատումների գրառումները կամ վերապատմումները. դրանք յուրացնելով՝ ասացողը կարծես վերադարձնում է բանավոր ավանդույթին նրան պատկանող տեքստը,

մյուսը՝ գրական դիպաշարերը. յուրացնելով դրանք՝ ասացողը հարստացնում է բանավոր ավանդույթը նոր դիպաշարերով»⁴, - գրում է հայտնի բանագետ Բ. Պուտիլովը:

Այսինքն՝ բոլոր դեպքերում, կարևոր է ասացողի վերաբերմունքը, նաև ինչ չափով է օգտագործում գրքերում կարդացածը և նախնիներից լսածը: Մեր էպոսի դեպքում բավական բազմազան պատկերներ կարող ենք տեսնել:

«Սասնա ծռեր»-ի ասացողների մի մեծ խումբ գրագետ է, ըստ այսմ էլ՝ նրանց պատումների նկատմամբ խորհրդահայ էպոսագիտության մեջ հիմնականում վերապահ վերաբերմունք է եղել: Էպոսի գրառումների վաղ շրջանում գրագետ են եղել Հակոբ Նրպեյանը և Սարգիս Հակոբյանը: Գրաճանաչ, նաև էպոսին գրքերից ծանոթ ասացողներ կան հատկապես 1970-ական թվականներին գրառված պատումների դեպքում՝ Մշեցի Մարտիրոս Գրիգորյանը, Ապարանցի Երվանդ Հունանյանը և այլք:

Օրինակ՝ Երվանդ Հունանյանի պատումում տեսանելի է Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի ազդեցությունը. «Վեպը պատմում է շատ արագ, մեղմ, վարժ ու բանիմաց: Մեկ-մեկ, հատկապես Դավթի ճյուղի չափածո հատվածներում, զգացվում է Թումանյանի պոեմի ազդեցությունը»⁵:

Սասունցի Սարգիս Սաֆարյանի և մի շարք այլ պատումներում նկատելի է համահավաք բնագրի ազդեցությունը: Պատումի առաջաբանում կարդում ենք. «Նրա պատումը շատ ընդարձակ է և զարմանալիորեն շատ ամբողջական, լրիվ. գրեթե հայտնի ոչ մի միջադեպ դուրս չի մնում նրա պատումից: Այս ամբողջականությանը պետք է վերաբերվել փոքր-ինչ վերապահությամբ. կարծում ենք՝ այն զերծ չէ համահավաքի ազդեցությունից: Մանավանդ որ, Սարգիսի 10-12-ամյա թոռը, որը ներկա էր գրառմանը, նույնպես լավ գիտեր վեպը և ասաց, որ իրենք ունեն վեպի համահավաք ժողովածուն, և այն խիստ սիրված գիրք է իրենց տանը»⁶:

Նորբայագետցի Թորգոմ Սարգսյանի պատումի գրառողը վկայում է, որ ասացողը կարդացել է հիմնականում պատմական վեպեր, էպոսը լսել է հորից, նաև ծանոթ է համահավաք բնագրին, սակայն նրա պատումի վրա բնավ չի զգացվում գրքային ազդեցություն սակայն, այդուհանդերձ, գրքային շերտեր նկատելի են: Օրինակ՝ երկվորյակների հայրը թուրք փաշա է, հերոսները հանդես են գալիս ոչ թե Սասունի, այլ հայության անունից, կան գրքային արտահայտություններ և ոճեր (հատ. Գ, պատ. ԺԲ):

Գրաճանաչությունը այդքան էլ նկատելի չէ Ապարանցի Գևորգ Պետրոսյանի պատումում, որը էպոսը լսել է հորեղբորից՝ հայտնի հեքիաթասաց Նիկողոս Մարգարյանից, նաև կարդացել է գրքերում, սակայն պատմում է միմիայն հորեղբորից լսածը (հատ. Գ, պատ. Ը):

Նույն կերպ Մարտունեցի Մկրտիչ Ավետիսյանը «Սասնա ծռեր» լսել է համագյուղացիներ Բժու Բաղդոյից և Նորսոյի Ավոյից, սակայն նաև կարդացել է գրքերում: Բայց բանահավաքի խնդրանքով պատմել է միայն մեծերից լսածը (հատ. Գ, պատ. Ժ):

Երբեմն գրագետ ասացողները, արհեստավարժ չլինելով, խուսափել են էպոսը պատմելուց: Օրինակ՝ Ս. Ավագյանը խուսափել է պատմել, պատճառաբանելով, որ վաղուց չի պատմել, թեպետ շատ է լսել երկրում, լսածն էլ մոռացել է: Ըստ գրառողների՝ առավել հաճույքով է պատմել Դավթի հետ կապված տեղավայրերի մասին ավանդություններ, որոնք ընկալել ու ներկայացրել է որպես իրականություն: Արժեքավոր են Ս. Ավագյանի պատմած երեք ավանդությունները Սասունցի Դավթի դարի, Ձիթոց քարի և Մսրա Մելիքի հորի մասին⁷:

Ընդ որում, Մանուկ Աբեղյանը ևս վիպաստեղծման պրոցեսում գրագետ մարդկանց ներգրավվածությունը չի բացառում: Այսպես խոսելով «Սասնա ծռեր»-ի առաջին ճյուղի հնագույն միջուկի՝ Սանասարի և եղբոր պատմության էպոսում հայտնվելու ճանապարհների մասին՝ գիտնականը հղում է կատարում Թովմա Արծրունու մի վկայությանը, առ այն, որ խութեցիներն ու սասունցիները «գիտեն զսաղմոսն զհին թարգմանեալսն վարդապետացն հայոց, զոր հանապազ ի բերան ունին»⁸, և գրում է. «Այս վկայությունից իմանում ենք, որ խութա լեռնեցիներն անգամ վաղուց ծանոթ են եղել Ս. Գրքին: Բայց մի ժողովուրդ, լեռնական, կիսավայրենի, ինչպիսին եղել են խութա բնակիչները Թովմայի ժամանակ, եթե սաղմոսներն անգիր գիտեր, նա ավելի վաղ կարող էր այդ գրքի վիպական պատմվածքներին ծանոթ լինել: Եվ նա, առանց խորենացու կամ Մար Աբասի ևս կարող էր ժողովրդական ստուգաբանություն անել և իր երկրի այս կամ այն աշխարհագրական անունը մոտեցնել Ս. Գրքի անուններին, մանավանդ որ, հատկապես այս կողմերի հայ ժողովրդի մեջ գտնում ենք հնում մի առանձին սեր տեղական անունների ծագումը որևէ գրույցով բացատրելու: Ասել չի ուզիլ, ժողովրդի մեջ ևս նախ մի կարդացվոր կամ գավառագիտուն է այդպիսի ստուգաբանություն անում, որ հետո յուրացնում է ռամի՛րը»⁹: Այդուհանդերձ, նույնիսկ այս պարագայում հայագետը չի կարողանում ճշգրտորեն նշել, թե ինչ հանգամանքներում է այս պատմությունը հարակցվել Դավթի ճյուղին և կանգ է առնում «Տարունի աղջիկ» ավանդավեպի՝ որպես կապող ու բացակայող օղակի գոյության վրա: Այդ ավանդավեպի քննությունը դուրս է մեր այս ուսումնասիրության սահմաններից, մեզ համար կարևոր էր այն ընթացակարգը, որով գրքային որևէ հատված, տարր, կարող է դառնալ ժողովրդական, ապա ներթափանցել բանահյուսական ստեղծագործություն: Բոլոր պարագաներում էլ այդ ամենը կատարվում է որևէ գրագետ մարդու միջոցով:

Մասամբ գրականության ազդեցությամբ ստեղծված Ղազար Տեր-Մկրտչյանի և մյուս պատումները արժեքավոր են ու ուսումնասիրության համար նոր հեռանկարներ են բացում: Եվ գրական այս միջամտությունները բնույթով չեն տարբերվում Աստվածաշնչից կամ միջնադարյան Ալեքսանդրի վեպից կատարված ներթափանցումներից, որոնց նկատմամբ ուսումնասիրողները բացասական վերաբերմունք չունեն: Ընդ որում, անհայտ է, թե երբ և ինչպես են այդ հատվածները էպոս մտել՝ «Սասնա ծռերի» կազմավորման փուլում, թե շատ ավելի ուշ, ասենք 17-18-րդ դարերում: Որևէ ասացողի գիտակցական միջամտության արդյունք են, թե հայ վիպական բանահյուսության՝ Նախորդ շրջանից եկող ավանդական տարր, որը հարակցվել է էպոսի կազմավորման փուլում:

Պետք է արձանագրել, որ պատումների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ գրագետ ասացողները կարողանում են համադրել բանավոր լսած ու ընթերցած տեքստերը, առածին ընդհանրական վիպական մոտիվների միջոցով ստեղծում կապեր՝ տարբեր դարաշրջանների գրավոր ու բանավոր տեքստերի միջև, և դա անում այնպիսի վարպետությամբ, որ պատումն առանձին թեմատիկ-գաղափարական կտորների չի բաժանվում և պահպանում է ամբողջականությունը: Նաև մեկ այլ առանձնահատկություն, որ կարևոր է մեր ուսումնասիրության տեսանկյունից. գրագետ վիպասացների պատումներն ավելի զգայուն են ժամանակաշրջանի, հասարակական-պատմական տեղաշարժերի նկատմամբ, հետևաբար դրանցում կարելի է տեսնել ժամանակի ու պատմության հետքերը, ունկնդիր միջավայրին պատումի բովանդակությունը հասկանալի դարձնելու միտումներ:

Գ. Գրառման ժամանակն ու պարունակի բովանդակությունը

Ընդհանրապես, վիպասացումը ոչ մի կերպ չենք կարող հանգեցնել պատմական, առասպելական, գեղարվեստական կամ այլ բնույթի տեղեկատվության սոսկական փոխանցմանը: Դա առանձին մշակութային համադրական ֆենոմեն է, որի կայացման գործում կարևոր դերակատարություն ունի նաև ունկնդիր միջավայրը, գրեթե միշտ տեսանելի է էպոսի ներկայացման ժամանակի հասարակական-քաղաքական իրադրության ազդեցությունը:

Էպոսագիտական գրականության մեջ վիպասացման անկումը հաճախ պայմանավորում են համապատասխան լսարանի բացակայությամբ¹⁰: Բնականաբար, լսարանը ժամանակի հետ անտարբեր է դառնում բանավոր հերոսական պատումի նկատմամբ, հատկապես նոր միջավայրում՝ Արևելյան Հայաստանում: Այս դեպ-

քում ասացողը կամ ընդհանրապես տասնամյակներ շարունակ չի պատմում ոչինչ կամ ուղղակի փոփոխություններ է մտցնում պատումի մեջ՝ համապատասխանեցնելով այն լսարանի պահանջին ու ընկալումներին:

Օրինակ՝ Մարտունեցի Մելիք Գևորգյանի պատումում ծովը կոչվում է «Սևանա լիճ», իսկ վանքը՝ «Սևանա վանք», և գրառողի հարցին ի պատասխան՝ վիպասացը նշում է. «Գուցե համեմատության համար են ասել»¹¹:

Փոխվում են տեղանուններն ու գաղափարական առանցքը: Անհրաժեշտություն է առաջանում նոր ունկնդիրների համար մեկնաբանել, ծանոթագրել էպոսը: Այս անխուսափելի փոփոխություններն էլ ի վերջո հանգեցնում են էպիկական պատումի գաղափարական ամբողջականության խաթարմանը:

Այս տեսանկյունից ուշագրավ է Արարատի Շաղափ գյուղում Շատախի վիպասաց Ռաշո Ջալոյանից 1972 թվականին գրառված «Սասնա Տավթի խեքաթ» կոչվող պատումը: Նախ, այն նույն ասացողից գրառվում է երկրորդ անգամ: Պատումն առաջին անգամ 1933 թվականին գրառել է Կ. Մելիք-Օհանջանյանը և այն իրատարակել պատումների Ա հատորում: 40-ամյա ընդմիջումից հետո կան կառուցվածքային և մի շարք այլ փոփոխություններ: Եթե առաջին դեպքում վիպասացը պատմում է երկու ճյուղ՝ Մհեր-Դավիթ, ապա երկրորդ դեպքում ավելացել են առաջին և չորրորդ ճյուղերը: Բացի այս՝ սեղմվել է պատումը: Մենամարտի դրվագում նախ, եթե առաջին պատումում է պատումը: Մենամարտի դրվագում նախ, եթե առաջին պատումում Մելիքը երեք հարված է հասցնում և թափ հավաքելու համար գնում՝ Վեդի, Արտաշար ու Երևան, ապա երկրորդ պատումում արդեն երկու հարված է հիշատակվում, և Մելիքը թափ հավաքելու համար գնում է Դարալագյազ ու Ջանգյազուր: Եթե առաջին դեպքում հարվածները զիջվում են առանց երկբայության՝ մոր ու Աստծո համար, ապա ուշ գրառված պատումում ասացողը լրացում է կատարում:

Ըսաց. – Հայրը, – ըսաց, – դարբըն Կովիմ քու խաթըր,

Մեկ էլ Կովիմ Աստծու խաթըր:

(Ամմեն պան, որ ախշըրքի մեջ կա,

Որ մըկա կըծիծղան, կապված է Աստըծուց)¹²

(ընդգծումը մերն է՝ Հ.Հ.):

Վիպասացի լրացումը, ըստ մեզ, կարելի գաղափարական փոփոխության բացատրություն համարել: Եկել է մի ժամանակ, երբ ունկնդրին կամ գրառողին արդեն պետք է բացատրել, թե ինչու է էպոսում հերոսների կյանքի կարևորագույն դրվագներում գործում Աստված, կամ ինչ է աստվածային զորությունը: Բանահյուսական ստեղծագործության մեջ գրանցված փոքրիկ նշում, որը լույս է սփռում մեր ժողո-

վրդի կյանքի խորհրդային շրջանում հավատի, հոգևոր-կրոնական երևույթների նկատմամբ եղած վերաբերմունքի վրա:

Հաշվի առնելով էպոսի գրառման ժամանակի, միջավայրի ու բովանդակության որոշակի կապը՝ կարելի է քննել մոտիվային այս նորությունները անկախ Հայաստանի գոյության համատեքստում:

Դ. Նոր դրվագներ, մոտիվներ և գաղափարներ

Ընդհանրապես, Սասնա պատումների հիմնական և ընդհանուր առանձնահատկությունը դրանց փոքր ծավալն ու սեղմությունն է, հետևաբար վիպական տեքստերի կարևոր բնութագրիչների՝ հիպերմոտիվների և մոտիվների սակավությունը: Շատ դժվար է առանձնացնել հիպերմոտիվներ և նույնիսկ մոտիվներ, քանի որ այս միավորների հիմնական հատկանիշներից մեկը՝ կրկնելիությունը, չի պահպանվում, շատ են միայն մեկ պատումում հանդիպող բացառիկ դրվագները: Պատումների խաթարված կառուցվածքի հետևանքով տարտղնված է մոտիվային համակարգը, թույլ արտահայտված ու վերջնական ձևավորումից հեռու է կերպարային համակարգը: Այս ամենի հետևանքով, որոշ դեպքերում պատումների դիպաշարերը հատվածական են և որոշակի ավարտունության չհասած:

Այդուհանդերձ, նույնիսկ այս վիճակում Սասնո պատումները մոտիվային մակարդակում որոշակի յուրահատկություններ են դրսևորում: Մասնավորապես Օհան Գասպարյանի պատումը համապատասխանում է Սասնո պատումների ընդհանուր բնութագրիչներին. սեղմ է, չկա ավանդական քառաճյուղ համակարգը, սակայն պատումն աչքի է ընկնում բանաձևային կառույցների կիրառությամբ:

Այդ սեղմության մեջ, շատ ավանդական է՝ ընդունված հիմնական մոտիվաշարով և գեղարվեստական միջոցներով, բայց կան նոր դրվագներ: Օրինակ՝ Մհերի զենք ու զրահի մեջ հիշվում է թագը, որը այլ պատումներում չի հանդիպում: Նաև կովից առաջ պողպատե սյան մոտ ուժի փորձության հայտնի մոտիվում սյունը միայն այստեղ հիշվում է որպես թագավորական նշան: Այսինքն՝ բացի ուժի փորձությունը՝ սյունը թերևս կարող է ենթարկվել միայն թագավորին.

-Դավիթ,- ըսեց (ծին),- թագավորի նշանը էստեխն է:

Ըսեց,- Ի՞նչ է թագավորի նշանը:

Ձին ըսեց,- Պողպատե սուն կանուխ էստեղ,

Քաշե թուր, զարկ¹³:

Այս մոտիվները հետաքրքիր են նաև նրանով, որ Օհանից իր պատումը լսած մեկ այլ ասացողի՝ Չարքյազ Պողոսյանի պատումում թեև առկա է ռազմի պարագաների նկարագրության մոտիվը, սակայն հիշատակություն չկա թագի ու թագավորական նշան սյան

մասին: Ընդհանրապես, թեև Սասնա հերոսները բոլոր պատումներում էլ ընկալվում են որպես թագավորներ, սակայն ասացողների ու ունկնդիր գեղջկական միջավայրում նրանք հազվադեպ են ներկայացվում որպես թագավորներ՝ համապատասխան թագավորական իշխանության նշաններով:

Կան այլ նոր մոտիվներ, որոնք չեն հանդիպում մյուս պատումներում կամ հազվադեպ են իրացվում: Օրինակ՝ «Ործ» ջրի հիշատակություն, որը կտրում-անցնում է գետը: Կամ առաջին ճյուղի բացակայությամբ Մհերը Մալրից է գալիս Սասուն և կառուցում բերդը: Մհերի մահից հետո Մելիքը մորից խլում և գերում է Դավթին: Դավթի մայրն է ծիուն խորհուրդ տալիս Դավթին կաթնաղբյուր տանել: Կամ Դավթին մեծամարտի ժամանակ հրեշտակների փոխարեն օգնում է Սուրբ Սարգիսը, ապա Դավիթը Մելիքին ոչ թե կիսում է, այլ թոփուզով խփում ճակատին և սպանում: Դավիթը սպանում է Մելիքի զինվորներին, սակայն հարյուր հազար երիտասարդի ազատ է արձակում: Կռվում է Գամալիե Սուլթիկի հետ, ոչ ոք չի հաղթում, բայց Սուլթիկը տարբեր կերպ փորձում է Դավթին՝ շղթաներով, ջրի մեջ այրելով տաքացրած գութանի խոփով, ի վերջո, Դավթին սպանում է աղջիկը և այլն:

Դ. Տեր-Մկրտչյանից գրառված «Սասունցի Դավիթ» պատումի վրա զգացվում է մեր մատենագրության նաև Աստվածաշնչի որոշակի ազդեցություն: Էպոսի հերոսները՝ Մհերն ու Դավիթը, աչքի են ընկնում քաղաքական շրջահայացությամբ ու շինարարական ակտիվ գործունեությամբ: Մասնավորապես Մեծ Մհերը Սասունում շատ բերդեր է կառուցում, որպեսզի «արապներում հճում ի չաղ/էղնի մեջ ի շինած բերդերուն (արաբների հարձակման ժամանակ այնտեղ պատսպարվի)», և արաբների Հայաստան արշավանքի ժամանակ Սասունը մնում է անվնաս: Ընդհանրապես Սասուն և Հայաստան տարբերակումը շատ քիչ պատումներում է հանդիպում, իսկ այստեղ ասացողն առանձնացնում է այդ հասկացությունները: Մեծ Մհերի մահից հետո, քանի որ նրա եղբայր Ձենով Օհանը Մհերի պես կտրիճ չէր, Մարա Մելիքը գրավում և ավերում է Սասունը: Այստեղ պատմից իմանալով իր զենքի ու ծիու մասին՝ Դավիթը զինվելով մեկ ամսում երկիրը մաքրում է արաբներից, շինարարական գործունեություն ծավալում, նույնիսկ հրաման արձակում, որ վերաշինեն Սասունի բերդերը: Ինքն էլ մի նոր բերդ է կառուցում, ապա ջուրը բերդ հասցնում և ջաղաց կառուցում:

Դավթին ենթարկվում են նույնիսկ շրջակա վայրերի արաբները: Ինչպես նախորդ պատումում, այստեղ նույնպես տեսնում ենք թագավորական իշխանության նշաններ՝ ռազմական-պաշտպանական նշանակության բերդերի կառուցում, թշնամու նկատմամբ արագ հաղթանակ, հրամանների ու օրենքների սահմանում, բեր-

դերի վերականգնում և այլն: Էպոսի պատումների մեծ մասում Սասնո բերդը կառուցում են երկվորյակ եղբայրները, սակայն այն չի գիտակցվում որպես երկրի պաշտպանական միավոր, էպոսի հերոսները հրովարտակներ չեն արձակում: Այս մոտիվը պատումների մեծ մասում իրացվում է Մսրա Մելիքի հետ կապված:

Ապա պատմվում է Շեյխ Մուհամետտի, Դավթի փախցրած աղջկա, Մուհամետտի երկու որդիների՝ Մահմուտի և Նասսրետտի, Մուհամետտի որդի Ապասի, նրա ոսկի մագերի և այն մասին, որ Դավիթը այդ մագերից քնարի լարեր է պատրաստում: Սասունի անկախությունը դուր չի գալիս Մսրա և Բաղդադի թագավորին: Մսրա թագավորը հարկահաններ է ուղարկում գերիներ տանելու և տասը տարվա հարկը հավաքելու համար: Հովանը աղ ու հացով դիմավորում է Ալլին, Ուլոյին, Օսմանին: Դավիթն այդ ժամանակ բերդ է վերականգնում, երբ լսում է հարկահանների մասին: Վերադառնում է, ինչպես պատումների մեծ մասում, պատուհասում է հարկահաններին և կռվի հրավիրում Մսրա Մելիքին: Նաև բարկանում է, սպառնում պատժել Օհանին՝ ենթարկվելու համար: Ապա աղոթում է Մարութա Սուրբ Աստվածածին եկեղեցում: Դավթի աղոթքը գրական է իր արտահայտության կերպով:

Ու զոր թևեր լենցուց դեպ էրկինք ու ասեց.

- Ով Թորգոմի, Արամի ու մոր պապերի Աստված,

Տուր ըմ մանուկ թևերուն զորույթն,

Ուար կառնամ կոպրըմ զքու սուրբ կրոնի նաեարնին,

Ուար դրած ան մեջ ուրանց մարքին՝

Գուրորին ուար ք՝անվան մկրտված ժողովրդուն

Եվ բղծին զքու Սուրբ Տաճարին՝⁴:

Ապա զգուշացնում է թշնամուն և ծիու հետ միասին մեծ կոտորած անում: Ապա լսելով ծեր մարդուն՝ դադարեցնում է կոտորածը և նրա միջոցով կռվի հրավիրում Մելիքին: Մելիքը քնած է լինում, նրան արթնացնում են վեզիրները: Նա Դավթին հրավիրում է նստել թագավորական աթոռին և խոստանում իշխանաց իշխան դարձնել: Այս կոչումը, որ, ըստ միջնադարայն պատմագրության, տրվում էր հայ խոշոր նախարարիներին, առաջին անգամ միայն այստեղ է հանդիպում, ինչը կրկին փաստում է, որ ասացողը լավ ծանոթ է պատմությանը: Դավիթը սակայն չի խաբվում, և կռվի են դուրս գալիս: Այստեղ էլ Մելիքի խոսքում տարբերակվում են թագավոր և իշխան հասկացությունները: Մելիքը որպես թագավոր պահանջում է հարվածի իրավունքն իրեն տալ: Սրան հակառակ՝ մնացած պատումներում Դավիթը հարվածը զիջում է Մելիքին՝ նրա ավագությունը հաշվի առնելով, այլ ոչ թե սոցիալական դիրքը: Մելիքը նույնիսկ պահանջում է, որ Դավիթը մեկ հարված տա, իսկ ինքը երեք:

- Մելիք, դու զքու գուրգ զարկեցիր,

Ալ փոր իմուն աս, թամ չէ:

Մելիք ասեց.- Էն ինչ օրենք է,

Օր թագավոր ու իշխան մեկ հարգի փեր էղնին:

Բեպք է, օր թագավոր էրգու-իրեք հաղ ալ եպել էղնի

Ու հարգ էղնի ուրան՝⁵:

Ի տարբերություն պատումների մեծ մասի, որտեղ Դավիթը երեք հարվածներից երկուսը զիջում է մորն ու Աստծուն, կամ մորն ու քրոջը, այստեղ զիջման մոտիվը բացակայում է, և Դավիթը, ընդամենը մեկ հարվածով, Աստծո անունը տալով, սպանում է Մելիքին: Ապա թագավորի կանանց ու մյուս գերիներին ազատ արձակում:

Հաղթանակը Դավթին մեծ հոչակ է բերում: Ի տարբերություն էպոսի պատումների մեծ մասի՝ այստեղ Դավիթն ընդարձակում է գավառի սահմանները: Ապա Սասունի հացի խնդիրը լուծելու համար նա բարեկամանում է Հալեպի ամիրայի հետ և ամիրայի թույլտվությամբ բերդ է կառուցում Հալեպում:

Եթե պատումների մեծ մասում Դավիթը սահմանափակվում է վանքի վերաշինմամբ, այստեղ նա հիմնում է բերդեր տարբեր վայրերում, ջրամբար, ջրաղաց, ախոռներ, մսուրներ: Դավթի շինարարական ընդարձակ գործունեությունը նաև որոշակի հակադրության մեջ է մտնում էպոսի կենտրոնական հերոսի ավանդական ընկալման հետ: Անխուսափելիորեն փոխվում է Դավթի՝ որպես ծուղի ենթ ընկալումը, նաև ամբողջանում նրա՝ որպես հայրենիքի պաշտպանի, առաջնորդի, նաև խաղաղ շինարարի կերպարը:

Դավիթն ընդլայնում է Սասունի իշխանության սահմանները: Պատումում շեշտվում է Սասունի անկախության, ինքնուրույն քաղաքական գործունեության, հարևան երկրների հետ հարաբերությունների հանգամանքը, ինչը բնորոշ չէ այլ պատումների:

Այս պարագայում գուցե կարող ենք մտածել անկախ իրականությանը համապատասխան վիպասացի աշխարհայցքի ու պատումի գաղափարական առանցքի փոփոխության մասին: Այդ փոփոխությունը, ինչպես տեսանք, արտահայտվում է անկախ պետականությանը կամ էպոսի աշխարհիին համապատասխան թագավորական իշխանության պարագաների առկայությամբ, Սասունցի Դավթի ակտիվ շինարարական և ինքնուրույն քաղաքական գործունեության մոտիվներով, որոնք բնորոշ չեն էպոսի ավանդական մոտիվաշարին, թերևս արտահայտում են վիպասացների և ունկնդիրների՝ հայոց պետականության վերականգնման, խաղաղ շինարար գործունեության, երկրի շենացման երազանք-ցանկությունները:

Բանալի բառեր - Հայկական էպոս, Սասունցի Դավիթ, Սասնա ծոեր, բանահյուսություն, Հայաստանի առաջին հանրապետություն, Սենեքերիմ Տեր-Հակոբյան, էպոսի պատումներ:

SUMMARY

Hayk Hambardzumyan

PhD, Associate professor

The Versions of the Epic “Daredevils of Sassoun” Recorded during the First Republic of Armenia

During the short-term existence of the First Republic of Armenia, under difficult socio-political conditions, although we cannot talk about the organized recording process of the versions of the epic Daredevils of Sassoun, the studies show that in 1919 three versions of the epic were recorded. Two of these versions recorded by armenologist Seneqerim Ter-Hakobyan were printed for the first time only in 1999, one of them still being not published.

Of especially interest is L. Ter-Mkrtchyan's version, where the new epic motifs are realized which do not appear in most of the versions. Here, the hero David is distinguished by constructive activities. If in most of the versions David is restricted to rebuilding the monastery, here he builds fortresses in different places, also mills and stables. Because of this, our perception of David as daredevil changes, because David's main functions and those of this kind of a hero, in general are military, not economic or cultural. New features are visible: leader, peace builder.

David expands the boundaries of the Sassounian rule. The version emphasizes Sassoun's independence, independent political activity and the relationship with neighboring countries, which is not typical of other versions.

Taking into account the link between time, environment and content of the epic, one can examine these new motifs in the context of independent Armenia.

Keywords: *First Republic of Armenia, Armenian epic, folklore, David of Sassoun, Daredevils of Sassoun, Seneqerim Ter-Hakobyan, versions of the epic.*

- 1 «Սասնա ծոեր», հափոր Գ, Եր., 1979, էջ 10:
- 2 Տե՛ս, Лорд А. Б. Сказитель /пер. с англ. и коммент. Ю. А. Клейнера и Г.А. Левинтона/. Москва, 1994. С. 142-158.
- 3 «Սասնա ծոեր», հափոր Դ, Եր., 1999, էջ 89:
- 4 Б. Путилов, Эпическое сказительство: Типология и этническая специфика, Москва, 1997. с. 71-72. Цы մասին րե՛ս նաև С. Неклюдов, Новые материалы по монгольскому эпосу и проблемы развития народных повествовательных традиций // Советская Этнография, 1981, №4. с. 121-122: Նույնի՛ Героический эпос монгольских народов: Устные и литературные традиции, Москва, 1984.
- 5 «Սասնա ծոեր», հափոր Գ, էջ 348:
- 6 «Սասնա ծոեր», հափոր Դ, էջ 324:
- 7 Տե՛ս հափոր Դ, էջ 395, ծանոթագրություն:
- 8 Թովմա վարդապետ Արծրունի, Պատմություն Տանն Արծրունեաց, դպրութիւն երկրորդ, գլուխ Է, էջ 152, Մատենագիրք Հայոց, հափ. ԺԱ, Ժ դար, Անթիիաս-Լիբանան, 2010:
- 9 Մ. Արեղյան, հափոր Ա, Եր., 1966, էջ 382:
- 10 Ուշագրավ է, որ Ռուսաստանի Յակոպիայի մարզում՝ արդեն մեր օրերում, ձգարելով վերականգնել «Օլունխո» էպոսի վիպասացման ավանդույթը՝ ոչ միայն նոր թեմաներ, համապատասխան ուսուցում են փայխ սասցողներին, այլ նաև ապահովում համապատասխան լսարանով, առանց որի հնարավոր չէ վիպասացումը:
- 11 «Սասնա ծոեր», հափոր Գ, պատում ԺԱ, էջ 444:
- 12 «Սասնա ծոեր», հափոր Գ, պատում Դ, էջ 146:
- 13 «Սասնա ծոեր», հափոր Դ, պատում Ա, էջ 106:
- 14 «Սասնա ծոեր», հափոր Դ, էջ 121:
- 15 Նույն րե՛ղում, էջ 124:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ**

1918թ. մայիսի 28-ին Թիֆլիսում մեծահարուստ նավթարդյունաբերող Միքայել Արամյանցի տանը հռչակվեց Հայաստանի անկախությունը: Այդ օրը Թումանյանը պատերազմական դեպքերի հորձանտուում էր, հայոց գոյամարտի կիզակետում, մեր պատմության հերթական Ավարայրի թոհոբոհում: 1918թ. հենց փետրվարին ՀԱԽ-ի հանձնարարությամբ նա ստանձնել էր Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի և Բորչալուի ընդհանուր լիազորի պարտականությունները և մեկնել Լոռի՝ Նոյ Ռամիշվիլու թույլտվությամբ իր հետ տանելով 50 զինվոր և մի սպա¹:

Մայիսի 28-ին Ղարաքիլիսայի գաղթականությունը լցվել է Շահալի, Դսեղ, Քուլագերան և Սանահին գյուղերը: Նույն օրը Թիֆլիսում լուրեր են տարծվում, թե Թումանյանը դուստրերի հետ գերի է ընկել²:

«Հ ստեղծման առաջին իսկ օրերից թե քաղաքական, թե մշակութային կյանքում բանաստեղծը դարձավ կապող օղակ Հայաստանի Հանրապետության և Թիֆլիսում հաստատված արտասահմանյան ներկայացուցչությունների միջև: 1918-20թթ. պոետը բազմիցս հանդիպել է Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի հյուպատոսներին, Կլադիկավկազում իր դիվանագիտական առաքելությունն իրականացնող ֆրանսիացի Դյուռուային և այլ երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին, պաշտպանել Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը³ Հայաստանի դեսպանատուն դարձնելով իր բնակարանը: «Այժմ սպասում եմ հունական և ֆրանսիական դեսպաններին, գալու են մոտս, մի փոքրիկ շրջանի հետ մի զրույց անենք»⁴, - գրում է Թումանյանը 1918թ. դեկտեմբերի 14-ին:

Թումանյանը հայ մշակույթի գործիչներից առաջիններից էր, որ սրտանց ու խանդավառված ողջունեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Նա, ոչ միայն իբրև անհատ գրող, այլ նաև

իբրև արևելահայ գրական-գեղարվեստական կյանքի կազմակերպիչ ու ղեկավար, անձամբ էր զգացել առանց սեփական երկրի ու պետության՝ հայ մշակութային կյանքը կազմակերպելու, գրականության, արվեստի, դարոցի ու կրթության զարգացման բոլոր դժվարությունները: Հայոց պետականության հետ նա կապում էր ազգային գրականության ու արվեստի, ինչպես նաև մայրենի լեզվի զարգացումը: 1919թ. «Գրական-գեղարվեստական ավանախ»-ի խմբագրությունը դիմում է ժամանակի անվանի գրողներին՝ ժամանակակից գրականության մասին կարծիք հայտնելու խնդրանքով: Խմբագրության պատրաստած հարցաթերթիկին պատասխանելիս⁵ Թումանյանը գրում է. «Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թելուզ զլուխը մինչև երկինք հասնի:

Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ, հարազատ հողը, ժողովուրդը:

Էր ազատ Հայաստանն էլ կտա մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն, որ լինելու է ժողովրդական բարբառների, գրաբարի ու եղած գրական լեզվի համադրությունը»⁶:

Եվ իրոք, առաջին անգամ՝ բազում դարեր անց, հայ ազգային մշակույթը զգում էր թեկուզ փոքր չափերով, բայց պետական հովանավորություն: Թեև ոչ անմիջապես, սակայն հայ արվեստի ու մշակույթի գործիչները սկսեցին համախմբվել ՀՀ շուրջը: Մարտիրոս Սարյանը, որ այդ պահին Հայաստանից հեռու էր և բնակվում էր Նոր Նախիջևանում, անհանգստանում էր հայ նոր պետականության խորհրդանիշ ազգային դրոշի գույներով: 1919թ. հուլիսի 31-ին Ալ. Խատիսյանին ուղղված նամակում նկարիչը գրում է. «Մտավորապես մեկ ամիս առաջ այստեղ զեկույցի համար եկավ Հայաստանի ներկայացուցիչ, Հայկական պառլամենտի անդամ Մարտիրոս Հարությունյանը: Ի միջի այլոց, ես նրանից իմացա մեր ազգային դրոշի մասին, որը խորհրդանշում է ծիածանը: Բոլոր առումներով հանճարեղ միտք է: Հրաշալի խորհրդանիշ»⁷: Մ. Հարությունյանից տեղեկանալով, որ դրոշը վերջնականապես ձևավորված չէ, Սարյանը ծիածանի խորհրդանիշը պահպանելու համար գեղարվեստագետի իր խորհուրդներն է տալիս գույների ընտրության հարցում աջակցելու նպատակով և արտահայտում է իր պատկերացումները ազգային դրոշի մասին: Մ. Սարյանը հույս է հայտնում, որ Ալ. Խատիսյանը իր ուժերի ներածին չափով ծիածանով կկամարի «մեր տանջված ու սիրված Հայրենիքը»⁸:

Հայաստանի Հանրապետության կրթամշակութային ոլորտի ղեկավարները կարևորեցին ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ քայքայման եզրին հասած գրադարանների վերականգնումն ու վերաբացումը: Ուշադրության արժանացավ նաև Հովհ. Թումանյանի անվան գրադարանը նրա ծննդավայր Դսեղում:

Ազգային իշխանությունները իրենց հերթին ուշադրություն և հնարավորինս բարոյական ու նույնիսկ նյութական աջակցություն էին ցուցաբերում հայ գրողի և գրականության նկատմամբ: Այս համատեքստում պետք է դիտել ՀՀ իշխանությունների առանձնահատուկ ուշադրությունը բանաստեղծի անձի ու գործի նկատմամբ: Բարձր գնահատելով պոետի տաղանդը ու նաև այդ շրջանում նրա ազգային գործունեությունը՝ ՀՀ իշխանությունները 1919թ. մարտի 9ին Երևանում նշում են Թումանյանի 50-ամյա հոբելյանը: Հայաստանի կառավարության նախագահ մինիստրի փոխստորդ Ալ. Խատիսյանն անձամբ է նրան մարտի 4-ի հեռագրով հրավիրում Երևան՝ նշելով. «Բոլորը խնդրում են նրան գալ»⁹: Սակայն պոետը ոչ ժամանակ, ոչ էլ տրամադրություն ուներ իր հոբելյանը տոնելու. ընդամենը երկու ամիս առաջ էր ստացել 24-ամյա որդու՝ Արտավազդի մահվան գույժը: Նա Վանի վերջին հայ պարետն էր և 1918-ին՝ Վանի վերջին նահանջին, սպանվեց թուրքի դաշույնից միայն այն պատճառով, որ որոշեց բոլորի հետ նահանջելու և գաղթելու փոխարեն կանգ առնել ու թեյարան հիմել գաղթականներին փոքր-ինչ օգնելու համար, որ կարողանան գեթ մի պահ կանգ առնել և ուժ հավաքել ոտքով ճանապարհը շարունակելու: Ալ. Խատիսյանը ստիպված էր հայոց իշխանությունների անունից միայն հեռվից, միայն ողջույնի հեռագրով շնորհավորել Թումանյանի հոբելյանը: Ալ. Խատիսյանի ստորագրությամբ հեռագրում ասվում էր. «Մեծ վարպետին, որ ժողովրդական առասպելները բանաստեղծության ոսկե ձևերի մեջ է ձուլել, հայրենի դաշտերի և դժբախտ ժողովրդի տանջանքների երգչին, հայրենիքի հերոսամարտի ոգևորողին, մանուկների բարեկամին, ժողովուրդների և մարդկանց մեջ խաղաղության և սիրո քարոզչին՝ մի խումբ գրողներ ու հասարակական գործիչներ Երևանից իրենց ողջույնն են ուղարկում և հույս ունեն տեսնելու իրենց գրական զարդին Հայաստանի մայրաքաղաքում, որ վերածնվող հայրենիքի հոգեմտավոր կյանքն է պսակում»¹⁰:

Նույն օրը տպագրվում է Թումանյանին հասցեագրված ևս մի շնորհավորական հեռագիր Հայաստանի կառավարության անունից՝ դարձյալ Ալ. Խատիսյանի ստորագրությամբ. նրանում ասվում էր. «Երկրի ապրած ծանր օրերին Հայաստանի կառավարությունը իր ողջույնն է ուղարկում **հայ գրականության Ջարդին: Բանա-**

ստեղծի աղոթքի քաղցր հնչյունները թող հնչեն հայրենի ժողովրդի մեջ և աջակից լինեն նրա սպասավորների ոգուն»¹¹: Երևանի գրական շրջաններն իրենց հերթին էին շնորհավորում ազգային մեծ բանաստեղծին հետևյալ խոսքերով. «Երևանի գրական-գեղարվեստական խմբակը իր սիրելի բանաստեղծին հղում է իր ողջույնը, հույսով, որ ձեր կյանքի երկրորդ կեսում դուք կհարստացնեք մայրենի գրականությունը ձեր ոսկի գրչի էլ ավելի հիասքանչ ստեղծագործություններով»¹²: Թումանյանին շնորհավորում էին Հայաստանի իշխանությունների այլ ներկայացուցիչներ ևս: Երևանից Հայաստանի ժողովրդական լուսավորության մինիստր Գ. Մելիք-Նարազյոզյանի հեռագրում ասվում էր. «Իմ ուսուցչության, աշակերտության և Ձեր երգերում փայփայված Հայաստանի ժողովրդական լուսավորության մինիստրության բոլոր վարչությունների կողմից շնորհավորում եմ Ձեզ՝ որպես բանաստեղծի, հասարակական գործչի և մանուկների բարեկամի, ձեր ծննդյան 50-ամյակի առիթով»¹³:

Հովհ. Թումանյանը Ալ. Խատիսյանին պատասխանում է անմիջապես՝ 1919թ. մարտի 8-ին (տպագրվել է մարտի 11-ին): Նա կրթության ու գրականության հանդեպ ՀՀ իշխանությունների հոգատար վերաբերմունքը բացատրում էր որպես ազգային ոգու անպարտելի հզորության արտահայտություն, որին չէն կարող ընկճել ոչ մի հալածանք ու տառապանք, ոգի, որը միշտ մնում է կենդանի և թևավորված մեծության ու գեղեցկության տեսչերով, և որը «առասպելական ֆենիքսի նման պիտի հառնի իր օջախների մոխիրներից նոր կյանքով ու ավելի տաղանդավոր բանաստեղծների զվարթ երգերով»¹⁴: Պոետը շարունակում է.

«Հայրենի երկրի անդրանիկ կառավարության անդրանիկ գրականության ողջույնն ու բարեմաղթությունները հուզեցին ինձ մինչև արտասուք:

Էս բոլոր զգացմունքները ես բացատրում եմ ոչ թե իմ գրական գործերի արժեքով, այլ մեր ազգային ոգու անպարտելի հզորությամբ... Եվ եթե բանաստեղծի աղոթք եք ուզում դուք ինձանից, ապա ես միայն մի աղոթք ունեմ նրա համար, որ նա՝ հայ ժողովուրդը, կենդանի մնա ֆիզիկապես, մնացածը ձեռք կբերի ինքը. ինքը, որ կանգնած է աշխարհների մեջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրավանդակին, երկնից էնքան մոտիկ, իր խոհուն ճակատը դեմ տված աշխարհի բոլոր փոթորիկներին՝ պայծառ նայում է դեպի իր մեծ ու լուսավոր ապագան:

Իմ հոգին լիքն է նրա ոգու հզորության շնչով և նրա մեծ ապագայի անսասան հավատով:

Եվ թող էդ մեծ ոգին ու էդ անսասան հավատը զորավիգ լինեն նրա կառավարությանը, որ կարողանա ժողովրդին հանել էս ծանր

ճգնաժամից և տանել հաղթանակներից ամենամեծը և ամենագեղեցիկը՝ եղբայրական սիրով տիրել հարևան ժողովուրդների սրտերին՝ Հայաստանի երջանկության համար»¹⁵:

Ուշագրավ է, որ Թումանյանի հոբելյանի շնորհավորական հեռագրերն ստանում էր ոչ միայն անձամբ բանաստեղծը, այլև Հայաստանի իշխանությունները: Պետտին ընկալելով իբրև ազգային մշակույթի խորհրդանիշ՝ հանրապետության տարբեր շրջաններից իրենց նախաձեռնությունների, գրողի անունը հավերժացնող ձեռնարկների մասին տարբեր վայրերից տեղյակ էին պահում նախ և առաջ իշխանություններին: Նոր Բայազետի հոբելյանական հանձնաժողովի նախագահ վարդապետ Եզնիկը, Վահան Աֆրիկյանը, Բեյբութ Կարապետյանը, Պետրոս Չիլինգարյանը մարտի 22-ին պաշտոնական նամակով տեղեկացնում են իրենց կազմակերպած մի շարք ցերեկույթների, քաղաքի փողոցներից մեկը Թումանյանի անունով կոչելու, բանաստեղծի անունով ստեղծած ֆոնդի մասին, որի շնորհիվ դպրոցներում տարածելու էին Թումանյանի գրքերը: ՀՀ իշխանություններին ուղղված նամակում նրանք ողջունում և բարձր են գնահատում պոետի հոբելյանը պետականորեն պաշտոնապես տոնելու իշխանությունների ջանքերը: Նոր Բայազետից ուղղված հեռագրում ասվում էր. «Հայ ժողովրդի դաժան փորձությունների օրերին է կատարվում 50-ամյա հոբելյանը նրա արժանավոր զավակներից մեկի՝ Հ. Թումանյանի՝ ծաղկած լեռների ու կիրճերի երգչի, պատանեկության աննման ուսուցչի: Նոր Բայազետի կուլտուրական հիմնարկությունները ջերմագին շնորհավորում են այդ օրը՝ իբր ազգային վերածնության առաջին գարնան ողջույնը, մեր նոր կյանքի շեմքին ցանկանում են ստեղծագործական նոր թափ նրա տաղանդավոր բանաստեղծին»¹⁶: Նույնպիսի հեռագիր մարտի 19-ին ստացվում է նաև Ղարաքիլիսայի Հասարակական գյուղական կոմիսարների և ընտրված անձերի համագումարի կողմից¹⁷: ՀՀ կողմից Թումանյանի հոբելյանին նվիրված միջոցառումները մշակութային ամենանշանակալից իրադարձությունը եղավ Առաջին հանրապետության կարճատև կյանքի ընթացքում և սովի ու համաճարակի պայմաններում կարողացան աշխուժացնել հայ մշակութային կյանքը, ոգևորություն առաջ բերել Հայաստանի բոլոր շրջաններում:

Հովհ. Թումանյանը յուրաքանչյուր պահին ՀՀ և մեր պետականության կողքին էր թե՛ գործով, թե՛ բանաստեղծի խանդավառող իր խոսքով: 1919թ. մայիսի 26-ին նա ՀՀ մեկամյա տարեդարձի առթիվ ողջույնի նամակ-հեռագիր է հղում ՀՀ կառավարությանը կրթամշակութային այն հաստատության անունից, որի նախա-

գահն էր ինքը, գրողների այն ընկերության անունից, որտեղ իրենց գրական գործունեությունն էին ծավալել այդ օրերի ՀՀ ղեկավարներից Հովհ. Քաջազնունին, Ավ. Ահարոնյանը, Ն. Աղբալյանն ու Լ. Շանթը թե՛ իբրև Հայ գրողների կովկասյան ընկերության անդամներ կամ վարչության անդամներ, թե՛ իբրև նրա գրական երեկույթների մշտական բանախոսներ: Բանաստեղծը խրախուսում էր ՀՀ մշակութային քաղաքականությունը և հույս էր հայտնում, որ դրա շնորհիվ հայ գրողն ու գրականությունը գաղութներից տուն կվերադառնան: «Պատմական փորձություններով անցած հարազատ հայ ժողովրդի քաղաքական ազատության առաջին տարելիցը հայ գրողների ընկերությունը դիտում է որպես հաղթանակող ճշմարտության ու առաջադիմության ժողովրդական առաջին տոնակատարություն, որպես կուլտուրական մեծ նվաճումների, մարդկային ոգու հավերժական ստեղծագործության առաջիկա հաղթական երթի երջանիկ սկիզբ, ուստի և այս հանդիսավոր օրը Հայ գրողների ընկերությունը, ապագայի լուսավոր հույսերով լի, ի խորոց սրտի անկեղծ ողջույններ է հղում թանկագին հայերնիքին, նրա հետ միասին համակվում խնդությանը և հավատում, որ այդ տարելիցը կնշանավորի հայ գրականության և թափառական ժողովրդի բաղձալի վերադարձը հարազատ երկիր»¹⁸:

Նույն օրը մեկ այլ հեռագրով Թումանյանը շնորհավորում է ՀՀ կառավարությանը նաև Հայոց Հայրենակցական միությունների միության անունից. «Այսօր ազատագրված հայ ժողովուրդը պայծառ բնության ներդաշնակությամբ հանդիսավոր կերպով դիմավորում է առաջին տարելիցը իր հոգևոր ու քաղաքական վերածննդի՝ ամուր և անսասան հավատով, որ ծանր փորձություններից արժանավայել դուրս եկած և թանկ գնով քաղաքական ազատություն ձեռք բերած ժողովուրդը այսուհետև կարող կլինի հմտորեն առաջ տանել իր պետական կյանքի նոր նավը առաջադիմության ու կուլտուրայի ճիշտ ուղիով: Հայոց 21 Հայրենակցությունների միությունը համակված է խոր հրճվանքով իսկական ժողովրդական տոնի առթիվ և սրտագին ողջույն է հղում իր ազատ հայրենիքին»¹⁹:

Նույն խանդավառությամբ Թումանյանը 1920թ. ողջունում է նաև ՀՀ երկրորդ տարեդարձը՝ շնորհավորական հեռագիրը հղելով Հայաստանի մինիստրների խորհրդի նախագահ Օհանջանյանին: Հեռագրում ասվում էր. «Հայ գրողների ընկերությունը, Հայրենակցությունների միությունը և անձամբ ես խորապես հուզված ենք Ազատ Հայաստանի երկրորդ տարելիցի առթիվ: Թող տառապյալ ժողովրդի հզոր ոգին հենարան դառնա մեր կառավարությանը՝ հանուն դարերից ժառանգած սրբազան պայքարի հաղթական ա-

վարտի, հանուն հայրենիքում նոր պայծառ ժամանակների փրկարար կարգախոսների իրագործման: Թող օրհնյալ լինեն բոլոր նրանք, ովքեր կրում են իրենց գործի վստեությունն ու սրբությունը, և ովքեր նվիրված են այդ գործին իրենց ողջ էությանը»²⁰:

Թումանյանը նույնիսկ հեռվից մանսակցում էր ՀՀ մշակութային քաղաքականության մշակման հարցերին: 1919թ. հունիսի 2ին բանաստեղծը նամակ է գրում ՀՀ նախարարապետին, տեղեկացնում, որ ՀԳԸ նախնաճեռնությամբ Թիֆլիսի մտավորականներն ու գեղարվեստագետները հանգել են այն եզրակացության, որ «Արտադարձական կրթության գործը մեր մեջ ապահովելու համար պետք է Լուսավորության մինիստրությանը կից հիմնել մի փոխմինիստրություն»²¹: Կից ուղարկում է իրավասության ու նպատակների ձևակերպումները, ժողովականների մի մասի ստորագրությամբ առաջարկներ և այն սկզբունքները, որոնցով պիտի ձևավորվեր փոխմինիստրության կազմը²²:

Իբրև գրողների ընկերության նախագահ՝ Թումանյանը պատասխանատու էր զգում նրա անդամների նաև նյութական ապահովության համար. Ինչպես հարյուր հազարավոր հայեր, գրողներն էլ այդ պահին ունեին պարզապես ֆիզիկական գոյության խնդիր: Զանգվածային սովին զոհ էր գնացել շուրջ 500.000 մարդ:

ՀՀ-ն ընկալելով որպես ողջ հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական շահերի պաշտպան՝ Թումանյանը 1918-ի օգոստոսի առաջին կեսին դիմում է Հայաստանի վերաշինության կոմիտեին և իբրև Կովկասյան ընկերության նախագահ նախ իրազեկում, որ գրողների ընկերությունը նյութական միջոցներ ձեռք բերելու համար իր հիմնադրման օրից երբեք դիմումներ չի արել ոչ մասնավոր անձանց, ոչ էլ նույնիսկ ազգային-հասարակական մարմինների: «Բայց այժմ, - գրում է պոետը, - կյանքի ծանր պայմանները ստիպում են միջոցների դիմել առանց էն էլ ծանր հայ գրական մարդկանց վիճակը թեթևացնելու»²³: Բանաստեղծն աջակցություն է խնդրում գրողների և առհասարակ մտավորականների համար կոոպերատիվ խանութ բացելու մասին Հայ գրողների ընկերության որոշումն իրականացնելու համար. «էն հավատով թե ինչքան բարձր եք նկատում հայ գրողի և գրողների ընկերության բարձր կուլտուրական արժեքն ու կարևորությունը, խնդրում եմ մի հիսուն հազար ռուբլի գումար հատկացնել Հայ գրողների ընկերությանը հիշյալ նպատակների համար»²⁴:

1918թ. հոկտեմբերի 11-ին մամուլի հաղորդման մեջ նշվում էր, որ Հայաստանի վերաշինության կոմիտեն մերժել է Թումանյանին փոխարինաբար տրամադրել նրա խնդրած գումարը՝ միջոցներ

չունենալու պատճառով. «Մինչև նույն ժամանակ խոստանում է խնդրած գումարը տալ, եթե ընկերությունը ստանա մի քանի անձերից խոստացած, տակավին չվճարված նվերներ»²⁵: Բանաստեղծը չի հուսահատվում: Հոկտեմբերի կեսերին հանդիպում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Զամալյանին և խնդրում աջակցել գրողների ընկերությանը կոոպերատիվ խանութ բանալու կամ նյութապես օժանդակելու հարցում²⁶: Ըստ ամենայնի՝ Զամալյանը ինչ-որ քայլեր ձեռնարկում է: 1918թ. հոկտեմբերի 24-ին Շիրվանզադեն այցելում է հիվանդ բանաստեղծին և տեղեկացնում, որ գրողների ընկերության համար Հայաստանի իշխանությունները տրամադրել են 10000 ռ. գումար²⁷: Պոետը մի երկտողով անմիջապես դիմում է Զամալյանին և նրա մակագրությամբ ստանում մի երկտող, որից տեղեկանում է, որ գումարը հատկացվել է իր դիմումի հիման վրա, իսկ «փողը չեկերով կստանա 10-15 օրից»²⁸:

Թումանյանին մերժելը դժվար էր ոչ միայն Արշակ Զամալյանի համար: Այդ պահին երկրի ղեկավարները նրա անձնական մտերիմներն էին, որոնց հետ տասնամյակներ շարունակ եղել էր հայ մշակույթի զարգացման, հայերնիքի ու ազգի գոյապահպանության համար պայքարի առաջնագծում թե՛ իբրև Հայոց ազգային բյուրոյի անդամ, թե՛ իբրև մշակութային մի շարք հաստատությունների նախագահ, վարչության ու պատվավոր անդամ: Խոսքը վերաբերում է մասնավորապես Հովհ. Քաջազնունուն (վարչապետ), Ալ. Խատիսյանին (արտաքին գործերի նախարար), Ա. Մանուկյանին (ներքին գործերի նախարար) Նիկ. Աղբալյանին, Լ. Շանթին, Ավ. Ահարոնյանին, Ա. Զամալյանին և այլոց: Եվ համատարծ սովի ու համաճարակի պայմաններում 1918թ. ՀՀ-ն 12050ռ. գումար նպաստ է հատկացնում Հայ գրողների ընկերության 12 անդամների՝ Շիրվանզադեին, Վրթ. Փափազյանին, Վ. Ահարոնյանին, Գ. Դեմիրճյանին, Գ. Աղանյանին, Լ. Մանվելյանին Թ. Թորոմանյանին (1000-ական ռ.) Ստ. Կանայանցին (700ռ.), Աթ. Խնկոյանին (1600ռ.), Համբարձում Մազմանյանին (500ռ.), Վալարյանին (500ռ.), Ար. Զարգարյանին (500ռ.)²⁹: Գումար հատկացվել էր նաև Թումանյանին և Նիկոլ Աղբալյանին, սակայն նրանք հրաժարվում են:

Բանաստեղծը շարունակում էր դիմել տարբեր հանրային և պետական միավորումների և ակնկալել նրանց աջակցությունը: Տեղեկանալով, որ 125000 փութ ալյուրով Հայաստանին օգնության հասնող առաջին նավն արդեն հասել է Բաթումի նավահանգիստ՝ բանաստեղծը 1919թ. մայիսին դիմում է Ամերիկյան ներկայացուցչությանը, որ գրողներին հաց տան³⁰: Երբեք բանաստեղծը այդքան

չէր դիմել տարբեր ատյաններին գրողներին ապահովելու համար, որքան 1918-1920թթ.:

1919 հուլիսի 4-ին հիմնադրվեց Հայաստանի գրական ընկերությունը՝ Թումանյանի ամենամտերիմ, հոգեկից ընկերներից մեկի՝ «Վերնատան» մշտական անդամ Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության անդամ Նիկոլ Աղբալյանի նախագահությամբ: Եվ միանգամայն բնական է, որ նորաստեղծ գրական ընկերությունը որոշեց առաջնորդվել բանաստեղծի ստեղծած Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրությամբ: Որոշվում է Թիֆլիսի այդ ընկերության բոլոր անդամներին ընտրել իբրև Հայաստանի գրողների ընկերության անդամներ: Երևանի գրողների ընկերությունը որոշում է աշխատանքները սկսել աշնանը³¹: **Սեպտեմբերի 28-ին** Երևանում՝ խորհրդարանի դահլիճում, տեղի է ունենում «Հայաստանի գրական ընկերության» առաջին գրական երեկոն³²:

Միջոցառումներն ու բանախոսություններն իհարկե, աշխուժություն էին մտցնում թե՛ Թիֆլիսի, թե՛ Երևանի գրական կյանքում, սակայն գրողներն ու արվեստագետները նույնպես, ինչպես ողջ ժողովուրդը, ստիպված էին գոյության պայքար մղել սովի ու համաճարակի դեմ:

1919թ. հունիսի 15-ին Թումանյանը վերստին համարձակվում է դիմել Ալ. Խատիսյանին: Քննիչ Բյուրոյի և Հայկազյանի մասին խոսելուց հետո պոետը գրում է. «Վրաց գրողները իրենց կառավարությունից մի միլիոն են խնդրել, և կառավարությունն էլ տալիս է: Թող մեր կառավարությունն էլ գոնե մի հարյուր հազար ռուբլի տա, եթե ավել չի կարող»³³: Պոետի համար հեշտ չէր դիմելը, քանի որ հրաշալի պատեկերացնում էր ՀՀ դժվարին կացությունը. «Հիրավի, ծանր է և մեր կառավարության դրությունը, էդ պատճառով էլ վարանում էինք դիմում անելու»³⁴: Եվ դիմելիս պոետն առաջնորդվում էր ոչ միայն այն հանգամանքով, որ «Ավելի նեղ վիճակ, քան էսօրվան վիճակն է, չի կարող լինել հայ գրական մարդու համար»³⁵, այլև հավատում էր, որ մեր նորաստեղծ կառավարության համար «Հայ կուլտուրայի պաշտպանությունը առաջնակարգ հոգսերից պիտի լինի»³⁶: Այս խոսքերն ունենում են իրենց ազդեցությունը: Թումանյանին դրական պատասխան տալու նպատակով **1919թ. հուլիսի 7-ին ընդունվում է օրենք գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին օգնություն տալու մասին**³⁷: 1919թ. հուլիսի 9-ին Թումանյանը ստանում է Հայաստանի վարչապետին արված հունիսի 15-ի իր դիմումի պատասխան գրությունը, որի համաձայն՝ ՀՀ-ն Հայ գրողների կովկասյան ընկերության գրողներին,

հրապարակախոսներին ու գիտնականներին հատկացրել էր 100000 ռ.՝ դրամի բաշխումը թողնելով վարչության հայեցողությանը³⁸: Ընկերության վարչությունը կատարում է դրամի բաշխումը 10 գրողների միջև, այդ թվում Ն. Աղբալյանի և Հովհ. Թումանյանի: Սակայն նրանք երկուսն էլ դարձյալ հրաժարվում են իրենց հասանելիք գումարից: Գրողների ընկերության վարչությանն ուղղած իր նամակում բանաստեղծը գրում է. «Իմ դրությունը միանգամայն տարբերվում է իմ ընկեր գրողների դրությունից էն հանգամանքով, որ ես Գրողների ընկերության նախագահն եմ, ինձ դիմում են ամենքը, և ես պարտավոր եմ հոգալու նախ և առաջ ուրիշների կարիքները»³⁹: Այսպես այն պոետը, ով կերպարվեստի իր անձնական հավաքածուի կտավները վաճառքի էր հանել երեխաների ապրուստն ապահովելու համար, հրաժարվում է իրեն հատկացված 10000 ռ. գումարից:

Ներթափանցում է Թումանյանը 1920թ. մարտի 16-ին դիմում է ՀՀ իշխանավորներին, տվյալ դեպքում իր հարազատ ընկերոջը՝ Ժողովրդական Լուսավորության նախարար Ն. Աղբալյանին: Այս անգամ առիթը նրանց ընդհանուր բարեկամի՝ գրականագետ և քննադատ մահամերձ Մ. Մատենյանի անելանելի ու անօգնական վիճակն էր. «Մատենյանը ծանր հիվանդ, ծայրահեղ կարիքի մեջ է», - տեղեկացնում է բանաստեղծը և խնդրում է «անել հնարավորը»⁴⁰: Աղբալյանը մարտի 18-ին ընկերոջ դիմումի վրա մակագրում է. «Հեռագրել, որ գտնե և վճարե 5000ռ., մինչև փոխադրել կարենամ: Փոխադրել 5000 ռ., որևէ հողվածից. հետագայում վերականգնել համապատասխան վարձից»⁴¹: Սակայն օրեր անց՝ 1920 թ. մարտի 23-ի գիշերը, 37 տարեկան հասակում կարճատև և ծանր հիվանդությունից հետո Մամբրե Մատենյանը վախճանվում է⁴²: Թումանյանը անմիջապես հիմնում է Մատենյանի անունով գրական ֆոնդ նրա գրական ծրագրերն իրականացնելու և ընտանիքին օգնելու համար: 1921թ. հունվարի 27-«Слово» թերթի խմբագրությունը Հովհ. Թումանյանին տեղեկացնում է, որ Մատենյանի ֆոնդի համար հավաքվել է 1250 ռ., խնդրում է գումարը ստանալու համար ներկայացուցիչ ուղարկել⁴³:

Համեմատության համար ասենք, որ Թումանյանը Թիֆլիսում ապրող հայ գրողներին օգնելու միևնույն խնդրանքով 1920թ. դեկտեմբերի 24-ին դիմեց նաև խորհրդային իշխանություններին՝ Հայաստանի հեղկոմին՝ ներկայացնելով Թիֆլիսում բնակվող հայ մտավորականների անմխիթար դրությունը. «Գրողներից ոմանք ստիպված են ծախելու իրենց ունեցած իրերն ու գրադարանը՝ նրանով ապրելու, բայց կան մարդիկ, որոնք ծախելու էլ ոչինչ չունեն»⁴⁴:

Առաջին հանրապետության տարիներին էլ Թիֆլիսում ապրող հայ գրողների վիճակը չբարելավվեց, սակայն պետական այրերը չմերժեցին հնարավոր ու անհնար աջակցությունը ցույց տալու հարցում, իսկ եթե ձգձգեցին կամ մի պահ մերժեցին, այնուամենայնիվ, խոստացան, որ մի փոքր հնարավորության դեպքում անմիջապես օգնության կհասնեն: Իսկ խորհրդային ՀՄԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի՝ Թումանյանին ուղղված 1921թ. հունվարի 25-ի թվագրությամբ պատասխանում (թիվ 542 գրություն) սկզբունքորեն և վերջնականապես մերժվում էր բանաստեղծը՝ առանց հետագա որևէ հույսի ու ակնկալիքի: Ցավոք, դա գրությունը ի պաշտոնե ստորագրել էին ոչ միայն Արվեստի բաժնի վարիչ Եղիշե Չարենցը, այլև պոետի հարազատ որդին Արվեստի բաժնի քարտուղար Համիկ Թումանյանը: Բնականաբար այդ ոչ թե ստորագրողների կամքն էր, այլ խորհրդային իշխանությունների մշակութային քաղաքականության հետևանք, քաղաքականություն, որն ապագային էր, և որը չէր ընկալում ու չէր ընկալելու հայ ժողովրդի ազգային միասնությունը:

Չարենցը գրում էր. «Հայ գրողների ընկերության պ. նախագահին.

Լուսժողկոմի կարգադրությամբ հայտնում եմ ի պատասխան Ձեր 1920թ. դեկտեմբերի 24-ի գրության, որ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը **առհասարակ նպաստներ չի բաշխում աշխատավորներին, այլ վարձատրում է նրանց աշխատանքը:**

Մյուս կողմից, խորհրդային իշխանությունը, որպես Հայաստանի սահմաններում ապրող աշխատավոր ժողովուրդների իշխանություն, **չի կարող օժանդակություն ցույց տալ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող ազգային կուլտուրական կազմակերպություններին**, որոնք իրենց գործունեության բնույթով ոչ մի առնչություն չունեն խորհրդային Հայաստանի սահմաններում կատարվող կուլտուրական աշխատանքի հետ»⁴⁵:

Այսպես, Թումանյանը մասնակից էր Առաջին հանրապետության գործունեությանը, նրա խնդիրների լուծմանը, սակայն ոչ իբրև պաշտոնյա կամ իշխանության հրահանգները կատարող, այլ իր նախածեննությամբ: Նա Առաջին հանրապետության տարիներին անում էր հնարավորն ու անհնարինը՝ սատարելու մեր նորաստեղծ պետականությանը, աջակցում էր գրեթե կիսամերկ ու ոտաբոբիկ, թշնամու դեմ անհավասար գոյամարտ մղող մեր զորքին, գաղթականներին հազարավոր մեր որբերին, որոնցից շատ քչերն էին պատասպարված և մերկ, դողոց, կիսաքաղց թափառում էին փողոց-

ներում: Բանաստեղծն ամեն ինչ արեց դադարեցնելու հայ-վրացական պատերազմը, հրապարակայնորեն հանդես եկավ Հայաստանի սահմանների պաշտպանությամբ: Թումանյանը միաժամանակ հանդիպում էր օտարերկրյա դեսպաններին, կոչերով դիմում աշխարհի ժողովուրդներին, առաջադեմ ուժերին՝ ուշադրություն հրավիրելով Հայկական հարցի վրա, դնում Հայ դատի առաջին հիմնաքարը, իր հավասարակշռված մոտեցումներով փորձում կանխել գալիք աղետները, ամեն գնով հեռու պահել իշխանություններին անհեռատես քայլերից, ոչ մի գնով և ոչ մի նպատակի համար, նույնիսկ հանուն անկախության չվտանգել ժողովրդի ֆիզիկական գոյությունը:

Բանալի բառեր - Մշակութային քաղաքականություն, Հովհ. Թումանյան, Հայաստանի առաջին հանրապետություն, Ալ. Խաչիսյան, Հայաստանի վերաշինության կոմիտե, աջակցություն գրողներին, Ն. Աղբալյան, Ա. Ջամալյան:

SUMMARY

Susanna Hovhannisyan

Doctor of Philological Sciences

Educational-Cultural Policy of the First Republic of Armenia and Hovhannes Tumanyan

The educational and cultural policy of the First Republic of Armenia was aimed at the development of Armenian culture. From the very beginning, Hovhannes Tumanyan welcomed and encouraged the cultural policy of Armenia, confident that native language and national art could only develop and refine in free Armenia. The special attention of the RA authorities to literature was manifested primarily by honoring Tumanyan and displaying careful attention towards his personality and works. On March 9, 1919 the poet's 50th anniversary was celebrated in the parliamentary hall with a solemn ceremony under the patronage of the first national republic. The vice-premier of the Armenian Government Al. Khatisyan sent a congratulation letter to Tumanyan. The poet interpreted the attention of Armenian authorities as a manifestation of the powerful national spirit and blessed the Armenian Government, wishing that it led people out of the crisis and took victories.

In his welcoming remarks Hovhannes Tumanyan was supportive of Armenia on both birthdays of the Republic - on May 26, 1919 and May 29, 1920. He even took part in cultural policy development in Armenia from afar.

From the very beginning, the poet perceived the Republic of Armenia as the defender of the interests of the whole Armenian nation and its culture. That was why he expected the newly established authorities to support the writers living outside of Armenia as well. For that purpose, he appealed to the Armenian Reconstruction Committee, Armenian Ambassador to Georgia Ar. Jamalyan and to his closest friend

Nikol Aghbalyan, who was the Minister of National Education. The poet was not mistaken. In order to support Tumanyan's request to help the Armenian writers, the Armenian Parliament passed a law to help writers, scholars, and scientists.

In 1918 the Republic of Armenia granted 12050 rubles to support the 12 members of the Armenian Writers' Society, including Tumanyan and Aghbalyan, who refused to accept the money in favor of other writers. Later, Armenian authorities allocated 100,000 rubles leaving the monetary distribution up to Tumanyan and his administrative board. The Literary Society of Armenia founded on July 5, 1919 adopted its statute on the basis of the regulations of the Writers Society headed by Tumanyan. In general, the literary Society of Armenia was guided by Tumanyan's principles when organizing its activities during its short-term existence.

It is noteworthy that when Tumanyan applied to the People's Commissariat for Education on January 24, 1921 with the same request, he was denied.

In times of famine and misery, under hard economic conditions Armenian authorities of the First Republic were able to provide some moral and even material support, respect and care to Armenian writers in order to assist them.

Keywords: *Education, Cultural policy, H. Tumanyan, First Republic of Armenia, Al. Khatisyan, Armenian Reconstruction Committee, support for the writers, N. Aghbalyan, A. Jamalyan.*

1. Ղարաքիլիսա գենք րեղափոխելու խնդրով Թումանյանը զբաղվել էր անձամբ: ՀԱԽ-ը չէր կարողացել այդ նպատակով գումար փրամատրել, թեև 50000ռ. փվել էր աշխատավարձներ վճարելու և այլ նպատակների համար: Տե՛ս Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու փաստը հատորով, հ. 10, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 315: Այսուհետև կնշվի Թումանյան, ԵԼԺ, հատորն ու էջը:
2. «Հորիզոն», օրաթերթ, Թիֆլիս, 1918, թիվ 124, հունիսի 26:
3. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 317: Տե՛ս նաև ԹԺՀ, էջ 99:
4. Նույն տեղում, էջ 299:
5. Բացի Թումանյանից այդ հարցաթերթիկին պատասխանել են Լեոն, Դ. Դեմիրճյանը, Նար-Դոսը, Հ. Սուրխաթյանը և այլք:
6. Թումանյան, ԵԼԺ 7, էջ 396:
7. Մարտիրոս Սարյան, Նամակներ, հ.1, 1908-1928: Տեքստը պատրաստեց, կազմեց խմբագրեց, ծանոթագրեց Ռուզան Սարյանը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2002, էջ 217:
8. Նույն տեղում, էջ 218:
9. «Հառաջ», 1919, մարտի 7, թիվ 43:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում: Հեռագիրն ըստ ամենայանի հղվել էր ավելի շուտ, քանի որ այն փակագրվել էր նաև «Հառաջ»-ի 1919թ. մարտի 2-ի թիվ 39-ում:
12. Նույն տեղում, մարտի 7, թիվ 43:
13. Նույն տեղում, մարտի 8, թիվ 44:
14. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 307, 660:
15. «Հառաջ», 1919, մարտի 11, թիվ 46, էջ 4: Տե՛ս նաև Թումանյան, ԵԼԺ 10, էջ 307:
16. «Աշխատավոր», 1919, ապրիլի 1, թիվ 63:
17. Նույն տեղում: Ինչպես այդ, այնպես էլ Դսեղից ուղարկված հեռագրի փակ դրված էր Ղարաքիլիսայի ազգանունը:
18. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 318, 667:
19. Նույն տեղում, էջ 320, 668:
20. Նույն տեղում, էջ 348, 683:
21. Նույն տեղում:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, էջ 294:
24. Նույն տեղում, էջ 294-295:
25. «Ժողովրդի ծայն», թիվ 32, հոկտեմբերի 11:
26. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 295:
27. Նույն տեղում:

28. ԳԱԹ, ԹՖ, թիվ (307):
29. ԳԱԹ, ԿրՖ Հայ գրողների կովկասյան ընկերության մուտքի և ելքի մատյան, թիվ 215:
30. ԳԱԹ, ԿԼ Ֆ, թիվ 23, 48:
31. «Նոր աշխատավոր», 1919, թիվ 155, օգոստոսի 3:
32. Նույն տեղում, թիվ 207, հոկտեմբերի 4, էջ 3:
33. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 328:
34. Նույն տեղում, էջ 329:
35. Նույն տեղում, էջ 328:
36. Նույն տեղում, էջ 329:
37. Հայոց պատմություն, հ. 4, գիրք Առաջին, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Ձանգակ 97» հրատ., 2010թ., էջ 95, Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.) վավ. 314, էջ 127:
38. «Նոր աշխատավոր», 1919, թիվ 157, օգոստոսի 6, էջ 4:
39. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 330:
40. Նույն տեղում, էջ 346:
41. Նույն տեղում, էջ 346, 681:
42. «Աշխատավոր», մարտի 9, թիվ 55, էջ 3:
43. ԳԱԹ, ԿԼ Ֆ, թիվ 170:
44. Թումանյան, ԵԼԺ 10, էջ 370:
45. ԳԱԹ, ԿԼՖ N (34), փետ նաև ԹԹ, ՓԲ, 3270:

ՈԱԴԻՈՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ոչ հեռավոր անցյալում հայ լրագրության պատմությունը հասկանալի պատճառներով չէր կարող անդրադառնալ Առաջին հանրապետության պետական ռադիոկայանի գործունեությանը: Անկախ պետականությունը խզեց տասնամյակների պարտադրած լռությունը, և միայն 1991-ից հետո հնարավորություն ընձեռվեց անդրադառնալու Առաջին հանրապետության տարիներին ակտիվ գործունեություն ծավալած տեխնիկական լրատվամիջոցի պատմությանը: Առաջին հանրապետության պետական ռադիոկայանը երկար տարիներ ուսումնասիրման առարկա չէր հանդիսացել և հանիրավի մոռացության մատնվել: Մինչդեռ Առաջին հանրապետության պետական ռադիոկայանի գործունեության ուսումնասիրումն ունի ոչ միայն պատմաճանաչողական, այլև գիտամշակութային և քաղաքական նշանակություն:

Հիմնադրման առաջին իսկ ամիսներին Հայաստանի նորանկախ Հանրապետությունը ձեռնամուխ եղավ տեխնիկական նոր լրատվամիջոցի ստեղծմանն ու ձևավորմանը, որն այդ տարիներին, զուտ տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով, դեռևս ծայնային չէր, և տեղեկատվությունը հաղորդվելու էր ռադիոկայանի միջոցով: Նորաստեղծ տեխնիկական լրատվամիջոցը պետք է օպերատիվ կապ հաստատեր այլ երկրների հետ, հաղորդեր և ընդուներ անհրաժեշտ լրատվություն հանրապետության արտաքին և ներքին կացության և ստեղծված իրավիճակի մասին, օպերատիվ լուսաբաներ բավականին բարդ և պայթյունավտանգ տարածաշրջանում գտնվող մեր նորանկախ պետության վարած ներքին և արտաքին քաղաքականությունը:

Առաջին հանրապետության ռադիոկայանը գործեց չափազանց բարդ, քաղաքական աննպաստ, արտակարգ իրավիճակի պայմաններում՝ չունենալով համապատասխան բարձրակարգ տեխնիկա, կայացած ստեղծագործական կազմ ու համապատասխան կահավորված շենք: Եվ, այնուամենայնիվ, ռադիոկայանը նպաստեց նոր

անկախ պետության կայացմանն ու հետագա ամրապնդմանը, մեր նորանկախ պետության ներքին և արտաքին քաղաքականության մասին, մեծ թվով ռադիոհաղորդագրություններ ու ռադիոտեղեկատուներ պատրաստեց և տարածեց: Առաջին հանրապետության երկրորդ լրատվամիջոցը, որն արդյունք էր գիտատեխնիկական առաջընթացի, դարձավ լրատվության հավաքման, մշակման և հաղորդման հուսալի կապի միջոց և տարածող:

Առաջին հանրապետության նախարարների խորհրդի, խորհրդարանի, ուժային գերատեսչությունների կողմից ընդունված օրենքները, որոշումներն ու հրամանները, ռադիոտեղեկատուների տեքստերը, նամակները, ծառայողական գրագրությունները, հանձնարարությունները և նշումները ամբողջական պատկերացում են տալիս Առաջին հանրապետության ծավալած ռադիոգործի և ռադիոքարոզչության մասին:

Առաջին հանրապետության պետական ռադիոկայանի հիմնման անհրաժեշտությունը

Առաջին հանրապետության հիմնադրման առաջին իսկ տարում նախարարների խորհուրդը Երևանում հզոր ռադիոկայան հիմնելու և տարածաշրջանի կարևորագույն քաղաքների ու կենտրոնների հետ օպերատիվ կապ հաստատելու վերաբերյալ որոշում կայացրեց: Նկատի ունենալով, որ Հայաստանը գտնվում էր պատերազմական դրության մեջ, ռադիոկայանի հիմնումը դառնում էր ավելի հրատապ. այն հնարավորություն կտար համակարգել հանրապետության տարբեր շրջանների միջև առկա կապը և օպերատիվ միջոցառումներ ձեռնարկել՝ թշնամու հնարավոր ոտնձգությունները կանխելու համար: Նախարարների խորհուրդը 1918թ. նոյեմբերին 200.000 ռուբլի հատկացրեց նորագույն ռադիոկայանի ձեռք բերելու համար՝ հանձնարարելով արտաքին գործերի և ֆինանսների նախարարություններին գործնական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ՝ այլ երկրներում գտնվող մեր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով: Այդ նպատակով հանրապետության վարչապետը դիվանագիտական ներկայացուցիչներին հեռագրեց հետևալը. «Գործուն աջակցություն ցուցաբերել ձեռք բերելու և Հայաստան տեղափոխելու նորագույն ռադիոկայան՝ կապը այլ երկրների հետ արդյունավետ կազմակերպելու համար»: Չնայած նորաստեղծ հանրապետության չափազանց ծանր ֆինանսական դրությանը՝ պետական ռադիոկայանի հիմնման աշխատանքները չդադարեցվեցին: Արդեն 1919թ. ապրիլի 28-ին նախարարների խորհուրդն ընդունեց նոր

օրենք՝ ռադիոկայանի ձեռքբերման աշխատանքները արագացնելու և ռազմական նպատակներով օգտագործելու վերաբերյալ, որի ձեռքբերման աշխատանքները մայիս ամսին վերջնականապես պսակվեցին հաջողությամբ: Թիֆլիսում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը և արդարադատության նախարար Ա. Հարությունյանը շտապ հեռագրեցին հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանին՝ Թիֆլիսում նոր տիպի ռադիոկայանի ձեռքբերման հնարավորության մասին. «Հաղորդում ենք, որ այժմ հնարավորություն կա Թիֆլիսում համեմատաբար էժան գնով ժամանակակից ռադիոսարքեր, նոր տիպի «Մարկոնի» ռադիոկայան՝ 50.000 ռուբլով ձեռք բերելու համար: Մենք, որպես կանխավճար, արդեն մուծել ենք 15.000 ռուբլի»²: Հեռագրին հետևում է վարչապետ Ա. Խատիսյանի՝ մայիսի 12-ի թվակիր հրամանը, որով հավանություն է տրվում այդ նախաձեռնությանը, և ընդունվում համապատասխան օրենք, որտեղ մասնավորապես գրված էր. «Ռադիոկայան ձեռք բերելու համար յատկացնել յիսուն հազար ռուբլի (50.000), յանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ զինուորական մինիստրությանը»³: Անհրաժեշտ մուծումներից հետո Թիֆլիսում գնված ռադիոկայանը տեղափոխվում է Երևան և հանձնվում զինվորական նախարարությանը: Այդ նպատակով նախարարների խորհուրդը որոշում է. «Ներքին գործերի մինիստրությանը տրամադրել հարիւր իննսունմեկ հազար (191.000) ռուբլի ուժեղ ռադիոկայանի աշխատանքները աւարտելու համար»⁴: Թիֆլիսից ժամանած մասնագետների ջանքերով համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ավարտվում են Երևանի պետական ռադիոկայանի մոնտաժման աշխատանքները: Ինչպես նշվում է փաստաթղթերում. «ռադիոկայանն ուներ 9 կիլովատ ու 17 ամպեր հզորություն, լրատվություն կարող էր ուղարկել մինչև 1000 վերստ»⁵: Այն պատմության մեջ մտավ «Երևանի ուժեղ ռադիոկայան» անունով. հավանաբար նկատի են առնվել ռադիոկայանի այն ժամանակների համար համեմատաբար մեծ հզորությունը և հեռարձակման շառավղի լայն դիապազոնը: Թերևս ավելի նպատակահարմար կլինեին «ուժեղի» փոխարեն «հզոր» բառի օգտագործումը, որն ավելի համահունչ էր ռադիոկայանի տեխնիկական հնարավորություններին և ավելի էր համապատասխանում նրա կոչմանը: «Մարկոնի» տիպի այդ ռադիոկայանը, իր ժամանակի համար, լավագույններից էր Եվրոպայում և մեծ տարածում ուներ աշխարհի տարբեր երկրներում: Ռադիոկայանների արտադրությանը նպաստելու և ֆիզիկայի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար Գուլյերմո Մարկոնին 1909թ. արժանացավ Նոբելյան

մրցանակի: Ի դեպ, Գուլյերմո Մարկոնին 1920թ. Սևրի Հաշտության վեհաժողովում ղեկավարում էր Իտալիայի պատվիրակությունը, որն իր ստորագրությունը դրեց Հայաստանը անկախ պետություն ճանաչելու փաստաթղթի տակ:

Երևանի ուժեղ ռադիոկայանի գործունեության սկիզբնական շրջանը

Երևանի ուժեղ ռադիոկայանն սկսեց գործել 1919 թվականի հոկտեմբերի սկզբին՝ ռադիոհեռագրային կապ հաստատելով հանրապետության և հարևան պետությունների արդյունաբերական մի շարք խոշոր քաղաքների հետ: Այդ փաստը հաստատում է նաև Առաջին հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը, որը, «Հայաստանի Հանրապետություն» գրքում ներկայացնելով պետական ռադիոկայանի գործարկման մասին, գրել է. «1919թ. հոկտեմբերի սկզբին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որը գործում էր մինչև Բասրա, Տաշկենդ ու Հաշտարխան»⁶: Երևանի ուժեղ ռադիոկայանը աշխատում էր շուրջօրյա ռեժիմով, որի 22 ժամը տրամադրված էր ռադիոհեռագրային կապին, իսկ երկուսը՝ 14-16-ը լրատվական աշխատանքներին⁷: Ստացված օպերատիվ լրատվությունը տրամադրվում էր թերթերին կամ թոուցիկների ու տեղեկատուների տեսքով փակցվում քաղաքի մարդաշատ վայրերում: Ռադիոկայանը տեղակայված էր Երևանի երկաթուղային կայարանի վարչական շենքի տարածքում, որը հնարավորություն էր տալիս ակտիվ ռադիոկապի մեջ լինելու հանրապետության տարբեր շրջանների հետ, տարածելու և ընդունելու մեծ թվով ռադիոհաղորդագրություններ և ռադիոամփոփոգեր:

Պետք է նշել, որ նորաստեղծ ռադիոկայանը, դեռևս չունեի այն տեխնիկական և ստեղծագործական հնարավորությունները, որոնք հատուկ են ժամանակակից ռադիոընկերություններին: Այն ժամանակ ռադիոն տեխնիկապես դեռևս «ձայնային» չէր, չունեի զանգվածային լսարան և նոր-նոր մուտք էր գործում լրատվության ասպարեզ, և ժամանակ էր պետք, որ նա իրեն դրսևորեր որպես ամենաօպերատիվ զանգվածային լրատվամիջոց:

Հիմնադրման սկզբնական շրջանում պետական ռադիոկայանը բացառապես օգտագործվում էր որպես գերատեսչական «կապի» միջոց, ռադիոհեռագիր՝ ռադիոհաղորդագրություն ուղարկելու համար, որը հիմնականում օգտագործվում էր ծառայողական նպատակներով: «Նեղ» ռադիոկայանի երկու մասնակիցների միջև եղած կապը բնորոշում էր այդ միջոցի առանձնահատկությունը, ինչպես նաև նրա ռադիոհաղորդումների ձևը, նշանակությունը և կառուց-

վածքը: Այն ժամանակ դեռևս բացառվում էր ռադիոհեռագրի հնարավոր կապը զանգվածային լսարանի հետ, և, բնականաբար, այնպիսի հաղորդագրություններ, որոնք պետք է ուղղված լինեին նման լսարանի, դեռևս բացակայում էին: Այդ էր պատճառը, որ այն սկզբնական շրջանում համապատասխանում էր զինվորական նախարարության պահանջներին, և հենց նախարարությունն էլ սկսեց ռադիոկայանի շահագործման աշխատանքները:

Երևանի ուժեղ ռադիոկայանի գործունեության երեք շրջանները

Այս առումով, թերևս, Երևանի ուժեղ ռադիոկայանի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել ստեղծագործական երեք շրջանների. առաջին՝ 1919թ. հոկտեմբերի սկզբից մինչև 1920թ. ապրիլի 12-ը, երբ այն գտնվում էր զինվորական նախարարության ենթակայության ներքո, երկրորդ՝ 1920թ. ապրիլի 12-ից մինչև 1920թ. դեկտեմբերի 2-ը, երբ այն անցավ արտաքին գործերի նախարարության տրամադրության տակ, և երրորդ՝ 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1926թ. սկիզբ, երբ ռադիոկայանը տնօրինեց Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը և ծառայեցրեց իր նպատակներին:

Առաջին շրջան

Ինչպես նշեցինք, առաջին շրջանում պետական ռադիոկայանը գտնվում էր ռազմական նախարարության ենթակայության ներքո, չնայած օրենքով պատկանում էր Հանրապետության կառավարությանը և պետք է կատարեր կառավարության խոսնակի դեր: Հանրապետությունում դեռևս չկար մի միասնական կառույց, որը կառավարեր ռադիոկայանը պետականորեն՝ կենտրոնացված համակարգով ապահովելու նրա օգտագործումը բազմապիսի համապետական պահանջները բավարարելու համար, ինչպես նաև հետևեր հանրապետությունում ռադիոհեռագրային ցանցի հետագա զարգացմանը: Այդ էր պատճառը, որ առաջին շրջանում ռադիոկայանը բացառապես ընդունում և պատրաստում էր ռադիոհեռագրեր և տեղեկատուներ զինվորական, ռազմական թեմաներով: Այսպես կոչված քաղաքացիական ռադիոհեռագրակապը առաջին շրջանում հասկանալի պատճառներով չկիրառվեց: Պետական ռադիոկայանը սկզբնական շրջանում օպերատիվ ռադիոկապ հաստատեց Մոսկվա, Կարս, Բաքու, Թիֆլիս, Սևաստոպոլ, Կրասնոդար, Տաշքենդ քաղաքների հետ, այնուհետև կապ հաստատվեց հանրապետության տարբեր շրջաններում գտնվող հայոց բանակի ռազմակայանների հետ: Արտասահմանի հետ կապը իրագործվում էր Մերձավոր Արև-

ելքում գտնվող Բասրա քաղաքի ֆրանսիական ռադիոկայանի միջոցով և նրա օգնությամբ: Ռադիոկայանը հեռագրեր ընդունում և հաղորդում էր երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն: Այդ տարիներին պետական ռադիոկայանի պետ նշանակվեց այդ գործի հմուտ մասնագետ, հայոց բանակի սպա, պորուչիկ Կ. Վարդանյանը: Ռադիոկայանի ողջ անձնակազմը բաղկացած էր 18 հոգուց՝ 3 լաբորանտ, 4 անձ մեխանիկական բաժնում, կոշկակար, 2 դարբին, 3 վարորդ, գրագիր, 3 հաղորդավար-ռադիստներ: Պետական ռադիոկայանի աշխատակազմի նմանատիպ թվաքանակը ընդունված տարբերակ էր այն ժամանակվա ռադիոկայանների համար, որոնք ոչ միայն ժամանակին լրատվություն էին ընդունում և տարածում, այլև հետևում ռադիոկայանի տեխնիկական բնակատնի աշխատանքին⁸:

Ռադիոկայանի լրատվական գործունեությունն սկսվում էր ամեն օր՝ ժամը 14-ից, երկու ժամ թարմ լրատվություն էր տրամադրվում թերթերին, կառավարական տեղեկատուին, ռադիոտեղեկատուների տեսքով լրատվություն էր տարածվում քաղաքի մարդաշատ վայրերում⁹:

Հաշվի առնելով ռազմական օպերատիվ լրատվության կարևորությունը մեր հանրապետության համար՝ ռադիոկայանն ամեն օր ռադիոտեղեկատուի տեսքով օպերատիվ լրատվություն էր ստանում Մոսկվայից, որը միջնորդավորված ձևով հաղորդվում էր Թիֆլիսի ռադիոկայանի միջոցով: Դրանք տեղեկություններ էին Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմի և երկրում ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակի մասին¹⁰:

Ռադիոկայանն ակտիվ կապի մեջ էր գտնվում նաև Ռուսաստանի հարավում գտնվող Դենիկինի կառավարության հետ, որի հետ Հայաստանի Հանրապետությունն ուներ դիվանագիտական հարաբերություններ և ռազմական համագործակցություն: Հարևան երկրների նորաստեղծ կառավարությունների հետ հանրապետության ղեկավարությունը պարբերաբար ռադիոկայանի միջոցով կատարում էր ռազմական օպերատիվ լրատվության փոխանակում՝ տարածաշրջանում ստեղծված կացության շուրջ. հետագայում ռադիոկայանը ակտիվ կապի մեջ էր նաև Ղրիմի թերակղզում հաստատված Վրանգելի կառավարության հետ՝ ընդհանուր ճակատ ունենալով բոլշևիկյան Ռուսաստանը: Հայաստանի կառավարության այդ դիրքորոշումը պաշտպանում էին Երևանում լույս տեսնող «Յառաջ», «Ռազմիկ», «Ձանգ» և «Ժողովուրդ», Թիֆլիսում՝ «Մշակ» օրաթերթերը, որոնք հավանություն էին տալիս կառավարության արտաքին և ներքին քաղաքականությանը՝ խրախուսելով նրա արևմտամետ դիրքորոշումը:

Ռադիոկայանի հետ կապ հաստատած քաղաքներից, հատկապես հայկական ներկայացուցչություններից ստացվում էին այդ պետություններում առավել կարևոր դեպքերի և իրադարձությունների մասին օպերատիվ ռադիոհաղորդումներ, ինչպես նաև նրանց տրամադրվածությունը մեր նորաստեղծ պետության նկատմամբ:

Ունենալով կայուն և անխափան կապի հնարավորություն՝ ռադիոկայանը կարողանում էր պարբերաբար ընդունել և հաղորդել անհրաժեշտ հաղորդագրություններ ու ծածկագրեր, ինչպես նաև հաճախակի որսում էր տարբեր ռադիոկայանների հաղորդած լրատվական հաղորդագրությունները, որոնց մեջ թշնամական բնույթի տեղեկատվությամբ աչքի էր ընկնում հատկապես Բաքվի ռադիոկայանը: Վերջինս պարբերաբար ռադիոծածկագրեր էր ուղարկում Հայաստանում բնակվող մահմեդականներին՝ նրանց կոչելով անհնազանդության ու ապստամբության: Մեր նորաստեղծ հանրապետության համար ստեղծված այսպիսի անբարենպաստ պայմաններում պետական ռադիոկայանը անգնահատելի ծառայություն էր մատուցում զինվորական նախարարությանը, օգնում նրան ժամանակին միջոցներ ձեռք առնելու թշնամական գործողությունները կանխելու և համարժեք գործողություններ կիրառելու համար: Երևանի ուժեղ ռադիոկայանի ջանքերով բացահայտվեց և վնասագործվեց Երևանում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի լրտեսական գործունեությունը: Հայաստանում ժամանակին այդ փաստին արձագանքեցին նաև կառավարական լրատուն, «Յառաջ»-ը, «Ռազմիկ», «Զանգ» և «Մշակ» թերթերը: Գործունեության առաջին շրջանում ռադիոկայանը պատրաստեց 163 ռադիոհեռագրական ամփոփագիր՝ օրվա կարևոր հաղորդագրություններով ու լուրերով: Նկատի ունենալով, որ 1920թ. սկզբներին հանրապետության ներքին դրությունը համեմատաբար կայունանում է, և նախադրյալներ են ստեղծվում տնտեսական բարգավաճման ու քաղաքական ճանաչման համար, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ակտիվացնելու և արտասահմանյան երկրների հետ կապը ընդլայնելու նպատակով, կառավարությունը նպատակահարմար գտավ Երևանի ուժեղ ռադիոկայանը հանել զինվորական նախարարության ենթակայությունից և հանձնել արտաքին գործերի նախարարությանը¹¹: 1920թ. ապրիլի 12-ին ռադիոկայանը մասնակի վերակառուցվեց և համապատասխանեցվեց արտաքին քարոզչության համար: Եթե առաջին շրջանը բացառապես զինվորական, ռազմական ռադիոքարոզչության շրջան էր, այժմ արդեն քաղաքացիական լրատվությանը բնորոշ առանձնահատկությունների սկիզբն էր դրվում: Երևանի ուժեղ ռադիոկայանը դառնում էր հասարակական տրամադրությունների ստեղծման կարևորագույն միջոց¹²:

Երկրորդ շրջան

Երկրորդ շրջանում ռադիոկայանի ստեղծագործական աշխատանքը ընթանում էր երեք հիմնական ուղղություններով՝

ա) պաշտոնական,

բ) ներքին կյանք,

գ) գաղութային կյանք (նկատի ունեին հայ գաղթօջախները)¹³:

Ռադիոհաղորդումների պաշտոնական բաժնում պատրաստում էին ռադիոհեռագրեր, ռադիոտեղեկատուներ ու ռադիոամփոփագրեր կառավարության, պառլամենտի, նախարարությունների կողմից ընդունված այն օրենքների ու որոշումների մասին, որոնք հրատապ նշանակություն ունեին հանրապետության արտաքին և ներքին քաղաքականությունը տարածաշրջանում և այլ երկրներում լուսաբանելու համար:

Այսպես՝ ռադիոկայանը օպերատիվ արձագանքեց 1920թ. մայիսյան ապստամբության լուսաբանմանը, երբ բոլշևիկյան հովերով տարված զինվորականության մի ստվար մասը անհնազանդության ու ապստամբության կոչով դիմեց հայոց բանակին՝ փորձելով ապակայունացնել հանրապետության ներքին իրավիճակը և զավթել իշխանությունը: Օգտագործելով լրատվամիջոցների հնարավորությունները՝ կառավարությունը բացատրական աշխատանք տարավ զինվորականության շրջանում՝ ձգտելով նրանց հետ պահել կործանարար և չմտածված գործողություններից, որոնք կարող էին պարարտ հող ստեղծել բոլշևիկների համար՝ տապալելու նորաստեղծ հանրապետությունը: Հանրապետության վարչապետ Հ. Օհանջանյանը ռադիոկապով դիմեց Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) զինվորական գնդերին՝ կոչ անելով «ետ կանգնել բոլշևիկյան հովերով տարված սպաների ազգադավ, խառնակիչ բռնարարքներից, որոնց նպատակն է քայքայել և կործանել մեր նորելուկ հանրապետությունը: Մենք թույլ չենք տա արյան գնով նվաճված ազատության ոտնահարումը և օրենքի ամբողջ խստությամբ կպատժ չնք դավաճաններին»¹⁴: Ռադիոկայանը օպերատիվորեն անդադարձավ նաև Հայաստանի մի շարք քաղաքներում զինվորականության բարձրացրած խռովությունների լուսաբանմանը՝ պարբերաբար ռադիոն տրամադրելով պետական և հասարակական նշանավոր այրերին, որոնք ողջախոհության և զսպվածության կոչ էին անում զինվորականությանը: Արդեն մայիսի վերջին ապստամբությունը ճնշվեց, իսկ զորագնդերը վերադարձան զորանոցներ: Այդ իրադարձությանն էր անդրադարձել նաև այդ ժամանակների ամենահեղինակավոր թերթերից մեկը՝ «Մշակ»-ը, որը, մայիսի 14-ի համարում անդրադառնալով Ալեքսանդրապոլում սկսված խառնակություններին,

Հայաստանի Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանին հուշում էր Ս. Մուսայելյանին և նրա կողմնակիցներին պատժել օրենքի ամենայն խտտությամբ: «Մշակ»-ը այն համարում էր բոլշևիկյան խռովություն, դավաճանություն՝ նոր ոտքի կանգնող հանրապետության նկատմամբ:

Արդեն հունիսին Հանրապետության մամուլը և ռադիոն պարբերաբար սկսեցին անդրադառնալ հայոց բանակի ամառային գործողություններին, որոնք ուղղված էին հանրապետության ներքին թշնամու դեմ: Հանրապետության հիմնադրման օրվանից պետության ներսում գտնվող թուրք բնակչությունը բազմիցս ապստամբում և ընդվզում էր մեր կառավարության վարած քաղաքականության դեմ՝ անհնազանդություն հայտնելով նրա ընդունած որոշումների կատարմանն ու իրագործմանը: Այդ պատճառով Հայաստանի կառավարությունը 1920թ. ամռանը ձեռնարկեց լայնամասշտաբ հարձակում հարավային ուղղությամբ, և ընդամենը երկու ամսում «Հայոց պանծալի բանակը ոչնչացրեց թշնամական խմբավորումները Ջանգիբասարում, Վեդիում, Արարատում, Շարուրում՝ հասնելով Նախիջևանից 20 վերստ հեռավորության վրա գտնվող Շահթախթի կայարանը, - հաղորդում է ռադիոկայանը, որին լրացնելով՝ «Ռազմիկ» թերթը նշում է, որ, - «այժմ հայոց բանակը, ջախջախիչ հարվածներ հասցնելով մի-մի թարախապալար դարձած մուսուլմանական շուրաներին, մաքրեց հանրապետության տարածքը թշնամական տարրերից, նախադրյալներ ստեղծեց Նախիջևանի վերամիավորմանը Հայաստանին»¹⁵:

Ցավոք, այդ ուրախությունը կարճատև էր: Ընդամենը մի քանի ամիս անց քեմալական Թուրքիան ուխտադրուժ հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա՝ օկուպացնելով նրա տարածքները և բնաջնջելով խաղաղ բնակչությանը: Պետական ռադիոկայանը այդ ժամանակահատվածում գործում էր մեծ ծանրաբեռնվածությամբ և հնարավորինս ընդլայնում էր ռադիոկապը այլ երկրների ռադիոկայանների հետ՝ հաղորդելով բազմաթիվ հաղորդագրություններ թուրքական և բոլշևիկյան փոխհամաձայնեցված ռազմական գործողությունների մասին: Հաշվի առնելով ստեղծված ծանր պայմանները՝ պետական ռադիոկայանի աշխատանքը համապատասխանեցվեց արտակարգ իրավիճակի պայմաններին և պահանջներին: Այդ նպատակով մոբիլիզացվեց ռադիոկայանի ողջ անձնակազմը և համապատասխանեցվեց ռազմական դրության օրենքներին: Ռադիոկայանը լրատվական հոսքը չդադարեցրեց մինչև Հայաստանի Հանրապետության անկումը՝ արձանագրելով ու դառնալով նրա պատմության և միաժամանակ ճակատագրա-

կան ու բախտորոշ օրերի և իրադարձությունների տարեգիրն ու վկան:

«Ներքին կյանք» բաժնում ռադիոկայանը պարբերաբար անդրադառնում էր հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակին, հանրապետության տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին և ներքին վիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների լուսաբանմանը, որը տևեց մինչև 1920 թվականի աշունը: Ռադիոկայանը հիմնականում տեղեկագրեր էր պատրաստում գյուղատնտեսության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների, հատկապես հացահատիկի արտադրության մասին. «1920 թվականի ամառը բավականին հաջող էր հայ գեղջուկի համար, առաջին անգամ հավաքվել է հարուստ բերք՝ բնակչության և բանակի կարիքները հոգալու համար, հատկապես ցորեն շատ են հավաքել Արարատյան դաշտում, Շարուրի և Նախիջևանի ագատագրված տարածքներում»¹⁶: Ցավոք, նմանատիպ հաղորդագրությունները մեծ թիվ չեն կազմում և բավականին կցկտուր են: Դրանք, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այդ տարիներին հանրապետությունում ստեղծված ներքին կացության մասին:

«Գաղութային կյանք» բաժնում ռադիոկայանը հիմնականում անդրադառնում էր Մերձավոր Արևելքում, Թուրքիայում, Իրանում, ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում մեր բազմահազար գաղթական հայրենակիցների կյանքին, քաղաքական իրավիճակին. «Սիրիայում և Լիբանանում կուտակված տասնյակ հազարավոր հայեր դանդաղ մեռնում են սովից և ցրտահարությունից, անհապաղ միջոցներ են անհրաժեշտ այդ դժբախտներին փրկելու և կյանքի տանելի պայմաններ ստեղծելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը դիմում է Փարիզի վեհաժողովին՝ հատուկ քննարկման նյութ դարձնելու հայ գաղթականության անմխիթար վիճակը և պայմաններ ստեղծելու նրանց վերադարձը հայրենի օջախներ»¹⁷: Այս բաժնում ռադիոկայանը մեծ տեղ էր հատկացնում արտասահմանյան երկրներում ապրող հայ մեծահարուստ, քաղաքական դիրք ունեցող անձանց հայաստաստ գործունեությանը, հատկապես Պողոս Նուբար փառալի Զանքերին, որոնց նպատակն էր պաշտպան կանգնել արևմտահայերի արդար պահանջներին տարբեր վեհաժողովներում և կոնֆերանսներում: Հատկապես մեծ ոգևորություն առաջացրեց 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը, որը «նոր հույս տվեց արևմտահայ բեկորներին վերադառնալու հայրենի բնօրրան և վերածնելու ավերված տունը»¹⁸, սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց, հազարավոր հայեր նորից

ստիպված տարագրվեցին այլ երկրներ՝ հիմնելով նոր գաղթօջախներ:

Ռադիոկայանը արձագանքեց նաև 1920թ. ամռանը Կիլիկիայում տեղի ունեցող դեպքերին, Մ. Տամատյանի գլխավորությամբ Կիլիկիայի հայկական պետությանը առնչվող քաղաքական իրադարձություններին: Հանրապետության ղեկավարները կարևորում էին պատմական Կիլիկիայի տարածքում հայկական պետականության հաստատման փաստը, սակայն գործուն աջակցություն նրանք այդպես էլ չկարողացան ցուցաբերել: Հետագա իրադարձություններից և դեպքերի զարգացումներից պարզ դարձավ, որ կիլիկիայությունը, ինչպես նաև Առաջին հանրապետությունը դատապարտված էին կործանման՝ դառնալով միջազգային դիվանագիտության և գերտերությունների շահերի և խարդավանքի զոհեր:

Երրորդ շրջան

Երևանի ուժեղ ռադիոկայանի երրորդ շրջանն ընդգրկում է 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1926թ. սկիզբ:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Երևանի ուժեղ ռադիոկայանի գործելաճը գաղափարապես վերակառուցվեց և համապատասխանեցվեց իշխող կուսակցության գաղափարախոսությանը: Այդ ծանր օրերին ռադիոկայանը կարողացավ պահպանել իր աշխատակազմը և օպերատիվ ռադիոկապ հաստատել նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև: Երևանի ուժեղ ռադիոկայանն անգնահատելի ծառայություն մատուցեց հատկապես 1921թ. փետրվարյան ժողովրդական ընդվճման դեպքերը օբյեկտիվ ներկայացնելու և տեղեկացնելու ժամանակ: Ինչպես վկայում է այդ օրերի ականատես Սո. Ջորյանը, «Ռադիոկայանը այդ ծանր օրերին միակ լրատվական կապի միջոցն էր, որը մեզ կապում էր արտաքին աշխարհի հետ»¹⁹: Ստեղծված քաղաքական բարդ պայմաններում Երևանի ուժեղ ռադիոկայանը դարձավ այն օպերատիվ լրատվամիջոցը, որով ռադիոհեռագրեր էին փոխանցվում Բաքվի և Թիֆլիսի ռադիոկայանների հետ՝ Հայաստանում տիրող իրավիճակի, մասնավորապես Երևանում տեղի ունեցող դեպքերի մասին: Փաստորեն, ռադիոկայանի օպերատիվ արձագանքը 1921 թվականի փետրվար-մարտ ամիսներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին. հնարավորինս կանխվեց նոր արյունահեղությունների վտանգը, և հարցը լուծվեց համեմատաբար խաղաղ ճանապարհով:

Երևանի ուժեղ ռադիոկայանը արդեն 1922 թվականին տեխնիկապես վերագինվեց, որը հնարավորություն տվեց ընդլայնելու լու-

րերի ընդունման և հաղորդման շառավիղը և անցում կատարելու «խոսակցական» ռադիոյի: Սակայն հանրապետության տարբեր շրջաններում ռադիոհանգույցների բացակայության պատճառով Երևանի ուժեղ ռադիոկայանի աշխատանքը դեռևս ներփակվում էր մայրաքաղաքի սահմաններում և չունեց զանգվածային լսարան: Նույն թվականի կեսերից ռադիոկայանի հաղորդումները սկսեցին եթեր տրվել հատուկ այդ նպատակով քաղաքի մարդաշատ վայրերում տեղադրված բարձրախոսների միջոցով: Օրական եթեր էր հեռարձակվում 60 րոպե ռադիոհաղորդում: Չունենալով հիմնական ստեղծագործական կազմ՝ ռադիոկայանը մեծ մասամբ եթեր էր տալիս գիտահանրամատչելի հաղորդումներ՝ հիմնական նյութը քաղելով ռուսական մեծ հանրագիտարանից՝ լսարանին ծանոթացնելով նշանավոր գիտնականների, գրողների, մշակույթի և արվեստի գործիչների կյանքին, ինչպես նաև լրատվական թողարկումներ հանրապետությունում և արտերկրում տեղի ունեցած կարևոր քաղաքական և տնտեսական իրադարձությունների մասին²⁰: Ռադիոկայանի աշխատանքներն ավելի արդյունավետ և օպերատիվ դարձնելու համար, հանրապետության կառավարության հատուկ որոշմամբ, հանրապետության պետական խոշորագույն լրատվական գործակալությունը՝ ԱրմենՍԱ-ն (այժմ՝ Արմենպրես), 1923թ. հոկտեմբերի 10-ից ամենօրյա լրատվություն էր տրամադրում ռադիոկայանին²¹:

1926 թվականի օգոստոսին հանրապետական նշանակության ռադիոկայանի մոնտաժման աշխատանքներին զուգընթաց՝ աստիճանաբար նվազեց Երևանի ուժեղ ռադիոկայանի դերը՝ տեղը զիջելով տեխնիկապես ավելի հզոր հանրապետական ռադիոկայանին, որը Երևանի երկաթուղային կայարանի վարչական շենքում մոնտաժված ստուդիայից 1926թ. սեպտեմբերի 1-ին եթեր հեռարձակեց 25 րոպե տևողությամբ առաջին փորձնական ծայնային ռադիոհաղորդումը:

Քանալի բառեր - Առաջին հանրապետության պետական ռադիոկայան, Երևանի ուժեղ ռադիոկայան, ռադիոկայանի զարգացման երեք շրջանները, ռադիոհեռագրային կապ, ռադիոտեղեկատվություն:

SUMMARY

Mushegh Hovsepyan

Doctor of Philological Sciences, Professor

The State Radio of the First Republic: the Formation and Development

Taking into consideration the work carried out by the state radio of the First Republic, its main activities, as well as by outlining the phases of its development, it can be concluded that the radio station did its main duties of spreading the national ideology and being the state speaker. The laws, regulations and orders adopted by the Council of Ministers of the First Republic, by the Parliament, or by Military offices, the texts of the radio programs, service records, the tasks and instructions give the full picture of the state radio station of the First Republic.

The new type of technical media, which went down in history as Yerevan's powerful radio station, developed mainly under unfavorable and hard socio-political conditions for the First Republic. Performing its main functions it contributed to the development of the newly created state, shaped public mood and created preconditions for the development of the radio field in Soviet Armenia.

Keywords: *The state radio station of the First Republic, Yerevan's powerful radio station, the three phases of radio station's development, radiotelegraphy communications, radio directory.*

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 486, 1-ին մաս, թ. 142:
2. Նոյն տեղում:
3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 1:
4. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 127, ց. 1, գ. 11, թ. 142:
5. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 65, թ. 5:
6. Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 323:
7. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 574, թ. 27:
8. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 574, թ. 200:
9. Նոյն տեղում, թ. 202:
10. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 24, թ. 10:
11. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 574, թ. 3:
12. Նոյն տեղում, թ. 3:
13. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 262-2 մաս, թ. 47:
14. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 574, թ. 113:
15. Մեր թղթակիցը հաղորդում է, «Ռազմիկ», 1920, 30-ը հուլիսի:
16. Նոյն տեղում, թ. 167:
17. Նոյն տեղում, թ. 124:
18. Նոյն տեղում, թ. 196:
19. Սյր. Ջորյան, Հուլերի գիրք, Եր., 1991, էջ 35:
20. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 191, ց. 1, գ. 84, թ. 59:
21. Նոյն տեղում, թ. 65:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱԼ

Հայաստանի ազգային գրադարանի փնտրենի
գիտական գծով փեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1919թ.)

Հայկական գրադարանները բազմադարյան պատմություն ունեն: Դրանք բացվում և գործում էին վանքերին կից, կոչվում էին գրոց տուն, նշխարանոց, մատենադարան և այլն: Միջնադարյան Հայաստանում հայտնի են Հաղպատի, Ամրդուլու վանքի և այլ բազմաթիվ գրադարաններ, որոնցից շատերի հավաքածուները նաև գրացուցակներ ունեին: Պատմական, սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով պատմական Հայաստանի տարածքներից հայությունը զանգվածաբար հեռանում էր, ապաստան գտնում տարբեր մայրցամաքներում, որտեղ հայտնվելով՝ արագորեն ինքնակազմակերպվում էր, ստեղծում համայնքային կառույցներ, կառուցում եկեղեցի, դպրոց, կազմակերպում տպագրություն: Դպրոցների կամ հոգևոր կառույցների կից ձևավորում էին գրադարաններ: Հայկական գրատպությունը նոր ժամանակաշրջան բացեց լուսավորության, կրթության տարածման, ձեռագիր գրադարանային հավաքածուներին զուգահեռ նոր՝ արդեն տպագիր հավաքածուների ձևավորման ուղղությամբ: Գրքերի, հատկապես ուսումնական, կրոնական, գեղարվեստական գրականության, հետազայում նաև պարբերական հրատարակությունների մեծ տպաքանակները տպագրության առաջին եվրոպական կենտրոններից տարածվում էին հայաշատ վայրեր, պատմական Հայաստանի գավառներ: Աստիճանաբար տպագրության գործը տարածվում է դեպի Արևելք՝ Կ. Պոլիս (1567), Նոր Ջուղա (1638), Չմյունիա (1676): Ներկա ՀՀ տարածքում գրատպությունն սկզբնավորվեց առաջին տպագիր գրքի հրատարակումից մոտ 260 տարի անց: 1771թ. կաթողիկոս Սիմեոն Ա. Երևանցու ջանքերով և հնդկահայ Միքայել Չաքիկյանի հովանավորությամբ Էջմիածնում բացվեց տպարան, որին կից նաև՝ թղթի գործարան: Տպագիր հրատարակությունների տպաքանակների ավելացումը գիտելիքի հանրայնացման ուղիներ բացեցին: Ուսումնական հաստատություններին կից, սովորողներին անհրաժեշտ ուսումնական և օժանդակ գրականությամբ ապահովելու նպատակով բացվում էին գրադարաններ և ընթերցարաններ: Հայտնի են Մխիթարյան միաբանության Վենետի-

կի և Վիեննայի մատենադարանները, Երուսաղեմի, Կ. Պոլսի պատրիարքարանների, Էջմիածնի գրադարանները, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան, Կարինի Սանասարյան, Կ. Պոլսի Կեղրոնական, Չմյունիայի Մեսրոպյան դպրոցների գրադարանները: Գրատպությանը զուգընթաց կազմակերպվում է նաև գրավաճառության գործը, միաժամանակ ձևավորվում ու զարգանում է գրադարանային գործը՝

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո (1828թ.) նշանակալի փոփոխություններ են կատարվում կոլտուր-լուսավորչական կյանքում: Երևանում բացվում է գավառական գիմնազիա և գրադարան², որը իրական զարգացում ապրեց Խաչատուր Աբովյանի տեսչության տարիներին: Նա ոչ միայն կապ է հաստատում ռուսական ու եվրոպական գրավաճառանոցների հետ (գրադարանը համալրում էր կովկասագիտական, հայագիտական գրականությամբ), այլև կազմակերպում է գրադարանային որոնողական համակարգը, գրացուցակներ ստեղծում և մեծ ջանքերի արդյունքում՝ Կովկասագիտության կաբինետ: Այստեղ ցուցանմուշների կողքին հավաքվում և ցուցադրվում էին նաև արժեքավոր գրքեր: Տարիների հետ հարստանալով՝ գիմնազիայի Կովկասագիտական թանգարանի հավաքածուն ուսումնարանի հարուստ գրականության հետ միասին դարձավ ՀՀ պետական-հանրային գրադարանի ստեղծման հիմքը³: Գիմնազիայի գրադարանի հավաքածուն այնքան հարուստ էր, որ այնտեղ Երևանի թեմական առաջնորդ Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանի միջնորդագիր նամակով աշխատում են Հովհաննես Մարտիրոսյանը (Ա-Դո), Առաքել Բաբախանյանը (Լեո)⁴: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գիմնազիայի շենքը որբերի համար ծառայել է որպես ճաշարան, կացարան, հիվանդանոց: Այդ ժամանակահատվածում հասկանալի պատճառներով դանդաղել էր գրադարանի համալրումը: 1914-1915 թթ. գրադարանի գրքերի քանակը հասել էր 25.000 հատորի⁵:

1917թ. ապրիլին հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում Թիֆլիսում բացվեց Հայկազյան ընկերությունը, որը նպատակ ուներ պաշտպանելու և զարգացնելու գիտությունն ու գեղարվեստը, գրականությունը, կազմակերպելու հայոց ակադեմիա, հայոց համալսարան: «Չմոռանանք, որ հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է՝ միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին... Եվ սրա մեջն է մեր ցեղի մեծությունն ու մեր կյանքի մեծ դրաման»⁶: 1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը: Դժվարին ժամանակներում ՀՀ Կառավարությունը գիտակցում էր ոչ միայն օրենսդիր, գործադիր, դատական մարմինների, այլև մշակութային, գիտական և ուսումնական հաստատությունների ստեղծման, ազգաբնակչության կրթության զարգացման կարևորությունը պետու-

թյան կայացման գործում: Նորանկախ հանրապետության կառավարությունը, նկատի առնելով գիմնագիայի մանկավարժական հարուստ փորձն ու ձևավորված ավանդույթները, որոշեց գիմնագիայի գրականության մի մասը թողնել Մանկավարժական թանգարանի ձևավորման համար, իսկ մնացած գրականությունը՝ 18000 միավոր, կազմեց Հայաստանի պետական հանրային գրադարանի հիմքը⁷: Հայ մշակույթի նշանավոր գործիչ Գ. Լևոնյանը 1919թ. մարտին ՀՀ լուսավորության մինիստրին ուղղված զեկուցագրում նշում է. «Պետականության ստեղծման դժվարին գործը հրամայականորեն պահանջ է առաջացնում պետության կենտրոնում ունենալ անհրաժեշտ գրքերի մի հավաքածու: Եթե Հայաստանում համալսարան է բացվելու, որը միանգամայն կասկածից դուրս է, ապա ուրեմն այդ համալսարանից ոչ շատ հեռու պետք է հիմնվի մի անկախ, հարուստ և ճոխ Ազգային Մատենադարան, առանց այդպիսի մի հիմնարկության, առանց գիտական մթնոլորտ ստեղծելու՝ դժվար կլինի երևակայել համալսարանի կամ մյուս բարձր և մասնագիտական դպրոցների գոյությունը, ինչպես նաև պետական խնդիրներով, գիտությամբ և բանասիրությամբ զբաղվողների դրությունը»⁸: Այնուհետև առաջ է քաշում բացվելիք մատենադարանի համար գրադարանային փաստաթղթեր հավաքելու անհրաժեշտությունը, քանի որ «... ներկայումս հայ ժողովրդի տեղափոխությունների, գաղթումների և մանավանդ ապրուստի թանգուության պատճառով հրապարակում հաճախ աննշան գներով ամեն տեսակ գրքեր, կարևոր և հազվագյուտ հանդեսներ, պատկերներ և այլն, և այդ բոլորը մասամբ ընկնում են ստոր բուկինիստների և սպեկուլյանտների ձեռքը»⁹: Նույն փաստաթղթում նա նախարարին հորդորում է Պետական կենտրոնական գրադարան կամ Ազգային մատենադարան հիմնելու գործը դարձնել նախարարության առաջիկա հոգսերից մեկը: Գ. Լևոնյանի իրատեսական տեսլականով Ազգային գրադարանի հեռավոր և վերջնական նպատակը լինելու էր մեկ հարկի տակ հավաքել անխտիր բոլոր հայերեն հրատարակությունները՝ գիրք, լրագիր, հանդես, քարտեզ, օրացույց, գրացուցակ: Իսկ տվյալ ժամանակահատվածի համար խիստ կարևորում էր ամեն տեսակ ձեռագիր և տպագիր հրատարակությունների հավաքումը: 1919թ. մայիսի 11-ին Գարեգին Լևոնյանը ՀՀ հանրային կրթության մինիստր Գևորգ Մելիք-Նարազյանին գրում է. «Եթե կառավարությունը հնարավոր չի համարում այժմվանից լուծել ազգային մատենադարանի խնդիրը և նրա կազմակերպության համար վերջնական շտատ կազմելը, գոնե խնդրում եմ նշանակել մի անձի, որ նա օր առաջ կարողանա սկսել գրքերի առաքման գործը: Մի գործ, որ մոտ ապագայում ավելի մեծ աշխատանք և մեծ ծախսեր է պահանջելու կառավարությունից: Գրքեր հավաքել թե՛ նվիրատվությամբ, թե՛ գնումներով, ամենահարմար ժամանակն է, իսկ մատենադարանի

կազմակերպությունը կմնա կառավարության հետագա որոշման»¹⁰: Հաջորդում է պատասխանը. «Վաղուց արդեն պետական հանրային գրադարանի վերատեսուչ է նշանակված Ստ. Կանայանը, որին և հանձնված է գործը»¹¹: Ստ. Կանայանը ոչ պաշտոնապես նշանակված էր հանրային գրադարանի վարիչ մինչև Կառավարության հաստատելը: Դա հավաստում է ինքը՝ Կանայանը 1921թ. օգոստոսի 9-ին, նոր կառավարությանը՝ ՀՄԽՀ Լուսժողկոմին ներկայացրած հաշվետվության մեջ¹²: Ստ. Կանայանը ծնվել է Իգդիրում, կրթություն է ստացել Գևորգյան ճեմարանում, այնուհետև՝ Դրպատի, Ստրասբուրգի, Մյունխենի համալսարաններում: Դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Շուշիի թեմական և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում: Նա ուսումնասիրել էր եվրոպական գրադարանների գործը և գրադարանային աշխատանքի փորձ էր ձեռք բերել Թիֆլիսի Պուշկինյան գրադարանում, ապա՝ Հավաքարի հայկական գրադարանում:

1919թ. հունվարի 31-ին Հանրային կրթության մինիստրությունը Մինիստրների խորհրդին ներկայացրեց ՀՀ Հանրային մատենադարանի մասին օրինագիծ, որտեղ շեշտադրվում է, որ Հայաստանի կուլտուրական, տնտեսական, քաղաքական ասպարեզներում տեսականորեն և գործնականում պատրաստված կադրերի խիստ պակաս կա: Եվ այդ թերին լրացնելու համար առաջնակարգ դերակատարություն պետք է ունենան թանգարանները, ցուցահանդեսները, գրադարանները, կրթական հաստատությունները: Օրինագծով, մոտ ապագային թողնելով մյուս հիմնարկությունների ստեղծման հարցը, նախարարը ներկա դրությամբ առաջարկում է քննել Պետական հանրային մատենադարան հաստատելու խնդիրը¹³: Առաջարկվում է հանրային մատենադարանի հիմքը դնելու համար նախ հատկացնել ուսուցչական սեմինարիայի, արական գիմնագիայի, պետական պալատի գրադարաններից որոշ գրքեր, ապա մի կոչով դիմել ողջ հայությանը ոչ միայն գրքերով ու ձեռագրերով, այլև պիտանի այլ իրերով օգնելու և նպաստելու մատենադարանի հիմնադրմանը¹⁴: Մինչ գրադարանի խորհրդի կազմվելը Թիֆլիսում հաստատված «Հայաստանի պետական հանրային գրադարանի հատուկ մասնաժողովը»՝ Ստեփան Կանայանի գլխավորությամբ, օժտված էր գնումներ անելու և գրականություն ընդունելու լիազորությամբ: Ծանր, մաքառումներով աշխատանք էր տանում մասնաժողովը՝ անհրաժեշտ նվիրատվությունները ընդունելու, փաթեթավորելու, արկղերում տեղավորելու և երևան տեղափոխելու համար՝ շատ հաճախ հաղթահարելով հարևանների ստեղծած արհեստական խոչընդոտներն ու անբարյացակամ վերաբերմունքը: Հավաքված գրականությունը ժամանակավորապես տեղավորում էին մասնավոր բնակարաններում: Քիչ չէին նաև արկղերի, պարկերի, գրքերի դասավորման, փաթեթավորման և տեղափոխման հետ կապված դժվարությունները:

Հունիսին Հայաստանի ազգաբնակչությանն ու համայն հայ ժողովրդին ուղղված Կոչում մինիստր Գևորգ Մելիք-Նարազյոզյանը հույս է հայտնում, որ հայրությունը «առատ ու սրտաբուխ նվերներով» իր նպաստը կբերի նորահաստատ հայրենի կառավարության նախաձեռնությամբ: Կոչը համազգային ոգևորություն առաջ բերեց. կարճ ժամանակ անց Թիֆլիսում, Բաքվում, Երևանում հավաքվեց մեծ քանակությամբ գրականություն: Ստ. Կանայանին մտահոգում էր ոչ միայն գրականություն հավաքելն ու գնելը, այլև դրանք հարմարավետ ու ապահով տեղում դասավորելը և դրանց սպասարկումը օր առաջ կազմակերպելը, որպեսզի նշված տարում բացվելիք համալսարանի պատանիներն ու ուսանողները կարողանային օգտվել¹⁵: Երևանում գիմնագիայի ընթերցարան-գրադարանում այլևս հնարավոր չէր հավաքված և սպասվելիք գրականությունը պահել, ուստի որոշվում է հատկացնել Երևանի արական գիմնագիայի նոր շենքը, որը գտնվում էր քաղաքի կենտրոնում¹⁶: Կանայանը մինիստրին առաջարկում է հրապարակավ, օգտագործելով նաև մամուլը, շնորհակալություն հայտնել բոլոր նվիրատուներին¹⁷: Առաջին նվիրատուներից էին Երվանդ Հայրապետյանը, Գյուտ վարդապետը, Հովհաննես և Ստեփան Լիսիցյանները և այլք: Գնվել էր նաև Արդության-Երկայնաբազուկի հարուստ հավաքածուն, նվիրաբերվել էր Մուրացանի գրադարանը: Գրքեր էին տրամադրում նաև Կ. Պոլսի, Թիֆլիսի գրատները: 1919թ. սեպտեմբերին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարը Նախարարների խորհրդին է հանձնում Ստ. Կանայանի կազմած Կանոնադրությունը, որը հաստատվում է 1920թ. մարտին¹⁸: Նրանում ամրագրվում են գրադարանի նպատակը, կազմը, դրամական միջոցները, կառավարումը: Թիֆլիսում, Բաքվում գրքերի հավաքմանը զուգահեռ՝ գրադարանապետ Ստ. Կանայանը աշխատանքներ էր տանում նաև բուն ՀՀ-ում եղած գրքերի հավաքման ուղղությամբ: 1919թ. հուլիսի 12-ին Հանրային կրթության նախարար Սիրական Տիգրանյանին ուղղված նամակում Ստ. Կանայանը խնդրում է հայտնել, թե Երևանում և Հայաստանի այլ վայրերում ինչ գրադարաններ կան, որոնք լիովին կամ մասամբ կարող են հատկացվել գրադարանին¹⁹: Սրան հաջորդում է նախարարի պատասխան գրությունը, որով հաղորդում է, որ հնարավոր չէ Հայաստանի այլևայլ մասերում գտնվող գրադարանների թիվը պարզել, ուստի հորդորում է Ստ. Կանայանին շարունակել հավաքել գիտական լուրջ գրականություն²⁰: Հավաքված գրականության տեղավորման համար գրադարանին անհրաժեշտ շենքային պայմաններով գրապահոց էր պետք: Եվ ահա, 1919թ. հուլիսի 25-ին նախարարը՝ Մինիստրների խորհրդին ուղղված իր ծավալուն գրության մեջ հանգամանորեն նշում է Երևանում պետական հանրային մատենադարանի ստեղծման ուղղությամբ արդեն արված քայլերը (վերստեսույզի նշանակումը, հանրությանն ուղղված կոչը և դրան հաջորդած հանգանակություններն ու նվիրատվությունները, գրքերի

գնման կազմակերպումը և այլն), ապա հայտնում, որ ժամանակն է կազմակերպելու գրքերի պահպանումը և սպասարկումը: Արական գիմնագիայի՝ քաղաքի կենտրոնում գտնվող նորակառուց շենքի հակահրդեհային անվտանգության համակարգը, հարմարավետ սենյակները լիովին համապատասխանում են ոչ միայն պահպանությունը, այլև սպասարկումը պատշաճ կազմակերպելու համար: Արդյունքում արական գիմնագիայի մի մասը տրամադրվում է գրադարանին: 1919թ. նոյեմբերին Ստ. Կանայանը դիմում է նախարար Նիկոլ Աղբալյանին և փոխանցում մասնաժողովի 4-րդ նիստի խնդրանք-առաջարկությունը՝ միջնորդելու խորհրդարանին և գրադարանը վերանվանելու Ազգային գրադարան, քանի որ պետական-հանրային բառերը չեն արտացոլում գրադարանի՝ իսկապես համազգային կենտրոնական գրադարան կոչմանը²¹:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գրադարանային հավաքածուների հավաքման, նվիրատվությունների ընդունման, Թիֆլիսի ու Բաքվի մասնավոր բնակարաններում հավաքված գրքերի ու հանդեսների Երևան տեղափոխման աշխատանքները չեն դադարում: Իր կարճատև գոյության ընթացքում ՀՀ ղեկավարությունը ծանրագույն ժամանակներում իրականացրեց մշակութային-կրթական հետևողական ու հաջող քաղաքականություն. հիմնեց ազգային-պետական գրադարան և բացեց համալսարան: Այսօր Հայաստանի ազգային գրադարանը ունի 6 միլիոնից ավելի գրադարանային փաստաթուղթ: Այստեղ են պահվում առաջին տպագիր գրքերը (1512-1513թթ.), առաջին տպագիր Աստվածաշունչը (1666-1668թթ.), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց»-ը (1695թ.), առաջին պարբերականը՝ «Ազգաբար»-ը (1794-1796թթ.): Հայերեն հնատիպ (1512-1800թթ.) 585 անուն 2381 միավոր, ինչպես նաև Արդությանի, Լեոյի, Մյասնիկյանի, Երևանի գիմնագիայի, Լազարյան ճեմարանի և այլ արժեքավոր հավաքածուներ պահպանվում են գրադարանի անձեռնմխելի գրականության հավաքածուում: Գրադարանն ունի նաև բավական արժեքավոր պարբերական մամուլի ֆոնդ: Գրադարանում 2012թ. սկսած լայնածավալ աշխատանքներ են ընթանում հավաքածուների թվայնացման ուղղությամբ՝ դրանց երկարաժամկետ պահպանությունը և թվային պատճեններով սպասարկումը կազմակերպելու նպատակով: Այսօր գրադարանի երկու՝ Հայ գիրք և Հայ պարբերական մամուլ շտեմարաններում առկա է ավելի քան 5 միլիոն թվայնացված էջ: 100-ամյակի առթիվ համատեղ մի քանի նախագծեր են իրականացվել, որոնցից մեկը Բեյրութի «Ազգակ» օրաթերթի Պուտագեան կենտրոնի հետ «Առաջին հանրապետության մամուլը» շտեմարանի ձևավորումն է, որը հասանելի է համացանցում: 2017թ. սեպտեմբերին բացված Գրատպության թանգարանի սրահներում այլ ցուցանմուշների հետ ներկայացված են տվյալ ժամանակաշրջանի

արտացոլող փաստաթղթեր, պարբերականներ, թղթադրամներ և այլն: Դրանք մեկ անգամ ևս հաստատում են պետականության վերականգնման, Առաջին հանրապետության հռչակման, պետության վարած կրթական-մշակութային քաղաքականության կարևոր դերն ու նշանակությունը՝ մշակութային հիշողության պահպանման, տպագիր ժառանգության ամբարման և քարոզչության գործում:

Բանալի բառեր - գրադարան, հավաքածու, օրենք, կառավարություն, տնօրեն, փաստաթուղթ, ուսումնարան, գրապույություն, կրթություն, արվեստ:

SUMMARY

Haykanush Ghazaryan

*Deputy Director of the National Library of Armenia
on the scientific part*

The Establishment of the National Library of Armenia (1919)

The National Library of Armenia is the largest archive of Armenian printed heritage in the world. The first Armenian printed books, the first printed Bible, the world map, the first periodical "Azdarar" are preserved here. The Government of the First Republic of Armenia highlighted the great role and significance of educational and scientific institutions in the development and progress of the Republic. For this purpose, during those hard years the government initiated the establishment of the State University, as well as the State Matenadaran Library (the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts). In June, 1919 Minister of Public Education G. Melik Gharagyozyan addressed an appeal to all Armenians suggesting to participate actively in this important task. On July 4, 1919 the Council of Ministers approved the Law On the State Matenadaran. The first librarian was

Stepan Kanayan. One of the most important facts of the government's cultural-educational activity within 2.5 years of the First Republic's existence was the establishment of Yerevan State University and the Public Library. They have become an irreplaceable institution for the formation of skilled and knowledgeable specialists to ensure the establishment of the state, and continued this mission both after the establishment of the Soviet rule and in our times. Today in the library the digitization of collections proceeds. More than 5 million pages of Armenian books and periodicals are digitized which are available from the website of the National Library with free viewing and uploading.

Keywords: *Library, collection, Law, Government, director, document, college, typography, education, art.*

- 1 Վահե Երկանյան, Հայկական մշակույթը 1800-1917թթ., Եր., 1982, էջ 77:
- 2 Романовский В., Историческая записка об Эриванской гимназии, Тифлис, 1890, с. 15-18.
- 3 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 82:
- 4 ՀԱՍ, ֆ. 1, ց. 3, գ. 659, թ. 54:
- 5 ՀԱՍ, ֆ.1, ց. 5, գ. 535, թ. 26:
- 6 Հովհ. Թումանյան, ԵԼԺ 10 հավորով, հ. 7, Եր., 1995, էջ 325-333:
- 7 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 136:
- 8 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 18-19:
- 9 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 136:
- 10 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 36:
- 11 ՀԱՍ, ֆ. 122, ց. 2, գ. 128, թ. 20:
- 12 ՀԱՍ, ֆ. 111, ց. 4, գ. 41, թ. 100
- 13 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 135:
- 14 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 135:
- 15 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 121:
- 16 Նոյն տեղում:
- 17 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 127:
- 18 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 146:
- 19 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 79:
- 20 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 80:
- 21 ՀԱՍ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 174:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է հսկայական գրավոր ժառանգություն, որն ամփոփված է ձեռագրերում և դարձել է մեր անձնագիրը: Հազարավոր մագաղաթյա ու թղթե ձեռագրեր հայ ժողովրդի կյանքի ու մաքառման լուռ ուղեկիցն ու վկան են. դրանցում է արտացոլված մեր ժողովրդի պատմությունը, ինչպես նաև քերականության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, տիեզերագիտության, աշխարհագրության, կրոնադավանական գրականության, մաթեմատիկայի ու քիմիայի, մանրանկարչության, իրավունքի ու բժշկության, գիտության ու արվեստի, այլ բնագավառներին վերաբերող համաշխարհային արժեք ներկայացնող հուշարձաններ:

Հայերեն ձեռագրերի մատենադարաններ գոյություն են ունեցել դեռևս միջնադարյան մշակութային նշանավոր օջախներին առնչված՝ Հաղբատում, Սանահինում, Գլաձորում, Տաթևում, Աղթամարում, Մուշում, Երզնկայի շրջակայքում, Կիլիկիայի գրչության կենտրոններում և այլուր, որոնցից շատերը ունեցել են անգամ հատուկ շենքեր-գրատներ ձեռագրերի պահպանման, ընդօրինակման և ուսումնասիրման համար¹:

Այսօր մեզ հասած հայերեն ձեռագրերը կազմում են մի փոքր մասը՝ հայ ժողովրդի ստեղծած ձեռագիր գանձարանի: Երկարատև պատերազմների ու արշավանքների ընթացքում օտարերկրյա զավթիչների կողմից ոչնչացվել են տասնյակ հազարավոր ձեռագրեր, ինչպես օրինակ՝ 1170թ. սելջուկ-թուրքերը ոչնչացրել են Տաթևի վանքի ավելի քան 10000 ձեռագիր մատյան²: Մեծաքանակ ձեռագրեր էլ ոչնչացվել են մոնղոլների, օսմանյան թուրքերի և մյուս ասպատակողների կողմից: Շատ ձեռագրեր էլ չեն պահպանվել տգետ վանականների պատճառով. հայտնի է հատկապես Աբրահամ Թեքիրտաղցու և Պետրոս սարկավազի պատմությունը: 1777թ. Հաղ-

բատի առաջնորդ է դառնում ոմն Աբրահամ Թեքիրտաղցին, որը Պետրոս սարկավազի միջոցով հանում է Ջրաղացի ձորի քարայրում պահվող «անհամար գրչագիր եւ երկաթագիր հնագույն եւ ընտիր մատենանք մեծամեծք եւ փոքունք ի յոլով դարուց ժողովեալք», բերում, ցնում մատուռներում, որոնք օրեցօր պակասում էին, հափշտակվում, իսկ մնացյալներն էլ, որ «փտեալք էին ըստ մասին, կամ ցրուեալք ի թերթս թերթս եւ ի տետրակս», Պետրոս սարկավազը այրում է «իբրեւ զանպիտանս»³: Ձեռագրերի մի մասի կորստի պատճառն էլ անբարենպաստ պայմաններն են եղել: Այսպես՝ մինչ 1910թ. էջմիածնում ձեռագրերը պահվում էին այնպիսի մի շենքում, որը խոնավ էր և յի թուղթ ոչնչացնող միջատներով. այս մասին տեղեկացնում է Ն. Մառը իր նամակներից մեկում⁴:

Բազմաթիվ ասպատակությունների ու կողոպուտների հետևանքով դարերի ընթացքում նույն ճակատագրին է արժանացել նաև էջմիածնի մատենադարանը՝ կորցնելով ձեռագիր գանձերի մեծագույն մասը: 1441-ից, երբ Սսից կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց էջմիածին, զարկ տրվեց ձեռագրերի ընդօրինակման աշխատանքներին, որը բուռն կերպով շարունակվեց հատկապես ԺԷ դարում, սակայն անընդմեջ թալանի հետևանքով հսկայական հարստությունից մնաց աննշան մասը միայն⁵:

Բայց ԺԺ դարի սկզբներին էջմիածնի մատենադարանի համար սկսվեց լուսավոր մի շրջան. հիմք դրվեց ձեռագրական հավաքածուի ճոխացման, ինչպես նաև արդեն եղած ձեռագրերի կարգավորման ու գրանցման կարևոր աշխատանքին, որը կատարում էին էջմիածնի միաբանության գիտնական անդամները՝ Մանուել Գյումուշխանեցի, Հովհաննես Շահխաթունյանց, Դանիել եպիսկոպոս, Սահակ Ամատունի, Գարեգին Հովսեփյան, Մեսրոպ Տեր-Մովսիսյան և այլ երախտավորներ: Նրանց կատարած զգալի աշխատանքի արդյունքում հաշվառվում և կազմվում է էջմիածնի գրքերի առաջին ցանկը. 1837-ին ձեռագրերի քանակը 312-ն էր⁶, իսկ արդեն 1863թ. մատենադարանում կար 2340 ձեռագիր մատյան ըստ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի» ցուցակի⁷: Ձեռագրերի հավաքչական աշխատանքը ավելի մեծ ընթացք է ստանում հետագա տասնամյակներին. այսպես՝ 1892թ. մատենադարանում կար 3158, 1897թ. 3338, իսկ 1906թ. 3788 ձեռագիր⁸: Հայերեն ձեռագրերի հավաքածուների ստեղծման և կարգավորման գործը ոչ միայն հայկական միջավայրում էր տեղի ունենում, այլև հայկական գաղթօջախներում: Այնտեղ ստեղծված մեծ ու փոքր հավաքածուները, համալրելով էջմիածնի մատենադարանի ձեռագրերի շարքը, դարձան այդ դարավոր հարստության անգնահատելի մա-

սը (Տայքի ու Տփիսիսի հանգուցյալ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու, Խաչիկ վարդապետ Դադյանի, Աստրախանի հայ գաղութի, Կարենյան ցուցակի կազմող Դանիել Եպիսկոպոսի, Սարգիս Զալալյանի, Համազասպ քահանա Տեր-Ավետիքյանի, Թադեոս առաքյալի, Տաթևի վանքի և Սևանի անապատի ժողովածուները, որոնցում ձեռագրերի քանակը 400-ից ավելին էր)⁹: Բոլոր ժամանակներում էլ ձեռագրերը փրկվել են ժամանակի գրագետ ու ձեռագրասեր մտավորականների շնորհիվ: Այս գործում ի պաշտոնե աչքի են ընկել հոգևոր առաջնորդները, որոնք, վանքերից ու գյուղերից նորանոր ձեռագրեր փրկելու գործից բացի, նվիրվել են էջմիածնի Մատենադարանի կարգավորման, ցուցակներ կազմելու և ուսումնասիրելու գործին:

Այսպես տասնամյակներ շարունակ համալրվելով՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Մատենադարանում ձեռագրերի քանակը 4660-ն էր¹⁰:

Համաշխարհային պատերազմի տարիներին վտանգված էր նաև ձեռագրերի ճակատագիրը: Ձեռագրական գանձերի ապահովության հարցը մտահոգում էր հայ հասարակության լայն շրջաններին: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդ Տփիսիսեցին (1912-1930թթ.) որոշում է ապահովության համար վանքի ձեռագիր մատյանները տեղափոխել Մոսկվա և տեղավորել կամ Մոսկվայի կենտրոնում գտնվող Ս. Խաչ եկեղեցում, կամ կենտրոնից բավական հեռու գտնվող Ս. Աստվածածին եկեղեցում: Որոշումների արդյունքում 1915թ. փետրվարի 3-ին ձեռագրական ողջ հավաքածուն էջմիածնից ժամանակավորապես տեղափոխվում է Մոսկվա, որի պահպանմանը ամենայն պատասխանատվությամբ հետևում էին հայ կոմունիստներ Վառլամ Ավանեսովը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Պողոս Մակինցյանը: Էջմիածնից Մոսկվա տեղափոխելիս ձեռագրերը ուղեկցում էին էջմիածնի սինոդի անդամներ Մատթեոս արք. Մատթևոսյանը, Բաբկեն ծայրագույն վրդ. Աղավելյանը, Արսեն ավագ քին. Սիմոնյանցը և մի քանի աշխարհականներ: Երբ ձեռագրերը գնացքով տեղափոխեցին Մոսկվա, տեղի հայոց եկեղեցական խորհուրդը և Հայկական կոմիտեն որոշեցին դրանք պահել Սուրբ Խաչ եկեղեցում, որը, դժբախտաբար, տարիներ անց Ռուսաստանում սկսված հակաեկեղեցական շարժման ժամանակ հիմնահատակ ավերվեց: Հայկական կոմիտեի անդամ մոսկվաբնակ մեծահարուստ ժամհարյան եղբայրները առաջարկեցին ձեռագրերը պահել իրենց բանկի նկուղի երկաթե պահարաններում, սակայն Վեհափառ հայրապետը մերժեց առաջարկությունը, և ձեռագրերը հանգրվանեցին Սուրբ Խաչ եկեղեցում, ինչի արդյունքում էլ ձեռագրերը ազատվե-

ցին հնարավոր թալանից, որին հեղափոխության ժամանակ ենթարկվեց Մոսկվայի բանկերի մեծագույն մասը¹¹: Ձեռագրերը Մոսկվա տեղափոխեցին թիթեղապատ ամրակուռ 137 սնդուկի մեջ, որոնցով էլ ավարտեցին իրենց մոսկովյան ողիսականը՝ վերադառնալով էջմիածին. տարիներ անց նույն այդ սնդուկներով ձեռագրերը տեղափոխվեցին Երևան՝ Հայաստանի Ազգային գրադարանի ձեռագրերին հատկացված հարկաբաժին: Հայրենական պատերազմի տարիներին ձեռագրերը իջեցվեցին գրադարանի ներքնահարկ և պահվեցին նույն սնդուկների մեջ, իսկ հետագայում կրկին այդ սնդուկներով ձեռագրերը փոխադրվեցին Մատենադարան: 137 սնդուկից այժմ պահպանվել են միայն հինգը, որոնցից մեկը գտնվում է Մատենադարանի ձեռագրատանը, մյուսները՝ Հայաստանի Ազգային գրադարանի պահոցներից մեկում: Ձեռագրերի տեղափոխության ժամանակ սնդուկները կնքված էին Մայր Աթոռի և Սինհոդոսի կնիքներով:

Ձեռագիր մատյանները տեղավորեցին Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր վարչության և դպրաց դասի շապիկների սենյակներում, դռները կնքեցին եկեղեցու խորհրդարանի կնիքով, իսկ բանալիները հանձնվեցին Հայկական կոմիտեին և Գասպարյան ձերանոցի վարչությանը: Ձեռագրերի անվտանգության համար ստեղծվեցին բոլոր պայմանները, այրուհանդերձ, որոշվեց մետաղյա երկու նոր դուռ և փեղկ պատրաստել «առ ի զգուշություն»¹²: Մինչ դրանց պատրաստումը՝ սահմանվեց հերթափոխով պահպանություն. առավտից մինչ երեկոսկում էին քահանաները, իսկ գիշերները՝ աշխարհականները: Հսկողների շարքերում էին Մարտիրոս Սարյանը, Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ, իրավաբան Ստեփան Մամիկոնյանը, Մոսկվայի համալսարանի ուսուցիչներ՝ Ալեքսեյ Զեգիլեգյանը, Ալեքսանդր և Միքայել Ներսիսյան եղբայրները, Վահան Տոտոմյանցը, Լևոն Մներյանցը, Լազարյան ճեմարանի ուսուցիչներ Բարսեղ Գասպարյանը, Կարապետ Կուսիկյանը, Ստեփանոս Տեր-Սարգսյանը և Արսեն Թումանյանը: Ձեռագրերի հսկողությանը հետևում էին կոմիտեի և վարչության անդամները: Երկաթյա դռների ու փեղկերի պատրաստումից հետո սենյակները դարձան միանգամայն անառիկ:

Մինչ 1917թ. Բոլշևիկյան հեղափոխությունը ձեռագրերը անվտանգ էին, սակայն հեղափոխության օրերին ամենուր գողություն ու թալան սկսվեց, որից տուժեց անգամ ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքարանի թանգարանը: Պատասխանատու մարմինները ավելի ուժեղացրին ձեռագրերի հսկողությունը, անգամ հայ մեծահարուստներից մեկի օգնությամբ կարողացան զենք ունենալ՝ ի պահպանություն Ս. Խաչ եկեղեցու: Արհավիրքի օրերին, բարեբախտաբար, ձեռագրերն անվնաս մնացին:

Մատենադարանի պատմության համար հիմնովին նոր փուլ սկսվեց Հայաստանում Սովետական կարգերի հաստատումից հետո՝ 1920թ. նոյեմբերի 29-ից: ՀՄԽՀ Հեղկոմի 1920թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով պետականացվեց նաև Էջմիածնի Մատենադարանը, որի հենքի վրա 1921թ. փետրվարի 5-ի դեկրետով ստեղծվեց կուլտուր-պատմական ինստիտուտ, որը «նպատակ պիտի ունենա գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնությանց այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական և գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»¹³:

Չնայած ձեռագրական բուն հավաքածուի՝ Մոսկվայում գտնվելուն՝ այդ տարիներին անգամ չէր դադարում նոր ձեռագրերի հոսքը Մատենադարան: Մատենադարանում պահվում էին 1915թ. Վասպուրականից (Աղթամարից, Լիմից, Կոուցից, Վարագից, Վանից և շրջակայքից), Տարոնից (Տարոնի վանքերից՝ Ս. Կարապետ և Ս. Առաքելոց) բերված 1545, Թավրիզից ստացած 83, նաև Մատենադարանի ձեռք բերած, ընդհանուր թվով 1730 միավոր ձեռագիր: 1920-ական թթ. Մատենադարանը կրկին զբաղված էր տարբեր վայրերից ձեռագրեր հավաքելու և ֆոնդը հարստացնելու գործով: Արդեն 1921թ. սկզբներին Մատենադարանի ձեռագրական հավաքածուն ընդգրկում էր 6576 ձեռագիր¹⁴:

Հայաստանի ժողովրդի նախագահ Ալ. Մյասնիկյանի 1922թ. մարտի 6-ին Պ. Մակինցյանին տված լիազորությամբ արդեն ապրիլի 5-ին երկու տասնյակից ավելի զինվորների ուղեկցությամբ ձեռագրերը տեղափոխվեցին Երևան: Ձեռագրական գանձերի շարքը համալրվեց Լազարյան ճեմարանի 219, Գևորգյան ճեմարանի 56 և մեծ ու փոքր այլ հավաքածուների ձեռագրերով, ինչպես նաև Հայաստանի սահմաններից դուրս գտնվող մանր հավաքածուների կենտրոնացման և գնման միջոցով: Մատենադարանի վարիչ Աենքերիմ Տեր-Հակոբյանի, Կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադիր աշխատակիցներ Ե. Շահագիզի, Ե. Լալայանի և մյուսների շնորհիվ Հայաստան բերվեցին Նոր Նախիջևանից, Թիֆլիսի ազգագրական ընկերությունից, Սանասարյան վարժարանից, մասնավոր հավաքածուներից ավելի քան 2000 ձեռագիր մատյան: Գրական թանգարանի 1154 ձեռագրից բաղկացած հավաքածուն ևս միացվեց Մայր գրատան հավաքածուին: Շեշտենք նաև, որ հայերեն ձեռագրերին զուգահեռ՝ հարյուրավոր նոր ձեռագրերով հարստանում էին օտարալեզու ձեռագրերի, պատարիկների և հնայիլների ֆոնդե-

րը ևս: 1939թ. Մատենադարանը Էջմիածնից տեղափոխվեց Երևան՝ Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարան:

Միջնադարյան նոր մատյանների հավաքման աշխատանքը շարունակվեց հետագայում և շարունակվում է մինչ օրս, քանի որ դա Մատենադարանի կարևորագույն խնդիրներից մեկն է: Այս գործում շատ կարևոր է նաև սփյուռքահայության օժանդակությունը, քանի որ հավաքածուի համալրումը կատարվում է նաև նվիրատվությունների ճանապարհով: Աշխարհի տարբեր վայրերում ապրող մի խումբ հայրենասերներ, մտահոգվելով հայերեն ձեռագիրը կորստից փրկելու և հայրենիք վերադարձնելու խնդրով, փնտրում, գնում և Մատենադարան են ուղարկում բազմաթիվ ձեռագրեր (ինչպես՝ 1955թ. Մատենադարանը նվեր է ստացել 42 ձեռագիր ումինահայերից, հալեպաբնակ ժամագործ Հովսեփ Տետեյանը նվիրել է 9 ձեռագիր, Հարություն Հազարյանը Նյու Յորքից՝ 395 հայերեն և օտար լեզուներով ձեռագիր, Ռաֆայել Մարկոսյանը Փարիզից՝ 37 ձեռագիր, Վարուժան Սալաթյանը Դամասկոսից՝ ավելի քան 150 ձեռագիր, Արշակ Տիգրանյանը Լոս Անջելեսից, Կարպիս Ջրբաշյանը, Գևորգ Բաքրջյանը, Վարդերես Կարապոյանը Փարիզից, Ավո Հովհաննիսյանը և Գրիգոր Աղազարյանը Նոր Զուղայից, Միհրան Մինասյանը Հալեպից, Սուրեն Բայրամյանը Կահիրեից, 95-ամյա Տաճատ Մարկոսյանը Իրանի Նոր Զուղայի շրջանի Ղարղուն գյուղից 1969թ. Մատենադարան է ուղարկել 1069թ. Նարեկա վանքում գրված մի մատյան, որն ընդօրինակվել է Մեսրոպ Մաշտոցի ձեռքով 5-րդ դարում գրված Ավետարանից, ձեռագրեր են նվիրել նաև Թեհրանից, ԱՄՆ-ից, Կ. Պոլսից, Սան Ֆրանցիսկոյից)¹⁵: Հիշատակելի է հատկապես 2018թ. ձեռագրերի նվիրատվությունը: Համազգային հայ կրթական և մշակութային միությունը իր 90-ամյա հորելյանական միջոցառումների շրջանակում Մատենադարանին նվիրաբերեց 14-20-րդ դարերի 27 արժեքավոր ձեռագիր. Մատենադարանը վերջին 15 տարվա ընթացքում արժեքավոր ձեռագրերի այդօրինակ խոշոր նվիրատվություն չէր ստացել: Յուրաքանչյուր ձեռագրի հայրենադարձություն նշանակալի իրադարձություն է Մատենադարանի և, առհասարակ, հայ ժողովրդի համար:

Էջմիածնի մատենադարանի աշխատակիցները, գրեթե միշտ զբաղված լինելով ցրված ձեռագրերի հավաքման և պահպանման կարևոր աշխատանքով, առավել մանրամասն, գիտականորեն չեն ցուցակագրել մատյանները: Սակայն տարիներ անց, երբ Մատենադարանն արդեն տեղափոխվել էր Երևան, իսկ ԵՊՀ-ն տվել իր առաջին հայագետ շրջանավարտները, նրանցից մի քանիսը գործուղվեցին Մատենադարան, որոնց մասնակցությամբ էլ սկսվեց ձեռա-

գրերը գիտական շրջանառության մեջ դնելու շատ կարևոր, միևնույն ժամանակ բարդ աշխատանքը: Տարիների հսկայական աշխատանքի արդյունքում ստեղծվեցին ձեռագրական բնագրերի ու նյութերի թեմատիկ ցուցակներ, որոնք մինչ օրս օգնում են հետազոտողներին հազարավոր ստվարածավալ ձեռագրերից հեշտությամբ գտնելու իրենց ուսումնասիրության նյութերը:

Այսպիսով, Առաջին հանրապետությանը նախորդող և հաջորդող տարիներին ձեռագրական հավաքածուն համաշխարհային պատերազմի հնարավոր հետևանքներից զերծ պահելու նպատակով Մայր Աթոռի թանկարժեք իրերի հետ տեղափոխվեց Մոսկվա և պահվեց այնտեղ: Սակայն այդ տարիներին ևս ձեռագրերի հավաքչական աշխատանքները չդադարեցին, և հազարավոր ձեռագիր մատյաններ ապաստան գտան Էջմիածնի Մատենադարանում՝ կրկնապատկելով արդեն եղածը:

Երևանի Մաշտոցյան Մատենադարանը, լինելով գրավոր հուշարձանների գանձարան, աշխարհի հնագույն և ամենահարուստ ձեռագրատներից մեկն է, որտեղ այսօր կա շուրջ 23000 ձեռագիր մատյան:

Բանալի բառեր - հայերեն ձեռագիր, Մատենադարան, ձեռագրական հավաքածու, Առաջին հանրապետություն, հոգևոր առաջնորդ:

SUMMARY

Tatevik Manukyan

PhD

The Collection of Armenian Manuscripts in the Preceding and Following Years of the First Republic

The report presents the route and Moscow Odyssey of Echmiadzin monastery manuscripts, which are the main part of Matenadaran's heritage today.

Throughout the centuries, the Armenian people have created a vast written heritage, which is embodied in manuscripts and has become our passport in the world. Thousands of parchment and paper manuscripts are the silent companion and witness of the life and combat of the Armenian people. The written treasures include ancient and medieval Armenian fields of science and culture such as history, grammar, philosophy, fiction, law, medicine, geography, religious literature, mathematics, chemistry, cosmology, miniature painting, etc.

The evidence of the continuing existence of the Echmiadzin Matenadaran, its riches, and also its robbings began in the early centuries. The manuscripts survived and have been preserved since ancient times, thanks to literate intellectuals. In this connection, especially spiritual leaders were distinguished, who in addition to saving new manuscripts from monasteries and villages, dedicated themselves to the difficult and interesting work of regulating the structure of Echmiadzin Matenadaran, compiling lists, studying and publishing manuscripts. Collection and sorting of Armenian manuscripts took place not only in the Armenian environment, but also in colonies (Diaspora). The large and small collections of those colonies became an invaluable part of the eternal wealth of Echmiadzin. The increase in the number of manuscripts in Echmiadzin Matenadaran took up a great scale in the 19th century (more than 3000 books) and before World

War I there were 4660 manuscripts. During World War II, the fate of the manuscripts was endangered, but by the decision of Catholicos of All Armenians Gevorg Tpkhsetsi (1912-1930), the manuscripts of the monastery were transferred to Moscow for security. The Moscow Odyssey of the manuscripts ended in 1922. Now, the Mashtots Matenadaran in Yerevan is one of the oldest and richest manuscript museums in the world where there are 11306 complete Armenian manuscripts except for fragments, charms and manuscripts in foreign languages.

Keywords: *Armenian manuscripts, Matenadaran, manuscript collection, First Republic, spiritual leader.*

1. Լ. Խաչիկյան, Հայկական ՍՍՌ մինիստրների սովետին առընթեր գիրա-հեղափոխական ինստիտուտ «Մատենադարան», ՊՐՀ, 2-3 (5-6), Երևան, 1959, էջ 376:
2. Սյր. Օրբէլեան, Պարսնութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 335-336:
3. Ս. Հանանեան, Հայոց աշխարհի գրչագրերի ամենահարուստ մատենադարանի «Հաղբարի Ս. Նշան վանքի» ողբերգական վախճանը 1778-1779թթ. եւ Ս. Էջմիածնի վանքի վաւերագիրների անխիղճ ոչնչացումն Հաղբարում 1824թ., Բազմավէպ, թիւ 4-5, Վենետիկ, 1956, էջ 109-110:
4. Լ. Խաչիկյան, Մատենադարանը անցյալում և Սովետական իշխանության փարիներին, Բանբեր Մատենադարանի, հմր 4, Երևան, 1958, էջ 15:
5. Ե. Շահազիզ, Դիվան Խաչատուր Աբովյանի, Յերևան, 1940, էջ 46, Каталог книгам Эчмиадзинской библиотеки, изд. Г. Брюссе, СПб, 1840, стр. 46-48:
6. Ա. Սեդրակեան, Յովի. եպի. Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 120:
7. Լ. Խաչիկյան, Մատենադարանը անցյալում և Սովետական իշխանության փարիներին, էջ 10:
8. Նույն փեղում:
9. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հր. Ա, Երեւան, 1984, էջ ԺԳ-ԺԹ:
10. Լ. Խաչիկյան, Հայկական ՍՍՌ մինիստրների սովետին առընթեր գիրա-հեղափոխական ինստիտուտ «Մատենադարան», էջ 376, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հր. Ա, Երևան, 1965, էջ 73:
11. Վ. Գրիգորյան, Էջմիածնի վանքի ձեռագրերը Մոսկվայում (1915-1922թթ.), Էջմիածին, հմր Ա, 2006, էջ 102-103:
12. Նույն փեղում:
13. Լ. Խաչիկյան, Մատենադարանը անցյալում և Սովետական իշխանության փարիներին, էջ 11:
14. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հր. Ա, Երևան, 1965, էջ 118:
15. Լ. Խաչիկյան, Հայկական ՍՍՌ մինիստրների սովետին առընթեր գիրա-հեղափոխական ինստիտուտ «Մատենադարան», էջ 377, <http://www.matenadaran.am/?id=61&lng=3> (07.07.2018):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՅԱՆՔԸ

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային նկարագիրը պայմանավորված է նրա հոգևոր-մշակութային զարգացման աստիճանով: Իր երկարամյա պատմության մեջ հայ մարդու համար մշտական ուղեկից են եղել դպրոցն ու ուսումը: Ուստի հայ լուսավորչալ մտավորականներին, մշակույթի և հասարակական գործիչներին խորապես մտահոգում էր մայր հայրենիքում ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթօջախ ունենալու հարցը: Այդ հնարավորությունը իրականություն դարձավ առաջին հանրապետության տարիներին: Հայոց պետական իշխանություններին պատշաճը պետք է հատուցել, քանզի նրանք գիտակցեցին և իրականացրին ժողովրդի այդ ձգտումները: Այդ ժամանակ առավել քան զգացվում էր բարձրագույն կրթությամբ կադրեր ունենալու անհրաժեշտությունը: Համալսարանի հիմնադրումը հայ ժողովրդի կրթության, լուսավորության նկատմամբ ունեցած ցանկությունների, դարավոր ձգտումների, հասունացած պահանջների իրագործման արդյունք էր: Հայ ժողովուրդը, որ դեռ միջնադարում հասել էր համալսարանական կրթօջախներ ունենալու մակարդակին, պատմության նորագույն շրջանում ավելի քան զգում էր դրա անհարաժեշտությունը, առավել ևս՝ անկախության և սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու պայմաններում:

Ազգային անկախ պետական շինարարության գործընթացի իրականացման համար անհրաժեշտ էին բարձր որակավորում ունեցող մասնագետներ, սակայն հանրապետության սակավաթիվ մտավորականության մեջ քիչ էին բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մասնագետները: Հանրապետության նախարարություններում և տարբեր գերատեսչություններում աշխատող պաշտոնյաների մեծ մասը չունեի համապատասխան որակյալ մասնագիտական կրթություն. նախկինում աշխատել էին որպես ուսուցիչներ, գրագիրներ և այլն¹: Տնտեսական քայքայվածության և համաճարակային հիվանդությունների պայմաններում առանձնապես սուր էր զգացվում մի քանի մասնագիտությունների գծով՝

բժիշկների, գյուղատնտեսների, ճարտարագետների պակասը: Այդ բացը որոշ չափով հնարավոր էր լրացնել արտերկրում բնակվող հայ մտավորականության շնորհիվ, սակայն, մասնավարժների և այլ մասնագետների հրավիրման հարցում բավականին դժվարություններ էին ծագում: Շատ քչերն էին համաձայնում թողնել ապահով կենցաղային պայմանները և օգնության ձեռք մեկնել մայր հայրենիքին²:

Հանրապետության Նախարարների խորհուրդը հարկադրված էր հիմնականում հենվել եղած սակավաթիվ մասնագետների վրա: Օրախնդիր հարց էր դարձել որակյալ մասնագետների պատրաստումը: Առաջնահերթ էր համարվում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների ստեղծումը:

Մի քանի հարյուրամյակ շարունակ հայ ժողովուրդը հույսով ու հավատով սպասել էր, որ նորից մայր հայրենիքում կունենա բարձրագույն կրթարան՝ համալսարան, և հարկադրված չի լինի իր երիտասարդներին տարագիր դարձնել՝ օտար երկրներում բարձրագույն ուսում ստանալու համար: 1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո Թիֆլիսի հայ մտավորականությունը, ոգևորված ժամանակավոր կառավարության առաջադրած ազգային-մշակութային ինքնավարության հաստատման դրույթից, քայլեր է ձեռնարկում ազգային գիտակրթական բարձրագույն հաստատության ստեղծման ուղղությամբ³: Հիմնվում է Հայկազյան ընկերությունը, որի նպատակն էր ստեղծել հայկական ակադեմիա՝ համախմբել հայ գիտնականներին, դնել հայկական համալսարանի հիմքը. «Ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ. - Հայկական Համալսարան»⁴: Դժբախտաբար, այս լավ նախաձեռնությունը քաղաքական հանգամանքների հետևանքով հետագայում զարգացում չունեցավ: Դեռևս Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայ մտավորականությունը փորձել էր ցարական կառավարությունից թույլտվություն ստանալ էջմիածնի Գևորգյան ճեմարանը վերածել բարձրագույն դպրոցի, սակայն ապարդյուն, քանի որ ցարիզմը առանձնապես շահագրգռված չէր հայ ժողովրդի կրթական մակարդակի բարձրացմամբ⁵: Գևորգյան ճեմարանն իր գոյության 44 տարիների ընթացքում մեծ դեր էր խաղացել հայ ժողովրդի կրթամշակութային առաջընթացի գործում: 1917թ. դեկտեմբերին ճեմարանի վարչությունը որոշեց քաղաքական և նյութական ծանր վիճակի պատճառով ժամանակավորապես ընդհատել պարապմունքները: Ճեմարանն իր հարակից շինություններով դրվեց Ազգային խորհրդի տրամադրության տակ,

որը այն հանձնեց գիվորականությանը, իսկ այնուհետև՝ որբանոցների վարչությանը⁶: 1918-19 ուսումնական տարվա սկզբին մի խումբ ուսանողներ, այդ թվում՝ Ակսել Բակունցը, դիմում են Հայաստանի խորհրդի դպրոցական հանձնաժողովին՝ ճեմարանի լսարանական բաժինը բացելու նպատակով⁷: 1918 թվականի աշնանը հանրապետության Նախարարների խորհուրդը լրջորեն քննարկում էր ճեմարանի հիմքի վրա համալսարան կազմակերպելու հարցը⁸: Էջմիածինն ուներ հարուստ մատենադարան: Հանրային կրթության նախարարը, ճեմարանի ճակատագրով անհանգստացած, դիմում է կաթողիկոս Գևորգ 5-րդին՝ հայտնելով իր աջակցությունը այն բացելու հարցում: Սակայն Վեհափառ հայրապետը նախարարին ուղղված պատասխանում հայտնում էր, որ ճեմարանի բացումը հնարավոր է միայն գինվորականության կողմից նրա շենքն ազատելուց և հիմնարար վերանորոգումից հետո⁹: Էջմիածնի հոգևորականությունը գտնում էր, որ Նախարարների խորհուրդը պետք է փոխհատուցեր ճեմարանին պատճառած վնասները: Սակայն հանրապետությունում ստեղծված ծանր դրության պատճառով կառավարությունը ոչ միայն հարկադրված էր հետաձգել ֆինանսական միջոցների հատկացումը ճեմարանի վերանորոգման համար, այլև շուտով բռնագրավման հանձնաժողովը մասնաշենքը դարձրեց հիվանդանոց և որբանոց¹⁰:

Հանրապետության ղեկավարությունը, ձգտելով շուտափույթ լուծել բարձրագույն դպրոցի ստեղծման խնդիրը, կապեր է հաստատում Թիֆլիսի բուհերի հայ դասախոսների հետ: Թիֆլիսում այդ ժամանակ գործում էին Վրաստանի պետական համալսարանը, Մանկավարժական ու պոլիտեխնիկական ինստիտուտները, Անդրկովկասյան մասնավոր համալսարանը և մի քանի մասնավոր բարձրագույն դասընթացներ¹¹: Դեռևս 1918թ. փետրվարին Թիֆլիսում Վրաց ազգային խորհրդի որոշմամբ բացվել էր համալսարան, որի հանդիսությանը մասնակցել էր Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը: Թիֆլիսի բուհերում աշխատում էին մեծ թվով հայ մասնագետներ: Անհրաժեշտ էր այդ մասնագետների գիտելիքներն ու փորձը օգտագործել Հայաստանի Հանրապետությունում բուհական համակարգի ստեղծման համար: Հարկ է նշել, որ այդ ժամանակ Անդրկովկասի հայ ուսյալ մտավորականության սերունդը հիմնականում կենտրոնացած էր Թիֆլիսում: 1918թ. հոկտեմբերին Հայաստանի խորհրդի դպրոցական հանձնաժողովի նախագահ Ս. Տիգրանյանը Թիֆլիսում գումարում է մի խորհրդակցություն, որին մասնակցում էին բուհերի անվանի դասախոսներ, մտավորականության ներկայացուցիչներ¹²: Խորհրդակցության մասնակիցները գտնում էին, որ անհրաժեշտ էր ստեղծել նախ և առաջ համալսարանական տիպի դպրոց՝ 3 տարվա ուսումնական

դասընթացով: Ս. Տիգրանյանը գտնում էր, որ այդպիսի բուհը հնարավորություն կտար պատրաստել անհրաժեշտ մասնագետներ, որոնք մոտ ապագայում կարող էին զբաղեցնել վարչական, դատական և այլ պաշտոններ, ինչպես նաև դասավանդել հայկական տարրական և միջնակարգ դպրոցներում: Խորհրդակցությունը որոշեց առաջիկայում լուրջ ուշադրություն դարձնել համալսարանի երեք հիմնական ֆակուլտետների հիմնադրման վրա՝ պատմաբանասիրական, իրավաբանական-վարչական և ֆիզիկամաթեմատիկական-բնագիտական, որպիսիք կարող էին գործել մեկը մյուսից անկախ: Այդ նպատակով ստեղծվեցին համապատասխան հանձնաժողովներ, որոնք պետք է նպաստեին ֆակուլտետների բացմանը և ուսումնական ծրագրերի մշակմանը¹³: Սակայն հանձնաժողովների աշխատանքները շուտով ընդհատվեցին:

Թիֆլիսում Հանրային կրթության նախարարության ներկայացուցիչ էր նշանակվել անօրգանական քիմիայի նշանավոր մասնագետ, ռուս ակնավոր քիմիկոս Դ. Մենդելեևի աշակերտ, պրոֆեսոր Դավիթ Ջավրյանը¹⁴, որի վրա էր դրված բարձրագույն դպրոցի կազմակերպման աշխատանքների ընդհանուր ղեկավարումը Վրաստանում: Վերջինս Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Նարագոյանին այլ ելք էր առաջարկում: Դ. Ջավրյանը հայտնում էր, որ Անդրկովկասյան մասնավոր համալսարանը, որտեղ նա դասախոսում է, հնարավոր էր տեղափոխել Երևան, քանի որ հովանավորներ չունեի և գտնվում էր նյութական ծանր վիճակում, իսկ վրացական կառավարությունը շահագրգռված չէր այս կրթական հաստատությանը ֆինանսական միջոցներ տրամադրելու¹⁵: Անդրկովկասյան մասնավոր համալսարանը, որը կազմակերպվել էր 1917թ. մայիսին՝ Թիֆլիսի կանանց բարձրագույն նախկին դասընթացների հենքի վրա, ուներ երեք ֆակուլտետ, որի 1715 ուսանողներից մոտ 700-ը, իսկ 76 դասախոսներից 25-ը հայեր էին¹⁶:

Պետք է նկատել, որ հրապուրիչ այս առաջարկությունը՝ Անդրկովկասյան մասնավոր համալսարանի տեղափոխումը Երևան, 1919թ. հունվարին մանրամասն քննարկվում է Հանրային կրթության նախարարությունում հրավիրված խորհրդակցությունում, որն անհրաժեշտ է համարում և միաձայն որոշում մոտ ապագայում հիմնել համալսարան: Նախատեսում էր համալսարանի համար հատկացնել արական գիմնազիայի կիսակառույց շենքը և Երևանի նախկին բերդի զորանոցները՝ հանրակացարանի և այլ հարակից հաստատությունների համար¹⁷: Համալսարանի հիմնելու առաջարկությունը քննարկման նյութ դարձավ մամուլի էջերում: «Չանգ»-ի խմբագրական հոդվածներից մեկը նվիրված էր բարձրագույն կրթարանին: Թերթում կարդում ենք. «Անխորհուրդ է թվում խոսք բանալ բարձր կրթության մասին մեր ծանր օրերին, երբ ժողովուրդը

սովամահ է լինում հարյուրներով, երբ շփոթ է ներկան, և անստոյգ՝ ապագան: Բայց անհատ, թե խմբակցություն ապրում ու գործում են լավ օրերի ակնդետ և հույսով լեցուն: Կենսունակության գերագույն նիշը հույսն է անմար և հավատքը լավագույն ապագայի, և մի ձեռքով ներկայի մորմոք ցավերն ամոքելիս՝ պետք է մյուս ձեռքով լավագույն ապագայի հիմքերը դնել»¹⁸:

Հանրային կրթության նախարարի հանձնարությանը Դ. Ջավրյանը բանակցությունների մեջ է մտնում Անդրկովկասյան մասնավոր համալսարանի ռեկտորատի հետ՝ նպաստ հատկացնելու, և այն Հայաստանի Հանրապետության սեփականությունը ճանաչելու համար: Այդ գործում նրան աջակցում էին հայ դասախոսների մեծ մասը և ուսանողությունը: Թիֆլիսից Դ. Ջավրյանը հայտնում էր Հանրային կրթության նախարարին, որ անհրաժեշտ է համալսարանին վարկ տրամադրել, որից հետո, երկու տարվա ընթացքում, աստիճանաբար համալսարանը տեղափոխել երևան: Սակայն այլ դիրքորոշում ուներ համալսարանի ղեկավարությունը, որը գտնում էր, որ այս բուհը պետք է ճանաչվեր համաերկրամասային և վարկավորվեր Անդրկովկասյան երեք հանրապետությունների կողմից: Դրա մասին էր վկայում համալսարանի տեսուչ, պրոֆեսոր Վ. Ռազունովսկու զեկուցագիրը՝ ուղղված Անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանսին: Ձեկուցագրում համալսարանի՝ այլ վայր տեղափոխումը դիտվում էր որպես ծայրահեղ միջոց և անցանկալի: Այս համալսարանի ղեկավարները ձգտում էին, օգտագործելով տեղափոխման գաղափարը՝ միայն նպաստ ստանալ: Այդ նպատակով Հանրային կրթության նախարարությանն էր դիմել նաև մասնավոր համալսարանի հայ ուսանողների պատվիրակությունը¹⁹:

1919թ. մայիսի սկզբին Նախարարների խորհուրդը մերժեց Հանրային կրթության նախարարի ներկայացրած օրինագիծը՝ Անդրկովկասյան համալսարանին 500000 ռ. նպաստ տալու մասին՝ նպատակահարմար չհամարելով վարկեր տրամադրել հանրապետությունից դուրս գտնվող համալսարանին²⁰: Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը տեղին և ժամանակին էր: Փաստորեն, շուրջ 4 ամիս տևած բանակցություններն ավարտվեցին անհաջողությամբ, և դա ժամանակի անտեղի կորուստ էր: Նախարարների խորհրդի հանձնարարությանը համապատասխան՝ Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Նարազյոզյանը շատ կարճ ժամկետում ներկայացրեց և Հայաստանի համալսարանի բացման վերաբերյալ նոր զեկուցում՝ կից ծրագիր և նախահաշիվ: Ձեկուցման մեջ նշվում էր պետական համալսարան ունենալու անհրաժեշտությունը, ֆակուլտետների թվաքանակը և գործունեության ուղղությունները, անհրաժեշտ էր համարվում դասավանդումը վարել մայրենի՝ հայերեն, և հարակից՝ ռուսերեն լեզուներ

ով, որպեսզի բարձր լիներ համալսարանի վարկանիշը՝ հնարավոր լիներ արտերկրից անհրաժեշտ թվով դասախոսներ հրավիրել: Ներկայացված նախահաշիվում համալսարանի նախնական ծախսերը 1919/20 ուսումնական տարում հաշվվում էր 5 միլիոն ռուբլի²¹:

1919թ. մայիսի 16-ին Նախարարների խորհուրդը քննարկեց և հավանություն տվեց Հանրային կրթության նախարարի ներկայացրած զեկուցագրին և օրինագծին: Ընդունվեց օրենք. «Հայաստանում համալսարան բացելու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300000ռ. հատկացնելու մասին: Օրենքում ասված էր.

«Հիմնել երևանում համալսարան, հետևյալ բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսա-իրավաբանական, գ) բժշկական դ) ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով:

Համալսարանը բացել 1919-20 ճեմարանական տարում:

Առաջին հերթին բացել պատմալեզվաբանական բաժինը:

Մնացած բաժինները բացելու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը՝ ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության:

Համալսարանը բացելու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի (300.000ռ.), հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը տրամադրել համապատասխան վարկ՝ Հանրային կրթության մինիստրությանը»:

Հայաստանի կառավարության կողմից պատմական այս կարևորագույն որոշման ընդունումը ջերմորեն պաշտպանվեց համայն հայության կողմից: Համալսարանի հիմնադրման մասին տեղեկացրեցին արտերկրում գտնվող հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները, որոնք պետք է աշխատանք ծավալեին հայության շրջանում համալսարանի կարիքները հոգալու համար: Առանձնապես կազմակերպչական մեծ աշխատանք կատարեց Թիֆլիսի հայ մտավորականությունը: Արդեն 1919թ. հունիսին Թիֆլիսում ստեղծվել էր համալսարանական ընդհանուր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել էին անվանի գիտնական-դասախոսներ՝ Յու. Ղամբարյանը, Մ. Բունիաթյանը, Ս. Մալխասյանը, Դ. Ջավրյանը, Մ. Աբեղյանը, Գ. Խարազյանը, Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը և ուրիշներ: Յու. Ղամբարյանը և Դ. Ջավրյանը համարվում էին համալսարանի գլխավոր կազմակերպիչները:

Փաստորեն ինչպես վերը նշվեց, 1919 թվականի մայիսի 16-ին Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդը, որոշում ընդունելով համալսարան հիմնելու մասին, առաջնահերթ համարեց բացել պատմալեզվաբանական ֆակուլտետ²²:

Այդ որոշման հիման վրա 1919թ. հունիսի 5-ին Մինիստրների խորհուրդը ընդունում է «Օրենք երևանի համալսարանի մասին»²³: Համալսարանի տեսուչ (ռեկտոր) է հաստատվում Եվրոպայում և

Ռուսաստանում լայն ճանաչում ունեցող իրավագետ, պրոֆեսոր Յուրի Ստեփանի Ղամբարյանը: Որոշվում է նաև համալսարանի պրոֆեսորի աշխատավարձի չափը (մինիստրական), իսկ արտասահմանից հրավիրվելու դեպքում՝ ավելի բարձր: Որոշվում է նաև ֆակուլտետում ուսանողների ընդունելության կարգը²⁴:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի 1919թ. նոյեմբերի 5-ի ՀՀ Նախարարների խորհրդին ուղղած գեկուցագրից տեղեկանում ենք, որ Երևան քաղաքում հարմար շենքեր չգտնելու պատճառով նախարարությունը առաջարկում է համալսարանը ժամանակավորապես տեղափոխել Ալեքսանդրապոլ (Գյումրի), ուր կային բոլոր հարմարությունները: Այս գրության հիման վրա վարչապետ Ալ. Խատիսյանի մակագրությամբ որոշվում է «Հայաստանի համալսարանը ժամանակավորապես՝ մինչև ուսումնական տարվա վերջը, տեղափոխել Ալեքսանդրապոլ»²⁵: Մինչև Համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացումը անհրաժեշտ էր լուծել երկու կարևոր խնդիր: Առաջին՝ այն ապահովել որակյալ դասախոսական կազմով, և երկրորդ՝ ստեղծել ընդունելության կարգ ու կազմակերպել այն: Հենց այս խնդիրների իրագործմանն էլ ձեռնամուխ եղան համալսարանի կազմակերպիչները:

Հանրային կրթության վերոնշյալ նախարարները և կազմակերպիչները՝ Յու. Ղամբարյանը և նրա օգնական, հայտնի քիմիկոս Դ. Զավրյանն անժխտելի ու մեծ ավանդ ունեցան ոչ միայն համալսարանի բացման, այլև նրա անդրանիկ պատմալեզվաբանական ֆակուլտետը բարձրորակ դասախոսական կազմով ապահովելու գործում: Նրանց ջանքերով դասախոսական աշխատանքի են հրավիրվում ժամանակի անվանի գիտնականներ, փորձառու և ճանաչված մանկավարժներ Մանուկ Աբեղյանը (հայ գրականություն), Ստեփան Մալխասյանցը (պատմական լեզվաբանություն), ֆակուլտետի առաջին դեկան Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայոց պատմություն և հայոց գրականության հին շրջան), Երվանդ Տեր-Մինասյանը (հայոց պատմության հին շրջան), դեկանի պաշտոնակատար (1920թ. հունիս-հուլիս) Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Աշխարհբեկ Քալանթարը (Արևելքի պատմություն և հնագիտություն) և այլք:

Երկրորդ կարևոր հարցը՝ ուսանողության հավաքագրումը, կարգավորվեց ՀՀ Նախարարների խորհրդի 1919թ. հուլիսի 8-ին հաստատված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների» համաձայն, որով իսկական ուսանող կարող էին դառնալ առաջին հերթին միջնակարգ կրթությամբ քաղաքացիները առանց

սեռի խտրականության, ապա միջնակարգ կրթություն չունեցողները, որոնք կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիր ընդհանուր ժողովի թույլտվությամբ: Դիմումի հետ պահանջվում էր ներկայացնել միջնակարգ կրթության վկայական կամ նրա վավերացված պատճենը, ծննդյան վկայականը և զինվորական ծառայության վկայականը: Ուսանողները պետք է վճարեին ուսման վարձ՝ տարեկան 500 ռուբլի, իսկ ազատ ունկնդիրները՝ 100 ռուբլու չափով: Պարգևում է, որ մինչև 1919թ. հոկտեմբերի 1-ը Համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում ընդունվելու համար դիմել էին 632 քաղաքացիներ: Սակայն համալսարանի ժամանակավոր կանոնների համաձայն՝ ընդունվելու էին ընդամենը 260 ուսանող, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Ուսանողների մեջ մեծ թիվ էին կազմում ուսուցիչները²⁶:

Նախապատրաստական այսպիսի աշխատանքներից հետո 1920 թ. հունվարի 31-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) առևտրային դպրոցի շենքում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը: Ներկա էին խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը, նախարարապետ (վարչապետ) Ա. Խատիսյանը, Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ: Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր (տեսուչ) պրոֆեսոր Յու. Ղամբարյանը, ապա ելույթ ունեցավ Ն. Աղբալյանը: Խոսելով համալսարանի բացման կարևորության մասին՝ Աղբալյանը նշում է. «Այս համալսարանում միտքը պետք է լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը դժվար, որ ուսումը լինի ծրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքների»²⁷: Ելույթներին հաջորդում է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան պրոֆեսոր Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անդրանիկ դասախոսությունը՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմայով: Մեսրոպ արքեպիսկոպոսը նվիրյալ հայրենասեր էր, իսկական մտավորակալ, տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների: Ծնվել էր 186 ձթ. Զանգեզուրի Շիկահող գյուղում: 1882թ. ավարտել էր Շուշիի թեմական, 1885-ին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, 1890-ին՝ Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները կատարելագործել էր նաև Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում և Վենետիկում: 1895-1898թթ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակներով նշանակվել էր Երևանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսուչ, Շուշիի հոգևոր թեմական դպրոցի ռեկտոր: 1902թ. նա Սանկտ-Պետերբուրգի համալսարանում պաշտպանել էր ատենախոսություն²⁸: Նա նշանակվել էր էջմիածնի Սի-

նորի անդամ, Գևորգյան ճեմարանի տեսուչ, ձեռնադրվել եպիսկոպոս: Հաշվի առնելով նրա գիտակրթական մակարդակը և մասնկավարժական հարուստ փորձը, կազմակերպչական ունակությունները՝ նրան հրավիրել էին Հայաստանի նորաբաց համալսարան որպես հայ գրականության ու կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր և պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան (1919թ. հունիսից մինչև 1920թ. դեկտեմբերը):

Մեկ տարուց ավելի ժամանակահատվածում նրան հաջողվեց մեծ ծավալի աշխատանք կատարել ոչ միայն ֆակուլտետի ուսումնական գործընթացը կազմակերպելու, այլև գիտական աշխատանքներ հրատարակելու ուղղությամբ:

1920թ. բանվարի 31-ին՝ համալսարանի և նրա անդրանիկ ֆակուլտետի բացման օրը, լույս տեսավ «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվեց չքավոր ուսանողների օգնության ֆոնդին:

Այնուհետև բացման արարողությունը վերածվեց տոնախմբության: Թերթում, բացի համալսարանի ղեկորը (տեսուչ) Յու. Ղամբարյանի հոդվածից, տպագրվել են նաև ֆակուլտետի դեկան Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ողջոյն Հայաստանի համալսարան», ֆակուլտետի դասախոսներ Երվանդ Տեր-Մինասյանի «Հայաստանի համալսարանը», Ստեփան Մալխասյանցի «Համալսարանը և լեզուն», 1920թ. հունիսից դեկանի պաշտոնակատար Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի «Երանգ, թե՛ իրականություն» հոդվածները: Հետաքրքիր է, որ թերթում հրատարակվել է նաև համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի (1920թ. փետրվար-մայիս) դասացուցակը: Դրանից պարզ երևում է, որ համալսարանի Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի դասերը սկսվել են փետրվարի մեկից և տևել մինչև հունիսի մեկը: Երևում են նաև դասավանդվող առարկաները, դրանց ժամաքանակը, դասավանդող դասախոսները: Հետաքրքիր է, որ հաշվի առնելով ունկնդիրների մակարդակը և նրանց զբաղվածությունը՝ դասախոսությունները սկսվել են երեկոյան ժամը հինգից, յուրաքանչյուր առարկան՝ երկուական ժամով: Անպատրաստների համար նախատեսվել է ևս երկու ժամ լրացուցիչ՝ հատկապես գրաբարից և ֆրանսերենից:

Ըստ դասացուցակի, առաջին կիսամյակում դասավանդվում էր առաջին՝ հայ գրականություն (հին շրջան, պրոֆեսոր Մեսրոպ եպիսկոպոս), երկրորդ՝ հայոց պատմություն (հին շրջան, պրոֆեսոր Երվանդ Տեր-Մինասյան), երրորդ՝ գրաբար (դոցենտ Ստեփան Մալխասյանց), չորրորդ՝ գրչության արվեստ (դոցենտ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան), հինգերորդ՝ համեմատական լեզվաբանություն և հունարեն (դոցենտի պաշտոնակատար Ռուբեն Աբրահամյան), հոգեբանություն (դոցենտի պաշտոնակատար Սիրական Տիգրանյան),

Արևելքի պատմություն (պրիվատ-դոցենտ Աշխարհբեկ Քալանթար), ընդհանուր պատմություն (նոր դար, դասախոս Ն.Սիմոնյան), ֆրանսերեն (դասախոս է. Ուսպենսկայա): Շուտով ֆակուլտետը համալրվում է նոր դասախոսներով: Հանրային կրթության և արվեստի նախարարության հոկտեմբերի 30-ի 161 և 162 հրամաններով Գրիգոր Ղափանցյանը և Աշոտ Գասպարյանը 1920թ. օգոստոսի մեկից նշանակվում են համապատասխանաբար ԵՊՀ պատմալեզվաբանական ֆակուլտետի պրիվատ-դոցենտ և ընդհանուր պատմության դասախոս: Այսպիսով՝ պատմության ֆակուլտետը աստիճանաբար համալրվում է բարձր որակ մասնագետներով: Ֆակուլտետում հենց բացման ժամանակ ունկնդիրների թիվը 262 էր, իսկ դասախոսներինը՝ 32: Առաջին օրը՝ փետրվարի մեկին, առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվը վիճակվեց անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մալխասյանցին: Դասախոսությանը, ուսանողությունից բացի, ներկա էին նաև ՀՀ Հանրային կրթության նախարարը, համալսարանի ղեկորը, նրա օգնական կազմակերպիչը, ֆակուլտետի դասախոսները և հասարակայնության ներկայացուցիչներ: Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի ուսումնագիտական և կազմակերպչական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ են պարունակում դեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, դեկանի պաշտոնակատարներ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի ու Հակոբ Մանանդյանի զեկուցագրերը և ֆակուլտետի ժողովների նիստերի արձանագրությունները, որոնք հաշվետվություններ են պարունակում կատարված աշխատանքների մասին: Նրանցից մենք տեղեկանում ենք մասնագիտական գրականության ձեռքբերման դժվարությունների, ուսումնական գործի ուղղությամբ կատարված հայրենանվեր աշխատանքների, ինչպես նաև դասախոսությունների որակի բարձրացման, տեքստերի տպագրման նախապատրաստման և հրատարակման, ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների, նոր ուսանողների ընդունելության, ուսումնական պարապմունքների արդյունավետության բարձրացման խնդիրների մասին: Արձանագրություններից երևում է, որ չնայած ֆակուլտետում անվանի դասախոսների անձնուրաց ջանքերին, ինչպես նաև ուսանողության մեծ խանդավառությանն ու ջանասիրությանը, այնուամենայնիվ առաջին կիսամյակի արդյունքները չեն արդարացնում տնօրինության սպասելիքները և ֆակուլտետի դասախոսներին ու դեկավարությանը բերում են այն համոզման, որ համալսարանը, որպես ուսումնագիտական հաստատություն, պետք է գործի ոչ թե Ալեքսանդրապոլում, այլ մայրաքաղաքում: Շուտով 1920թ. մայիսի 27-ին, այդ առթիվ պաշտոնապես Հանրային կրթության նախարարին է դիմում ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոսը՝ նշելով, որ «առաջին սեմեստրի փորձը համոզեց բոլոր դասախոսներին,

որ անհրաժեշտ է համալսարան ունենալ Երևանում: Ֆակուլտետի հանձնարարությամբ զատկի տոներին եկա Երևան: Դիմեցի Հանրային կրթության նախարար պարոն Ն. Աղբալյանին, և նա խոստացավ հնարավոր քայլեր կատարել այդ ուղղությամբ: Նույն խնդրանքով, պարոն նախարար, նորից դիմում եմ Ձեզ, որ միջոցներ ձեռք առնեք առաջիկա ամիսներին: Սեպտեմբեր ամսին համալսարանը տեղափոխվի Երևան, որ նա ունենա հատուկ շենք և որ այդ որոշումը տեղի ունենա ըստ կարելույն շուտ, որպեսզի կարելի լինի հոգավ բնակարաններ նաև դասախոսների համար»²⁹: Համամիտ լինելով այս հարցադրմանը՝ նոր նախարար Գ. Ղազարյանը առաջարկ է մտցնում Նախարարների խորհուրդ համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ, որի հիման վրա 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է՝

Համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան:

Ուսուցչական սեմինարիայի շենքը (որտեղ գտնվում է այժմյան Պատմության ֆակուլտետը - Է. Մ.) հատկացնել համալսարանին: Պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր³⁰:

Ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացնում է 500.000 ռուբլի: Համաձայն որոշման՝ Երևանում համալսարանը իր պարապմունքները պետք է վերսկսեր 1920թ. հոկտեմբերի 16-ին, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումը իրականացնել: Հայաստանի խաղաղ զարգացումը խանգարվեց 1920թ. թուրք-հայկական պատերազմի հետևանքով: Դեռևս պատերազմի օրերին Երևան տեղափոխվեց համալսարանը, որի հետագա գործունեությունը պարպալես անհնարին դարձավ թուրքերի կողմից բռնագրավված Ալեքսանդրապոլում: Որ իսկապես համալսարանը չի կարողանում վերսկսել պարապմունքները իր միակ պատմալեզվաբանական ֆակուլտետում, երևում է դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մանանդյանի՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեության մասին 1920թ. հոկտեմբերի 17-ին գրած մի զեկուցագրից և ապա նույն ֆակուլտետի դասախոսների 1920թ. հոկտեմբերի 29-ի ժողովի արձանագրությունից, ուր բառացի ասված է «1920թ. հոկտեմբերի 29-ին, Երեկոյան ժամը 5-ին տեղի ունեցավ Երևանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի վեցերորդ նիստը: Նախագահում էր ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանը, իսկ արձանագրում էր Ե. Ֆրանգյանը: Ներկա էին Ս. Տիգրանյանը, Մ. Աբեղյանը, Ռ. Աբրահամյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Երվանդ Տեր-Մինասյանը և Ա. Գասպարյանը:

Օրակարգն էր.

Ֆակուլտետի բացման հարցը

Նոր խնդրատուներ ընդունելու հարցը

Ս. Տիգրանյանը առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի վերաբացումը՝ նկատի ունենալով ռազմաճակատի լուրջ դրությունը: Կարծիքների կարճ Փոխանակությունից հետո ձայների մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վճռին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչությանը հայտարարելու ֆակուլտետի աշխատանքների սկզբի մասին, երբ այդ հնարավոր կգտնի»³¹: Փաստորեն դրությունը ռազմաճակատում այդպես էլ չկարգավորվեց: Հանրապետությունը Ալեքսանդրապոլի պայմանագրով կորցրեց ոչ միայն Սևրի պայմանագրով Հայաստանին տրված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև իր փաստական վերահսկողության տակ գտնվող հողերի կեսը:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երևանում: Որքան էլ խորհրդային նորաստեղծ իշխանությունների բացասական վերաբերմունքը սուր էր Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության նկատմամբ, այնուամենայնիվ, կարևորելով համալսարանի գոյության պատմական փաստը՝ որոշվեց ոչ թե փակել, այլ ուղղակի վերակազմել այն՝ հարմարացնելով իր շահերին ու խնդիրներին: Միաժամանակ, ելնելով այդ կարևոր գիտակրթական օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից, տասնամյակներ շարունակ անտեսվել են ՀՀ առաջին հանրապետության տարիներին արված ձեռնարկումները և գոյություն ունեցող փաստաթղթերը³²: ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանով՝ «Երևանի համալսարանը վերակազմելու մասին», «Երևանի համալսարանը վերակազմվում է Երևանի ժողովրդական համալսարան, նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական, իսկ նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում էին արձակված»³³: Դեռևս 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերին ձևավորվել էին և գրեթե լիովին հայտնի էին պատմալեզվաբանական ֆակուլտետ դիմած բոլոր 90 դիմորդների (ընդունվածների) անունները: 1921թ. հունվարի 23-ին, նախապատրաստական աշխատանքներից հետո, Երևանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ հունվարի 24-ին վերսկսվեցին պարապմունքները:

Բանալի բառեր - կրթագիտական, բարձրագույն, նախարարների խորհուրդ, ճեմարան, Ն. Աղբալյան, Ս. Տիգրանյան, Հանրային կրթություն, Յու. Ղամբարյան, Ալեքսանդրապոլ, պատմալեզվաբանական ֆակուլտետ, առևտրային դպրոցի շենք:

SUMMARY

Edik Minasyan

Doctor of Historical Sciences, Professor

The Scientific-Educational Upsurge of the First Republic of Armenia

It is a well-known fact that the national image of each people is conditioned by the level of its spiritual-cultural development. Schools and education have always accompanied the Armenian people throughout its long history. Still in the Middle Ages, the Armenian people had outstanding universities of Gladzor and Tatev, the philosophical school of Ani, etc. In the modern period our people badly felt the need for higher education, especially under the circumstances of having to manage their own fate independently. The establishment of Yerevan State University was a real scientific and educational upsurge. The article presents in detail the history of the first years of the creation and establishment of the university. In this sense, the authorities of the First Republic, the ministers of education, should be properly paid tribute to, with whose immediate initiative this highly important undertaking was implemented. In January 1920, the University was opened in Alexandrapol with a solemn ceremony. The first and the founding faculty was the Faculty of History and Linguistics, the opening and the first difficulties of which are presented in the article. It created a high level scientific education, which is maintained to our days.

Keywords: *scientific-educational, higher, ministerial council, seminary, N. Aghbalyan, S. Tigranyan, public education, Yu. Ghambaryan, Alexandrapol, Faculty of History and Linguistics, Commercial School building.*

1. Գ. Վարդանյան, Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում, Եր., 2003, էջ 77:
2. Նույն տեղում, էջ 82:
3. Նույն տեղում, էջ 91:
4. «Հառաջ», նոյեմբերի 1, 1919, № 34:
5. Վ. Երկանյան, Հայ մշակույթը 1800-1917թթ., Եր., էջ 53:
6. Զանգ, մարտի 26, 1919, № 34:
7. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Ե, էջ 68:
8. Նորք, 1999, հ. 2, էջ 9:
9. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., էջ 207:
10. Ժողովուրդ, նոյեմբերի 22, 27, 1918թ, №№ 35, 37:
11. Գ. Վարդանյան, նույն աշխ., էջ 93:
12. Հորիզոն, հունվարի 28, 1918, № 20:
13. Երևանի համալսարան. 1918-1920թթ. Վավերագրերի ժողովածու, Եր., էջ 14-15:
14. Մեր անվանի դասախոսները, Եր., 1970, հ. 1, էջ 80-81:
15. Նույն տեղում, էջ 15-16:
16. Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, Եր., 1994, էջ 34:
17. Ժողովուրդ, հունվարի 29, 1919, № 11:
18. Զանգ, մարտի 23, 1919, № 33:
19. Աշխատանք, մայիսի 1, 1919, № 14: Ժողովուրդ, մայիսի 7, 1919, № 48:
20. Լ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարան, էջ 35:
21. Տե՛ս նույն տեղում:
22. Տե՛ս ՀԱԱ ֆ. 207, 1, գ 220, թ. 78:
23. Տե՛ս ՀԱԱ ֆ. 199, գ. 98, թ. 83: Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, գ. 1, գ. 207, թ. 105:
24. Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, գ. 1, գ. 207, թ. 105:
25. Տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխատությունը, էջ 36:
26. Տե՛ս Լ. Պ. Ղարիբջանյան, նշված աշխատություն, էջ 38:
27. «Հառաջ» թերթ, 1920թ. փետրվարի 15, թիվ 26:
28. Տե՛ս Երևանի պետական համալսարան, Կենսագրական հանրագիտարան, Ա. Սիմոնյանի խմբագրությամբ, ԵՊՀ հրատ., Եր. 2009, էջ 5:
29. ՀՀԱԱ, ֆ. 207, գ. 337, թ. 117:
30. Տե՛ս նույն տեղում, ֆ. 117 և ֆ. 199, գ. 1, գործ 118, թերթ 128:
31. Տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխատություն, էջ 12:
32. Տե՛ս, ԵՊՀ կենսագրական հանրագիտարան, էջ 6:
33. Տե՛ս, Երևանի համալսարան, վավերագրերի ժողովածու, էջ 270:

**ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Հայաստանի առաջին հանրապետությունը գոյատևեց իմպերիալիստական պետություններ Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի դիվանագիտական նեեզ խաղերի, թուրքական հայակույքադաշնակության, հարևան պետությունների անջատողական նկրտումների, Խորհրդային Ռուսաստանի քաղաքացիական հուսահատ կոիվների բարդ հանգույցում:

Միայնակ մնացած հանրապետությունը պատեպատ էր զարկվում, խաբվում և հալածվում աջից ու ձախից: Հանրապետությունը պիտի հոգար դարի առաջին եղեռն ապրածների, գաղթականների և մահացու հիվանդություններով տառապող իր հազարավոր զավակների մասին:

Չնայած այս ամենին, հարյուրամյակների ընդմիջումից հետո, պատմական Հայաստանի մի փոքրիկ հողակտորի վրա վերականգնվել էր հայոց պետականությունը:

Այս խառնածին ապրումներով էին տոգորված նաև հայ մտավորականներից շատերը, որոնք ի պաշտոնե կամ ի կամոք եղան ավելին, քան կային: Նրանցից մեկն էլ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ Նիկոլ Աղբալյանն էր:

Տարիներ անց, փորձելով գնահատել ինքն իր գործունեությունը, նա ափսոսանքով պիտի գրեր. «Սուրը չթողեց, որ երգիչ դառնամ, երգը չթողեց, որ մարտիկ դառնամ»: Սակայն երկու ասպարեզներում էլ նա նշանակալի հետք է թողել՝ միայն Առաջին հանրապետության տարիներին իրեն ավելի շատ նվիրաբերելով Հայաստանի քաղաքական, քան գրական կյանքին:

Դեռևս 1900-ականներից հայոց հոգևոր-մտավոր կյանքում սկսվել էր Նիկոլ Աղբալյանի առաքելության առաջին փուլը: Նա դարձավ Հ. Թումանյանի հիմնադրած Վերնատան անդամը՝ կարևոր ներդրում ունենալով հայ գրական կյանքի կազմակերպման աշխատանքներին՝ հետագայում դառնալով նորաստեղծ գրողներ-

րի կովկասյան ընկերության նախագահի՝ Թումանյանի անփոփոխ տեղակալը²:

1909-1912 թթ. եղել է Թեհրանի ազգային վարժարանի տնօրենը, իսկ 1913-ին, Թիֆլիս վերադառնալով, Արշակ Զամալյանի հետ խմբագրել է «Հորիզոն» Հ.Յ.Դ. պաշտոնաթերթը, որ, մինչև Հայաստանի անկախության կերտումն ու առաջին հանրապետության հռչակումը, արևելահայ իրականության մեջ մեծ դեր է խաղացել:

Առաջին աշխարհամարտի բռնկման տարիներին Նիկոլ Աղբալյանը Հայոց ազգային խորհրդի ստեղծողներից մեկն է եղել՝ սեփական հեղինակությունն ու կազմակերպչական շնորհը ծառայեցնելով հայ կամավորական շարժման կազմակերպմանն ու հաղթարշավին: Իսկ երբ ռուսական զորքերը նահանջեցին, և Արարատյան դաշտը լցվեց արևմտահայ գաղթականներով, Աղբալյանը հոգածու հոր անձնվիրությամբ Հովհաննես Թումանյանի նման լծվեց գաղթականների պատսպարման, սնման և բուժման դժվարին գործին:

Հայաստանի անկախացումից հետո նա Ազգային խորհրդի, ապա խորհրդարանի պատգամավոր ընտրվեց՝ մեծ ներդրում ունենալով Հայաստանի կայացման գործում:

Իսկ 1919 թվականի օգոստոսից մինչև 1920թ. մայիսը նշանակվեց Հանրային կրթության և արվեստի նախարար: Ամենևին պատահական չէր նման կարևոր նախարարությունը Աղբալյանին վստահելը:

1916-1917 ուսումնական տարում երկիրն ուներ 500 դպրոց: 1918 թվականին արդեն դրանց կեսը չէր գործում³:

Նախարար դառնալուց հետո, երբ Աղբալյանը ձեռնամուխ եղավ կրթական գործին, պարզեց, որ շենքերի կեսն այնքան ավերված է, որ վերականգնելն անհնար է:

Որոշ տեղերում դպրոցական կյանքն ընթանում էր անկանոն կերպով: «Պարապմունքներն անցնում էին վերին աստիճանի անհարմար, ցուրտ և խոնավ շենքում, ծայրահեղ դեպքում՝ նույնիսկ գոմում: Շատ դպրոցներում նստարանները պատրաստվում էին ամենահասարակ և պարզ ձևի: Չգացվում էր մեծ կարիք գրատախտակների, գրենական պարագաների, դասագրքերի և պատրաստի ուսուցչության»,- 1919 թվականի ապրիլի 15-ին կառավարությանն հայտնում է Հանրային կրթության և արվեստի նախարարը⁴:

Նրա գերագույն նպատակներից էր Հանրային կրթություն ապահովելու հարցը:

Շրջանային տեսչներին կարգադրություն է անում քաղաքներում և ավաններում այնքան «առաջին բաժանմունք բանալ, որքան պետք է, որ ոչ մի դպրոցական հասակ ունեցող երեխա դուրս չմնա դպրոցից»⁵:

Հստակ պատկերացնելով նախարարության անվանումը՝ **հանրային կրթություն**, ձեռնամուխ է լինում հասակավոր անգրագետների և թերավարժ գրագետների կրթության գործին: Մինիստրների խորհրդին հղած զեկուցագրում գրում է. «Այդ նպատակով նախագծում ենք երեք կարգի դասընթացներ.

անգրագետների համար-գրագետների դասընթաց,
թերավարժների համար-գրավարժական դասընթաց,
թերուսների համար-հանրային համալսարան»⁶:

Ծրագրի շարունակությունն է համարում կիրակնօրյա և երեկոյան դպրոցների բացումը:

Կառավարությունից խնդրում է միջոցներ՝ ուսուցիչների լրացուցիչ վարձատրության, դասարանների ավելացման, դպրոցական շենքերի վերանորոգման համար:

Ն. Աղբալյանը հստակ պատկերացում ուներ սովորողների տարիքային առանձնահատկությունների, ժամանակի հրամայականի մասին և կրթական գործի առաջընթացի ապահովման համար պահանջեց գործող ծրագրերի արմատական վերանայում: Նոր ծրագրերում շեշտադրվում էին բնագիտական առարկաները, և տարրական դասարաններում մեծ տեղ էր հատկացվում աշխատանքային դաստիարակությանը (այսօր էլ նոր բարեփոխվող ծրագրերում նույն առաջարկն է ներկայացված): Աղբալյանը պնդում էր, որ միջնակարգ դպրոցն ավարտած յուրաքանչյուր շրջանավարտ պիտի ազատ տիրապետի որևէ ձեռարկվեստի: Նրա հրամանով դպրոցներին հատկացվեցին հողամասեր՝ գործնական պարապմունքների համար: Ըստ Աղբալյանի՝ տարրական դպրոցը պետք է ունենար 6, որոշ դեպքերում՝ 7 դասարան: Այսօր էլ աշխարհի շատ երկրներում տարրական դպրոցը 6 կամ 7 տարի է տևում: Միջնակարգ դպրոցները պետք է ունենային թեքումներ՝ մանկավարժական, պատմալեզվաբանական, բնագիտամաթեմատիկական, առևտրական, տեխնիկական⁷: Օտար դպրոցներում պետական լեզուն ուսուցանելը պարտադիր էր, բայց և օտար լեզուների ուսուցումը պիտի լիներ այնպիսի մակարդակի, որ շրջանավարտը կարողանար ազատորեն օգտվել օտար գրականությունից: Այս բոլոր առաջարկների և ձեռնարկումների տրամաբանությունը բխում էր նրա ապրած կյանքից. չէր նա ուսանել էր Մոսկվայի, Լոզանի, Սորբոնի համալսարաններում, ուսուցչություն էր արել Կաղզվանում, Շուշիում, Թիֆլիսում, եղել էր դպրոցի տնօրեն, ուրեմն, որպես նախարար, այս որոշումները տևական դիտարկումների արդյունքում էին ծնվել:

Աղբալյանը դարասկզբի իրադարձությունների ականատեսն էր, նաև կազմակերպիչը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել հայ կամավորական գնդերի կազմավորման գործին, հասել Վան և

Բիթլիս: Լինելով նախարար՝ նա իր որոշումները դարձյալ սեփական կենսափորձից ելնելով էր կայացնում: Ըստ այդմ էլ Մինիստրների խորհրդին առաջարկություն է ներկայացնում, որ պատերազմում և ազատագրական կռիվներում զոհված կամավորների, զինվորների, սպաների, բժիշկների և գթության քույրերի զավակներին գրենական պիտույքները ձրի տրամադրվեն⁸:

Մինիստրության մշտական ուշադրության կենտրոնում էր հնությունների պահպանումը, որի մասին են վկայում մի շարք փաստաթղթեր. մինիստր Նիկոլ Աղբալյանը 1919 թվականի հոկտեմբերի 14-ին № 3298 գրությամբ դիմում է ՀՀ ներքին գործերի մինիստրին. «Որպեսզի հնարավոր լինի այսուհետ գոնե խուսափենք այնպիսի ցավալի դեպքի կրկնությունից, ինչպիսին է Անիի հնադարանի և շինությունների կործանումը, նախքան հատուկ օրենք հրատարակելը հնությունների մասին՝ գլխավորապես վերաբերող նրանց պահպանությանը, սրանով խնդրում եմ ձեզ չմերժել, հրահանգել Ձեզ ենթակա բոլոր վարչական մարմիններին և պաշտոնական անձանց, որ արթուն հսկողություն ունենան հնության հուշարձանների (ավերակ, կիսավեր և կանգուն հին շինությունների, արձանի, և այլն) պահպանության վերաբերյալ, նախազգուշացնեն տեղական ազգաբնակչությանը չքանդել հնություններն իբրև նյութ՝ ծառայեցնելով նոր շինությունների համար. մի հանգամանք, որ ներկա վերաշինության պահին կարող է սովորական երևույթ դառնալ և յուրաքանչյուր տեղի ունեցած դեպքի մասին անհապաղ տեղեկացնել Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը»⁹:

Նիլոլ Աղբալյանի գործունեությունը պայմանավորված էր ոչ թե «ինչ է հանձնարարված», այլ «ինչ կարող եմ անել» սկզբունքով:

Հանրային կրթության և արվեստի մինիստրությունը զբաղվում էր նաև Վրաստանում և Ադրբեջանում տասնամյակներ հաջողությամբ գոյատևած հայկական դպրոցների գոյատևման և շարունակականությունը ապահովելու գործով: Անկախ հանրապետությունների ստեղծումից հետո Վրաստանն ու Ադրբեջանը հրաժարվում են իրենց վարչական ենթակայության ներքո գտնվող դպրոցների ֆինանսավորումից:

Աղբալյանը գրությամբ դիմում է կառավարությանը և պահանջում, որ որքան էլ կառավարությունը գտնվում է ֆինանսական սուղ պայմաններում, միևնույն է, պետք է դրամական օժանդակություն ցույց տա հարևան հանրապետությունների հայկական դպրոցներին, որպեսզի նրանք, «եթե ոչ գերազանց, գոնե հավասար պայմանների մեջ լինեն տիրող ժողովրդի դպրոցների համեմատությամբ»¹⁰:

Ազգային մտածողությունն այնքան խորն էր Աղբալյանի մոտ, որ բոլոր ոլորտներում կարևորում էր հայերենի մաքրամաքուր գործածության անհրաժեշտությունը:

Նրան է պատկանում «Հանրապետության պաշտոնետության համար հայոց լեզվի դասընթացներ» կազմակերպելու նախաձեռնությունը: Այդ նախաձեռնությունը պայմանավորված էր հայերենին պետական լեզվի կարգավիճակ տալու մտահոգությամբ: Այն օտարազգիները, ովքեր ցանկանում են հայերեն սովորել, դասընթացի ավարտին քննությունը հաջող հանձնելուց հետո կարող էին աշխատել որպես պետական պաշտոնյա: Սա հրաշալի խթան էր, որը շատերին կմղեր հմտանալու հայերենի մեջ: Դասընթացները սկսում են գործել Երևանում և Ալեքսանդրապոլում:

Այս կապակցությամբ Աղբալյանը գրում է. «Հայերենը տարածվելու է վարչատնտեսում, հասարակական հաստատություններում, դպրոցների, թատրոնի, գրականության, պետական հաստատությունների և ամեն տեսակ ասպարեզների մեջ, ինչպես նաև ընկերային, հասրակական, օրենսդրական, զինվորական, գրական, տեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական և այլ մասնագիտական գրականության ճյուղերում, նախ թարգմանական և ապա հայկական գրականություն պիտի զարգանա»¹¹:

Մեծ էր Աղբալյանի ներդրումը դպրոցների ազգայնացման գործում, սակայն դա նոր խնդիրներ բերեց. հայերենով համապատասխան գրականության բացակայումը դանդաղեցնում էր գործը՝ հաճախ հանգեցնելով անելանելի վիճակի:

«Դպրոցներն ազգայնացվում են, հետևապես մեր աշակերտները չպիտի կարողանան օտար լեզուներով գիտական պաշարի տիրապետել,- գրում է Աղբալյանը: - Հայ գրականությունը բավարար գրքեր չունի ժամանակակից իմաստով հանրակիր թաղաքացիներ պատրաստելու համար: Եթե չենք ուզում ազգայնացումը նույնացնել տգիտացման հետ, անհրաժեշտ է մայրենի լեզվով գիտական գրականություն ստեղծել, որը հնարավոր է միայն թարգմանական գրականությանը զարկ տալով»¹²:

1920 թվականի հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հանդիսավոր բացվեց Հայաստանի համալսարանը: Աղբալյանը նախարար դարձավ այն ժամանակ, երբ նոր էին սկսվել համալսարանի կազմակերպման աշխատանքները: Նա եռանդուն մասնակցություն է ունենում համալսարանի հետ կապված գործերին. դասախոսներ է հրավիրում, շենք է առաջարկում, բանակցություններ է վարում Թիֆլիսի իր ներկայացուցիչ Ջավրիկի հետ, քայլեր է ձեռնարկում համալսարանը գրքերով և անհրաժեշտ սարքավորումներով համալրելու ուղղությամբ: Քանի որ Երևանում այն բացել չի հաջողվում, բացվում է Ալեքսանդրապոլում: Աղբալյանը ողջունում է համալսարանի բացումը, նկարագրում է երկրի վիճակը և այն պայմանները,

որ ստիպեցին կառավարությանը բանալ համալսարան: Նա առաջարկում է հարգել այն զոհերի հիշատակը, որոնց արյան գնով հնարավոր եղավ իրականացնել հայերի երազը¹³:

Լինելով տաղանդավոր գրականագետ՝ նա չէր կարող անտարբեր լինել գրականության հանդեպ: Շարունակում էր մասնակցություն ունենալ հայ գրական կյանքին, հանդես գալիս զեկուցումներով:

Գրողների միության կազմակերպած հերթական հանդիսություններից մեկում, «սարսելով դահլիճն ու ֆոյեն», 1919 թվականի հոկտեմբերին ազդարարեց «մի նոր բանաստեղծ-Չարենցի» հայտնությունը: Քննադատի և բանաստեղծի առաջին հանդիպումը տեղի էր ունեցել մի փոքր վաղ՝ «Արև» թերթի խմբագրությունում: Դասախոսության հրավիրված քննադատին հետաքրքրում է, թե ինչ նոր գրքեր է ստացել խմբագրությունը: «Առաջիս նստած,- պատմում է նա,- մի նիհար տետրակ էր. «Ե. Չարենց. Երեք երգ տխրադալով աղջկան», մյուսը մի փոքրիկ գրքուկ էր նույն հեղինակի. «Դանթեական առասպել»: Վերնագրերն ուշագրավ էին: Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն: Մի տաղանդավոր սկսնակ: Տարվեցա ընթերցումով, մոռացա հավաքույթ և սպասում: Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնում: Որոշեցի՝ առաջին առիթով գրեմ այս նոր հեղինակի մասին: Այդ անելու հնարավորությունը ունեցա 2 տարի հետո միայն»¹⁴:

Ականատեսները վկայում են, որ հողվածից հետո ողջ Երևանն իմացավ, որ մի մեծ բանաստեղծ է ծնվել: Կարելի է ասել, որ Աղբալյանը դարձավ Չարենցի գրական կնքահայրը: Չարենցն այդ մասին իմացավ Կարսի շրջանի Բաշքյաղիկյար գյուղում, ուր մեկնել էր ուսուցչություն անելու: Անմիջապես եկավ Երևան և ներկայացավ Հանրային կրթության և արվեստի նախարար Աղբալյանի ընդունելությանը:

- Հը, եկել ես, Չարենց, լավ ես արել: Լսել եմ՝ նյութական վիճակդ փայլուն չէ, դրա համար ես ուսուցչություն անում: Չէիր ուզի ինձ օգնել կրթական վերակառուցման գործում:

- Այդ ինչպե՞ս, պարոն նախարար, ես բացարձակ բան չեմ հասկանում այդ գրասենյակային աշխատանքից:

- Եվ կարիք էլ չկա, որ հասկանաս, ես քեզ կտամ մի սեղան, կնստես առաջը և բանաստեղծություններ կգրես, դա քեզ ծանոթ աշխատանք է, չէ՞. կստանաս մի ռոճիկ, որ քեզ ապրուստի հոգսից կազատի, իհարկե, շատ համեստ, ինչ որ ստանում է մի ուսուցիչ կամ մի նախարար: Իսկ աշխատանքը, որ իրավունք ունեն քեզնից պահանջելու իբրև պաշտոնյա, այդ կթողնես ինձ, ես քո տեղը կկատարեմ: Քո անելիքը շատ ավելի էական կլինի հայ ժողովրդի համար¹⁵:

Իհարկե, բանաստեղծն այդպես էլ չվարժվեց գրասենյակային աշխատանքին: Աշխատակիցները դժգոհում էին նրա «չարաճճիություն-

ներից»՝ իբր ոչ մեկին չի ենթարկվում, նախարարության գույքացանկը չի կազմում և այլն: Իսկ Աղբալյանը նման դեպքերում պատասխանում էր. «Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որն ավելի կարժենա, քան նախարարության ամբողջ փտած գույքը»:

Այս դրվագը խոսում է Աղբալյանի այն մեծ հոգածության մասին, որ տածում էր տաղանդների հանդեպ, և բանաստեղծն էլ երբեք չմոռացավ սիրելի նախարարին: Աղբալյանն իրոք օժտված էր գրողի ստեղծագործական տաղանդը նկատելու և այն զարգացնելու անուրանալի ծիրքով: Այդպես նա նկատեց և քաջալերեց Ավ. Իսահակյանին, Լ. Շանթին, Ստ. Զորյանին և ուրիշների: Նրա այդ հատկության մասին է խոսում այն իրողությունը, որ, ընդառաջելով Հ. Թումանյանի խնդրանքին, մի օրինագիծ է կազմում և ներկայացնում կառավարությանը, որով խնդրում էր նպաստներ հատկացնել գրողներին՝ չնայելով՝ նրանք հուսատու են, թե՛ վաստակավոր: «Նպատակահարմար կհամարեի այս օժանդակությունը դարձնել պարբերական. վաստակավորներին իբրև վարձատրություն, հուսատուներին իբրև խրախույս: Նույն պայմաններով անհրաժեշտ է օժանդակել նաև հայ բեմի վաստակավոր աշխատակիցներին և հայ նկարիչներին»¹⁶:

Կառավարությունն օժանդակեց այդ նաև մի այլ առաջարկի, որով խնդրում էր միջոցներ տրամադրել հայ հեղինակների ինքնուրույն և թարգմանական երկերի հրատարակության համար:

Սա մի փոքր մասն է նրա դիմանկարի, որն այսօր էլ կարող է օրինակ ծառայել և շատ քաղաքական գործիչների, և գրականության ճակատագրով զբաղվողների համար:

Դաշնակցության մասին խոսելիս նա ասում էր. «Սասունցի Դավթի ավանդական տիպարն է, որ կուսակցությունը կենդանացնում է «դաշնակցական»ի մէջ»: Ինքն էլ իրավամբ եղավ մի յուրօրինակ անձնվեր Սասունցի Դավթի: Հայաստանի և հայության հայացման ու ազգային որակի բյուրեղացման առաքյալը լինելով՝ տարագրության մեջ էլ իրեն նվիրեց հայության խնդիրներին՝ Լ. Շանթի հետ լծվելով «Հայ կրթական համազգային միության ստեղծման աշխատանքներին» և մինչև իր կյանքի վերջը տարագիր հայության լայն շրջանակներին փոխանցեց արվեստի ու մշակույթի աղբալյանական պաշտամունքը:

Բանալի բառեր – Նիկոլ Աղբալյան, Հայաստանի առաջին հանրապետություն, նախարար, գրաքննադատ, Չարենց, դպրոց, արվեստ, հայերեն, ուսումնական ծրագիր, գրող:

SUMMARY

Gayane Mkrtchyan

PhD in Pedagogy

Nikol Aghbalyan's Cultural-Educational Activities during the Years of the First Republic

The article presents Nikol Aghbalyan's social and political activities during the short period of time when he was Minister of Public Education and Arts, focusing on the work he carried for the establishment of Armenian schools. The article touches upon his great care for the representatives of literature and art, as well as the big role he played in shaping Charents as a writer.

Keywords: Nikol Aghbalyan, the First Republic of Armenia, Minister, literary critic, Charents, school, art, the Armenian language, curriculum, writer.

1. Գ. Գ. Անանյան, Նիկոլ Աղբալյանը՝ քննադատ, եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1989, էջ 80:
2. <http://ysu.am/persons/hy/Nikol-Aghbalyan>
3. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 207, գ. 136, թ. 1:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, ֆոնդ 199, գ. 98, թ. 51:
6. Նույն տեղում, ֆ. 207, գ. 219, թ. 32:
7. Նույն տեղում, ֆ. 207, գ. 136, թ. 3
8. Նույն տեղում, ֆ. 199, գ. 98, թ. 44
9. http://mincult.am/first_republic.html
10. Նույն տեղում, ֆ. 199, գ. 98, թ. 44:
11. «Ժողովուրդ», 1920, №94, 12-ը հունիսի:
12. Նույն տեղում, ֆ. 199, գ. 98, թ. 59:
13. «Մշակ», 1920, №2:
14. Գ. Գ. Անանյան, Նիկոլ Աղբալյանը՝ քննադատ, եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1989, էջ 80:
15. Ն. Աղբալյան, Դասախոսություններ հայ մարտնչագրության մասին, Բեյրութ, 1952:
16. Նույն տեղում, ֆ. 207, գ. 156, թ. 126:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ
ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ
(1918-1920 ԹԹ.)**

Ցարական Ռուսաստանի տիրապետության օրոք, ինչպես կայսրության մյուս տարածքներում, այնպես էլ Անդրկովկասում ու մասնավորապես Արևելյան Հայաստանում մեծ ծավալներ էին ընդգրկել տպագրության և հրապարակային միջոցառումների նկատմամբ պետական վերահսկողությունն ու գրաքննությունը:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսական կայսրության ժողովուրդները մեծ քայլ կատարեցին դեպի ժողովրդավարական արժեքներ ու քաղաքացիական ազատություններ, հայտարարվեց խոսքի, մամուլի, միություններ կազմելու, հավաքների, գործադուլների ազատության մասին: Համառուսաստանյան ժամանակավոր կառավարությունը 1917թ. ապրիլի 27-ին հատուկ որոշում ընդունեց «Հրապարակային ներկայացումների հսկողության մասին»: Որոշման համաձայն՝ վերացվեց նախնական դրամատիկական գրաքննությունը: Թատերական, համերգային միջոցառումների, կինոցուցադրումների կազմակերպումից առաջ անհրաժեշտ էր դրանց ծրագրերը երկու օրինակով հաշվառման ներկայացնել Գրապալատին և ժամանակավոր կառավարության տեղական կոմիսարին, կամ էլ նրան փոխարինող անձին՝:

Սա աննախադեպ իրադարձություն էր նախկին կայսրության ժողովուրդների համար: Ռուսաստանյան պետության ողջ տարածքում (այդ թվում՝ Անդրկովկասում), չնայած պատերազմական դժվարություններին, սկսեցին ազատորեն տպագրվել քաղաքական կուսակցությունների, ամենատարբեր խմբակցությունների ու միությունների պարբերականները (բացառությամբ՝ միապետական ուղղվածության թերթերի), բեմադրվել բազմաբնույթ (երբեմն՝ ցածրարժեք) ներկայացումներ:

Վերը թվարկված ազատական որոշումներն Անդրկովկասում գործեցին նաև 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած շրջանում՝ ընդհուպ մինչև 1918թ. մայիսին Անդրկովկասյան Դեմոկրատական Դաշնային Հանրապետության լուծարումը:

1918թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան սեյմի լուծարումից և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հայտարարումից հետո, Թիֆլիսում տեղակայված Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը, որը տվյալ պահին հայության հավաքական կամքը ներկայացնող գլխավոր քաղաքական մարմինն էր, մայիսի 30-ին իրեն հայտարարեց «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»²: Այս հայտարարությունն ընդունված է համարել Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակագիրը:

Անդրկովկասյան Դեմոկրատական Դաշնային Հանրապետության օրինակով՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում ևս արվեստի բնագավառը հիմնականում կարգավորվում էր ժամանակավոր կառավարության որոշումներով: 1918թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհրդի հաստատած օրենքի համաձայն՝ «Հ տարածքում ժամանակավորապես գործելու էին նախկին Ռուսական կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի և Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով»³: ՀՀ գոյության երկուսուկես տարիների ընթացքում նշյալ ոլորտը կանոնակարգող օրենք չի ընդունվել:

Մշակութային միջոցառումների թույլտվությունը կենտրոնում վերապահված էր Հանրային կրթության և արվեստի նախարարությանը: Գավառներում այդ գործառույթն իրականացնում էին գավառային կոմիսարները և տեղական ինքնավարությունները (զեմստվոները):

Հանրապետության անկախության առաջին ամիսներին (ընդհուպ՝ 1919թ. գարունը) պետության կողմից արվեստի բնագավառի վերահսկողության մասին ակնառու փաստեր մեզ հայտնի չեն: Սովի և զանգվածային մահացության այդ շրջանում ՀՀ իշխանությունները նման հարցերին ուշադրություն դարձնելու ժամանակ չունեին:

1919թ. գարնանը՝ Հայաստանի Հանրապետության ներքին իրավիճակի կայունացումից հետո, կարևոր խնդիր դարձավ մշակութային միջոցառումների կանոնակարգումը: 1919թ. ապրիլի 4-ին դերասան, բեմադրիչ Հովհաննես Ջարիֆյանը խնդրագիր ուղղեց ՀՀ կառավարությանը՝ առաջարկելով հայերեն ներկայացումներն ազատել պատերազմական և քաղաքային տուրքերից: Նա նշում էր, որ տուրքերը կազմում էին ընդհանուր մուտքի 38%-ը՝ դերասաններին զրկելով ներկայացումներ տալու հնարավորությունից⁴: Հ. Ջարիֆյանի դիմումն անհետևանք չմնաց: Կառավարության հուլիսի 30-ի նիստում Հանրային կրթության և արվեստի նախարար Սիրական

Տիգրանյանը զեկուցեց «Ներկայացումների, համերգների և այլ զվարճատեղերի մուտքի տոմսակների վրա քաղաքային տուրք սահմանելու մասին»: Որոշվեց հրապարակային, թատերական ներկայացումների, համերգների, զանազան հանդեսների վճարովի տոմսերն ազատել տուրքերից՝ հիմնականում 1915թ. ապրիլի 19-ին հաստատված զինվորական տուրքից: Քաղաքային և գյուղական ինքնավարություններին հանձնարարվեց տոմսերի արժեքի 20%-ի չափով իրենց օգտին պետական տուրք սահմանել: «Համերգային կամ զվարճական բաժին» չունեցող հրապարակային դասախոսություններն ազատվեցին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից⁵:

1918թ. նոյեմբերին կազմակերպված ՀՀ հանրային կրթության նախարարության կազմում գործում էր Հնության հուշարձանների և արվեստի բաժին: Հաշվի առնելով ժամանակի պահանջը և հիմք ընդունելով նախարարության 1919թ. հուլիսի 4-ի առաջարկը՝ ՀՀ նախարարների խորհուրդը հուլիսի 17-ին օրենք ընդունեց Հնության հուշարձանների և արվեստի բաժինը երկու ինքնուրույն՝ Հնության հուշարձանների պահպանման և Արվեստի հովանավորության բաժինների վերակազմելու մասին⁶:

Հուլիսի 18-ին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Սիրական Տիգրանյանը նախկին նախարար Գևորգ Մելիք-Նարազյոզյանին առաջարկեց ստանձնել նորաստեղծ Արվեստի բաժնի վարիչի պաշտոնը: Հուլիսի 23-ին վերջինս հայտնեց իր համաձայնությունը՝ միաժամանակ Թիֆլիսում մնալու պայմանով: Սակայն բաժնի վարիչի գործառույթներ նա այդպես էլ չիրականացրեց, իսկ օգոստոսի վերջին հրաժարվեց այդ պաշտոնից⁷: Այնուհետև կարճ ժամանակ (մինչև նոյեմբերի 1-ը) Արվեստի բաժնի վարիչի պարտականությունները կատարեց երաժշտագետ Սարգիս Բարխուդարյանը⁸: Սակայն, ինչպես երևում է, նրանից հետո նոր նշանակում չի եղել: Այսպես՝ նախարարության անձնակազմի՝ 1920թ. հունվարով թվագրված հաստիքացուցակում Արվեստի բաժնի վարիչ չի հիշատակվում⁹:

Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ օրոք որակյալ դերասանների ու բեմադրիչների պակասի, նաև պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլ վերահսկողության պատճառով զգալի թիվ էին կազմում կազմակերպվող անորակ գեղարվեստական միջոցառումները: Հասարակության գեղագիտական դաստիարակության տեսակետից կարևորվում էր պետական թատրոն հիմնելու և Հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս գտնվող որակյալ դերասաններին ու բեմադրիչներին ներգրավելու հանգամանքը: Չնայած ներքին և արտաքին աննպաստ պայմաններին՝ ՀՀ կառավարությունը գործնական քայլերի դիմեց արվեստի բնագավառի դրությունը բարելավելու նպատակով¹⁰: Ասվածի վառ ապացույցն է պետական

թատրոն, թատերական վարժարան, կոնսերվատորիա, երաժշտական դպրոց, թանգարան հիմնելուն ուղղված քայլերը, նկարչական ցուցահանդեսները, թատերական ներկայացումները, համերգները, կինոցուցադրումները, կազմակերպվող երաժշտական, խմբավարական, դրամատիկական դասընթացները և այլն, այդ նպատակով կառավարության կատարած ֆինանսական հատկացումները¹¹:

1919թ. օգոստոսի 10-ին Հանրային կրթության և արվեստի նախարար նշանակվելուց հետո հայտնի գրող և գրաքննադատ Նիկոլ Աղբալյանը քայլեր ձեռնարկեց, իր իսկ խոսքերով, գեղարվեստի միջոցով ժողովրդին կրթելու և դաստիարակելու նպատակով: ՀՀ պառլամենտի սեպտեմբերի 16-ի նիստում թատերական վարժարան հիմնելու և այդ նպատակով Կ. Պոլսից դերասաններ հրավիրելու մասին նախարարության ներկայացրած օրինագծի քննարկման ժամանակ նա ընդգծեց. «Հացը ստորադաս է արվեստից: Ոչ թե արվեստը պետք է իջնի դեպի ժողովուրդը, այլ ժողովուրդը [բարձրանա] դեպի արվեստը»¹²: Իսկ առաջարկը հիմնավորող պատգամավոր Սահակ Թորոսյանը շեշտեց. «Հայոց թատրոնը ներկայումս անկման շրջանում է, պետք է արվեստը փրկել այդ անկումից: «Արշին մալ ալան»-ի նման օպերետներն այլասերում են հասարակության վարք ու բարքը և փչացնում նրա գեղարվեստական ճաշակը»¹³:

«Արշին մալ ալան»-ը կովկասյան մահմեդական (ադրբեջանցի) կոմպոզիտոր և դրամատուրգ Ուզեիր Հաջիբեկովի (1885-1948) հայտնի օպերետն է: 1913թ. հոկտեմբերին Բաքվում կայացած պրեմիերայից հետո «թեթև» ժանրի այս երաժշտական ստեղծագործությունը լայն տարածում գտավ Անդրկովկասում և նրա սահմաններից դուրս: Ռեժիսոր Սեդրակ Մաղալյանի (1891-1987) թարգմանությամբ ու երաժշտական ձևավորմամբ արդեն 1914թ. Թիֆլիսում «Արշին մալ ալան»-ը բեմադրվեց հայերենով: 1915-1921թթ. Ս. Մաղալյանի խումբը հայերենով օպերետի բազմաթիվ բեմադրություններ է իրականացրել¹⁴: Առաջին աշխարհամարտի տարիներին ու հաջորդող շրջանում այս ստեղծագործության անունը գործածում էին ցածրորակ «ասիական օպերետները» բնորոշելու նպատակով¹⁵: Ի դեպ, 1920-ականներին ևս այն բավականին տարածված էր Հայաստանում (հատկապես գավառներում):

ՀՀ պառլամենտի վերը նշված նիստի հաջորդ օրը՝ սեպտեմբերի 17-ին, Ն. Աղբալյանի ստորագրությամբ Հանրային կրթության և արվեստի նախարարությունը հատուկ շրջաբերական ուղարկեց Կարսի նահանգապետին, Ալեքսանդրապոլի և Երևանի քաղաքային վարչություններին: Տեղեկացնելով, որ նախարարությունը մտադիր է «կինեմատոգրաֆները տուրքի և հսկողության ենթարկել», պահանջվում էր հայտնել, թե քաղաքային վարչությունները կինո-

նկարների ցուցադրությունից որքան վճար են գանձում, նաև «ինչ հսկողություն ունի քաղաքը ներկայացվող պատկերների վրա՝ հանրային բարքերի ապականման տեսակետից»¹⁶: Ն. Աղբալյանի այս գրությունները Հայաստանի Հանրապետության օրոք տեսարանային միջոցառումների և, մասնավորապես, կինոնկարների նկատմամբ պետության կողմից վերահսկողություն հաստատելու առաջին փորձն էր, որը, հաջողությամբ կիրառվելուց հետո, այս ոլորտում կհանգեցնեք նաև գրաքննության:

Հարցի պարզաբանման տեսակետից չափազանց արժեքավոր է Երևանի քաղաքագլուխ Մկրտիչ Մուսինյանի սեպտեմբերի 23-ի պատասխան գրությունը Հանրային կրթության և արվեստի նախարարին: Արված հարցումներին ի պատասխան՝ վերջինս տեղեկացնում էր, որ կինոցուցադրումների համար գանձվում է տոմսի արժեքի 20%-ը: Սակայն ցուցադրվող կինոնկարների վրա հսկողություն չի կատարվում: Այդ առթիվ քաղաքային խորհուրդը որևէ որոշում չունեք: Մ. Մուսինյանը կարծիք էր հայտնում, որ «Ներկայացվող պատկերների վրա հսկողություն ունենալու առթիվ ցանկալի է ունենալ ընդհանուր հրահանգ ամբողջ պետության մեջ գործող կինեմատոգրաֆների համար»¹⁷: Տրամաբանական է կարծել, որ մայրաքաղաքի օրինակով էին գործում նաև հանրապետության մյուս քաղաքային ինքնավարությունները:

Փաստորեն, 1919թ. աշնանը Հայաստանի առաջին հանրապետությունում կինոցուցադրումների նկատմամբ պետական վերահսկողություն, առավել ևս, գրաքննություն գոյություն չունեք: Հայկական կինոյի պատմության առաջին հետազոտողներից Դանիել Դզունին գրում է, թե նախախորհրդային Հայաստանում կինոթատրոններ գոյություն ունեին Երևանում (կինո «Ապոլլո»-ն) և Ալեքսանդրապոլում (կինո «Էրատո»-ն)¹⁸: Ընդհանրապես, Հայաստանի Հանրապետությունում իրականացված կինոցուցադրումները դուրս են մնացել հայկական կինոարվեստի պատմությունն ուսումնասիրող մասնագետների ուշադրությունից: Նախախորհրդային շրջանի հայկական կինոյին վերաբերող սակավաթիվ ուսումնասիրություններում առավելապես անդրադարձ է կատարվում Առաջին աշխարհամարտի նախօրեին Հայաստանի տարածքում գործած կինոթատրոններին¹⁹: Այն փաստը, որ Հանրային կրթության և արվեստի նախարարությունը կինոցուցադրումների խնդրով հարցում էր կատարում հենց Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի ղեկավարներին, մեզ հնարավորություն է տալիս կարծիք հայտնել, որ տվյալ շրջանում կինոթատրոններ էին գործում միայն նշված երեք քաղաքներում: Դրանց հստակ թիվը մեզ չի հաջողվել պարզել:

Ինչպես տեսնում ենք, Հանրապետության ներքին կյանքի կայունացմանը զուգընթաց՝ ՀՀ իշխանություններն արվեստի բնագավառը և, մասնավորապես, թատերական բեմադրություններն ու կինոցուցադրումները հսկողության ենթարկելու քայլեր էին կատարում:

Գավառներում թատերական ներկայացումներն ու մյուս հրապարակային միջոցառումները, ինչպես նշել ենք, թույլատրում էին գավառային կոմիսարները և տեղական ինքնակառավարման մարմինները: Միշտ չէ, որ կատարված դիմումները դրական պատասխան էին ստանում: Այսպես՝ 1919թ. մայիսին Նոր Բայազետի կոմիսարը մերժել էր երիտասարդ կոմունիստների Նոր Բայազետի «Սպարտակ» կազմակերպության անդամների՝ ներկայացում կազմակերպելու դիմումը: Չնայած արգելքին՝ երիտասարդները ներկայացման ազդագիրը փակցնում են քաղաքում: Սրա հետևանքն այն եղավ, որ խմբի անդամները բացահայտվեցին (դերասանական կազմում նրանք էին ընդգրկված)²⁰:

ՀՀ ներքին գործերի նախարարի օգնական Սարգիս Մանասյանի կարգադրությամբ 1920թ. մարտին նախարարությանը կից կազմվեց Քաղաքային ինքնավարությունների կանոնադրությունը վերամշակող հանձնաժողով (նախագահ՝ Հ. Մելքումյան): Հանձնաժողովի ապրիլի 29-ի թիվ 7 նիստում հաստատվեց քաղաքային ինքնավարությունների մուտքերի, ծախսերի, նախահաշիվների և հաշիվների կանոնադրությունը: Ինքնավարությունների եկամուտների գոյացման աղբյուրների թիվում (հոդված 9) նշվում էին նաև հասարակական հանդեսներն ու զվարճությունները, այն է՝ թատերական ներկայացումները, կինոցուցադրումները, համերգները, երեկոյթները, ցերեկոյթները, ցուցահանդեսները, զբոսանքները և այլն²¹: 1920թ. մայիսյան հակապետական ասպետության պատճառով հանձնաժողովի աշխատանքներն ընդհատվեցին (հանձնաժողովի վերջին՝ 10-րդ նիստը գումարվեց 1920թ. հունիսին): Այդուհանդերձ, հանձնաժողովի որոշումները կիրառություն չունեցան: Հայաստանի Հանրապետությունում մշակութային միջոցառումների մասին օրենքի բացակայության պայմաններում միջոցառումների տոմսերի գնահատումը շարունակում էր կատարվել ռուսական նախկին օրենքներով²²: 1920թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմն ու դրան հաջորդած ՀՀ խորհրդայնացումը, ի թիվս այլ աշխատանքների, ընդհատեցին նաև քաղաքային ինքնավարությունների լիազորությունների հստակեցման ու ունեցած իրավունքները (այդ թիվում՝ արվեստի բնագավառում) գործնականում կիրառելուն ուղղված քայլերը:

Արվեստի ոլորտի միջոցառումների որակի բարելավման տեսակետից մասնավորապես 1920թ. աշնանը արդյունավետ գործունեու-

թյուն իրականացնելու փորձ կատարեց Հանրային կրթության և արվեստի նախարարության Արվեստի բաժինը, որը սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը ղեկավարում էր ճանաչված գրող Դերենիկ Դեմիրճյանը²³:

Մինչև 1920թ. սեպտեմբերը սուկ թղթի վրա գոյություն ունեցող Արվեստի բաժինը Դ. Դեմիրճյանի ղեկավարությամբ սկսեց կազմակերպված աշխատանքներ իրականացնել: Անցկացվեցին տարբեր դասընթացներ, որոնք վարում էին ժամանակի ճանաչված մտավորականներից շատերը: Այսպես՝ սեպտեմբեր-նոյեմբերին բաժնի կազմակերպած դրամատիկական դասընթացներում դասավանդել են՝ Վարդան Միրզոյանը (վարիչ և դասատու), ուսուցիչ Դերենիկ Դեմիրճյանը, պարուսույց Սուրեն Մխիթարյանը, հոգեբանության ուսուցիչ Արշավիր Շավարշյանը: Նոյեմբերին բաժնի խմբավարական դասընթացներում պաշտոնավարում էին «թեոդիայի դասատու» Սարգիս Բարխուդարյանը և «դաշնակի դասատու» Աննա Աբգարյանը²⁴: Ավելորդ չէ նշել, որ այս դասընթացները տեղի էին ունենում 1920թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ վտանգված էր պետության անկախությունը: Սակայն պատերազմի և ՀՀ խորհրդայնացման պատճառով եղած ծրագրերի հիմնական մասն անկատար մնաց²⁵: Որոշ ծրագրեր էլ հետագայում կյանքի կոչվեցին խորհրդային իշխանությունների կողմից:

Այսպիսով, սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում արվեստի բնագավառի նկատմամբ գրաքննություն չկար: Այդուհանդերձ, միջոցառումների նկատմամբ փաստացի պետական վերահսկողություն էր իրականացվում: Դա առանձնապես նկատելի էր 1919թ. գարնանից սկսած: Պետական թատրոն, կոնսերվատորիա, թանգարան հիմնելու փորձերին զուգահեռ՝ արվեստի միջոցառումները պետական հսկողության ենթարկելու քայլեր են իրականացվել: Կարճատև գոյությամբ պայմանավորված՝ ՀՀ-ում արվեստի բնագավառը կանոնակարգող օրենք չի ընդունվել: Այս ոլորտը կարգավորվում էր Համառուսաստանյան ժամանակավոր կառավարությունից ժառանգված օրենսդրության հիման վրա:

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, արվեստ, քաղաքականություն, օրենք, ներկայացում, համերգ, թատրոն, կինո:

SUMMARY

Hamo Sukiasyan

PhD in History, Associate Professor

On Some Issues of the State Policy in the Field of Art in the Republic of Armenia (1918-1920)

After the independence of Armenia in May 1918, the cultural sphere of the Republic was regulated by the legislation of the Provisional All-Russian Government. During the two and a half years of existence of the Republic of Armenia no law regulating this sphere was adopted. The permission for cultural events was reserved for the Ministry of Public Education and Culture. In the provinces, this function was carried out by provincial commissars and local autonomies. In the first few months of independence there were no obvious facts about the State's control over the sphere of art.

Based on the newly found documents the current study addresses the policy of the Armenian authorities regarding the sphere of art. It is presented how attempts were made to establish a state theater, a conservatory and a museum. Parallely, programs were developed to impose state control over the theater performances, music and cinema. Due to the short-term existence of the Republic of Armenia the majority of the programs was not realized. Some projects were later realized by the Soviet authorities.

Keywords: *Republic of Armenia, art, policy, law, performance, concert, theater, cinema.*

1. Сборник указов и постановлений Временного правительства, Вып. № 1 (27 февраля – 5 мая 1917 г.), Петроград, 1917, с. 218-219.
2. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Հ. Մուփիասյան, երկրորդ հրատ., Եր., 2009, էջ 30:
3. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Եր., 1998, էջ 22:
4. **Բ. Բ. Հարությունյան**, XIX-XX դարերի հայ թափրոնի փարեգրություն, հ. 3, Եր., 1981, էջ 423:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920թթ., Եր., 2014, էջ 269, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 109:
6. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 415, թ. 1-2, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), էջ 144-145:
7. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 155, թ. 13-15 շրջ.:
8. Նույն տեղում, գ. 360, թ. 12 շրջ.:
9. Նույն տեղում, թ. 25:
10. Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. II, Եր., 2014, էջ 373, Հ. Մուփիասյան, Նորահայր փաստաթղթեր Դերենիկ Դեմիրճյանի մասին, «Պատմաքանասիրական հանդես», 2014, № 2, էջ 196-198:
11. ՀՀ օրոք արվեստի ճյուղերի դրության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ **Գ. Վարդանյան**, Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Երևան, 2000, էջ 134-146:
12. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920թթ., էջ 268:
13. Նույն տեղում, էջ 267:
14. **С. Азизбекова**, О постановках «Аршин мал алан» на армянском и грузинском языках, "Известия" АН Азербайджанской ССР, серия литературы, языка и искусства, 1978, № 1, с. 81-83.
15. **Լ. Հ. Հախվերդյան**, Հայ թափրոնի պատմություն (1901-1920), Եր., 1980, էջ 298:
16. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 218, թ. 119:
17. Նույն տեղում, թ. 142:
18. **Դ. Դզնունի**, Հայկինոն փասը փարում, Եր., 1935, էջ 21:
19. Մասնավորապես տե՛ս **Դ. Դզնունի**, Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության, Եր., 1961, էջ 8-9, **Ռ. Նահապուկյան**, Անհայտ էջեր Հայկինոյի պատմությունից, «Ֆիլմ», Եր., 22 օգոստոսի, 1984, № 23-24, **Ա. Հ. Բախչինյան**, Հայերը համաշխարհային կինոյում, Եր., 2004, էջ 26-27, նույնի, Հայ կինո-100: էջեր նահապատմությունից. 1895-1920-ականների կես, Եր., 2012, էջ 15-18:
20. Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, Եր., 1935, էջ 136:
21. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 252, թ. 16 շրջ.:
22. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 159, մաս II, թ. 172:
23. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 355, թ. 4 շրջ., ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 1:
24. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 360, թ. 54 և շրջ., 127-130:
25. «Հառաջ», Երևան, 27 հոկտեմբերի 1920, № 234, **Հ. Մուփիասյան**, Դ. Դեմիրճյանը և Առաջին Հանրապետության օրոք արվեստի գործի կազմակերպման խնդիրը, «Էջմիածին», 2014, սեպտեմբեր (Թ), էջ 99-104:

ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի
ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՆԱԿԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊՈՒՄ

Հայաստանի առաջին հանրապետության՝ Հայաստանի համար կարևոր այդ տարիների կյանքին գրողներն անդրադարձել են ժամանակակից տարբեր հեռավորությունից: Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը պատկերում է Հայաստանի առաջին հանրապետության հոչակումը, դրան հաջորդած իրադարձությունները: Հեղինակը վեպում պատկերել է 1918-1920 թվականների Հայաստանի կյանքի գրեթե բոլոր կողմերը, հասարակական-քաղաքական տարբեր դիրքորոշումներ ունեցող, տարբեր խավերի պատկանող մարդկանց: Հայաստանի առաջին հանրապետության ծնունդն ու ընթացքը Կոստան Զարյանի բառերով բնութագրենք. «Եկել, հասել էին դեպքեր, որոնց հետ անկարելի էր չափվել»¹:

Խիստ հակասական են, սակայն, վեպի ընկալումները: 1943թ. Բոստոնում «Վարանդյան» հրատարակչությունը Կոստան Զարյանի վեպի վերաբերյալ գրած առաջաբանում նշում է. «Կոստան Զարեանի «Նավը լեռան վրայ» վեպը, որը պատկերում է հայ ժողովրդի թափած ճիգը, ծով արեան գնով 1918թ. Մայիս 28-ին կերտած իր անկախ հանրապետության պահպանման ի խնդիր»²: Իսկ Կ. Սերեբրյակովը գրում է. «Այնտեղ («Նավը լեռան վրայ» վեպում-Ա.Ս.) պատմվում է նախահեղափոխական դժվարին տարիներին Հայաստանի ճակատագրի, բազում ազնիվ մտավորականների սրտում բույն դրած «ազգային ռոմանտիզմի» խորտակման և հայ աշխատավորների հեղափոխական ինքնագիտակցության ձևավորման մասին»³: Խորհրդային գրաքննության արդյունքում, ի թիվս շատ ստեղծագործությունների, Կոստան Զարյանի վեպը ևս ենթարկվում է գրաքննության, և կատարվում են էական փոփոխություններ: Գրաքննողների շարքում ակտիվ պայքար մղողներից էին Գիտությունների ակադեմիայի աշխատակիցներ Է. Թոփչյանը և Հ. Գրիգորյանը, որոնց պատճառով Հայպետհրատի տնօրենը

վեպում փոփոխություններ կատարելը համարեց հրատապ խնդիր: Գրաքննությունը փորձում է հավատարիմ մնալ ժամանակի գաղափարախոսությանը և ամեն հնարավոր պատրվակով շեշտել Դաշնակցության մեղքը երկրի քաղաքական կյանքում: Է. Թոփչյանը գրում է. «Կոստան Զարեանը ճշմարտացի եւ ցայտուն գոյներով պատկերել է ժողովրդի սոսկալի վիճակը. քաղցը, սովամահուփուներ, կամայականութիւնը դաշնակցութեան տիրահոչակ տիրապետութեան շրջանում (ընդգծումը մերն է-Ա.Ս.): Անընդհատ պատերազմները եւ ազգամիջեան կոիւները հիւժեւ, քայքայել էին ժողովրդին եւ տնտեսապէս եւ բարոյապէս»⁴: Թոփչյանին զայրացնում է հատկապես այն հանգամանքը, որ վեպի առաջին հրատարակության մեջ Կոստան Զարյանը անտեսում է կոմունիստների կատարած «հերոսական աշխատանքը» հայ ժողովրդի լուսավոր ապագայի համար⁵: Նա հանդես է գալիս նամակներով, որոնցով փորձում է «դարձի բերել» Կոստան Զարյանին՝ պախարակել դաշնակներին, դառնալ կոմունիստ գրող, վերանայել վեպը, կատարել փոփոխություններ⁶: Թոփչյանը ամբողջ քննադատությունը կառուցում է դաշնակցության՝ կուսակցությանը «ըստ արժանվոյն» չպախարակելու հարցի շուրջ: Նրա գնահատմամբ վեպը թերի է, քանի որ ամեն տողում չկա քննադատություն և հալածանք Դաշնակցության նկատմամբ: «Վեպի գլխատր հերոսները եւ ոչ մի չափով չեն դատապարտում Դաշնակցութեան արկածախնդրական տակտիկան: Ընդհակառակը, գլխատր հերոսի հետ միասին, վեպի կարեւոր անձերը տոգորուած են այդ արկածախնդրական մտայնութեամբ, որի համար եւ պայքարում են: Վեպը հիմնական իր սկզբունքներով քաջազնունիական է⁷», - գրում է կոմունիստների պաշտպան և Դաշնակցության թշնամի մեկ այլ գործիչ՝ Հր. Գրիգորյանը: Հենց այս երկու գործիչների՝ Է. Թոփչյանի և Հ. Գրիգորյանի ջանքերով իրագործվեց Զարյանի վեպի երևանյան հրատարակությունը, փոփոխությունները ցանկալի դարձան իշխող հասարակարգի և նրա անդով պաշտպանների շնորհիվ: Հր. Գրիգորյանի նամակներում զգալի է անհանդուրժողականությունն ու ատելությունը Դաշնակցության նկատմամբ և մեծ սերն ու նվիրումը դեպի բոլշևիկները և կոմունիզմը: Հր. Գրիգորյանը գրում է. «Ուշագրաւ է, որ Ալեքսանդրապոլում գտնուող Հէրեանը ծանր ապրումներ ունի. «Վերջին երկու օրուայ տեսածները եւ ապրումները թոյնի նման դեռ շարունակում էին շրջել նրա արեան մէջ» (էջ 276), Ինչո՞ւ: Որվիտետեւ նա համոզուած է, որ Բրեստ-Լիտվսկու դաշնագրութեամբ Լենինը լքել է հայերին: Որովիտետեւ նա պնդում է վիճելիս, թէ «Մենք կուում ենք մեր անկախութեան համար, աւելի լաւ է պատուով մեռնել, ոչնչանալ, քան

րյանը-Ա.Ս.) ազատ պայմաններում մէջ, ազատ ընտրութեամբ եւ հասուն տարիքին գրածը կը յարդարէ այսօր, կը ժպրհի պատմական նոր իմաստ տալ անպատմելի բաներու: Այն՝ ինչ որ ցայժմ կ'ընէին Հայաստանի գրողները ու չեն ըներ այսօր»¹⁵: «Լեւրան վրայի հին «նաւը» խորհրդայնացած նաւ մըն է հիմա եւ խորհրդայնացած բոլոր բաներուն պէս խորհուրդէ պարպուած առարկայ մը»¹⁶: Կոստան Զարյանը այդ օրերի իրականության պայմաններում չէր կարող պատասխանել նման մեղադրանքներին, սակայն փոքրինչ ուշ տեսնում ենք նաև նրա պատասխանը. «Ես ուզում եմ իմացվի, որ «Նավի» երկրորդ հրատարակությունը լույս է տեսել ճնշման, խաբեության և սպառնալիքի տակ: Երկրորդ հրատարակության վերջին մասը բոլորովին ավելորդ է, ինչպես նաև շատ փոփոխություններ վեպի ներսում: Ուզում եմ իմանան, որ իմ գրած վեպը այն է, ինչ որ տպված է արտասահմանում (շատ աննշան փոփոխություններով) և իմ մահից հետո, երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակությունը»¹⁷: Իսկ Թորոս Թորանյանին հանդիպելիս Կոստան Զարյանը պատմում է. «Հրաչեայ Գրիգորեանը եկել է ինձ մօտ, որ անի մի քանի անկարեւոր սրբագրութիւն: Համաձայնուել եմ: Ու հետոյ, առանց ինձ իրազեկ պահելու, կորցրել է չափը եւ իր ուզածի նման փոփոխություններ մտցրել: Մնացել եմ կատարուած իրողութեան առաջ: Հիմի ինչ անել: Յեղափոխութիւն յարուցել այս հարցի համար»¹⁸:

Վարագ Առաքելյանն էլ Կոստան Զարյանին հանդիպելիս հարցնում է, թե ինչու է այդ շքեղ վեպը փոփոխել, հայ ժողովրդի աչքի առաջ նենգափոխել. «Կոստան Զարյանը հոգու խորքից եկած մի դառնակակիծ բողոքով ասաց, որ ինքը վեպին ձեռք չի տվել, որ այդ նենգափոխությունը կատարել են Հրաչյա Գրիգորյանը և Թոփուզյանը»¹⁹: Քիչ հայտնի է նաև այն, որ Վահան Թոթվենցը մոտենում է Հայաստանից մեկընդմիջտ մեկնել ցանկացող Կոստան Զարյանին և ասում. «Գնում ես, գիտեմ, որ չես վերադառնալու: Մի բան եմ խնդրում և խնդրում եմ, որ լավ հիշես. մեր անունից ինչ էլ կարդաս քո հասցեին, չգարմանաս ու չհավատաս: Դու լավ գիտես, թե ինչ երկրում ու ինչ պայմաններում ենք ապրում»²⁰:

Ուշագրավ է, որ 1962թ. իրանահայ բանաստեղծ Դևին (Մարգար Լարաբեկյան, 1901-1975) գրած նամակում Կոստան Զարյանը գրում է. «Հայաստանը իմ սեփական աչքերով տեսայ, քննեցի, զննեցի, եւ այն է ինչպէս ներկայացրել եմ: Գարնան հաւանական է, որ նորից այցելեմ Հայաստանը եւ պիտի ուզէի, որ դրսի ականատար եւ հայրենասէր մտաւորականներից շատերը միանային ինձ եւ իրենց աչքերով տեսնէին այն մեծղի գործը, որ կատարում են

այնտեղ»²¹: Այս առիթով Ժ. Քալանթարյանը գրում է. «Կոստան Զարյանը երկիրը դիտում է պետություն կառուցելու ջանքերի մեջ: Նավը հենց այդ պետության խորհդանիշն է: Գրողը չի ուզում դատապարտել, նա փորձում է բացատրել, ըմբռնել իրավիճակը, որի մեջ հայտնվել էր Հայաստանը»²²:

Կոստան Զարյանի վեպի շնորհիվ է նաև, որ այսօր պատկերացում ունենք առաջին հանրապետության մասին, և շնորհիվ վեպի վերաբերյալ քննադատությունների այդ օրերի պատկերը ավելի ցայտուն է դառնում: Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանը, ով հետագայում Կոստան Զարյանի հետ ջերմ հարաբերություններ էր հաստատել, վեպի վերաբերյալ իր տեսակետն է հայտնում՝ նախ նամակով (1943), ապա նաև գրախոսություն է գրում «Հայրենիքում» (1944):

Սիմոն Վրացյանի դիտողությունները, անհամաձայնությունը վեպում առկա իրականության պատկերման ոչ լիարժեք ընկալման ու ներկայացման վերաբերյալ էին: Հայաստանի առաջին հանրապետության ծնունդն ու ընթացքը դժվար է եղել, բայց ըստ Վրացյանի՝ 1919թ. Հայաստանը չի կարելի համեմատել 1920թ. Հայաստանի հետ: Մեկ տարում կատարվել էին էական փոփոխություններ, ու տեղաշարժը նկատելի էր: Մինչդեռ, ըստ Սիմոն Վրացյանի, Կոստան Զարյանը չի պատկերում այդ փոփոխությունները. «Ո՛ր է, ուրեմն, Դյուցազնավեպը, ո՞ր են հերոսները, ո՞ր է այն ամէնը, որից ծնունդ առաւ, ապրեց ու զարգացաւ հայոց պետութիւնը: Վերջ ի վերջոյ, մեր օրերի պատմական մեծագոյն դէպքը-հրաշքը- հայոց պետութեան ստեղծումն է, որ գլուխ եկաւ ժողովրդի եւ անհատների ճիգերով ու շատերի յօժարական ինքնազոհումով: Բոլշեւիկները շարունակեցին ստացած ժառանգութիւնը, եւ կը համաձայնիք, [անշուշտ], յուսամ, ինձ, որ հերոսական ու դիւցազն[եպ]ական ոչինչ կայ նրանց գործի մէջ: Ի դէպ՝ վեպը այս կէտն էլ թողնում է խորհրդաւոր անորոշութեան մէջ» (22.06.1943)²³: Սիմոն Վրացյանը ընդհիմանում է հատկապես իրականության պատկերման զարյանական «մեղանշունների» դեմ. «Վեպը չի ներկայացրել ու բաւարար չափով չի հիմնաւորել այն օրերին Հայաստանում ոգին-հայրենասիրութիւն, զոհաբերութիւն, անսահման նուիրում ու խանդավառութեան բարձր ոգին, այն արտասովոր տենդը, հոգեկան թռիչքն ու պաֆոսը, որ յատուկ էր Հանրապետութեան շրջանին եւ որով միայն կարելի էր բացատրել Հայկական պետութեան ստեղծման հրաշքը [փաստօրէն՝ «անձեւ քաոսից»]²⁴: Ոչ միայն նամակում, այլև Զարյանի վեպի վերաբերյալ գրված գրախոսականում Սիմոն Վրացյանը հակադրվում է գրողի պատկերած «իրականության» դեմ. «Վեպի

ֆոնը, գրեթե ամբողջապես, մոայլ ներկերով է գունաւորուած, ինչ որ իրական չէ բնաւ. Զարեանի առած պատմական շրջանում, Հայաստանում միայն ւեր ու խուժան, պատերազմ ու գաղթականութիւն չէ եղած, այլեւ պետական կառուցման ու շինարարութեան պաֆոս»²⁵: Անշուշտ, հեշտ չի եղել կյանքը 1918-1919թթ. «Աղբ, յողոֆորմ, քրտինք: Կարծես թե թշվառութեան անկյունից վայր թափված այդ մարդկութեան վրայից ծանր ոտքերով մի հսկա էր անցել ամեն ինչ ճզմելով: Բոլոր անկյուններից՝ հողի գույն առած, մոմ կտրած դեմքեր էին դուրս ցցվում: Կմախքացած փոքրիկ երեխաներ: Խորտակված կրծքերով, դեղնած ձեռքերով, ջերմից չորացած կանայք: Կուչ եկած, կծկված, գալարված տղամարդիկ» (47): «Վրացիները փակել են սահմանը, որպէսզի Բաթումից Հայաստանին հաց չհասնի: Երեւանի փողոցներում օրը մի քանի հարիւր մարդ է մեռնում: Բժաւոր տիֆ, մալարիա, սով եւ ամէն տեսակ համաճարակներ: Ծակատների վրայ ոտաբոպիկ, կիսամերկ հայ զինուորները կուում են լաւ զինուած թշնամիների դէմ: Կարսը ընկնելու վրայ է: Ալեքսանդրապոլի մօտ թեղանօթը անդադար ունում է»²⁶: Սիմոն Վրացյանի համար ցավալի է հատկապէս մեկ տարում ծանր վիճակից դուրս գալու հսկայական փորձերի՝ Զարյանի կողմից չզնահատվելու հանգամանքը. «Ձեր տպաւորութիւնները 1919-ի առաջին շրջանի Հայաստանից են, մինչդեռ մի տարուայ մէջ Հայաստանը կերպարանափոխուեց... որովհետեւ, անտարակոյս, «բազում գործք արութեան գտանէին գործեալ եւ ի մերում աշխարհիս»²⁷:

Սիմոն Վրացյանի պատասխան նամակը ևս ներկայացնում է հայութեան՝ այդ օրերի կյանքը: Մեկ նամակում ամփոփված են 1918-1920թթ. Հայաստանի կարևոր ձեռքբերումները. «Ինչու Հէրեանը, փոխանակ բուլվարում եւ խուժանի հետ ժամանակ անցնելու, գէթ մի անգամ չմտաւ, օրինակ, գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի նախարարութիւնը, որ մի քանի տասնեակ բարձրորակ հայ մասնագէտներ, շատերը փայլուն գիտնական համբաւով, ծրագիրներ էին կազմում Հայաստանի վերաշինութեան, քաղաքների եւ գիւղերի վերակառուցման, ոռոգումի, ելեկտրականացման, երկրագործութեան զարգացման, նոր մշակոյթների ներմուծման, երկրագործական մեքենաների ներմուծման եւ այլն: 1920-ին Հայաստանը աւելի հող էր ցանել, քան պատերազմից առաջ: Ու եւ առհասարակ, կեանքը այն չէր, ինչ որ Հէրեանն էր տեսած: Հայ մտաւրականութեան մեծ մասը Հայաստանից դուրս էր, եւ Հայաստանում Քաւուրներ չկային (կոմս Քաւուր, քաղաքական գործիչ, իտալական միասնութեան թագավորութեան հիմնադիրներից մեկը), կային միայն Արամի, Խ. Կարճիկեանի, Մինաս Բերբերեանի, Սի-

լիկեանի, Դրոյի, Նազարբեգեանի, Թամանեանի եւ բազում այլոց պէս հայրենասէր ու անձնագոհ մարդիկ: Այս բոլորը ճիշդ է, բայց ճիշդ է եւ այն, որ սրանց աշխատանքով ու կեանքի գնով ստեղծուեց պետութիւն»²⁸: Զարյանը գրում է. «Վառելիք չկար, վագոններ չկային, շոգեքարշ մեքենաներ չկային (358), կամ «Պատին կացրած կոչերը և հայտարարութիւնները անձրկից հետո վայր էին թափվում: Թուղթը այլուր էր հոտում: Գաղթականները նետվում էին նրանց վրա, իրենց բերանը լցնում, ծամում (356): Վրացյանը հակադրում է. «Այդ ժամանակները Հայաստանում եւ վագոններ կային, եւ շոգեքարշ մեքենաներ. գաղթականներ համարեա չկային, եւ կովերը յայտարարութեան թղթի ալիւրները չէին ուտում»²⁹: Կոստան Զարյանը գրում է. «Երկու շաբաթը մի անգամ կառավարութիւնը փոխվում էր» (247): Սիմոն Վրացյանը հակադրում է. «Պարլամենտի նիստերը շարունակում էին գիշեր եւ ցորեկ»: Պարլամենտը մայիսից մինչեւ դեկտեմբեր արձակուրդի մէջ էր եւ հագիւ երկու-երեք բացառիկ նիստ է ունեցել, այն էլ շատ կարճ: Կառավարութիւնը չի փոխուել երկու շաբաթը մի անգամ»³⁰: «Հաւատացէք, որ ոչ անձնական արշինով եմ մօտենում գործին (իբրեւ ժամանակի համեստ դերակատարներից մէկը), ոչ էլ՝ կուսակցական: Ինձ համար Հայաստանի Հանրապետութիւնը այլեւ պատմութիւն է եւ մէջս քաջութիւն ունեւ դէպքերի ու դէմքերի վրա նայելու սուկ պատմական հայեացքով»³¹: «Երթական խնդիրներն էին մեր առջև՝ հողաբաժանումը գյուղացիներին նոր՝ աշխատատրական սկզբունքներով, գաղթականների տեղաւորումը լքեալ գիւղերում, սերմնացուի եւ լծկանների հայթայթումն ու բաշխումը, ինչպէս նաեւ երկրագործական մեքենաների ու գործիքների մատակարարումը արտասահմանից, այգեգործութեան, բամբակի, ծխախոտի մշակութեան կաթնատնտեսութեան ու մեղուարուծութեան զարգացումը, ջրային ուժի եւ հանքերի հետազոտութիւնը եւ այլն»³²:

Սիմոն Վրացյանը Հովհաննես Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս» գիրքը ևս քննադատու է իրականութեան դեմ մեղանշումների համար. «Հոգեկան ինչ զարհուրելի փոթորիկներ ապրած պիտի լինի այդ մարդը՝ հրատարակելու նման մի գիրք, որը, նախ և առաջ ինքնախարազանում է, համակ ինքնանվաստացում և ինքնասպանութիւն»³³: Հովհաննես Քաջազնունու այն քննորոշումը, թե ՀՀ խորհրդարանը խորհրդարան չէ, այլ խորհրդարանի ծաղրանկար, որ ժողովուրդը պետական կյանքի համար անպատրաստ էր, որ տգետ ու անփույթ էր իր քաղաքական իրավունքների հանդեպ, Սիմոն Վրացյանը հերքում է, ինչպէս հերքում է Կոստան Զարյանին. «Չկա հայ իրականութեան մեջ ուրիշ

գիտակից ու կազմակերպված ուժ, որ պատասխանատու դեր ստանձնեց Հայաստանի քաղաքական կյանքում, և մենք ստիպված եղանք, սեղմված ատամներով «մեր վրա վերցնել անբաժանելիորեն ամբողջ իշխանությունը, մեր վրա վերցնել նաև ամբողջ պատասխանատվությունը»³⁴: Բայց նշենք՝ այն շրջանի մասին, որին անդրադառնում է Կոստան Ջարյանը, գրում էր նաև Սիմոն Վրացյանը (1920) և, ընդ որում, նույն կերպ, սակայն հետագայում քննադատում է հենց Ջարյանին. «Անհաշի զոհեր տրուեցին, աննկարագրելի տանջանքներ բաժին ընկաւ նրան (Հայաստանին-Ա.Ս.): **Հայաստան երկիրը վերածուեց լայնածաւալ որբանոցի** (Հիշենք, որ Ջարյանը ևս այդ օրերի Հայաստանը ներկայացնում է իբրև որբանոց և «Նավում», և «Բանկոպը և մամուլի ոսկորները» վեպերում, Սարգսրապատը ներկայացնում է որբերով լի մի որբանոց) ու հիւանդանոցի, ուր ամէն օր հազարաւոր դիակներ էին թաղոււմ... Բայց հայ ժողովուրդը իր սքանչելի կենսունակութեամբ ուղղեց իր կորացած մէջքը... - Ծագում էր հրաշալի Արշալոյսը Ազատութեան»³⁵: **«Անձեւ քառս եւ ւաերակների կոյտ»**, - այս էր վիճակը Հայաստանի³⁶ բառի իսկական առումով «անձեւ քառսից եւ ւաերակների կոյտից» երկիրը հետզհետէ սկսեց ձեւ ու կերպարանք ընդունել: Հազիւ չորս ամիս անցած արդէն «կեանքի երկաթէ օրէնքի ոյժով» տաճիկները հեռացան Կովկասեան Հայաստանի սահմաններից³⁷:

Կոստան Ջարյանը Կովկասում էր 1919-ի հուլիսից՝ իբրև իտալական «Il Nuovo Giornale» թերթի հատուկ թղթակից: Այս ճամփորդության ընթացքում մի քանի օրով լինում է Երևանում, և նրա աչքերում մնացել են Հայաստանի որբությունն ու լքվածությունը, միայնակ մնացած ծանր վիճակը, և գորող արտապատկերել է 1919-ին աչքերում պահածը: Իսկ Սիմոն Վրացյանը այդ ծանր շրջանը հաղթահարողներից է, նա աչքերում պահել է 1918-1920թթ. կատարած ահռելի աշխատանքի շնորհիվ վերականգնված Հայաստանի պատկերը: Հայաստանի առաջին հանրապետության ծնունդի ու անկախության հռչակման մասին պատմելիս Սիմոն Վրացյանը գրում է. «Ով տեսել էր Երևանը 1920-ի Մայիսին, չի կարող չհամաձայնուել ինձ հետ, որ մեռած կարծուած Հայաստանը յարութիւն էր առել»³⁸:

Կարծում ենք, Կոստան Ջարյանը կատարել է իր առջև դրած խնդիրը՝ ցույց տալով հայության բախտորոշ ժամանակի ոչ թե պատմությունը, այլ պատմության մեջ ոգու պատմությունը: Պատահական չէ, որ Հերյանը գալիս է հայրենիք և նախ մասնակցում է հայության մղած պայքարին, վիրավորվում, ապա կարողանում է իրագործել իր ծրագիրը: «Հայրենիքը միայն անուշ հիշատակ չէ, այլև

արյունի հետ շրջող հոգեկանություն (ընդգծումը մերն է-Ա.Ս.), առանց որի աշխատանք, հարստություն, դիրք և փառք դառնում են անիմաստ» (12):

2. Սիմոն Վրացյանի քննադատության հաջորդ կետը գործող կերպարների՝ դրսից բերելուն է վերաբերում: Վեպում առկա մոայլ պատկերը, ֆոնը, ըստ Վրացյանի, ավելի թանձրացնելու, ցայտուն դարձնելու համար Ջարյանը բոլոր դրական կերպարներին դրսից է բերում (Հերյան, Թումանյան, խորհրդավոր հնդկահայը (Նկատի ունի Պետրոս Մարկին-Ա.Ս.)). «Ներսիները անճարակ ու խեղճ մարդիկ են: Տակը քնչ մնաց: Ձեր դրսից եկած հերոսները Հայաստանում ո՛չ մի լուսաւոր բան չգտան: Բայց կարող էին գտնել: Ինչո՞ւ, օրինակ, Հէրեանը ներկայ չեղաւ Հայաստանի համալսարանի բացման հանդէսին: Յետամնաց եւ աշխարհի լոյսից զրկուած եւ աթարի ծխի մէջ խեղդուող Հայաստանը առաջին անգամ իր պատմութեան մէջ, [ազգային] պետական համալսարանն էր հիմնում, հայ անվարտիք մտաւորականութեան խանդավառ ջանքերով, ամենափայլուն հայ դէմքերից [մտավորականներից] մէկի՝ կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի նախաձեռնութեամբ և Հէրեանների ու Մարկ Պետրոսների հոգեկից [արյունակից ներկայացուցիչ] փորձ. Ի. Դամբարեանի տեսողութեամբ: Ես կարծում եմ, Հէրեանը բոլորովին այլ ներշնչումներ կը ստանար այդ հանդէսից»³⁹: Կարծում ենք՝ Կոստան Ջարյանին իր գլխավոր հերոսի միջոցով ներկայացնում է հային, որը գիտակցեց իր հիմնական առաքելությունը՝ հայ մնալն ու հայի համար գործելը, և Հերյանը գալիս է ոչ թե փրկելու, այլ՝ փրկվելու, դառնալու լիարժեք հայ, ով իր եռանդն ու ջանքը պիտի ծառայեցնի հայրենիքին («Մի անբացատրելի անբավականություն ծարավի նման նրան տանջել էր, տեղից տեղ նետել, մշտական անհանգստության մատնել» (12): Հայրենիքն ու հայրենորդին մեկ միասնություն են: Ինչպես գրում է Կոստան Ջարյանը, հայրենիք գալով՝ Հերյանը (հայը) պետք է գտներ սեփական անահատականության միությունը (12): Ե. Տեր-Խաչատրյանը գրում է. «Արա Հերյանը, անշուշտ, հայ ժողովրդի հավաքական կերպարն է, նոր հայի, երկիր կերտող և ամեն ինչ մեծ գաղափարին զոհող հայ մարդու մարմնացում»⁴⁰: Երբ Հերյանը տեսնում է հայրենիքին օգնելու եկած մարդկանց, ուրախանում է՝ մտածելով. «վազել, եկել են իրենց տանջող երազի ետևից, վերագտել են իրենց մենակության հետ խոսող աշխարհը (ընդգծումը մերն է-Ա.Ս.)...» (53): Կարծում ենք այս խոսքերը լիովին համոզում են մեզ, որ Հերյանի կերպարով ոչ թե շեշտվում է «ներսի ու դրսի» հայերի տարբերությունը, այլ հայի ու հայրենիքի մեկ ամբողջություն լինելու, գենետիկ կանչի խորհուր-

դը: Դրսում ապրող հային տանջել է հայրենիքի կարոտը, երազը, գալով հայրենիք՝ նրանք գտնում են այդ երազի բացատրությունը. ամբողջանում են, գտնում են իրենց հետ անընդհատ խոսող աշխարհը:

Վեպում կերպարները ստեղծված դրությունը գնահատում են հոռետեսությամբ, ինչպես Պերոնյանը. «Մթնոլորտը լցված է վառողով, համատարած թշվառությամբ և քաղաքական զարմանազան դեպքերով...: Մեր համեստ թատերական դահլիճը վեր է ածվել պառլամենտի, ուր գավառներից եկած անհայտ մարդիկ շեքսպիրյան ճառեր են արտասանում, մինչ ես, ամեն ինչ մի կողմ դրել և ծառայում եմ նորակազմ հանրապետությանը...» (123): Բայց սա էլ իրականության արտահայտման եղանակ է, կերպարների խոսքի, կարծիքների բազմազանությունը ներկայացնելով՝ Կոստան Ջարյանը ներկայացնում է միջավայրն ու ժամանակահատվածը: Ա. Ավագյանը անհիմն է համարում Կ. Մերեթյակովի⁴¹ այն պնդումը, թե Ջարյանի վեպը պատմում է բազում ազնիվ մտավորականների սրտում բույն դրած «ազգային ռոմանտիզմի» խորտակման և հայ աշխատավորների հեղափոխական ինքնագիտակցության ձևավորման մասին⁴²: Ժողովուրդը Ջարյանի վեպում հավատում է, որ գերտերությունները կկատարեն իրենց տված խոստումը, հայը ետ կստանա կորցրած տարածքները՝ դրանով միաժամանակ շեշտելով աշխարհի շահասիրությունն ու անարդար վարմունքը. «Ներկաները միաձայն բողոքեցին: Հայերը մեկ միլիոն զոհ էին տվել, կռվել էին բոլոր ճակատների վրա, Վիլսոնը խոստացել էր... Այլևս պատվի հարց էր Ֆրանսիայի և Անգլիայի համար» (33): Կամ «- Բայց առայժմ ծով չունենք,- վերջապես պատասխանեցին նրան:- Ավելի ուշ, երբ Դաշնակիցները վերջնական որոշում տան Հայաստանի սահմանների մասին և իրագործեն Միացյալ Հայաստանի ծրագիրը, մենք կունենանք մի նավահանգիստ Սև ծովի վրա» (54): «-Չեմ հասկանում,- ասում էր տարիքավոր, կարճահասակ մի մարդ,- չեմ հասկանում, ինչ կարիք կա ամեն բան սև տեսնել... Փարիզի մեր պատվիրակությունից նամակ է ստացվել. ասում է, Վիլսոնը հայտարարել է, որ հայկական նահանգների ազատագրումը օրերի հարց է, և ինքը՝ Վիլսոնը, սահմանների խնդիրը անձամբ կլուծի... թուրք դահիճները կպատժվեն, կողոպտված հարստությունները կվերադարձվեն, և Ամերիկան իր հովանավորության տակ կառնի Հայաստանը: Դաշնակից պետությունները խոստացել են... հանդիսավոր կերպով և իրենց խոստումը կկատարեն. այդ մասին կասկած չի կարող լինել: Պատկերացրեք, Ամերիկայի նման մի երկիր» (128): Նույն դիտարկումը տեսնում ենք Ավ. Ահարոնյանի կողմից. «Յի-

շում եմ 1920 թուի աշունը, երբ Միաց. Նահանգները արդեն մերժել էին Հայաստանի հովանավորությունը: Հայաստանի Հանրապետության Պատուիրակությունը այնուհետև փոխ առ փոխ ի խնդրի հովանավորի դիմեց Անգլիական կառավարության, որ մերժեց իր հերթին. Ֆրանսիական կառավարությունը լսել իսկ չէր ուզում. դիմեցինք Բելգիային, յետոյ Ջուիցերիային, Շուվտիային, իրեն՝ Ազգ. Ընկերակցության եւ ամեն կողմից մերժուան: Նախագահ Վիլսոն դեռ նոր յայտարարել էր Անտանտի պետություններին իր իրաւախոհութամբ գծուած Միացեալ եւ Անկախ Հայաստանի սահմանները... Եւ անմիջապէս երեսան եկաւ Ազգերի Ընկերակցութեան բացարձակ անզօրութիւնը մի արդար գործ կատարելու»⁴³:

Ջարյանը վեպում տալիս է այդ օրերի Հայաստանի ու հայի նկարագրությունը՝ լարված, ականջը մի լավ լուրի, որ պիտի բերեր Եվրոպայում բանակցությունների մասնակցող իշխանությունը: Միաժամանակ այս նկարագրությունը ընթերցողին այդ օրերի մասնակիցն է դարձնում: Ա. Ավագյանը գրում է. «Հերոսները այստեղ ավելի ինքնուրույն ու ամբողջական տիպերի են վերածված, ներկայցվող դեպքերը շատ ավելի իրական են ու հավաստի»⁴⁴:

Վեպում ներկայացվում է նաև դրամի հատման ծայրահեղ ծանր գործընթացը: Ստիպված են լինում նախ հայթայթել թուրք, այդ պատճառով Պերոնյանը գնում է Թիֆլիս, Հերյանը ևս՝ նավ գտնելու: Այսինքն՝ պետականաշինության գործընթացը ծանր ու համառ պայքարի արդյունքում է իրականանում: Դրամահատումը պետականաշինության, անկախության ապացուցման կարևոր գործոն է, և գրողը այս հանգամանքի պատկերումն էլ է կարևորում: Իսկ նավը ծով հասցնելը՝ պետականաշինության ծանր գործընթացը, ինքնուրույն ուժերով պիտի հաստատվի: Ուշագրավ է այն, որ 1918թ. Դաշնակցությունը ծրագրել է Ելենովկա գյուղում նավատորմի ստեղծել, և նավաշինությունը սկսվել է 1919թ. մայիսից⁴⁵: 1920թ. գարնանը Վրացյանը գնում է Ելենովկա և տեսնում մի երիտասարդ ծովային սպայի: Երիտասարդ սպան հպարտությամբ ներկայացնում է իր ծրագրերը, որ ռազմանավը ունենալու է երկու թեթև թնդանոթներ, հիսուն նավաստիներ⁴⁶: Սիմոն Վրացյանը իր հուշերում գրում է, որ Բեսարաբիայից եկած այս երիտասարդը Կոստան Ջարյանի նավապետ Հերյանի նախատիպն է⁴⁷: Ըստ Վրացյանի՝ սպայի ազգանունը Գարագաշյան է, իսկ «Հայաստանի Հանրապետություն» գրքում նա ներկայացված է որպես Հայաստանի Հանրապետության բանակի ծովային սպա, Սևանի նավաշինարանի պետ⁴⁸: Նշված գրքում Սիմոն Վրացյանը գրում է, որ 1920թ. Սևանի նավագնացության ոգին եղել են Ծամհուրն ու Թումանյանը⁴⁹: Թումա-

նյանի կենսագրությունը համապատասխանում է «Նավի» հերոս Թումանյանին, իսկ Ծամիուրը Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ է եղել, սպանվել է 1921թ. փետրվարյան ապստամբության ժամանակ⁵⁰: «Միքայել Թումանյանը առաջին հանրապետությունը խորհրդանշող կերպար է, և իր ճակատագիրը առաջին հանրապետության ճակատագրի ողբերգական ամփոփումն է»⁵¹: Ենթադրվում է, որ Հերյանի նախատիպը Երվանդ Գասպարյանն է (1872-1946)՝ Սևանի նավագնացության հիմնադիրներից: Երկար տարիներ ծառայել է Սև ծովում, ՀՀ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինի մանդատով եկել է Հայաստան և 1921թ. ծառայել Սևանում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանը Այսրկովկասի ճանապարհով Իրան էր տանում մի նավ՝ «Սեստրիցա Նուշա» անունով՝ Ուրմիա լճում օգտագործելու համար: Սակայն դժվարությունների պատճառով նավը թողել են Երևանի կայարանում: «Սեստրիցա Նուշա»-ն վերանվանվել է «Գեղանուշ»: Ըստ Իվան Կատակի՝ Երվանդ Գասպարյանը փորձում էր «Գեղանուշը» տեղափոխել Սևան⁵²: Հ. Աբրահամյանը գրում է. «Ե. Գասպարյանը արդարամիտ էր, ճշմարտացի և օրինակալի: Կապիտանի թուլությունը Սևանն էր: Այն տարիներին մեր նավագնացությունը երբեմն համեմատում էին որբանոցի հետ, որբերն էլ կապիտանի թուլությունն էին, նա նրանց բոլորին աշխատանքի ընդունեց»⁵³: Կոստան Զարյանը այս պատմությունը ներկայացրել է «Անցորդը եւ իր ճամբան» վեպում.

- «Լուկաշին» նան է, որ մեզ պիտի տանի Նոր-Բայազետ:

- Իսկ նաուպետը:

- Նաուպետն էլ այնտեղ է:

- Երկու նաւերի այդ պատմութիւնը՝ Հայաստանի երկու հանրապետութիւնների պատմութիւնն է:

- Իսկապէս...

- Բեսարաբիայից եկած դալկահար, լուկեաց երիտասարդ այն սպան մինակ, պատուած իր կօշիկներով, լճի ափին շինում է իր նաւը, մարմնացնում իր հայրենասիրական երազը, անաղմուկ կերպով գնում զոհում իր իդեալը պաշտպանելու համար⁵⁴:

Ըստ Ակակիո Հիկիի՝ Կոստան Զարյանը իր հերոսի՝ Հերյանի անունը վերցրել է 1910-ականների սկզբի մեկ այլ հայրենանվեր կամավորի՝ Ռուբեն Հերյանի անունից: Վերջինս անձնվեր աշխատանքներ է կատարել Արևելյան Հայաստանի որբերի համար և մահացել է 1921թ.⁵⁵:

Նշվեց՝ Սիմոն Վրացյանը չի ընդունում այն փաստը, որ Կոստան Զարյանի դրսից եկած հերոսներն են փորձում պայքարել անկախու-

թյան և ազատության համար: Բայց նկատենք, որ հայկական զորամասերի կորիզը կազմում էին ռուսական բանակում ծառայած Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատների մարտերին մասնակցած հայ զինվորները և սպաները: Նրանցից շատերը Կովկասյան ճակատում հայկական ազգային զորամասերի մեջ սկսել էին կենտրոնանալ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին⁵⁶: 1927թ. Ավետիս Ահարոնյանը գրում է. «Եթե 1917-18 թվերին ափ հափո, հեիհև հնարավոր եղավ արշավող թշնամու մահահոտ շնչի տակ այդ բանակը կազմել և ճակատի հանել, դա միայն և միայն պարտական ենք շուրջ քառասուն տարի իրար հաջորդող կամավորական խմբերի անձնուրաց ինքնագոհության: Հայ բանակը հայ ժողովրդի հոգու մեջ թառած էր և շարժվեց ու դուրս ելավ առաջին իսկ ահազանգին, երբ հնչեց՝ Hannibal ad portas»⁵⁷: «Հայկական դիվիզիայի զորամասերում հրամանատարներ նշանակվեցին ռուսական բանակի շարքերում մարտական դպրոց անցած փորձառու կադրային սպաներ: Դիվիզիայի համբարակի (ինտենդանտ), բժշկի, անասնաբույժի և ճարտարագետի պաշտոններին նշանակվեցին դասային աստիճանավորներ՝ Տրոիցկին և Տեր Միքայելյանը, բժիշկ Պրիբիլսկին և փոխգնդապետ Կելլերը»⁵⁸: «Բացի զորամասերից Հայաստանի Հանրապետության բանակի կազմի մեջ էին մտնում նաև Սևան լճի նավատորմիկը և Կարսում տեղաբաշխված ավիացուկաւորը»⁵⁹:

Սևանա լճի նավատորմիկը, որը զբաղվում էր ուղևորների և ռազմաբեռների փոխադրմամբ, սկզբում բաղկացած էր շարժիչներով սարքավորված մի քանի թիանավերից և «Աշոտ Երկաթ» մինչև 1000 փուֆ բեռնատարողությամբ ռազմաբեռնատար երկկայմ առագաստանավից: Վերջինիս վրա տեղադրված էր մեկ թնդանոթ, երկու գնդացիր և լուսարձակ⁶⁰:

«Գեղանուշը» պետք է մարտեր մղեր Ուրմիա լճում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն ընկած էր Երևանում և հետո դարձավ Սևանի նավագնացության զարդը, և, ի պատիվ ժողովմխորհի նախագահի, վերանվանվեց «Լուկաշին»⁶¹: Հետագայում նավը տեղափոխվել է Սևան և երրորդ անգամ վերանվանվել «Միկոյան»: Այս անվանումները ընդլայնում են նավերի ներքին խորհուրդը՝ ներկայացնելով Հայաստանի պատմական երեք շրջափուլերը՝ ռուսական տիրապետություն, ինքնուրույնության շրջան, բոլշևիկյան կարգեր⁶²: «Այժմ էլ պահպանվում են մի քանի լուսանկարներ այդ նավի ցամաքային ուղևորությունից. եզներ լծած արտասովոր թափոր, մարդկանց բազմություն և միջահասակ, ամրակազմ կապիտանը կարգադրություն անելիս»⁶³:

3. Փետրվարյան ապստամբության օրերը, բոլշևիկներից հայության փախուստը ներկայացնում են Կոստան Զարյանը, Սիմոն Վրացյանը: Վերջինս ներկա էր Զանգեզուրի հայության՝ Արաքսն անցնելու փորձերին: Տիրում էր խառնակ մի վիճակ, ուր մարդիկ չէին համակերպվում հերթով կանգնելուն, լաստերին սպասելուն, և գազանային ծայներով, իրար հետ վիճելով, փորձում էին պարզապես ելք գտնել փախչելու: Այդ անկանոն ու անկազմակերպ վիճակին չդիմանալով՝ Սիմոն Վրացյանը ստիպված փայտով հարվածում է մարդկանց, որ լռեն, հանգստանան, սակայն ապարդյուն: «Անասնական վախն էր խելակորոյս դարձրել նրանց: Ամիսներ շարունակ լարուած նետարդերով, Արասի կիզիչ արեւի տակ անապաստան եւ անօթի, երբ լեռան միս կողմից որոտում էին բոլշեւիկեան թնդանօթները, երբ ամէն վայրկեան կարող էին հարձակման ենթարկուել, վարարած գետին հասած, որտեղից մի քանի հարիւր քայլի վրայ էր Պարսկաստանի ազատ հողը-ինչու գարմանալ, որ նրանք կորցրել էին իրենց համբերութիւնը եւ համբերութեան հետ նաեւ մարդկային բանականութիւնը»⁶⁴: Հիշենք, որ 1943-ին գրած Կոստան Զարյանի «Նաւը լեռան վրայ» վեպը ավարտվում է հենց այս տեսարանով, երբ մարդիկ սարսափած փախչում են, և մի պահ Հերյանն էլ միանում է ամբոխին, ապա նորից դառնում է քաղաք. «Ահագին աղմուկ. Ամէնքը խենթացած պոռում ու ճշում էին: Պառաւ կանայք եւ սարսափած երեխաներ բարձրածայն լաց էին լինում: Տղամարդիկ՝ ջրայնացած, դեղնած՝ ուրիշներին հրելով, հրմշտկելով ճանապարհ էին բաց անում եւ նետում դէպի Զանգուի վարի կողմը: Կային ծերեր եւ հիւանդներ. Ճիգ էին անում վազելու, բայց մի քանի տասնեակ քայլ առաջանալուց յետոյ, ուժասպառ վայր էին ընկնում կամ երեսի վրայ փռում: Ետեւից եկողները կոխկրտելով անցնում էին նրանց վրայից: Իրենց բազուկները վեր կարկառած, գրոհ էին տալիս վար, ոտքը քարին տալով ընկնում ցեխերի մէջ, գլոր գալիս, արագ շարժումով վեր թոչում, բռունցքները աջ ու ձախ խփելով առաջանում եւ բախում ուրիշ բազմութիւններին, որոնք ճանապարհը գոցել էին եւ խենթացած գազանների նման մռնչում էին»⁶⁵: Իսկ Արա Հերյանը մնում է, ետ է գալիս քաղաք՝ ապացուցելով, որ նա հայ ոգին բացահայտած, հեղինակի նախընտրած պայքարող հայի կերպարն է:

2015թ. Կոստան Զարյանի «Նաւը լեռան վրայ» վեպի երևանյան նոր հրատարակության առաջաբանում գարյանագետ Երվանդ Տեր-Խաչատրյանը գրում է. «Այո, պատմական որոշակի ժամանակ, պատմական իրադարձություններ են պատկերված վեպում, սակայն դրանք գոյություն ունեն իբրև մթնոլորտ և հասարակական

տրամադրություն, իբրև խորապատկեր, այլ խոսքով՝ իբրև հոգեբանական տարածություն, որտեղ ծավալվում են նկարագրված իրադարձությունները»⁶⁶: Կարծում ենք, որ ժամանակն է հայությանը ծանոթացնել Զարյանի վեպի միակ և ճշմարիտ առաջին հրատարակությանը: Սիմոն Վրացյանը գնահատում է վեպը՝ անվանելով արվեստի գործ՝ մնայուն ու լիարժեք. «Վեպը երեւոյթ պիտի լինի մեր արդի գրականութեան մէջ, պիտի զբաղեցնէ հանրային միտքը եւ պիտի ապրի մեր գրականութեան պատմութեան մէջ, առանց մաշելու ժամանակի ժանգից»⁶⁷:

Բանալի բառեր - Առաջին հանրապետություն, Կոստան Զարյան, Հայպետիրար, գրաքննություն, Դաշնակցություն, Սիմոն Վրացյան, Փետրվարյան ապստամբություն, Սևան, նավագնացություն, դրամահապում:

SUMMARY

Anna Stepanyan

Post-graduate student at the Chair
of Armenia Literature History of YSU

The First Armenian Republic in Kostan Zaryan's "The Ship on a Mountain"

Kostan Zaryan's novel "The Ship on a Mountain" depicts the proclamation of the First Armenian Republic, the aftermath of it, the orphanhood and the lonely aggravated situation of Armenia, the extremely hard process of the money cut, February Revolution days and the escape of the Armenians from the Bolsheviks. However, the perceptions of the novel are quite controversial. As a result of Soviet censorship, among many works, Kostan Zaryan's novel was also subject to censorship and significant changes were made. The writer was facing the problem of representing not the history itself, but the history of the spirit in history, while the followers of ideology of the time used the novel to their own benefit. The Yerevan edition of Kostan Zaryan's novel, "The Ship on a Mountain" (1963), was seriously criticized in the Diaspora. The novel "The Ship on a Mountain" republished in 2015 is worthy of being presented to the generations with the reflection of historical truth, as was ordered by the Armenian writer Kostan Zaryan.

Keywords: First Republic, Kostan Zaryan, Haypethrat, censorship, Dashnaksutyun, Simon Vratsyan, February rebellion, Sevan, navigation, money cut.

1. Կոստան Զարյան, Նավը լեռան վրա, Եր., 1963, էջ 10: Այս աղբյուրի էջերը այսուհետք կնշվեն շարադրանքում:
2. Կոստան Զարեան, Նալը լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 9:
3. Կ. Սերեբրյակով, Շարժման իմաստությունը, Եր., 1977, էջ 110:
4. Վ. Մաթթեոսեան, Նիթեր Կոստան Զարեանի «Նալը լեռան վրայ» վեպի երեսանեան հրատարակութեան մասին, Հայկազեան հայագիտական հանդէսի ԻՁ հատորէն, Պէրոյթ, 2006, էջ 309:
5. Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 310:
6. Տնս Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 311:
7. Նույն տեղում, էջ 314: Քաջազնունիական ասելով՝ նկատի է առնվում Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Հովհաննես Քաջազնունու «Հ.Յ. Դաշնակցությունը անեփք չունի այլևս» գիրքը, Վիեննա, 1923:
8. Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 318:
9. Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 326:
10. Կոստան Զարյան, Նավը լեռան վրա, Բոստոն, 1943, էջ 392-394:
11. Տնս Կոստան Զարյան, Նավը լեռան վրա, Եր., 1963, էջ 415-415:
12. Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 349:
13. Վ. Մաթթեոսեան, Նիթեր Կոստան Զարեանի «Նալը լեռան վրայ» վեպի երեսանեան հրատարակութեան մասին, Հայկազեան հայագիտական հանդէսի ԻՁ հատորէն, Պէրոյթ, 2006, էջ 349:
14. Տնս Ե. Պոյաճեան, 2 նամակ Կոստան Զարեանին. Սովետահայ իշխանութեանց, Պէրոյթ, 1964:
15. Պողոս Մնասպեան, Անընդունելի, Պէրոյթ, 2008, էջ 73:
16. Պողոս Մնասպեան, Աւազախրած նալը, Պէրոյթ, 1964, էջ 6:
17. Կոստան Զարյան. Նավաբոմար, Եր., 1999, էջ 567:
18. Թորոս Թորանեան, Գիրք որդիական, Հալէպ-Պէրոյթ, 1981, էջ 145:
19. Վ. Առաքելյան, Կոստան Զարյանի հայրենադարձությունը, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, Եր., 1994, 8 նոյեմբեր, հ. 217, էջ 6:
20. Ն. Աղայան, Թոթովենց, Եր., 1994, էջ 261:
21. Վ. Մաթթեոսեան, էջեր Կոստան Զարեանի նամականիէն, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1999, էջ 153:
22. Ժ. Քալանթարյան, Պարմութեան գեղարվեստական արձագանքը, «Պայքար», մայիս-յունիս, Եր., 1996, էջ 63:
23. Վ. Մաթթեոսեան, Կոստան Զարեանի եւ Սիմոն Վրացեանի նամակագրութենէն, Հայկազեան հայագիտական հանդէս, հատոր ԻԹ, Պէրոյթ, 2009, էջ 307:
24. Վ. Մաթթեոսեան, նույն տեղում, էջ 306:
25. Սիմոն Վրացեան, «Նալը լեռան վրայ Կոստան Զարեանի Նոր վեպը», Հայրենիք, 1 մարտ, 1944, էջ 1:

26. Կոստան Զարեան, Բանկօսյւր եւ մամուլի ոսկորները, Անթիլիաս, 1987, էջ 35:
27. Վ. Մալթեոսեան, նույն տեղում, էջ 306:
28. Վ. Մալթեոսեան, Կոստան Զարեանի և Սիմոն Վրացեանի նամակագրութենէն, նշվ. աշխ., էջ 308:
29. Վ. Մալթեոսեան, նույն տեղում, էջ 308:
30. Նույն տեղում:
31. Նույն տեղում:
32. Սիմոն Վրացեան, Կեանքի ուղիներով, հ.1, Գահիրէ, 1955, էջ 219:
33. Սիմոն Վրացեան, Խարիստիաններ, Հ. Քաջազունու «Հ.Յ. Դաշնակցությունը անեղիջ չունի այլևս» գրքի առթիվ, Եր., 2016, էջ 4:
34. Սիմոն Վրացեան, նույն տեղում, էջ 57:
35. Սիմոն Վրացեան, Անկախ եւ միացեալ Հայաստան, Բոստոն, 1920, էջ 48:
36. Սիմոն Վրացեան, Անկախ եւ միացեալ Հայաստան, էջ 49: Զարչանի վեպի քննադատության մեջ էլ այս կերպ է բնորոշում Հայաստանի վիճակը՝ Անձն քառսից սկիզբ առած:
37. Սիմոն Վրացեան, Անկախ եւ միացեալ Հայաստան, էջ 59:
38. Սիմոն Վրացեան, Կեանքի ուղիներով, «Փոթորիկ Ասանի վրայ», Գահիրէ, 1955, էջ 219:
39. Վ. Մալթեոսեան, Կոստան Զարեանի եւ Սիմոն Վրացեանի նամակագրութենէն, Հայկազեան հայագիտական հանդէս, հապոր ԻԹ, Պէյրուօ, 2009, էջ 307:
40. Ե. Տեր-Խաչատրյան, Նավորդը, իր նավը և իր լեռը, Կոստան Զարեան, Նաւը լեռան վրայ, էջ 33:
41. Կ. Սերերթյակով, Շարժման իմաստությունը, Եր., 1977, էջ 110:
42. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 278:
43. Անտրիս Ահարոնեան, Մեր օրերը, «Հայրենիք», Բոստոն, 1927, 2 րարի, թիւ 1, նոյեմբեր, էջ 85:
44. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 246:
45. Տնս Հայաստանի Հանրապետության Արխիվ, ֆոնդ 276, ց.1, գ.79, թ. 52:
46. Տնս Ա. Վրացեան, Կեանքի ուղիներով, հապոր Ա, Գահիրէ, 1955, էջ 223:
47. Տնս Ա. Վրացեան, նշվ. աշխ., էջ 223:
48. Տնս Ա. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, էջ 435:
49. 50 Տնս Ա. Վրացեան, նշվ. աշխ., էջ 435-436:
50. Տնս Ա. Ավագյան, Կոստան Զարչան. Կյանքը և գործը, Եր., 1998, էջ 262:
51. Ե. Տեր-Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 46-47:
52. Иван Катков, Хлеб и мысль, Л., 1983, էջ 273-302: Հենրիկ Ար-

րահամյան, Բայազետ, Եր., 1998, էջ 118-128, Մուրադ Կոստանյան, Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920, Եր., 1996, էջ 40, 50-51:

53. Հենրիկ Արահամյան, Բայազետ, էջ 125:
54. Կոստան Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, «Հայրենիք», Բոստոն, 1927, 2 րարի, թիւ 1, նոյեմբեր, էջ 60: Տնս նաև Կոստան Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, Եր., 2010, էջ 434:
55. Տնս Ակակիո Հիկի, Պատմական դէմքերը Կոստան Զարեանի Նաւը լեռան վրայ վեպում, Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԲ հապոր, Պէյրուօ, 2002, էջ 244:
56. Տնս Մուրադ Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920, Եր., 1996, էջ 16:
57. Ա. Ահարոնյան, Անդրանիկը, «Հայրենիք», Բոստոն, 1927, № 2, էջ 85:
58. ՀՀԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 57:
69. ՀՀԱ, ֆ. 204, ց. 1, գ. 51, թ. 161-163:
60. Տնս ՀՀԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 52:
61. Հենրիկ Արահամյան, նշվ. աշխ., էջ 123:
62. Տնս Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 262-263:
63. Հենրիկ Արահամյան, նշվ. աշխ., էջ 12:
64. Սիմոն Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. Ա, Գահիրէ, 1955, էջ 232-233:
65. Կոստան Զարեան, Նաւը լեռան վրայ, Պոսթըն, 1943, էջ 548:
66. Կոստան Զարեան, Նաւը լեռան վրայ, Նավորդը, իր նավը և իր լեռը, Եր., 2015, էջ 13:
67. Վ. Մալթեոսեան, Կոստան Զարեանի եւ Սիմոն Վրացեանի նամակագրութենէն, Հայկազեան հայագիտական հանդէս, հապոր ԻԹ, Պէյրուօ, 2009, էջ 305:

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը պայմաններ ստեղծեց ազգային կրթական համակարգի ստեղծման համար:

Կրթական բնագավառում օրենսդրական ակտեր մշակելու նպատակով Հայաստանի խորհրդի կազմում ստեղծվել էր դպրոցական հանձնաժողով, որի նախագահ էր ընտրվել հմուտ մանկավարժ, Դաշնակցություն կուսակցության անդամ Ս. Տիգրանյանը¹: Հանձնաժողովը մշակեց և խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Դպրոցի կառավարման մասին» օրինագիծը: Խորհրդարանն այն ընդունեց 1918թ. սեպտեմբերի 11-ին: Օրինագծում ասվում էր. 1. «Դպրոցը Հայաստանի Հանրապետության մեջ պետության մենաշնորհ է: Յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն, ինչպես և առանձին անհատ, իրավունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով»²:

Օրենքի ընդունումից հետո հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական-ծխական և այլ տիպի դպրոցները ազատ գործելու հնարավորություն ստացան, սկիզբ դրվեց դպրոցների կառավարման հասարակական սկզբունքին:

1918թ. նոյեմբերի սկզբին նորաստեղծ կոալիցիոն կառավարության կազմում Հանրային կրթության նախարարի պաշտոնը տրվեց Հայ ժողովրդական կուսակցությանը: ՀԺԿ հանրային կրթության նախարարի պաշտոնում առաջադրեց Կենտկոմի անդամ, թիֆլիսաբնակ իրավաբան Մ. Աթարբեգյանին³: Վերջինս, միայն նոյեմբերի վերջերին Երևան գալով և երկու շաբաթ նախարար աշխատելով, կուսակցական ներքին տարածայնությունների հետևանքով հրաժարական տվեց⁴: 1918թ. դեկտեմբերից մինչև 1919թ. հունիս կոալիցիայի պառակտումը, այս պաշտոնը վարեց ՀԺԿ կենտկոմի անդամ Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը: Նա մեծ ներդրում ունեցավ կրթական բնագավառի աշխատանքների կարգավորման գործում:

1918թ. վերջերին հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունը կառավարությանը հարկադրում է որոշում ընդունել ընդհատել դպրոցական պարապմունքները մինչև հունվարի վերջ, իսկ ուսումնական երկրորդ կիսամյակի տևողությունը երկարաձգել: 1919թ. մարտից կրթական հիմնարկները վերսկսեցին իրենց գործունեությունը: Դպրոցների բացման գործում մեծ էր մանկավարժության դերը: Չնայած առկա դժվարություններին՝ ուսումնական տարին գրեթե բոլոր դպրոցներում ավարտվեց հունիսի վերջերին:

1918-1919 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 133 տարրական դպրոց՝ 11136 աշակերտով, 313 ուսուցիչով, 10 միջնակարգ դպրոց՝ 3137 աշակերտով, 177 ուսուցիչով⁵: Վերը նշված տվյալները ցույց են տալիս, որ դպրոցական ցանցը բավական կրճատվել էր, սակայն, հաշվի առնելով այն մղձավանջային իրավիճակը, որում գտնվում էր հանրապետությունը, դպրոցները պահպանելու համար հսկայական աշխատանք էր կատարվել:

Երկրի տնտեսության կայունացման հետ մեկտեղ կրթական գործի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը գնալով աճում էր: Անկախ պետականության պայմաններում կառավարությունը հոգ էր տանում ազգային դպրոցի նկատմամբ: Դրա մասին է վկայում այն, որ մանկավարժները և աշակերտությունը ակտիվորեն մասնակցեցին Հայաստանի Հանրապետության առաջին տարեկիցի տոնակատարությանը⁶:

1919թ. օգոստոսի 10-ին Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում նշանակվում է հայ ականավոր գրականագետ և բազմահմուտ մանկավարժ Նիկոլ Աղբալյանը: Նա արգասաբեր գործունեություն ծավալեց կրթական գործի հետագա կազմակերպման և զարգացման համար:

Արդեն 1919 թվականի վերջերին հանրապետությունում գործում էր դպրոցական կայուն ցանց, որը գնալով ընդլայնվում էր՝ իր մեջ ներառելով նոր բնակավայրեր: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1919-20 ուստարում հանրապետության զավառներում տարրական դպրոցական ցանցը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ 456 դպրոց՝ 40188 աշակերտով, 1047 ուսուցիչով: Զգալի աշխատանք էր կատարվել միջնակարգ դպրոցների բացման ուղղությամբ: 1919-20 ուստարում գործում էր 20 միջնակարգ դպրոց՝ 5063 աշակերտով, 286 ուսուցիչով: Միջնակարգ էին դարձել Պուշկինյան, Նոր Բայագետի, Աշտարակի բարձր տարրական դպրոցներն ու Ալեքսանդրապոլի Ս. Փրկիչի եկեղեցական-ծխական դպրոցը: Նոր էին բացվել Երևանի ուսուցչական սեմինարիայի խառը պրոգիմնագիան, Վաղարշապատի, Ղարաքիլիսայի և Իջևանի գիմնագիաները⁷:

Նախարարների խորհուրդը պետական սուղ միջոցներից որոշ մաս հատկացրեց դպրոցաշինարարությանը: Հանրային կրթության նախարարությունը շրջանային տեսչություններին տրամադրում էր վարկ՝ շենքերի վերանորոգման, դպրոցական կահույքի ու գրենական պիտույքների ձեռքբերման համար:

1919թ. հունիսին Մինիստրների խորհրդի որոշմամբ 500 հազ. ռուբլի է հատկացվում դասագրքերի հրատարակման համար: Տպագրվում են «Դասընկեր» (կազմողներ՝ Տ. Ռաշմաճյան, Ավ. Իսահակյան, Ս. Չիլինգարյան) և «Փայլուն արև» (Գ. Էդիլյան) դասագրքերը: Հրատարակության էր նախապատրաստվել «Հայոց պատմություն» (Ս. Թորոսյան), «Ռուսահայ գրականության պատմություն» (Լ. Մանվելյան), քրդերեն այբբենարան (Հակոբ Ղազարյան՝ Լազո) և այլ դասագրքեր⁸:

Պետությունը ջանքեր չի խնայում դպրոցների ազգայնացման խնդիրը լուծելու համար: Ազգային կրթական համակարգի ստեղծման ճանապարհին մեծ նշանակություն ունեն հայերենը՝ որպես պետական լեզու ճանաչելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև բնակչության կրթական գործի կազմակերպման համար կատարված աշխատանքը: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունում է պատմական կարևոր որոշում. «Օրենք պետական լեզվի մասին»⁹: Այդպիսով՝ իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքներից մեկը. մայրենի լեզուն պաշտոնապես ճանաչվեց որպես պետական լեզու: Աշխատանքներ ծավալվեցին մեծահասակ բնակչության կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ: 1920թ. հունվարի 5-ին խորհրդարանը ընդունեց օրենք՝ գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների կազմակերպման մասին:

1920թ. մարտին խորհրդարանը ընդունում է օրենք, ըստ որի՝ եկեղեցական-ծխական դպրոցները պետականացվում էին: Աշխատանքներ էին տարվում դպրոցների ուսումնադաստիարակչական գործընթացի կարգավորման ուղղությամբ: 1920թ. ապրիլին Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը Նախարարների խորհրդին է ներկայացնում «Տարրական կրթության կանոնադրության մասին» օրինագիծը: Նոր կանոնադրությունը խորհրդարանին էր վերապահում դպրոցների կանոնադրությունների, ծրագրերի և նախահաշիվների հաստատումը: Խորհրդարանը դպրոցների գերագույն վերահսկիչն էր, իսկ Հանրային կրթության նախարարը գործադիր ղեկավարն էր. նա էր մշակում և կենսագործում կրթական ընդհանուր քաղաքականությունը և պատասխանատու էր դրա իրականացման համար: Ըստ կանոնադրության՝ տարրական դպրոց-

ները ազգայնացվում էին: Առարկայական դասավանդումը տարվելու էր հայերեն: Տարրական դպրոցներում ուսման տևողությունը լինելու էր վեց տարի՝ երկու եռամսյակով, փոքր գյուղերում՝ երեք տարի, իսկ գյուղական կենտրոններում՝ վեց տարի: Այն աշակերտները, որոնք հնարավորություն չէին ունենա վեցամյա ուսուցում ստանալու, կարող էին ավարտել լրացուցիչ՝ չորրորդ դասարան: Տարրականն ավարտողը առանց քննության ընդունվում էր միջնակարգ դպրոց, որի ուսման տևողությունը հինգից վեց տարի պետք է լիներ: Դպրոցներում դասավանդվելու էին հայոց լեզու և գրականություն, թվաբանություն, նկարչություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտական, առողջապահական գիտելիքներ, երաժշտություն, մարմնամարզություն, ձեռքի աշխատանք և օտար լեզու՝ ռուսերեն: Կրոնը հանվում էր պարտադիր առարկաների ցանկից, այն կարող էր դասավանդվել միայն ծնողների ցանկությամբ: Կառավարությունը խոստանում էր տարրական դպրոցներում ուսումը դարձնել պարտադիր և անվճար: 1919-1920 ուստարում Երևանում, Աշտարակում և մի քանի այլ վայրերում փորձեր են արվում դպրոցներից մի քանիսում կիրառել այդ սկզբունքը, ինչն ավարտվում է անհաջողությամբ: Հայ մանկավարժները գիտակցում էին, որ տիրող սոցիալ-տնտեսական ծանր վիճակում, երբ ցածր էր բնակչության կուլտուր-կրթական մակարդակը, պարտադիր և անվճար ուսուցումն անիրագործելի է:

Հայաստանի առաջին հանրապետության օրոք հիմք է դրվում աշակերտության մարմնակրթական դաստիարակությանը: Հետաքրքրական է, որ սկաուտական շարժումը Հայաստանում կոչվեց հայ հեթանոսական աստված Վահագնի անունով: 1919թ. հուլիսի սկզբին Երևանի արական գիմնազիայի մանկավարժների և աշակերտների նախաձեռնությամբ տեղի է ունենում Հայաստանի մարմնամարզական միության ժողով, որը հիմնադրում է «Վահագն» ակումբը: 1920 թվականի օգոստոսին Կ. Պոլսից Հայաստան ժամանեցին սկաուտական շարժման հմուտ մասնագետներ՝ Վահան Չերազը, Օնիկ Յազմաճյանը, Տիգրան Խոյանը, որոնք իրենց ակտիվ աջակցությունն ունեցան Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Լոռի-Փամբակում սկաուտական շարժման խմբակների ստեղծման ուղղությամբ¹⁰:

Հանրային կրթության նախարարությունը գործնական քայլեր էր ձեռնարկում դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու համար: Ուսուցիչներ պատրաստելու նպատակով 1919թ. սեպտեմբերին բացվում է Ուսուցչական սեմինարիա: Կազմակերպվում են կարճատև մանկավարժական դասընթացներ: Սակայն, այնու-

ամենայնիվ, մանկավարժների պակաս էր զգացվում հատկապես տարրական դպրոցի համար: Մանկավարժների աշխատավարձը երկու անգամ բարձրացվեց, հատկացվեց պարենամթերք և այլն, սակայն նրանց սոցիալական դրությունը շարունակում էր ծանր մնալ:

Հայ մանկավարժությունը իր ներդրումն ունեցավ ազգային պետականության կառուցման գործում: Ինչպես նախկինում, այնպես էլ հանրապետության օրոք հայ մանկավարժն էր մնում ժողովրդի առաջին խորհրդատուն և պաշտպանը:

1920թ. աշնանը ռազմաքաղաքական իրադարձություններն այնքան անբարենպաստ դասավորվեցին, որ հանրապետությունը հայտնվեց քաղաքական խոր ճգնաժամի մեջ, և բնականաբար խաթարվեց նաև կրթական գործը: Սակայն այդ պայմաններում էլ հայ մանկավարժները շարունակում էին անձնուրաց նվիրումով աշխատել և հավատով սպասում էին ազգային դպրոցի նոր վերածննդին:

Ազգային անկախ պետական շինարարության գործընթացի իրականացման համար անհրաժեշտ էին բարձր որակավորում ունեցող մասնագիտական կադրեր:

Սակայն հանրապետության սակավաթիվ մտավորականության մեջ քիչ էին բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մասնագետները: Հանրապետության նախարարություններում և տարբեր գերատեսչություններում աշխատող պաշտոնյաների մեծ մասը չունեին համապատասխան որակյալ մասնագիտական կրթություն: Առանձնապես խիստ զգացվում էր բժիշկների, գյուղատնտեսների, ճարտարագետների պակասը:

1919թ. մայիսի 16-ին նախարարների խորհուրդը հավանություն տվեց Հանրային կրթության նախարարի ներկայացրած օրինագծին՝ Պետական համալսարանի հիմնադրման մասին: Օրենքում ասված էր.

1. Հիմնել Երևանում համալսարան, հետևյալ բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսա-իրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի (300000ռ.), հանձ-

նարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը»¹¹:

Հայաստանի կառավարության կողմից այդ պատմական որոշման ընդունումը ողջունելի եղավ համայն հայության կողմից: Համալսարանի հիմնադրման մասին տեղեկացվեցին արտերկրում գտնվող հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները, որոնք պետք է աշխատանք ծավալեին հայության շրջանում համալսարանի կարիքները հոգալու համար:

Արդեն 1919թ. հունիսին Թիֆլիսում ստեղծվել էր համալսարանական ընդհանուր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել էին ականավոր գիտնականներ՝ Յու. Ղամբարյանը, Մ. Բունիաթյանը, Դ. Չավոյանը, Մ. Աբեղյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և ուրիշներ: Համալսարանի տեսուչ նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր Յու. Ղամբարյանը: Հաստատվեցին համալսարանի ժամանակավոր կանոնները: Առաջիկա ուսումնական կիսամյակի համար ճշտվեց պատմաբանասիրական ֆակուլտետի ուսումնական ծրագիրը, դասավանդվող առարկաների ցանկը և դասախոսական կազմը:

Պատմաբանասիրական ֆակուլտետի դասախոսներ նշանակվեցին գրականագետ Մանուկ Աբեղյանը, հնագետ Աշխարհբեգ Լոռիս Մելիք-Քալանթարը, լեզվաբաններ Ռուբեն Աբրահամյանը և Ստեփան Մախասյանցը, հայ հոգևորականության ներկայացուցիչներ՝ հայ գրականության մագիստրոս Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, փիլիսոփայության դոկտոր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:

1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցում մեծ հանդիսավորությամբ բացվեց համալսարանը: Բացման արարողությանը ներկա էին պետական, հասարակական գործիչներ, դիվանագետներ, դասախոսական կազմը և հասարակայնությունների ներկայացուցիչներ: Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ, պրոֆեսոր Յու. Ղամբարյանը, որից հետո ընդարձակ ճառով ելույթ ունեցավ Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը: Նրա հուզումնալից խոսքը նվիրված էր հայ ժողովրդի անցած հերոսական անցյալին և ապագա երազանքներին, որոնցից առաջնայինը քաղաքակիրթ ազգերի շարքում արժանավոր տեղ գրավելն էր: Ելույթ են ունենում խորհրդարանի փոխնախագահ Ա. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, օտարերկրյա դիվանագետներ և ուրիշներ: Ընթերցվում է Գևորգ 5-րդ կաթողիկոսի օրհնության կոնդակը: Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր: Համալսարանի բացման կապակցությամբ կատարվել էին նվիրատվություններ¹²: Հրա-

տարակվել էր մեկօրյա՝ տոնական թերթ «Հայաստանի համալսարան» անունով, որից ստացված եկամուտը հատկացվելու էր չքավոր ուսանողության օգնության ֆոնդին:

Առաջին կիսամյակում Համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում ուսանում էր 261 ուսանող և ունկնդիր: Ֆակուլտետի առաջին դեկանն էր նշանակվել Էջմիածնի նախկին մատենադարանապետ, հայ գրականության նշանավոր մասնագետ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Համալսարանը շարունակում էր համալրվել դասախոսներով, ինչպիսիք էին՝ պատմաբան Հակոբ Մանանդյանը, ռուս նշանավոր տնտեսագետ, պրոֆեսոր Ա. Մանուիլովը և ուրիշներ:

Աստիճանաբար կարգավորվեց նաև համալսարանի նյութական և ֆինանսական վիճակը: Համալսարանի բյուջեում պետական ֆինանսական հատկացումները կազմում էին մոտ 70%, նվիրատվությունները 26%, ուսումնավարձը՝ 4%: Հայ ժողովուրդը շարունակում էր նվիրատվություններ կատարել համալսարանի ֆոնդին¹³: Հատկապես արագ էր աճում գրադարանային ֆոնդը: Գրադարանային ֆոնդի համալրումը դարձել էր համազգային գործ: Հունիսի սկզբին ավարտվեցին դասընթացները պատմալեզվաբանական ֆակուլտետում:

1920թ. հոկտեմբերին պատմաբանասիրական ֆակուլտետը տեղափոխվեց Երևան: Նախատեսվում էր բացել նաև իրավաբանական և բժշկական ֆակուլտետներ, սակայն քաղաքական իրադրությունը թույլ չտվեց:

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգման և զարգացման համար միջին մասնագիտական որակավորում ունեցող մեծաթիվ մասնագետներ էին նաև անհրաժեշտ, որոնք, սակայն, բացակայում էին: Ռուսական կայսրությունից միայն երկու միջնակարգ մասնագիտական կրթական հաստատություններ էին մնացել իբրև ժառանգություն՝ Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանը (հիմն. 1902թ.) և Երևանի ուսուցչական սեմինարիան: Դեռևս Առաջին աշխարհամարտի նախօրյակին Երևանի և Կարսի գավառներում կազմակերպվում են մի քանի ուսումնարան, սակայն դրանց շենքերի շինարարական աշխատանքներն այդ պես էլ չէին ավարտվել: Այս հարցը լուծելու համար անհրաժեշտ էր շտապ միջոցառումներ ձեռնարկել, սակայն հանրապետության ղեկավարությունը, գտնվելով դժվարին կացության մեջ, չունեի համապատասխան ֆինանսական միջոցներ: Այս պայմաններում նախաձեռնություն են հանդես բերում հասարակական կազմակերպությունները և անհատ մասնագետները, որոնք տարբեր մասնագիտությունների գծով դասընթացներ են կազմակերպում: Հատկապես հրատապ էր տեխնիկական մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման հարցը: Առաջինը այդպիսի նախա-

ձեռնությամբ հանդես եկավ Դաշնակցություն կուսակցության կանանց կոմիտեն, որը 1919թ. օգոստոսին Երևանում կազմակերպեց փոստ-հեռագրական ծառայողների, մեխանիկների և վերահսկիչների պատրաստման դասընթացներ: Այս դասընթացներին կարող էին մասնակցել 6-րդ դասարանի կրթություն ունեցող անձինք¹⁴: Հանրային կրթության նախարարությունն իր հերթին՝ ղեկտեմբերին միջոցներ է հատկացնում Երևանում և Ալեքսանդրապոլում՝ հաշվապահական, և Կարսում՝ առևտրական դասընթացների կազմակերպման համար¹⁵:

Դեռևս 1919թ. հոկտեմբերին Հանրային կրթության նախարարություն էր դիմել նշանավոր մանկավարժ, ճարտարագետ-քիմիկոս ու մաթեմատիկոս Բահաթուր Բահաթոյանը¹⁶, որը ներկայացրել էր Երևանում միջնակարգ տեխնիկական դպրոցի բացման մի ծրագիր: Այդ դպրոցը պետք է ունենար հինգ դասարան՝ 1. էլեկտրամեքենագիտական, 2. շինարարության և հաղորդակցության, 3. հողաչափական, 4. հանքաքիմիական, 5. հիդրոտեխնիկական: Ուսումը տևելու էր չորս տարի: Ընդունվել կարող էին 14 տարեկանից բարձր անձինք, որոնք ավարտել էին բարձր տարրական դպրոցը: Սակայն նախարարությունը համարելով վաղաժամ, հետաձգում է տեխնիկական դպրոցի բացման հարցի քննարկումը¹⁷: 1920թ. մարտի սկզբներին Ճարտարագետների միությունը հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ. Խնամատարության նախարարությանն է ներկայացվում տեխնիկական դասընթացների կազմակերպման կանոնադրություն: Առաջարկվում էր նախարարությանը հովանավորել և հաստատել դասընթացների կանոնադրությունը: Խնամատարության նախարարը տալիս է իր համաձայնությունը¹⁸: Տեխնիկական դպրոցի բացման հարցում շահագրգռվածություն է հանդես բերում նաև Հաղորդակցության նախարարությունը: Վերջապես 1920թ. հուլիսի 19-ին Նախարարների խորհուրդը օրենք ընդունեց՝ Երևանում և Ալեքսանդրապոլում տեխնիկական միջնակարգ դպրոցներ հիմնելու մասին: Այն պետք է գտնվեր հաղորդակցության նախարարության իրավասության ներքո: Հաստատվեց նաև նախահաշիվը՝ 6.904.100 ռուբլի¹⁹: 1920թ. սեպտեմբերի 27-ին Ալեքսանդրապոլում բացվում է տեխնիկական միջնակարգ դպրոց, որի տեսուչ է նշանակվում ճարտարագետ Շահմազյանը, իսկ մեկ ամիս հետո պետք է գործեր Երևանի դպրոցը²⁰: Տեխնիկական դպրոցները պետք է ունենային երկու բաժանմունք՝ շինարարական և մեխանիկական, ուսման տևողությունը՝ 4 տարի, որն ավարտելուց հետո տրվելու էր տեխնիկի որակավորում: Երեք տարի գործնական աշխատանքից հետո դպրոցի խորհուրդը շրջանավարտին կարող էր շնորհել ճարտարագետի կոչում (որակավորում):

Հայաստանի Հանրապետությունը կարիք ուներ գյուղատնտես մասնագետների: Գյուղատնտեսությունը գտնվում էր անմխիթար վիճակում: Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մեծ աշխատանք էր կատարում դրությունը շտկելու համար, գործողության մեջ էին դրվել մի շարք ծրագրեր՝ հողային, ջրաբաժանման և այլն, սակայն զգացվում էր կադրերի պակաս: Գավառները դիմում էին կենտրոն՝ խնդրելով ուղարկել գյուղատնտեսներ և անասնաբույժներ, սակայն շատ հաճախ այդ խնդրագրերը մերժվում էին՝ մասնագետների բացակայության պատճառով: 1920թ. փետրվարին Ալեքսանդրապոլի մի խումբ գյուղատնտեսների և ուսուցիչների նախաձեռնությամբ հիմնվում է միջնակարգ գյուղատնտեսական դպրոց: Դպրոցի մանկավարժական խորհուրդը կոչով դիմում է գավառի բնակչությանը գրենական պիտույքներ և մասնագիտական գրականություն նվիրելու²¹: Գյուղատնտեսության նախարարության կողմից նույնանման դպրոցներ են ստեղծվում Նոր Բայազետում և Դիլիջանում²²: Սակայն դպրոցները դեռևս չունեին անհրաժեշտ լաբորատորիաներ և սարքավորումներ, փորձարարական նպատակների համար հողամաս:

Հանրապետությունում բժշկասանիտարական վիճակը բարելավելու նպատակով կազմակերպվում էին բուժքույրերի և բուժեղբայրների դասընթացներ: Այդպիսի դասընթացներ կազմակերպվեցին 1919թ. սկզբներին, երբ մեծ չափերի էին հասել համաճարակային հիվանդությունները: Դասընթացներին մասնակցեցին մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Սակայն հայ բժիշկները գիտակցում էին, որ առանց բժշկական մասնագիտական կրթական հաստատության ստեղծման՝ անհնար է բնակչության առողջապահական վիճակի զգալի բարելավում: Դրա համար անհրաժեշտ էր համարվում Երևանի հիվանդանոցներից մեկին կից բացել բժշկական դպրոց, ուր սաները գործնական աշխատանքներ կատարելու հնարավորություն կունենային: 1919թ. սեպտեմբերին հիմնվում է միջնակարգ բժշկական դպրոց՝ երկու բաժանմունքներով՝ ֆելդշերական և մանկաբարձական: Դպրոցում ընդունելությունը կատարվում էր միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի կրթությանը համապատասխան: Դասընթացը տևելու էր երեք տարի: Այն գտնվում էր Գլխավոր բժշկասանիտարական վարչության ենթակայության ներքո²³: Դպրոցի բացման աշխատանքներն անձամբ վերահսկում էր հայ բժշկագիտության ակնավոր ներկայացուցիչ, այդ վարչության պետ Յ. Տեր-Միքայելյանը: Այս դպրոցը համալսարանի բժշկական ֆակուլտետի հետ Հայաստանում պետք է նպաստեր առողջապահության զարգացմանը:

Հանրապետության բանակը զինվորական որակյալ սպայական կադրերով համարելու նպատակով 1920թ. սեպտեմբերի 16-ին Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում զինվորական գիմնագիա և ուսումնարան բացելու մասին: Սկզբում կազմակերպվում է Ալեքսանդրապոլի զինվորական ուսումնարանը, որը փաստորեն բարձրագույն ռազմական կրթական հաստատություն էր: Դպրոց կարող էին ընդունվել Կարսում կազմակերպվող ռազմական գիմնագիայի սաները: Գիմնագիայի նպատակն էր մանուկ հասակից ունակ դարձնել զինվորական գործի մեջ²⁴: Գիմնագիան միջնակարգ մասնագիտական կրթարան էր, ուր ուսման տևողությունը պետք է լիներ 7 տարի: Ընդունելության ժամանակ առաջնություն էր տրվում սպաների, բժիշկների, պաշտոնյաների երեխաներին և որբանոցների սաներին: Գիմնագիայում պետք է սովորեր 485 սան: Նախատեսվում էր 1920թ. սեպտեմբերին բացել առաջին 3 դասարանները²⁵: Սակայն թուրքական երկրորդ արշավանքը կանխեց այս ծրագրի իրագործումը:

Հանրապետությանը որակյալ մասնագետներեց Թիֆլիսի Հայ մշակութային ընկերությունների միությանը կից աշխատանքային բյուրոն, որը 1920թ. ապրիլին դիմեց Հայաստանի հիմնարկություններին՝ առաջարկելով տեղյակ պահել պահանջվող տեխնիկների, ճարտարագետների և այլ մասնագետների մասին: Այս գովելի նախաձեռնությունը արժանացավ կառավարության հավանությանը²⁶: Սակայն Վրաստանի հայ մասնագետների թիվը այնքան մեծ չէր, որ հնարավոր լիներ բավարարել հանրապետության պահանջները:

Հայաստանի Հանրապետության ղեկավարության կողմից իրականացվող այս միջոցառումների նպատակն էր՝ ստեղծել միջնակարգ մասնագիտական կրթական համակարգ, որը ժողովրդական տնտեսության առաջնային բնագավառները հեռանկարում կապահովեր միջին որակավորման անհրաժեշտ որակյալ կադրերով: Դժբախտաբար հանրապետության կարճ կյանքը հնարավորություն չտվեց իրականացնելու այս ծրագրերը: Խորհրդային իշխանության 1- աստատումից հետո այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվեցին, և արդեն երկու տասնամյակ հետո՝ 1930-ական թթ. վերջերին, երկրի ինդուստրացմանը զուգընթաց, Հայաստանում ստեղծվել էր միջնակարգ մասնագիտական կրթության խիտ ցանց²⁷, որն իր մեջ ներառում էր միջնակարգ մասնագիտական բազմաթիվ տեխնիկումներ և պրոֆեսիոնալ - տեխնիկական ուսումնարաններ:

Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո սոցիալական ծանր վիճակը հնարավորություն չէր տալիս նախարարների խորհրդին բավարար ուշադրություն հատկացնել մեծահասակ բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման հարցերին:

Հանրապետության գոյության առաջին տարվա ընթացքում գործում էին անհատական նախաձեռնությամբ բացված դասընթացներ՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով, այն էլ միայն երևանում: Այդպիսի դասընթացներ բացվել էին նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից, որոնց նպատակն էր հանրամատչելի գիտելիքներ հաղորդել բնակչությանը՝ քաղաքական իրադարձությունների, կուսակցությունների գաղափարախոսության և գործունեության, հայկական հարցի, հասարակական-քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ²⁸: Առանձնապես շնորհակալ աշխատանք էր կատարում ՀՅԴ կանանց կոմիտեն, որի նախաձեռնությամբ 1919թ. հուլիսին չափահաս բնակչության համար կազմակերպվում են հայերենի դասընթացներ²⁹: Միայն 1919թ. օգոստոսին Հանրային կրթության նախարարությունը ուշադրություն հատկացրեց արտադպրոցական հարցերին: Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը խորհրդակցության է հրավիրում, որտեղ շրջանային տեսուչներին հանձնարարվում է արտադպրոցական աշխատանքի կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել: Բացի այդ, նախարարությունում ստեղծվում են մի քանի հանձնախմբեր, որոնք պետք է ծրագրեր կազմեին գրագիտական և հայագիտական դասընթացների, ժողովրդական համալսարանների համար³⁰: 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին շրջանային տեսչությունների կողմից բազմաթիվ առաջարկություններ էին ստացվել: Հատկապես ակտիվ էին գործել Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Դիլիջանի շրջանային տեսուչները, որոնք ստեղծել էին մանկավարժական հանձնաժողովներ, կազմել արտադպրոցական աշխատանքների ծրագրեր³¹: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Հանրային կրթության նախարարությունը ծրագիր-գեկուցագիր է կազմում, և օրինագծի հետ միասին այն ներկայացվում է Նախարարների խորհրդի հաստատմանը: Հանրային կրթության նախարարի ներկայացրած գեկուցագրում առաջարկվում էր առաջին հերթին հանրապետության 10 քաղաքներում բացել գրաճանաչության դասընթացներ և ժողովրդական համալսարաններ: Այդ նպատակով նախատեսվում էր ծախսել 131 հազ ուրվի³²: 1920թ. հունվարի սկզբին օրինագիծը քննարկվում է Խորհրդարանում: Լինում են բազմաթիվ առաջարկություններ, որոնցից հիշարժան է պատգամավոր Ա. Ջամայանի առաջարկությունը՝ հնարավորություն տալ արիեստակցական միություններին և բանվորական խորհուրդներին նույնպես բացել ժողովրդական համալսարաններ³³: Այս առաջարկությունն արժանանում է կառավարության հավանությանը: Հունվարի 5-ին Խորհր-

դարանը ընդունեց օրենք՝ գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին: Օրենքում ասված է, որ ժողովրդական կրթության զարգացման նպատակով հիմնվում էին գրագիտական և գրավարժական դասընթացներ անգրագետ և թերավարժ հասակավորների համար, ուր պետք է ավանդվեր հայոց լեզու և թվաբանություն: Գրագետ բնակչության համար կազմակերպվելու էին ժողովրդական համալսարաններ, որոնցում դասավանդվելու էին հայոց պատմություն և գրականություն, աշխարհագրություն, բնագիտություն, հասարակական գիտություններ, քաղաքացիական իրավունք և առողջապահություն: Դասընթացները տևելու էին վեց ամիս: Դրանցում սովորելը ծրի էր: Պետական միջոցներով դասընթացներ կարող էին բացել տեղական ինքնավարությունները, շրջանային տեսչությունները, դպրոցների հոգաբարձությունները կամ կոմիտեները, արիեստակցական միությունները և բանվորական խորհուրդները, ինչպես նաև մասնավոր նախաձեռնությամբ բացված այն ժողովրդական համալսարանները, որոնց գործունեությունը օգտակար էր ճանաչվել³⁴: Դեռևս 1919թ. նոյեմբերին, առանց սպասելու այս օրենքի ընդունմանը, Ղարաքիլիսայում մեծ հանդիսավորությամբ բացվել էր ժողովրդական համալսարան, որի վարիչ էր նշանակվել Ս. Մարկոսյանը³⁵: Վերջինիս ջանքերի շնորհիվ տեղի մտավորականները ժողովրդական առողջապահության և հասարակական-քաղաքական թեմաներով դասախոսություններ էին կարդում բնակչության համար³⁶: 1920թ. հունվարին ժողովրդական համալսարաններ են կազմակերպվում Կարսում, Նոր Բայազետում, Ալեքսանդրապոլում: Երևանում ժողովրդական համալսարանի կազմակերպման աշխատանքները իրականացնում էր քաղաքային վարչությունը: Մարտի կեսերին Եվգենյան գիմնազիայի շենքում բացվում է ժողովրդական համալսարան, որն ուներ երեք բաժին՝ ընդհանուր զարգացման բարձր դասընթաց, անգրագետ և կիսագրագետ չափահասների համար գրագիտության դասընթաց: Դասընթացների տեսուչ էր նշանակվել Ե. Ֆրանգյանը: Այն գտնվում էր կրթության նախարարության հովանավորության ներքո: Բարձր դասընթացը, որը մասնավոր նախաձեռնության արդյունք էր, նախատեսված էր միջնակարգ կրթություն ունեցող անձանց համար³⁷: Նախատեսված 60-ի փոխարեն ունկնդիրների թիվը կազմեց 122 հոգի: Դասախոսությունները տեղի էին ունենում կանոնավոր և առանց բացակայությունների: Դասախոսական կազմը բավական հեղինակավոր էր՝ Մ. Աբեղյան (հայ հին գրականության պատմություն), Ա. Տերտերյան (հայ նոր գրականության պատմություն), Ս. Վրացյան (քաղաքատնտեսություն), Ե. Ֆրան-

գյան (փիլիսոփայություն), Տ. Ռաշմաճյան (հոգեբանություն), Պ. Ստանիկյան (իրավունքի տեսություն), Ա. Խոնդկարյան (պետական իրավունք), Ա. Տեր-Պողոսյան (կենսաբանություն), Ա. Գասպարյան (ընդհանուր պատմություն): Գրագիտության դասընթացներին մասնակցում էին մոտ 100 հոգի: Ավանդվում էր հայոց լեզու և թվաբանություն: Այստեղ դասավանդում էին դպրոցի մանկավարժներ: Այս դասընթացները տևում են մինչև հունիսի վերջը: Ունկնդիրները ստանում էին համապատասխան վկայականներ³⁸:

Հանրապետության Նախարարների խորհուրդը ձգտում էր ընդլայնել գավառային ինքնավարությունների գործունեության շրջանակը: 1920թ. հունիսի 5-ի օրենքով գավառային ինքնավարությունների իրավասությանը հանձնվեցին նաև գրագիտության ու գրավարժության դասընթացները և ժողովրդական համալսարանները³⁹: Մեկ այլ օրենքով՝ Հանրային կրթության նախարարությանը հատկացվեց 200 հազ. ռուբլի այս դասընթացների ծախսերը հոգալու համար⁴⁰: Պետք է նշել, որ դասընթացների հանձնումը համայնավարություններին նպատակ էր հետապնդում խրախուսել տեղական իշխանություններին՝ բարելավելու կրթական գործը: Գյուտ ծ. վարդապետը գրում է. «Համայնավարությունը պետք է լուրջ ուշադրություն դարձնի հասակավորների կրթության գործին, յուր շրջանի առնվազն կենտրոնական վայրերում հիմնելով հասակավորների համար զանազան տիպի հիմնարկություններ: Ամենից ձեռնտուն ու անհրաժեշտը, ըստ իս, ժողովրդական համալսարանն է, ուր որ պիտի լինեն գրագիտության դասընթացքներ և կիրակնօրյա ու երեկոյան դասախոսություններ: Համալսարաններում պարապողները կլինեն վայրի դպրոցի դասատուները, ինչպես և շրջանի այլ մտավորականներ, պաշտոնյաներ, օրինակ՝ բժիշկ, գյուղատնտես, հարկային տեսուչ, դատավոր և այլն»⁴¹: Սակայն համայնավարությունները գտնվում էին կազմավորման փուլում և կրթական հիմնարկությունների լայն ցանց ստեղծելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունեին, ինչը պետք է կատարվեր աստիճանաբար: Միայն մի քանի գավառային կենտրոններում էին բացվել այս դասընթացները: Հանրապետության բնակչության մեծ մասը շարունակում էր մնալ անգրագետ և կիսագրագետ:

Բանալի բառեր - հանրապետություն, հանձնաժողով, ակտեր, դպրոց, համալսարան, լեզու:

SUMMARY

Gurgen Vardanyan

PhD in History, Associate professor

Educational Policy in the First Republic of Armenia

At the end of May 1918, the restoration of the Armenian independent statehood marked the beginning of a new era of education. Under hard and difficult conditions Armenian authorities took steps towards the restoration and further development of schools. The previous school network was restored in 1919-20 academic year. Under the rule of national independent statehood the parish and former state schools were nationalized. Steps were taken to introduce free and compulsory education.

Pedagogical trainings were organized to supplement schools with pedagogues. Adopting the decision to recognize the Armenian language as a state language was of crucial importance.

The Government of the Republic of Armenia paid special attention to the organization of higher and secondary vocational educational institutions. The Decision on the establishment of Yerevan State University in May 1919 was a historically important document, which marked the beginning of higher education. Several secondary vocational schools and courses were established with technical, agricultural and other inclinations. Folk universities and literacy courses were organized.

Keywords: Republic, Committee, acts, school, university, language.

1. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 16:
2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 4:
3. Ժողովուրդ, նոյեմբերի 6, 1918, № 28:
4. **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 207:
5. ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 336, թ. 33-37:
6. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 27, թ. 10:
7. ՀԱԱ, ց. 1, գ. 237, թ. 35, 156:
8. Հառաջ, սեպտեմբերի 20, 1919, № 1:
9. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 83:
10. Մարզիկ, հ. 3-4, 1991, էջ 5:
11. ՀՀ պառլամենտի օրենքները (1918 - 1920թթ.), փ. 325, էջ 130-131:
12. Երևանի համալսարան, 1918-1920թթ. (վավեր. ժողովածու), հ. 103, էջ 161-163, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 385:
13. Նույն տեղում, հ. 130, էջ 196:
14. Աշխատավոր, հուլիսի 24, 1919, № 48:
15. Հառաջ, դեկտեմբերի 28, 1919, № 78: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 1, թ. 56:
16. Մեր անվանի դասախոսները, գ. 1, Եր., 1970, էջ 46:
17. Հառաջ, հոկտեմբերի 2, 1919, № 11:
18. Ժողովուրդ, մարտի 5, 1920, № 30:
19. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 161, թ. 272:
20. **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 461:
21. Ժողովուրդ, փետրվարի 27, 1920, № 26:
22. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 166, թ. 200:
23. Աշխատավոր, հուլիսի 24, 1919, № 48:
24. **Կ. Հարությունյան**, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., Եր., 2002, էջ 49:
25. Հառաջ, սեպտեմբերի 9, 1920, № 194:
26. Նույն տեղում, ապրիլի 22, 28, 1920, №№ 81, 86:
27. **Գ. Խաչատրյան**, Հայաստանի սոցիալիստական ինքնիշխանության կազմավորումը և զարգացումը, Եր., 1968, էջ 79:
28. Ժողովուրդ, հունիսի 1, 1919, № 58:
29. Աշխատանք, հուլիսի 1, 1919, № 39:
30. ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 219, թ. 12:

31. Նույն տեղում, գ. 219, թ. 12:
32. Նույն տեղում, թթ. 26-27, 30, 42-43:
33. Հառաջ, հունվարի 9, 1920, № 9:
34. ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 14, թ. 115:
35. Ժողովուրդ, նոյեմբերի 15, 1919, № 128:
36. **Ա. Հակոբյան**, Հայաստանի Հանրապետություն (1918-1920թթ.), էջ 17:
37. Հառաջ, մարտի 23, 1920, № 61:
38. Նույն տեղում, հունիսի 22, 1920, № 129:
39. ՀՀ պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), հ. 748, էջ 326:
40. ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 14, թ. 182:
41. Վավերագրեր հայ եկեղեցու պապմության, գ. Ե, էջ 377:

Մերձավորարևելյան լեզուների և մշակույթի գծով գիտությունների դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՑՐԱԾ, ԲԱՅՑ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԲԱՐՁՐ ՊԱՀԱԾ

Անկախ Հայաստանը ստեղծուեց Յարական Ռուսաստանից հայ ժողովրդին բաժին ընկած նախկին Երեւանի նահանգի մի մասում, ուր պատերազմների, յեղափոխությունների, աղէտների ու թուրքական ոտնձգությունների առաջացրած անեղի ու շփոթի մթնոլորտում բացակայում էին երկրի ղեկավարման ամենատարրական ազգային ենթակառուցվածքը, դրանց մէջ՝ հանրակրթական համակարգը, որ լինէր անկախ, զերծ ռուսական ազդեցութիւնից ու հսկողութիւնից, որ լինէր համապատասխան վերածնունդ ազգային պետականութեան պահանջներին:

Դեռ Հայաստանի անկախութիւնից առաջ, Հայոց Ազգային Խորհրդի լիազօր ներկայացուցիչ Արամը, Երեւան գալով, գործի էր լծել Երեւանի Ազգային Խորհրդին ստանձնելու համար Երեւանի նահանգի ղեկավարութիւնը: Յետագայում, երբ դրութիւնը անելի վատթարացաւ, սպառնացող անմիջական վտանգի տակ, Արամը յայտարարուեց դիքտատոր: Նրա նախաձեռնութեամբ ռազմական, պարենային, գաղթականական, կրթական ոլորտների վարիչներից կազմուեց մի մարմին, որ իրականում Հայաստանի կամ Երեւանի նահանգի կառավարութիւնն էր, ինչը գործեց մինչեւ անկախ Հայաստանի կառավարութեան կազմի Թիֆլիսից Երեւան հասնելը: Կրթութեան ոլորտը վստահուած էր Սիրական Տիգրանեանին՝ որի ղեկավարութեան ներքոյ փորձ էր արում գոնէ նուազագոյնը՝ պահել եղածը, որոշ չափով նորոգել քարուքանդ եղած դպրոցական շէնքերը:

Յովհաննէս Քաջազնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան կազմում չկար կրթութեան նախարարութիւն. այդ ոլորտը ներքին գործերի համակարգում էր, որի ղեկավարութիւնը յանձնուեց Արամին: Կառավարութեան կազմը, զանազան պատճառներով, հազիւ Յովսիսի 17-ին դուրս եկաւ Թիֆլիսից եւ Յովսիսի 19-ին

հասաւ Երեւան: Վրացեանը դիպուկ է ասել. «Հայը ամուր էր նստել Թիֆլիսում»²:

Օգոստոսի 1-ին կայացած Հայաստանի Խորհրդի առաջին նիստում Քաջազնունու ճառի մէջ կարդում ենք՝ «Կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն՝ կատաստրոֆային»³: Քաջազնունին խոստովանում էր, որ նման իրավիճակում լայն ու բազմակողմանի ծրագրեր մշակել հնարաւոր չէ. պէտք է անհրաժեշտը անել՝ երկիրն այս վիճակից դուրս բերելու համար: Նոյն օրը ստացուել էր Օսմանեան կառավարութեան վերջնագիրը՝ նոր հողային պահանջներով: Հասկանալի է, որ նման անձկալի պայմաններում նախասիրութիւնը տրուում էր պարենային, գաղթականական, հաղորդակցական միջոցների վերականգնման եւ կեանքի ու գոյքի ապահովութեան վերաբերող հարցերի լուծմանը: Իսկ դրա համար գործի ու նուիրաբերումի պատրաստ ղեկավարութիւն էր պէտք, ատակ կառավարութիւն, որ մեծ դժուարութիւններից ու երկար բանավեճերից յետոյ միայն Քաջազնունին կարողացաւ այն լրացնել եւ վաւերացման համար ներկայացնել Խորհրդի 1918թ. Նոյեմբերի 6-ի նիստին⁴: Կառավարութեան կազմի մէջ կրթութեան նախարար էր նշանակուած ժողովրդական կուսակցութեան անդամ՝ Միքայէլ Աթաբէկեանը:

Երկրի տնտեսական ու ընկերային նման աննպաստ պայմաններում, անընդմէջ պատերազմական իրավիճակում ու բոլոր սահմաններից սպառնացող վտանգի ներքոյ, ժողովրդավարական գործելաճով, նպատակադրուած էր ապահովել համաշխարհային չափանիշներով աշխարհիկ կրթութիւն եւ եկեղեցի-պետութիւն անջատում: Պիտի կրթուէր ու դաստիարակուէր բազմաշնորհ, առողջ մտքով ու առողջ մարմնով, աշխարհի զարգացման հետ քայլ պահող մարդը եւ լաւ հայ քաղաքացին: Այսպէս, Միքայէլ Աթաբէկեանի օրօք հիմք դրուեց համաշխարհային պարտադիր տարրական աշխարհիկ կրթութեան ընդհանուր դասացուցակի կիրառմանը: Աթաբէկեանը խոստացաւ ուժ տալ տեխնիկական դպրոցներին եւ էջմիածնի Գեորգեան ճեմարանը Երեւան տեղափոխել՝ այն հետզհետէ համալսարանի վերածելու համար: Աթաբէկեանի նախարարութիւնը երկար չտեւեց: Նա էլ ժողովրդական կուսակցութեան պատկանող միւս ղեկավարների պէս չդիմացաւ Երեւանի կենցաղային սոսկալի իրավիճակին եւ Թիֆլիսում թողած գործերը պատրուակ բռնելով՝ մեկնեց Թիֆլիս ու չվերադարձաւ: Նրան փոխարինեց Գեորգ Մելիք-Նարազեօզեանը⁵՝ դարձեալ ժողովրդական կուսակցութիւնից: Մելիք-Նարազեօզեանի ներդրումով կազմուեց եւ 1919թ. Յունուարի 17-ին Խորհրդի նիստում վաւերացուեց «Հանրապե-

տութեան մէջ սահմանուած տօները»: Յատկանշական է, որ այդ փաստաթղթում յատուկ նկատառում կայ մահմեդականների նկատմամբ՝ յարգելով նրանց կրօնական նախասիրութիւններն ու օրէնքները⁶:

«ՅՌ 9-րդ Ընդհանուր ժողովում (1919, Սեպտեմբեր 27 - Հոկտեմբեր 30) էլ, երբ քննարկուում էր կրթադաստիարակչական ծրագրման գործը, կարեւորութեամբ արծարծուեց նաեւ Հայաստանի ցեղային փոքրամասնութիւնների, մանաւանդ՝ մահմեդականների մշակութային ազատութեան խնդիրը՝ օգնելու նրանց ազատագրուելու ֆէոդալական ծանր լծից⁷: Այս ազատական գաղափարների ջատագովները, ինչպէս Ռիչարդ Յովհաննիսեանն է գրում, չէին կարող ենթադրել, որ հենց այս տառապած ճորտերը իրենց ատատէրերին ապափնելով ու նրանց շահերի համար կառավարութեան դէմ պիտի ելնեն⁸:

Ալեքսանդր Բատիստեանի նախարարական կազմում⁹ նշանակուած կրթութեան եւ արուեստի նախարար, վաստակաշատ Նիկոլ Աղբալեանի¹⁰ օրօք մեծ վերելք ապրեց Հայաստանի կրթադաստիարակչական գործը եւ մշակութային կեանքը: Հաւատալով «առողջ մարմնում առողջ ոգի» կարգախօսին՝ Աղբալեանը դպրոցներում մարզանքի պարտադիր դասաժամեր էր հատկացրել եւ Հանրապետութիւնում սկաուտական շարժման սկիզբ էր դրել: Հակառակ տնտեսական ու ֆիզիքական սահմանափակ միջոցների ու պայմանների՝ Երեւան էր հրաւիրել Հունգարացի Ալբերթ Սեզմային՝ առաջնորդելու շարժումը: Վրացեանը յիշում է սկաուտական առաջին տօնախմբութիւնը Ապրիլի 18-ին (1920), որ խանդավառել էր երեւանցիներին: Սկաուտական շարժումը արեւի թափ ու ծաւալ ստացաւ, երբ Հայաստան հրաւիրուեցին Պոլսում հիմնադրուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (ՄԸՄ) փորձառու ղեկավարներից Վահան Չերազը¹¹, Տիգրան Խոյեանը եւ Օննիկ Եազմաճեանը: Սկսել էր գործել Հայաստանի Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Անկախ Հայաստանի կարճատե կեանքում հիմնադրուած կրթամշակութային կառոյցի, ձեռքբերումների եւ դրանց դէմ ծառայած խոչընդոտների մասին թերեւս այսքանը: Ներկայ զեկոյցիս պարունակում կարելորդ այդ բոլորի հիմքում ընկած ուրոյն ազգային քաղաքականութիւնն է, որ սկսեց Հայաստանի հայացումով: Այսպէս օրինակ՝ ռուսերէնով դարձող պետական մեքենան պէտք էր մայրենիի փոխուէր: Աղբալեանը՝ փորձուած մանկավարժ, ինքնատիպ մտատրական եւ կորովի ջատագովը, հայ մշակոյթի եւ նրա պահպանման իր իրայատուկ անհատականութեամբ ու իրագործած կառուցողա-

կան եւ կրթական ծրագրերով ու հետապնդած կրթադաստիարակչական քաղաքականութեամբ անհերքելի եւ տեսական կնիք դրեց Հայաստանի հայացման ու հայ մարդու դաստիարակութեան գործում: Իսկ որպէս Խորհրդարանի անդամ ազդեց նաեւ կառավարութեան ներքին ընդհանուր քաղաքականութեան ուղեգծի ձեւատրման վրայ¹²:

Հայացման քաղաքականութեան մաս էին կազմում վարչական մարմինների լիակատար բարենորոգումը, դրանք ազգայնացնելու ձգտումը, մայրենի լեզուն գործածութեան մէջ դնելը (գործավարութիւնը դատարանում, եւ դատավարութիւնը պէտք է տարուէր պետական լեզուով), լայն հասարակական, քաղաքական խաւերին ազատութիւն տալը եւ ազգային կոլտուրական ինքնավարութիւնը օտարացեղ ժողովուրդներին:

Պարզ է, թէ որքան մեծ ճիգ էր հարկատր ռուսերէնով դարձող պետական մեքենան մայրենիի վերափոխելու համար: Այստեղ էր կրթութեան նախարարութեան մեծ ներդրումը, նաեւ՝ համապատասխան բառապաշար առաջարկելու առումով: Սակայն, պէտք է ասել՝ հեզասահ եւ դիւրին չէր գործընթացը, որովհետեւ կառավարական մեքենան բոլոր նախարարութիւններում դեռ շարունակում էր պահպանել ցարական Ռուսաստանի վարչամեքենայի դրուածքն ու լեզուն՝ ռուսերէնը դարերի վարչական ասանդոյթներով. իսկ վարչական գործերին լծուած փորձառու պաշտօնեաները հայերէն լեզուն չգիտէին: Նոյնիսկ հարց էր հայատառ գրամեքենաների ձեռքբերումը¹³: Այս ամէնից բացի՝ կառավարութիւնը որդեգրել էր պետական հիմնարկութիւնների աստիճանական հայացման ուղին, եւ դա մեծ դժգոհութիւն էր ստեղծել արեւմտահայ մտատրկանութեան շրջանում, որոնք պահանջում էին կտրուկ փոփոխութիւն ու հայերէն լեզուի անմիջապէս պաշտօնականացում: Նոյնիսկ առաջարկում էր կազմել «հայացման կոմիտէ» կտրուկ միջոցներով աշխատելու համար: Կարելի է ասել, որ այս դժգոհութիւններն անարդիւնք չմնացին: Հայացումը արագացաւ: 1919-ի Դեկտեմբերի 26-ի օրէնքով՝ հայերէնը յայտարարուեց պետական լեզու¹⁴:

Կրթական բնագաւառում տարուած աշխատանքները կատարում էին անկարելի պայմաններում: Դպրոցների շէնքերը քարուքանդ էին, շատերը վերածուած էին գաղթականական կայանների: Դրանց վերանորոգման համար շինանիւթ էր պէտք, որ Հայաստանը չուներ: Դասարանների ջեռուցումը բաւարար չէր, եւ ցրտի պատճառով մերթ ընդ մերթ փակուում էին դպրոցները: Դպրոցների կառուցման համար նախարարութիւնը դիմել էր Վրաստանի կառավարութեանը՝ Հայաստան ուղարկելու ցարական իշխանութիւնից

մնացած եւ պահեստներում պահուող դպրոցական գոյքերից մի քանի հազար գրասեղաններ, սեղաններ եւ դպրոցական այլ պարագաներ: Անօգուտ: Բայց «Աղբալեանի լաւատեսութիւնն անխախտ էր, աներերուն»¹⁵: Եւ այդ լաւատեսութիւնն ու ապագայի յոյսը իրենց գերագոյն արտացոլքն են գտնում 1920-ի Յունուարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում», պետական այրերի եւ օտար բարձրաստիճան հիւրերի ներկայութեամբ, նրա բացման ճառում. «Այն ջաւղ, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրաւանդակի վրայ, չի հանգչի երբեք եւ կը լուսաւորի Առաջաւոր Ասիան»: Նա մաղջում էր, որ համալսարանը լինի մատչելի ամէնքի համար. մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժուար, որ ուսումը լինի ծրի, որ գիտութիւնը վարուի գործնական եղանակով, որ Հայաստանում հիմք դրուի համայնական գիտական աշխատանքին»¹⁶:

Ի տարբերութիւն Թիֆլիսի՝ Հայաստանը, կամ այս պարագային Երեւանը, չունէր մշակութային հաստատութիւններ, մշակութային կեանք եւ ստեղծագործութիւններ քաջալերող միջավայր: Ամէն ինչ սկզբից պիտի սկսէր՝ նախ կրթութեան տարածումով եւ մշակոյթի սէրը հասարակ քաղաքացու մէջ սերմանելով: Այսպէս օրինակ՝ այդ գործում երեկոյեան դասընթացները մեծերի համար կարեւոր դեր խաղացին, որտեղ դասաւանդում էին ժամանակի լաւագոյն գիտնականները, գրականութեան ու փիլիսոփայութեան վարպետները՝ Մանուկ Աբեղեան, Երուանդ Ֆրանգեան, Լէօ Սիմոն Վրացեան, Յակոբ Մանանդեան, Վահան Մինախորեան եւ ուրիշներ:

12.000 քվմ նեղ հողատարածքի վրայ հիմնուած եւ 70.000-ի հասած Հայաստանը պիտի լինէր ամբողջ հայութեան հայրենիքը, անելի ճիշդ հայրենիքի կորիզը, ու տարածուէր՝ հետեւելով ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականին: Եւ այդ տեսլականն իր ուղին էր բացել դիւանագիտական, տնտեսական, կրթամշակութային քաղաքականութեան ոլորտներում: 1919 թուականի Մայիսի 28-ին յայտարարուած Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի արքայը¹⁷ անելի ամրապնդեց այդ տեսլականը, որ այլեւս նպատակ էր: Բայց միեւնոյն ժամանակ առիթ դարձաւ արդէն իսկ Հայաստանի անկախութեան դէմ սկզբունքայնօրէն հակադրուած հայ բոլշեւիկների բռուն ընդդիմութեան: Դեռ անելին, հակառակ Դաշնակցութիւն-Ժողովրդական կուսակցութիւն առկայ համաձայնութեան եւ համագործակցութեան, ժողովրդական կուսակցութիւնը Թիֆլիսի իր դեկավարութեան հրամանով սկսեց դիմակայել յայտարարուած արքային՝ դա համարելով հայ ժողովրդի շահերին չհամապատասխանող եւ ի վնաս Հայաստանի միջազգային դիրքին¹⁸: Խորհրդի մէջ տեղի ունեցած սուր բանավէճերից յետոյ, երբ կառավարութիւնը յետ կանգ-

նեց որոշումից, Յունիսի 24-ին ժողովրդական նախարարները, այդ թվում՝ կրթութեան նախարար Մելիք-Ղարաբեգեանը, հրաժարուեցին¹⁹:

Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի յայտարարութիւնը նաեւ մի տեսակ տունդարձի կանչ էր արտասահմանի հային եւ արտասահմանում աքսորեալ հայ մշակոյթի բեկորներին: Նիկոլ Աղբալեանը կոչ էր անում Սփիւքի հայ գաղութներին Հայաստան ուղարկել, տուն ուղարկել Եղեռնը վերապրած հայ մշակոյթի գանձեր, ձեռագրեր, ծիսական իրեր: Եւ Երեւան էին հասնում գիրք, դրամական նուէրներ, կտակ, թանկարժէք նկարչական կտաւներ, իրեր: Սրանք նախապատրաստական աշխատանքներն էին Պետական Թանգարանի: Հայրենասիրութիւնը ծաղկել էր, հայրենիքին սատարելը զգալի աճ էր արձանագրել: 1919-ի Դեկտեմբերի վերջերին Թիֆլիսում կազմուեց Հայ Կուլտուրական Հաստատութիւնների Միութիւն, որ միացնում էր Թիֆլիսում գործող բոլոր միութիւնները: Նպատակն էր Հայաստանի զանազան կառոյցներին համաձայնեցուած աշխատանքով միացեալ օգնութիւն հասցնել, նոյնիսկ եթէ պէտք է տեղափոխուել Հայաստան:

Հայաստանը բոլորին էր, նրանով հանդերձ որ բոլշեւիկները յետին նպատակներով դաշնակների Հայաստան պիտակը կացրին ու պարսաւեցին այն: Իշխանութիւնը գիտակցում էր, որ Հայաստանի ենթակառոյցները զօրացնելու համար պէտք էին մասնագէտներ, արհեստավարժներ, ինչ կուսակցութեան էլ որ պատկանելիս լինէին: Սիմոն Վրացեանը վկայում է, որ 1919-ի տարեվերջին Երեւանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Փամբակ-Լոռիի, Իջեանի եւ Նոր-Բայազէտի ու Զանգեզուրի գաւառներում կար 431 տարրական դպրոց՝ 1000 ուսուցչով եւ 38015 աշակերտով: Միջնակարգ դպրոցների թիւը 30 էր, որոնց մէջ կային 288 ուսուցիչ, 5162 աշակերտ»²⁰:

Փաստօրէն, 1288 ուսուցիչ: Աղբալեանը որտեղից էր ի մի բերել մտաւորականութեան այս հոյլը որ պիտի լրացնէր Հայաստանի կրթական պահանջները: Ծանօթ ենք այն երեւոյթին, որ երբ 1919-ին Վրաստանում հալածանքի էին ենթարկուում բոլշեւիկները, Դաշնակցական ընկերները հովանաւորեցին նրանց, օգնեցին Հայաստան անցնել. իսկ կառավարութիւնը ընդունեց եւ պաշտօններ վստահեց նրանց՝ միայն մի պայմանով. բոլշեւիկեան քարոզչութիւն եւ հակակառավարական գործունէութիւն չծաւալել: Սարգիս Կասեանի, Ասքանազ Մրաւեանի, Սարգիս Խանոյեանի, Դանուշ Շահվերդեանի, Արամայիս Երզնկեանի, Ալիս Նուրիջանեանի եւ դեռ այլոց կեանքը այսպէս փրկուեց: Եկան, ընդունուեցին: Կառավարութիւնը փորձեց երկրի մտաւորական-ուսուցիչ խաւի բացը նրանցով լրացնել: Մէկ օրինակ միայն Հայաստանի պետական արխիւ-

ներից Վլադիմիր Յարուֆինեանի հանած փաստաթղթերի ժողովածուից. Նիկոլ Աղբալեանը Ղարսի շրջանի տարրական դպրոցների տեսչի օգնական, Բոլշեիկ Յովհաննէս Սարուփանեանին նշանակում է Դարալագեազի շրջանի տարրական դպրոցների տեսուչ²¹: Եւ տասնեակ այսպիսի նշանակումներ: Կառավարութիւնը չէր ենթադրում, որ այդ տարրը, իր պաշտօնը շահագործելով, ասպազգային գործունէութեամբ քայլ առ քայլ Հայաստանի անկախութիւնը կործանման պիտի տանի:

Հայ բոլշեիկների հակակառավարական քարոզչութիւնը, տարածուելով զօրքի ու հասարակութեան մէջ, դրողում էր կառավարութեան դէմ ապստամբել, Հայաստան ընդունել Կարմիր Բանակին, որ պիտի գար՝ դաշնակների լծից ազատելու հայ ժողովրդին. իսկ ռուսը Հայաստան պիտի ուղարկէր հաց ու վառելիսիւփ եւ սովից փրկէր տառապող հային: 1920 թուականի Մայիսի 1-ին պայթեց նրանց կազմակերպած լայնատարած ապստամբութիւնը: Կառավարութիւնը իր ամբողջ ուժով փորձում էր դէմ կանգնել ու լռեցնել ապստամբութիւնը: Մայիսի 5-ին ՀՅԴ Բիւրօն որոշում էր ղեկավարութիւնն իր ձեռքն առնել եւ արագ որոշումներ տալու ու գործադրելու համար ժամանակատրուակէս դադարեցնել խորհրդարանի գործունէութիւնը: Բիւրօ-կառավարութեան կազմում Գետրոզ Ղազարեանը ստանձնում է կրթութեան եւ արուեստի նախարարի պաշտօնը:

Սիմոն Վրացեանը վկայում է, որ Մայիսի 10-ին Նիկոլ Աղբալեանը Կարսում էր՝ իրականութիւնը ժողովրդին բացատրելու համար: Նրա արտասանած տպատրոխ ճառը այնպիսի ազդեցութիւն է թողած եղել զօրքի եւ հասարակութեան վրայ, որ նրանք, յաջորդ օրը բոլշեիկների ամրացած վայրը խուժելով, պարտադրել են դադարեցնել ապստամբութիւնը²²: Գաբրիէլ Լազեանը եւս վկայում է, որ Աղբալեանը ինքն էր անձամբ գնացել վտանգուած շրջանները՝ լուսաբանելու համար խաբուած զինուորներին ու գիւղացիներին²³:

Ապստամբութիւնը զսպուեց: Վերջ գտաւ նաեւ բոլշեիկների հանդէպ ցուցաբերուած ծայրաստիճան թողոտութիւնն ու լայնամտութիւնը բոլոր բնագաւառներում: Երուանդ Տրուսեանի կարծիքով, Հայաստանի կրթական գործը այնքան հաստատ հիմքերի վրայ էր արդէն, որ այլեւս պէտք չէր պատահական մարդկանց ուսուցչութիւն վստահել: Նա պնդում էր, որ Հայաստանի քաղաքացուն պիտի կրթի նա, ով հաւատում է Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի գաղափարին: Իսկ հայ բոլշեիկներին կրթական գործ վստահած Նիկոլ Աղբալեանը, խորհրդարանի 1920-ի Յունիսի 5-ի նիստում դատապարտում էր կառավարութեան բարի վերաբերմունքը չարաշահած բոլշեիկներին, հաստատում ու քաջալերում ուժի գործածութիւնը իբրեւ որդեգրուած նոր քաղաքականութիւն²⁴:

1920-ի աշնանը, երբ Հայաստանը, Սիմոն Վրացեանի բնութագրմամբ, սկսեց սեղմուել, «բոլշեիկեան մուրճի եւ թրջական սալի միջեւ», բնականոն կեանքը դադարեց: Երկիրը պատերազմական դրութեան մէջ մտաւ: Ընդհանուր զօրաշարժ յայտարարուեց. բայց Հայաստանի յոգնած զօրքը, տնտեսապէս դեռ կատարեալ գոհացուցիչ մակարդակին հասնելու անհամբերների դժգոհութիւնը եւ բանակի ու բնակչութեան մէջ հայ բոլշեիկների տարած հակապետական գործունէութիւնը իրենց ազգակործան հեռանկարով ճակատագրական սուր տագնապ էին առաջացրել երկրում:

Բոլշեիկ քարոզիչները խրախուսում էին զօրակոչին չանսալ, եւ դիմել Ռուսաստանի օգնութեանը: Եւ դա հաճելի էր բնակչութեան համար, քանի որ գիւղացին իր արտն ու այգին պիտի թողնէր ու բանակ գնար, գիւղատնտեսութիւնը պիտի տուժէր ու հետը բերէր սովի վտանգ: Եւ ընդհանրապէս ժողովուրդը յոգնած էր անդադար կոյիներից Ղարաբաղում, Չանգեզուրում, Նախիջեանում: Բոլշեիկները նոյնիսկ աշխատանք էին տանում Հայաստանաբնակ թուրքերին ու թաթարներին կառավարութեան դէմ հանելու. իսկ բանակում հրահրում էին զինուորներին զէնքերը վար դնել ու չկոտել, քանի որ թուրք զինուորն էլ հայ զինուորի պէս չարքաշ բանուոր կամ գիւղացի է եւ եկել է Հայաստանը դաշնակների ձեռքից ազատելու:

Նման իրավիճակում էլ ինչ կրթական գործ, ինչ մշակույթ: Կառավարութեան ամբողջ կազմը եւ խորհրդարանի անդամներ տարբեր ռազմաճակատներում փորձում էին խրախուսել, քաջալերել, ինքնավստահութիւն ներշնչել: Գետրոզ Ղազարեանը Ալեքսանդրապոլում էր, որը բոլշեիկների ամենից ուժեղ հենակէտն էր: Փոխնախարար Պետրոս Ստոնիկեանն էր կատարում նրա պարտականութիւնները Երեւանում²⁵:

Կարսն ընկած էր, եւ կառավարութիւնը ատամներով էր պահում Ալեքսանդրապոլը, ուր կենտրոնացած էին Մերձատր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցի 20.000 հայ որբեր: Բայց ջլատուած, յուսաբեկուած փոքրաթիւ հայ բանակը ի վիճակի չէր Քիազիմ Կարաբեքիրի կատաղի առաջխաղացումը կասեցնելու: Կարաբեքիրը Ալեքսանդրապոլում էր արդէն: Չարիքը երկու կողմից էր: Ո՞րն ընտրել:

Կայանալիք որոշումը դիւրացնելու եւ Ազգային Թուրքիայի ու Բոլշեիկ Ռուսաստանի հետ բանակցութիւններ վարելու համար, Նոյեմբերի 23-ին Բիւրօ-կառավարութիւնը հրաժարուեց: Սիմոն Վրացեանի կառավարութեան կազմում սոցիալ-լեղափոխական Վահան Մինախորեանը ստանձնել էր Կրթութեան եւ Արուեստի նախարարի պաշտօնը:

Հայաստանը խորհրդայնացաւ: Ազգային շեշտաւածութիւն ունեցող մի շարք կազմակերպութիւններ փակուեցին: Դրանց մէջ էր Հ.Մ.Ը.Մ.-ն եւ նրա ծաւալած սկաւտական շարժումը: Բոլշեիկ ղեկավարների

կարծիքով դրանք «հայրենիքի» յետադիմական գաղափարներ էին ներշնչում, եւ սկաուտական շարժումը անգլիական իմպերիալիստական ձեւերն էր ընդօրինակում: Մի շարք ազգային ծրագրերի շարքում ի դերեւ ելաւ նաեւ Հայաստանի հայացման ու հայոց լեզուի պաշտօնակացման ծրագիրը: Հայաստանի նոր տէրերը հայերէն չգիտէին: Արդէն իմաստ էլ չունէր հայերէնի համար պայքարել. իսկական տէրերը Մոսկուայում հայերէն չէին խօսում: «I ask you Ladies and Gentlemen» ինքնակենսագրական գործում Լեւոն Չաւէն Սիւրմէլեանը պատմում է, թէ ինչպէս ինքն էլ Ցեղասպանութեանից ազատուած որբերի խմբում ապրում էր Հայաստանի խորհրդայնացմանը յաջորդող շփոթ օրերը եւ նոյնիսկ կարողացել է իր հայերէն լեզուի իմացութեան շնորհիւ դրամ վաստակել՝ որպէս քարտուղարի օգնական Ներքին գործերի Կոմիսարիատում աշխատելով, քանի որ «հայ կոմունիստները հայերէն չգիտէին»²⁶:

Հայաստանը կորցրեց անկախութիւնը, իսկ այդ անկախութիւնը կերտած ու սովետներին ժառանգութիւն թողած եւ այդ անկախութիւնը պահելու համար ջանք չխնայած նուիրեալները դուրս նետուեցին ու ապաստան գտան ամէն տեղ, ուր հայկական գաղութ կար՝ Պարսկաստան, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս ու մինչեւ Երոպա եւ Ամերիկա: Նիկոլ Աղբալեան, Լեւոն Շանթ²⁷, Երուանդ Ֆրանգեան, Արտաշէս Չիլիճագարեան (Ռուբէն Դարբինեան), գնդապետ Տիգրան Բաղդասարեան, Համբարձում Տէրտէրեան, Արտաշէս Բաբալեան...: Նրանք իրենց հետ տարան անկոտրում կամք ու եռանդ՝ լծուելու այլեւս մնայուն Սփիւռք դարձած հայ ժողովրդի հայապահպանման գործին: Դարձան ազգային ուրոյն գաղափարախօսութեան անխնայ սերմնացանները: Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը: Անկախութեան գաղափարը մնաց անաւարտ երազ բոլշեւիկների բռնաճշումներից հազիւ ճողոպրած ու սփիւռքացած Հայաստանի երբեմնի ղեկավարութեան համար: Անկախութեան գաղափարը դարձաւ ՀՅԴ սփիւռքեան ազգային մարտավարութեան առանցքը, նպատակակէտը, դարձաւ նաեւ այն հսկայ վիհը, որ բաժանեց խորհրդային Հայաստանն ու Սփիւռքի այն հատուածը, որ Դաշնակցութեանն էր համակրում ու հետեւում: Չէ՞ որ Դաշնակցութիւնը հակադրուած էր Հայաստանի անկախութիւնը կործանող, նրա հողային տարածքը յօշոտող խորհրդային վարչակարգին: 1922թ. Յուլիսի 18-ի Հ.Յ.Դ. Հիւսիսային Ամերիկայի 29-րդ պատգամատրական ժողովը բանաձեւում էր այդ կեցածքը՝ «ժխտել սովետական վարչաձեւի եւ տիրապետութեան գաղափարը. հաստատելով, որ այդ պարզապէս կցում է Ռուսաստանին եւ բացասում է մեր անկախ պետականութեան գաղափարին»²⁸: Եւ այսպէս, որքան շեշտուեցին Սովետական Հայաստանից արձակուած հերիւրանքներն ու բացարձակ թշնամանքը դեռ անկա-

խութիւն երազող Սփիւռքի այդ հատուածի դէմ, այնքան ակտիւ շեշտուեց անկախութեան գաղափարը բարձր պահելու եւ այն սերունդների դաստիարակութեան եւ հայապահպանման քաղաքականութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը՝ տարբեր բնագաւառներում, դրա մէջ նաեւ մշակութային գործունէութեան ոլորտում:

Կարդում ենք. «Այն ատեն, երբ հայ ստեղծագործական միտքը տաժանելի կապանքներով է կաշկանդուած մայր երկրի մէջ եւ օտար, եւ օտարամոլ տէրերու ստրկացնող քմահաճոյքին եւ աղաւաղող բռնութեան է ենթակայ հայ մամուլն ու գրականութիւնը Հայաստանի մէջ.- արտասահման ապաստանած գաղութային հայութեան վրայ է որ կը ծանրանայ պատմական մեծ պարտականութիւն մը ստեղծելու ազատ մտքի ջահեր՝ լուսաւորելու համար թէ մեր անցած ճամբան, թէ մեր մայր ժողովրդի կրծքին իջած ներկայ մղձաւանջը եւ թէ մեր ապագայ ուղիները»²⁹: Ի հարկէ այս գրութեան հեղինակը այդ դերը վերագրում է «Հայրենիք» ամսագիրն, սակայն պարզ է, որ այդ գիծը տարւում էր ամենուրեք՝ Կրթական հաստատութիւններում (ազգային դպրոցների ցանց), այնտեղ ուր հայ համայնք գոյութիւն ունէր: Այդ դպրոցների շարքում, օրինակ, Թաւրիզի Թեմական Դպրոցը, ի շարս Ատրպատականի այլ ազգային դպրոցների: Դպրոցի սաներից, նոյն դպրոցի ուսուցիչ, յետոյ տեսուչ Աշոտ Մուրադխանեանի բառերով, դպրոցը «բարերար ազդեցութիւն է գործել՝ տալով հայրենասէր, գաղափարական, հանրային կեանքին նուիրած, հայկական միջնակարգ լրի կրթութիւն ստացած, հայ մշակոյթին հմուտ ուսուցիչներ, տեսուչներ, լրագրողներ, հանրային ու ազգային աշխատանքներին նուիրած անկաշառ եւ անխարդախ բազմաթիւ գործիչներ»: Հրաչեայ Աճառեանը մէկն էր յետանկախութեան շրջանին այդ հաստատութեան մէջ ուսուցիչ պաշտօն վարողներից, որին հրափրեցին խորհրդային Հայաստան, բայց 1937-ին ձերբակալեցին ու երկու տարուց ակտիւ բանտում տանջահար արեցին:

Սփիւռքեան յետ-անկախութեան թերեւս ամենայայտնի դպրոցը Պէրոյում 1930թ. Մարտին Քանթարի փողոցում 15 աշակերտներով բացուած Համազգային ճեմարանն է: Կարդում ենք. «Ճեմարանի նպատակն էր նորահաս սերունդներուն տալ ընդհանուր կրթութիւն, մանաւանդ հայեցի դաստիարակութիւն, պահել ազգային առողջ ոգին, վառ պահել աշակերտներու սրտերում հայ լեզուի ու մշակոյթի նկատմամբ սէրը, պատրաստել գիտակից հայ մտաւորականներ, նուիրեալ մարդիկ»:

Դպրոցի տնօրինութիւնը ստանձնել էր Լեւոն Շանթը՝ Նիկոլ Աղբալեանի օժանդակութեամբ: Լեւոն Շանթի մահից հետո (1951) տնօրէնի պաշտօնը վարեց Սիմոն Վրացեանը: Դպրոցը նոր ու ընդարձակ վայր էր տեղափոխուել եւ Նշան Փալանճեան անունն էր կրում:

SUMMARY

Rubina Pirumyan (USA)

PhD in Near Eastern Languages and Cultures,
University of California, Los Angeles (UCLA)

Armenian Independence was Lost, But the Idea was Diligently Upheld

Nationalism as an ideology as well as a societal force was at the core of educational and cultural infrastructure launched out during the short-lived independence of Armenia. The primary initiative was the Armenianization of the republic, the absence of which in every domain required beginning anew. The goal was set to establish a secular, national education with international norms in order to educate the Armenian, the good citizen with healthy body, mind and spirit. Nikol Aghbalian, the renowned educator and most revered education minister of the Republic, believed in the old wisdom of *Mens sana in corpore sano*. Physical fitness alongside formal education was promoted through mandatory Physical Education in schools. The initiation of the scout movement served the same purpose.

Armenia was to become the homeland of all Armenians, or rather, the core to expand with the vision of Free, Independent, and United Armenia.

After the Sovietization of Armenia, the devoted souls, those who had created the Free Republic to be bequeathed to the Soviets, were thrown out of the country. With an unyielding determination they dedicated their time and energy to the perpetuation of now permanently diasporized Armenian masses. They became the indefatigable cultivators of national ideology, to raise awareness of the importance of national unity and to strengthen the aspiration for freedom and the faith in the future of the Armenian nation.

Keywords: *Secular education, culture, national policy, Armenianization, Armenian Bolsheviks, Diaspora Armenian strategy, preservation of Armenians.*

Սփիւռքում հիմնադրուած կրթական, մարզամշակութային հաստատութիւններում պիտի դաստիարակուէր հայրենասէր, գաղափարական, հանրային կեանքին նուիրուած, հայ մշակոյթին հմուտ սերունդ՝ պատրաստ իր հոգում վառուած ջաշը՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի պահանջը, որպէս հայ ազգային նոր ոգու գերագոյն խտացում, փոխանցելու յաջորդ սերունդներին: Այս հաստատութիւններից կարեւորագոյնն է «Համազգային»ը, որ իր հիմնադրման 90-ամեակն է տօնում այս տարի:

Հ.Յ. Դաշնակցութիւնը, հայրենիքից քստրուած, այս անգամ լծուել էր սփիւռքեան իր համատարած կազմակերպութեան միջոցով ոչ միայն արթնացնելու, զօրացնելու եւ բիրտեղացնելու *ազգային միութեան գիտակցութիւնը* աշխարհի չորս կողմը սփռուած հայ բեկորների մէջ, այլեւ նրանց մէջ դարբնելու ազատութեան ու անկախութեան *կամքը* եւ *հաւատքը* դէպի հայ ժողովրդի մեծ ապագան³⁰:

Ռիչարդ Յովհաննիսեանը հետեւեալ պարբերութեամբ է վերջացնում *The Republic of Armenia* իր կոթողային աշխատութեան վերջին հատորը:

«Այսպէս, անելի քան կէս հազարամեակ յետոյ ստեղծուած հայոց առաջին անկախ պետութիւնը պատմութեան անցաւ: Բայց նրա թողած աւանդը պարտադրող էր, ու ամբողջ քսաներորդ դարու մինչեւ վերջերը յոյս ու տեսլական շարունակեց ներշնչել, որ մի օր *անկախութիւնն ու գերիշխանութիւնը* կը վերականգնի՝ այս անգամ անելի բազմահնար, զօրեղ ու բարեբախտ Հայաստանի Հանրապետութիւնում»³¹ (ընզգծումը մերն է – Ռ. Փ.):

Այո, Անկախութիւն, Գերիշխանութիւն: Ռիչարդ Յովհաննիսեանը Ամերիկայում, ինչպէս եւ Իրանում, պատկանում ենք այն սերնդին, որ այդ նուիրեալների շնչի տակ դաստիարակուեց ու նրշնչուեց յոյսով եւ տեսլականով: Իր հոգում, որպէս վեհ գաղափար, բարձր պահեց նրանցից ժառանգած Ազատ, Անկախ, ու Միացեալ Հայաստանի այդ յոյսն ու տեսլականը եւ փորձեց ինքն էլ իր հերթին այդ գաղափարով սերունդ դաստիարակել: Դա էր Սփիւրքի հայապահպանման ու քաղաքականացման ուղին:

Բանալի բառեր – *աշխարհիկ կրթութիւն, մշակոյթ, ազգային քաղաքականութիւն, հայացում, հայ բոլշեւիկներ, սփիւռքեան ազգային մարտավարութիւն, հայապահպանում:*

1. Սիրական Տիգրանեանը ասորիները Պեղեղեղուրդի իրաւաբանական ֆակուլտետը: Նախկին Սոցեալ-Դեմոկրատ կուսակցութեան անդամ, յարել է Դաշնակցութեանը: Տիգրանեանը դասաւանդում էր Էջմիածնի Գեորգեան ճեմարանում, իսկ անկախութեան փորհներին պետական կարեւոր պաշտօններ էր ստանձնել: Խորհրդայնացումից յետոյ Տիգրանեանը ապաստանել էր Պարսկաստանում, աւելի ուշ վերադարձել Հայաստան: Նա երկու անգամ ձերբակալուել է որպէս դաշնակցական, բայց ազատ է արձակուել: 1937-ի Դեկտեմբերի 3-ին ձերբակալուել ու մեղադրուել է դաշնակցական կառավարութիւնում պաշտօններ զբաղեցնելու եւ մամուլում հակասովետական յօդուածներով հանդէս գալու համար: Գնդակահարուել է Դեկտեմբերի 5-ին:
2. Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն (երրորդ պաշարութիւն), Թեհրան, 1982, էջ 180: Այսուհետ՝ «Հայաստանի Հանրապետութիւն»:
3. Տե՛ս Յ. Քաջազնունու ճառը, Վ. Ղազարեցեան եւ այլք, Հայաստանի Հանրապետութիւն 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածո», Եր., «Գիտութիւն», 2000), փաստաթուղթ №35, էջ 57-59: Այսուհետ՝ Վ. Ղազարեցեան եւ այլք:
4. Կառավարութեան կազմը տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, փաստաթուղթ №43, էջ 69-70:
5. Գեորգ Մելիք-Ղարաճէօզեանը մինչ այդ եղել էր Արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանեանի օգնականը: Նաեւ անդամակցել էր 1918-ի Բաթումի հայ-թուրքական բանակցութիւնների կապակցութեամբ Գեորգեանի մեկնած հայոց ազգային պատուիրակութեանը: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ նրա անուանը հանդիպում ենք 1921-ի Սեպտեմբերի 15-ին կազմուած Հայաստանի օգնութեան կոմիտէի անդամների ցուցակում: Աւելի տեղեկութիւն դեռ չկայ նրա մասին:
6. Տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, փաստաթուղթ №66, էջ 85:
7. ՀՅԴ 9-րդ ժողովի որոշումներն ու բանաձեւերը տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, փաստաթուղթ №115-121, էջ 127-132:
8. Richard Hovannessian, The Republic of Armenia, Vol. II: From Versaille to London, 1919-1920 (Berkeley, Los Angeles, and London: University of California Press, 1982), էջ 263.
9. «ՀՀ պառլամենտի որոշումը կառավարութեան նախագահի ընտրութեան մասին» (փաստաթուղթ №106) եւ «Հայաստանի պառլամենտի որոշումը կառավարութեան կազմը հաստատելու մասին» (փաստաթուղթ №107), տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, էջ 117:

10. Նիկոլ Աղբալեանը ծնուել է 1873-ին Թիֆլիսի Հալաբարում, երիտասարդ փարիքից ուսուցչական պաշտօններ է վարել: Ինքնաշխատութեամբ լուրջ մտատրականի համբաւի է հասել: 1904թ. անցել է Դաշնակցութեան շարքերը ու մինչեւ վերջ մնացել նրա հասարակիւմ ու նուիրուած անդամը:
 11. Վահան Չերազին Սովետները ձերբակալուել են 1927-ին, Փետրուարեան ապստամբութեանը մասնակցած լինելու համար եւ գնդակահարուել 1928-ի Յունուարի 9-ին:
 12. Անկախ Հայաստանի կեանքում կարեւոր դերակատարութիւն ունեցած եւ ներկայ զեկոյցի մէջ կրկնուած անուն՝ Նիկոլ Աղբալեանի կեանքի ու գործի մասին արժէ անելացնել, որ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ 1921թ. Փետրուարի 9-ին, Աղբալեանը ձերբակալուել է ու բանտարկուել: Փետրուարեան ապստամբութեան օրերին անկախ հանրապետութեան մի շարք ղեկավար ընկերների հետ նա էլ է ազատուել բանտից եւ ստոյգ կացնահարումից: Ապրիլի 2-ին, երբ Կարմիր բանակը Երեւան է մտնում, բազմաթիւ մտատրականների ու մեծ բազմութեան հետ Արաքսն անցնելով Պարսկաստան է ապաստանում եւ այնտեղից սկսում կրթական գործունէութիւնը Սփիւռքում: Մահանում է 1947-ին Պէրոյում՝ թողնելով գրական, կազմակերպչական, կուսակցական ու մշակութային մեծ ասանդ:
- Նիկոլ Աղբալեանի կեանքի ու գործի մասին անլին կարելի է կարդալ նշուած աղբիւրներում. Լազեան, «Դէմքեր հայ ազատագրական պայքարից» (էջ 265-285), Սիմոն Վրացեան, «Անձինք նուիրեալք» (էջ 168-210) եւ «Յուշամարեան» (էջ 489-492): Հայաստանում հրատարակուած ուսումնասիրութիւններից է Անահիպ Պետրոսեանի «Նիկոլ Աղբալեան» աշխատութիւնը (Երեւան, 2005):
13. Տե՛ս Richard Hovannessian, The Republic of Armenia, Vol. I: The First Year, 1918-1919 (Berkeley, Los Angeles, and London: University of California Press, 1971), էջ 146:
 14. «Օրէնք պետական լեզուի մասին», ընդունուած ՀՀ պառլամենտի կողմից, Դեկտեմբեր 26, 1920, տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, փաստաթուղթ №1138, էջ 151:
 15. The Republic of Armenia, Vol. II, էջ 310: Յղում է կատարուած «ՀՀ օրէնքների հաւաքածո»-ին:
 16. «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 362:
 17. ՀՀ կառավարութեան «Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարման աքտը», Մայիսի 28, 1919, տե՛ս Վ. Ղազարեցեան եւ այլք, փաստաթուղթ №90, էջ 106:

18. Մինոն Վրացեանը դա բացատրում է ո՛չ իբրև ժողովրդական կուսակցութեան արեւելում, այլ՝ Փարիզից եկած կարգադրութիւն: Պօղոս Նուպար Փաշայի «Ազգային պարտիրակութիւնը» չէր կարող հանդիմանիլ, որ թէկուզ եթէ երկու կողմերն էլ նոյն նպատակին են ձգտում, բայց «Արարարեան Հայաստանը», ինչպէս իրենք էին անուանում, իրենցից առաջ այդ քայլին դիմի: Ուրեմն՝ պիտի սաքոպածի (նենգադու) ենթարկուէր Երեւանի կառավարութեան այդ որոշումը: Տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 267-275:
19. Յարկանշական է, որ Մելիք-Ղարազտօզեանը նախագահել էր այն յանձնախմբին, որ կազմեց Միացեալ Ազգի եւ Անկախ Հայաստանի յայտարարութիւնը: Ի հարկէ, վարչապետ Ալեքսանդր Խաչիսեանի արտասանած Միացեալ Ազգի եւ Անկախ Հայաստանի աքար, որի փակ ստորագրել էին բոլոր նախարարները, կազմել էին Նիկոլ Աղբալեանը եւ Գեորգ Խաչիսեանը: Մելիք-Ղարազտօզեանը նաեւ Մայիսի 28-ի հանդիսութեան նախագահն էր: Համագործակցութիւնը սահուն էր եղել: Այնուամենայնիւ, անսպով իր կուսակցութեան ղեկավարութեան հրամանին՝ նա հրաժարական ներկայացրեց:
20. «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 353:
21. **Վլադիմիր Յարութիւնեան**, Բոլշեւիկների հակապետական գործունէութիւնը, 1919-1920թթ. (Փաստաթղթերի ժողովածու), Երեւան, «Modus vivendi» հրատ., 2014), էջ 36, հրաման N°80, 29 Սեպտեմբերի, 1919թ.:
22. «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 398:
23. **Գաբրիէլ Լազեան**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն (վերահրատարակութիւն), Մոնթբելլօ, Կալիֆորնիա, 1993, էջ 252:
24. **Stu Richard Hovannisian, The Republic of Armenia, Vol. III: From London to Sévres, February–August 1920, (Berkeley, Los Angeles, and London: University of California Press, 1996), էջ 260-262:** Թարգմանուած է «Յառաջ» թերթի Յունիսի 9-ի համարում հրատարակուած ճառի ընագրից: Խորհրդարանում արտասանած Աղբալեանի ճառից մի հատուած փոխ **Լազեան**, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, էջ 259:
25. **Richard Hovannisian, The Republic of Armenia, Vol. IV: Between Crescent and Sickle, Partition and Sovietization, (Berkeley, Los Angeles, and London: University of California Press, 1996), էջ 200:**
26. **Leon Z. Surmelian, I Ask You ladies and Gentlemen, (New York: American Book-Stratford Press, Inc., 1945).**
27. Մեծանուն արծակագիր Լեւոն Շանթը յեփ-անկախութեան իր գործունէութեան պատկառելի բաժինը նուիրեց սփիւռքահայ սերունդների ազգային դաստիարակութեան գործին: Ազգային գաղափարախօսութեան եւ գործնական մարտավարութեան նրա վերլուծական յօդուածները լոյս են սփռում այդ մարզում նրա որդեգրած փիլիսոփայութեան եւ մօտեցումների վրայ: Տե՛ս «Հայրենիք»-ի առաջին տարուայ երկրորդ համարից երեք թուերով լոյս տեսած Լեւոն Շանթի «Ինչ է ազգութիւնը» յօդուածաշարը (Ա տարի, թիւ 2, 1922 - թիւ 4, 1923):
28. Գէորգ Տօնապետեան, Հ.Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ, Բ. Հատոր (1910-1923), Պոսթօն, 1995, էջ 605:
29. «Հայրենիք» ամսագիր, 1923, Բ. տարի, թիւ 1:
30. «Հայրենիք» ամսագիր, 1925, Դ. տարի, N°1: Տե՛ս Ռուբէն Դարբինեանի գրչին պատկանող խմբագրականը:
31. *The Republic of Armenia, Vol. IV, էջ 408:*

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴՈՎՏՈՐ ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆ՝ ՄՈՌԱՑՎԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՆ

1919թ. աշնանը Երևանի Ալեքսանդրյան գիմնազիայի տեսչի պաշտոնը ստանձնում է ՀՅԴ լավագույն տեսաբաններից մեկը՝ փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը, ում հանձնվում է նաև կառավարության բացաժ տարրական և բարձրագույն դասընթացների ղեկավարությունը: 1920թ. աշնանից Ֆրանգյանը հրավիրվում է Հայաստանի համալսարանի դոցենտի պաշտոնին:

Սակայն մինչ այդ աշխատանքներին անցնելն այս անվանի մտավորականը գիտամանկավարժական հարուստ կենսագրություն ուներ: Փիլիսոփա, հասարակագետ, հասարակական և քաղաքական գործիչ Երվանդ Ֆրանգյանը 20-րդ դարի սկզբին Հայաստանում մեծ տարածում գտած փիլիսոփայական ուղղություններից մեկի՝ երկրորդ պոզիտիվիզմի (մախիզմ, էմպիրիոկրիտիցիզմ) խոշորագույն ներկայացուցիչն էր, ով նշանակալից դեր է կատարել ժամանակաշրջանի գաղափարական ընդհանուր մթնոլորտի, փիլիսոփայական հիմնախնդիրների առաջադրման ու քննարկման գործում և համաշխարհային փիլիսոփայության բազմազան ուղղությունների գաղափարական զինանոցը ծառայեցնելով ազգային շահերի և նպատակների տեսական հիմնավորմանը¹՝ փորձել է իմաստավորել հայ ժողովրդի ազգային կեցությունը, տալ հայ մարդու ազգային նկարագիրը, նախանշել հայ ազգի զարգացման հեռանկարները:

Խորհրդային տարիներին արգելված ու մոռացության մատնված այս հեղինակը ծնվել է 1878թ. փետրվարի 3-ին Սուրմալուի Իզդիր գյուղաքաղաքում՝ աղքատ երկրագործի ընտանիքում: Գյուղի ծխական դպրոցն ավարտելուց հետո նա փորձում է ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն այն ժամանակ հայկական գիտության բարձրագույն տեսարաններից մեկն էր, սակայն այդ փորձը հաջողությամբ չի պսակվում: Այնտեղից նա գալիս է Երևան և ընդունվում թեմական դպրոց՝ տեսուչ Տիգրան Հովհաննիսյանի աջակցությամբ, ով հետագայում մեծ ազդեցություն է ունենում Ֆրանգյանի զարգացման գործում:

1899թ. փայլուն հաջողությամբ ավարտելուց հետո նա մի տարի մնում է նույն դպրոցում՝ որպես թվաբանության ուսուցիչ ու վերակացու, և հաջորդ տարվանից մանկավարժ Տիգրան Ռաշմաճյանի

հրավերով պաշտոն է ստանում Թավրիզի թեմական դպրոցում: Այնտեղ Ֆրանգյանը մնում է մի քանի տարի և կրթական-մշակութային աշխատանքին զուգընթաց մասնակցում հասարակական-քաղաքական կյանքին, Դաշնակցության կազմակերպական-քարոզչական աշխատանքներին, ուսումնասիրում Արարկապականի պարմական անցյալը, նրա տնտեսական, ազգագրական կազմը. ամռան արձակուրդներին այցելում է Մակու, Խոյ, Ուրմիա, Միանդոս և այլ շրջաններ՝ ամենուր ուսումնասիրելով պարսկահայերի տնտեսական, կրթական և ազգային կյանքը, պարսկահայության կյանքի վերաբերյալ ուսումնասիրություններ տպագրելով Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում և այլ պարբերականներում: Այս աշխատանքը նա շարունակում է նաև Սալմաստում (1900-1903թթ.), ուր հրավիրվում է հայկական դպրոցների շրջանային տեսչի պաշտոնով: Այդ բոլոր ուսումնասիրությունների արդյունքն է դառնում արժեքավոր մի գործ՝ «Արարկապական» ստեղծագործությունը (լույս է տեսել Թիֆլիսում 1905թ.), որը պարունակում է Պարսկական Արարկապականի բազմաթիվ ժողովուրդների, մասնավորապես հայերի մասին արժեքավոր փաստեր, տեղեկություններ, վիճակագրական տվյալներ և այլն²:

Դասավանդման ընթացքում հավաքած համեստ գումարի, «Արարկապական» երկի վաճառքից ստացված հասույթի և մի բարերարի աջակցության շնորհիվ նա 1905թ. աշնանը մեկնում է Գերմանիա, ընդունվում Բեռլինի համալսարանի պարմափիլիսոփայական ֆակուլտետը: Ուսումնառությունը կիսապթորոնելով՝ 1909թ. վերադառնում է Անդրկովկաս, աշխատանքի անցնում Երևանի թեմական դպրոցում, սկսում զբաղվել դպրոցական, հանրային ու կուսակցական աշխատանքներով: 1909թ. Երևանում հրատարակում է «Պարմափիլիսոփայություն» երկը և «Միտք» գիտական-փիլիսոփայական ժողովածուն, 1910թ. Թիֆլիսում՝ «Նիցշեի փիլիսոփայությունը», Երևանում՝ «Հոռետեսության փիլիսոփան» ուսումնասիրությունները, 1911թ. Երևանում՝ «Միխայլովսկին՝ որպես փիլիսոփա սոցիոլոգ» գործը: Երևանի թեմական դպրոցում երեք տարի պաշտոնավարելուց հետո՝ 1912թ., վերադառնում է Բեռլին՝ շարունակելու համալսարանական կրթությունը: 1912թ. Բեռլինի համալսարանում Ֆրանգյանը «Միխայլովսկին՝ որպես փիլիսոփա սոցիոլոգ» թեմայով դոկտորական թեզ է պաշտպանում և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև գիրքը թարգմանվում է գերմաներեն և 1913թ. լույս տեսնում Բեռլինում: Աշխատությունն անմիջապես մեծ արձագանք է գտնում՝ արժանանալով ռուս գիտական մտքի ներկայացուցիչների և հարկապես արդի սոցիոլոգիայի մեծագույն տեսաբաններից մեկի՝ Պիտրիի

Սորոկինի ուշադրությանը: 1914թ. «Завемы» ամսագրում տպագրվում է Ֆրանգյանի աշխատության մասին Սորոկինի գրախոսական հոդվածը, որը նույնությամբ վերատպվում է «Նոր հոսանք»-ում³: 1913թ. Ֆրանգյանը Թիֆլիսում տպագրում է «Հունական փիլիսոփայություն» ստեղծագործությունը և հեռանում Բեռլին, ուր մնում է մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Այնուհետև գնում է Բաքու, ուր հրավիրվում է որպես հոգեբանության և պատմության ուսուցիչ իգական գիմնազիայում: Այստեղ նա աշխատում էր և՛ Դաշնակցության շարքերում, և՛ որպես դասախոս, և՛ որպես «Արև» թերթի աշխատակից:

1915թ. գարնանը՝ Վասպուրականի գրավումից հետո, գնում է Վան, ուր կատարում է մի շարք հասարակական աշխատանքներ: Նահանջից հետո նորից գնում է Բաքու և սրանձնում հայկական արական ու իգական դպրոցների տեսչության պաշտոնը: 1917թ. հրատարակում է «Քրիստոսի Միքայելյան» և «Հասարակագիտական էություններ» ուսումնասիրությունները: 1918թ. հրավիրվում է Թեհրանի ազգային Հայկազյան դպրոցի տեսչի պաշտոնին, որը վարում է մեկ տարի: 1919թ. Թեհրանում հրատարակում է «Հայ միտքը. Վանի իմաստասեր Խրիմյան Հայրիկը» գիրքը (երկրորդ մասը լույս է տեսել 1927թ. Կահիրեում): 1919թ. աշնանը արդեն Հայաստանում էր և, մանկավարժական գործունեությունից բացի, մասնակցում էր Հանրային կրթության նախարարության զանազան հանձնաժողովներին⁴, քաղաքային ինքնավարության խորհրդի աշխատանքներին, աշխատակցում էր հայ մամուլին, գործուն դեր կատարում Դաշնակցության կրթական-դաստիարակչական միջոցառումներում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920թ. դեկտեմբերին, Ֆրանգյանը հեռացվում է զբաղեցրած պաշտոններից և կրում այն բոլոր դառնությունները, որոնք բաժին են ընկնում Հայաստանում մնացած մտավորականությանը: Փեփրվարյան հեղաշրջումից հետո նա դառնում է իր կազմակերպած Սուրմալուի Փրկության կոմիտեի նախագահը և մասնակցում ճակատի պաշտպանության գործին: Ապրիլյան նահանջից հետո գնում է Պարսկաստան և 1920թ. սեպտեմբերից սրանձնում Լազվինի հայկական դպրոցի տեսչի պաշտոնը: Երկու տարի անց նույն գործով հրավիրվում է Սուլթանապատ: 1926թ. սեպտեմբերից (ըստ «Դրոշակ» թերթի՝ 1925-ից) սկսած՝ վարում էր Համադանի հայկական դպրոցի տեսչի պաշտոնը:

Ֆրանգյանը մահացել է 1928թ. մարտի 15-ին Համադանում:

1928թ. «Յուսաբեր»-ի մատենաշարում լույս է տեսնում նրա «Հայ հասարակական միտքը» ուսումնասիրությունը՝ Ի. Աբովյանի, Ս. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի և Խրիմյան Հայրիկի մասին: Նրա վերջին տպագրված ստեղծագործություններն են

«Ինչ է պրոգրեսը» հոդվածաշարը «Յուսաբեր»-ում և «Րաֆֆի» հոդվածը «Դրոշակ»-ում: Ֆրանգյանի «Մեր փիլիսոփայական աշխարհայացքը» աշխատությունը լույս է տեսել իր մահից հետո: Անտիպ են մնացել նրա «Փիլիսոփայության պատմություն», «Հնադարի փիլիսոփայության պատմություն» աշխատությունները:

Ֆրանգյանը թողել է գիտական հարուստ ժառանգություն՝ փիլիսոփայության պատմությանը, համաշխարհային և հայ սոցիալական փիլիսոփայությանը, մարդաբանությանը, պատմության փիլիսոփայությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ: Նա աշխատակցել է նաև «Արև», «Գործ», «Հորիզոն» թերթերին, «Դրոշակ», «Նոր հոսանք», «Մուրճ», «Գեղարվեստ» ամսագրերին: Նրա փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա էական ազդեցություն են գործել Սոկրատեսը, Պլատոնը, Ֆիլսոֆեն, Տոլստոյը, Միխայլովսկին, Շոպենհաուերը, Նիցշեն, Մախը, Ավենարիուսը:

Քանի որ XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայոց պետականության ձևավորման քաղաքական նախադրյալների կուտակման ժամանակահատվածն է, և տվյալ դարաշրջանին բնորոշ սեփական հայրենիքում ինքնորոշվելու քաղաքական նպատակի հիմնական կրողները հայ ազգային կուսակցություններն էին, այս առումով ուշագրավ է Ֆրանգյանի դիտարկումն այն մասին, որ հարցերի տեսական լուսաբանումն ու հիմնավորումը նույնքան արժեքավոր և կարևոր են, որքան գործնական կողմը⁵: Ֆրանգյանը ցանկացած քաղաքական կուսակցության համար ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնավորումն այնքան է կարևորում, որքան հստակ գաղափարախոսության մշակումը. «Հասարակական կեանքում հաստատուն, անշեղ ու որոշակի են ընդհանրապես այն հոսանքի քայլերը, որի փիլիսոփայական աշխարհայեցողը, հասարակա-քաղաքական կոնցեպցիան որոշ, պարզ եւ բիրտդացած է: Անորոշ, տարփում եւ երերուն են, ընդհակառակը, այն հոսանքի քայլերը, որի հասարակական-քաղաքական ըմբռնողությունը երերուն, անորոշ եւ բիրտդացած չէ»⁶: Թեև փիլիսոփայությունը միշտ ունեցել է իր առաջնակարգ տեղը երևույթների ու իրերի լուսաբանության մեջ, սակայն հատկապես XX դարում, որը «գերազանցապես փիլիսոփայութեան դար է»⁷, տեղի ունեցող համաշխարհային գործընթացները ցույց են տալիս, որ թե անհատները, թե հասարակական կազմակերպությունները, թե քաղաքական կուսակցություններն աշխատում են հիմնավորել իրենց փիլիսոփայական աշխարհայացքը: «Մշակել այսպիսի մի փիլիսոփայական աշխարհայեցող - ահա գերագոյն խնդիրը ամէն մի մտածողի, ամէն մի դպրոցի եւ հասարակա-քաղաքական կուսակցութեան: Մի դպրոցի, մի կուսակցութեան մասնակի տեսակետները եւ սկզբունքները մի գեղեցիկ ներ-

դաշնակութեամբ եւ տրամաբանական համաձայնութեամբ ծուլուած են այդ համայնապարփակ կօնցեպցիայի մէջ: Ամէն երեսոյք եւ շարժում, անգամ ամէն մի հասարակ դէպք բացատրելիս եւ գնահատելիս՝ մենք ելնում եւ առաջնորդում ենք այդ համայնապարփակ աշխարհայեցողութիւնից: Նա մեր ղեկավարող սկզբունքն է ամէն քայլափոխում»⁸:

Իսկ քանի որ հայ ժողովրդի՝ իր ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղած պայքարը պետական կեցողության փոխակերպելու գործում առանցքային դեր խաղացած կազմակերպություններից մեկը ՀՅԴ-ն էր, Ֆրանգյանն իր նպատակն է համարում ՀՅԴ արժեհամակարգի և գաղափարախոսության տեսական-փիլիսոփայության հիմնավորումը, քանի որ Դաշնակցության գործունեության և ռազմավարության հայեցակարգային սկզբունքներին վերաբերող աշխատությունները, պատմագիտական գրականությունը, փաստագրական նյութը բազմազան են, սակայն խիստ սակավ են կուսակցության փիլիսոփայական հիմքերի տեսական լուսաբանմանը նվիրված արժեքավոր ուսումնասիրությունները: Ընդ որում, Ֆրանգյանի կենսագրության վերաբերյալ պահպանված հիշատակությունները⁹ և տարբեր ամսագրերում նրա հեղինակած հոդվածները ցույց են տալիս, որ դեռևս ուսանողական տարիներից նա իր և իր սերնդակիցների առաքելությունն է համարում Դաշնակցության աշխարհայեցողության վերլուծությունը¹⁰, գաղափարական ակունքների բացահայտումը, հասարակական-քաղաքական դավանանքի և հայ ազգային կեցողության մեջ այս կուսակցության ունեցած դերակատարության ուսումնասիրությունը:

Իր փիլիսոփայությունը Ֆրանգյանն անվանում է համադրական մոնիզմ կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայություն¹¹: Համադրական մոնիզմի փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը: Առաջին հերթին դա վերաբերում է սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությանը: Առանց սուբյեկտի՝ չկա օբյեկտ, և առանց օբյեկտի՝ չկա սուբյեկտ: Դրանցից որևէ մեկի առաջնայնության հարցն անիմաստ է, որովհետև գոյություն ունեն միաժամանակ, ընդ որում, յուրաքանչյուրն իմաստ ու արժեք է ստանում փոխադարձ հարաբերությամբ. «Ենթական (սուբյեկտ) եւ առարկան (օբյեկտ) համարժէք են իբրև փորձի հասար եւ համազօր անդամներ: Այն հարցը, թէ դրանցից որն է առաջնական, եւ որն է որից ծագում, - զուտ բնականական հարց է: Նրանք միաժամանակ տրուած են... իմաստ եւ արժէք են ստանում միայն այդ փոխադարձ յարաբերութեամբ»¹²: Երկրորդ՝ հոգեբանության մեջ միմյանց լրացնում են մարդկային հոգու երեք հիմնական տարրերը՝ մտածողությունը, կամքը և զգացմունքը. «...կամքի, զգացմունքի

եւ իմացականութեան կամ մտքի բիրեղացած պրոցէսներ տեղի չեն ունենում»¹³: Մարդու այդ կարողությունները գործում են միասնական և միաժամանակ, թեև տարբեր պահերի դրանցից մեկը կարող է գերակայություն ունենալ մյուսների նկատմամբ: Երրորդ՝ սոցիալական փիլիսոփայության և պատմության փիլիսոփայության մեջ համադրական մոնիզմը դրսևորվում է որպես պատմական ռեալիզմի տեսություն, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը: Պատմափիլիսոփայական գրականության մեջ սոցիալ-պատմական զարգացման առաջնից ուժեր ու գլխավոր ազդակներ են համարվել կրոնական զգացումը, տնտեսական շահը, ռասաները, ազգամիջյան բախումները, աշխարհագրական դիրքն ու պայմանները, հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, միտքն ու բանականությունը և այլն: Սակայն պատմական ռեալիզմի տեսանկյունից նման մոտեցումները գնահատվում են որպես միակողմանիություններ, որոնց օգնությամբ անհնար է բացատրել հասարակական-պատմական ընթացքի և զարգացման բարդ օրինաչափությունները. «Պատմական պրոցէսի տարրերից մէկը չի ներկայանում իբր պատճառ, միւսը՝ հետեանք, մէկը՝ առաջնական, միւսը՝ երկրորդական, մէկը՝ ակտիվ, միւսը՝ պասիւ: Նրանք համարժէք են եւ գտնուում են մշտական փոխազդեցութեան մէջ»¹⁴: Սակայն պատմական ռեալիզմը չի անտեսում այն փաստը, որ պատմական տարբեր դարաշրջաններում որոշիչ կարող են լինել տարբեր ազդակներ, գործոններ և տարրեր: Ֆրանգյանի կարծիքով՝ այդ տարրերի միջև գոյություն ունեն ոչ թե պատճառահետևանքային, այլ գործառութային հարաբերություններ¹⁵:

Ֆրանգյանի փիլիսոփայության մյուս կարևոր բաղադրիչը ազգային-փիլիսոփայականն է, որը, հանդիսանալով հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի վերլուծություն՝ ազգային ինքնաճանաչման հարցը կապում է հայ ժողովրդի կրավորական կեցվածքի ու ազգային ձախողումների հետևանքով ձևավորված պարտվորական հոգեբանության հաղթահարման, միասնական ազգային ամբողջության ստեղծման խնդիրներին¹⁶: Ֆրանգյանը, ինչպես և 20-րդ դարասկզբի մյուս փիլիսոփաները, հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի ձևավորման վրա ազդող գործոնները բաժանում է երկու խմբի՝ օբյեկտիվ-պատմական և սուբյեկտիվ-հոգեբանական (ներազգային): Օբյեկտիվ-պատմական գործոններից են սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, իսկ սուբյեկտիվ-հոգեբանական գործոնները պայմանավորված են հայ ժողովրդի ազգային առանձնահատկություններով:

Doctor Yervand Frangyan: the Forgotten Philosopher

Doctor of philosophy, eminent Armenian thinker of the beginning of the 20th century Yervand Frangyan (1878-1928) analyzing the ARF's worldview in the context of political goal of self-determination in his own homeland, discovering its ideological origins, public-political beliefs and exploring the role played by this party in the Armenian nationality, turned to one of the most important schools of world philosophy - the second positivism. The principle of mutual addition of ideas underlies Frangyan's Synthetic Monism or critical-realistic philosophy, which is manifested in epistemology, psychology, social philosophy and historical philosophy. Nevertheless, historical realism held a special place in Frangyan's philosophical system, according to which historical process should be viewed in its entirety, realistically assessing the role and place of each element and force involved in that process.

Keywords: *The history of Armenian philosophy, positivism, synthetic monism, national self-consciousness, the principle of mutual addition of ideas, philosophy of history, historical realism, national mentality, national character, national values.*

Օբյեկտիվ-պատմական գործոնների շարքում Ֆրանգյանը մեծ նշանակություն է վերագրում նվաճողների բարբարոսական-բռնապետական վարչակարգերին, որոնց հայ ժողովուրդը դարեր շարունակ ստիպված է եղել հպատակվել ու ենթարկվել, և դա «սերնդէ-սերունդ... իր ատրիչ, թունատորոզ ազդեցութիւնն է դրել հայ ժողովրդի օրգանիզմի վրայ, այլանդակել նրա պատկերը, առաջ բերել այս կամ այն չափի բարոյական այլաստեում»¹⁷, որը Ֆրանգյանը, հետևելով Քրիստափոր Միքայելյանին, անվանում է «պատմական չարիք»: Նրա կարծիքով՝ քանի որ հայի ազգային բնավորության և վարքագծի թերությունները (անմիաբանությունը, պառակտվածությունը, սեփական մշակութային արժեքների նկատմամբ անտարբերությունը, օտարամոլությունը, անհանդուրժողականությունը և այլն) ձևավորվել են դարերի ընթացքում, ապա ժամանակի ընթացքում տիրող պայմանների փոփոխության հետ մեկտեղ երբևէ վերանալու են:

Այսպիսով, 20-րդ դարակազմի հայ ականավոր մտավորական, փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը, սեփական հայրենիքում ինքնորոշվելու քաղաքական նպատակի համատեքստում վերլուծելով ՀՅԴ աշխարհայեցողությունը, բացահայտելով դրա գաղափարական ակունքները, հասարակական-քաղաքական դավանանքը և ուսումնասիրելով հայ ազգային կեցության մեջ այս կուսակցության ունեցած դերակատարությունը, դիմում է համաշխարհային փիլիսոփայության կարևորագույն ուղղություններից մեկին՝ երկրորդ պոզիտիվիզմին: Ֆրանգյանի համադրական մոնիզմի կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը, որը դրսևորվում է իմացաբանության, հոգեբանության, սոցիալական փիլիսոփայության և պատմափիլիսոփայության մեջ: Սակայն Ֆրանգյանի փիլիսոփայական համակարգի մեջ առանձնակի կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես պատմական ռեալիզմը, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը:

Բանալի բառեր - *հայ փիլիսոփայության պատմություն, պոզիտիվիզմ, համադրական մոնիզմ, ազգային ինքնաճանաչողություն, գաղափարների փոխադարձ լրացման սկզբունք, պատմության փիլիսոփայություն, պատմական ռեալիզմ, ազգային հոգեկերպվածք, ազգային նկարագիր, ազգային արժեքներ:*

1. Տե՛ս Ա. Օհանյան, Փիլիսոփայական-մարդաբանական հարցերը XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., 2007, №2, էջ 175-187:
2. Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Օհանյան, Երվանդ Ֆրանգյանի «Ազրոպատական» երկի հայագիտական արժեքը // «Հայաստանի Հանրապետության և Մերձավոր Արտասահմանի տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողով՝ նվիրված Թադևոս Հակոբյանի ծննդյան 100-ամյակին, Եր., 2017, էջ 67-72:
3. Տե՛ս Մ. Сорокин Е. Frangian. N. K. Michajlowsky als Philosoph und Soziologe, eine sozial-philosophische Studie, Berlin, 1913, "Заметки", ЦПБ., 1914, №1, էջ 57-59; Պ. Սորոկին, Քենտադատական Ե. Ֆրանգյանի N. K. Michajlowsky als Philosoph und Soziologe, eine sozial-philosophische Studie, Berlin, 1913, գերմաներեն գրքի մասին «Նոր հոսանք», Թիֆլիս, 1914, №2, էջ 309-311; Ա. Օհանյան, Պիլիսոփա Սորոկինը Երվանդ Ֆրանգյանի մասին // «Բանբեր Երևանի պետական համալսարանի», 2008, №2, էջ 121-127:
4. Տե՛ս A. Ter Minassian 1918-1920 la memoire du siecle. La Republique d'Armenie, Bruxelles, 1989, էջ 184:
5. Տե՛ս Ա. Օհանյան, Երվանդ Ֆրանգյանը փիլիսոփայության էության և նշանակության մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2008, №2, էջ 12-20:
6. Ե. Ֆրանգեան, Փիլիսոփայական նամակներ // «Գործ», Բաքու, 1908, №19, էջ 3:
7. Ե. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը. Իրապաշտ փիլիսոփայություն. Հ.Յ. Դաշնակցության փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնատրաման փորձ, Փարիզ, 1929, էջ 11:
8. Ե. Ֆրանգեան, Փիլիսոփայական նամակներ, №19, էջ 3:
9. Տե՛ս Ա. Հ., Երուանդ Ֆրանգեան // «Դրօշակ», Փարիզ, 1928, №5, էջ 159:
10. Տե՛ս Ե. Ֆրանգեան, Հայ մարքսիստները եւ մենք // «Ուսանող», ժրնեւ, 1911, №6, էջ 57:
11. Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Օհանյան, XX դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի ընթացքի վերլուծություն (Երվանդ Ֆրանգյան, Դավիթ Անանուն), թեկնածուական արեւմտա-տուրքական սեղմագիր, Եր., 2008:
12. Ե. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, էջ 92:

13. Նույն տեղում, էջ 138:

14. Ե. Ֆրանգեան, Հասարակագիտական էություններ. Հ.Յ. Դաշնակցության սօցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնատրաման շուրջը, Բաքու, 1917, էջ 104:
15. Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս С. Оганян, Философ. дела и идеи: Ерванд Франгян о Николае Михайловском // Русская философия истории: материалы Международной научной Школы, Белгород, 2014, էջ 179-185; Ա. Օհանյան, Երվանդ Ֆրանգյանը և պատմության ընթացքի վրա անձի ազդեցության գնահատման հարցը // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր. 2014, №1, էջ 156-167:
16. Տե՛ս Ա. Օհանյան, Հայ ազգային հոգեկերտվածքի վերլուծությունը Երվանդ Ֆրանգյանի «Ազրոպատական» երկում // «Հայոց ինքնության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2015, պրակ 3, էջ 99-112; Ա. Օհանյան, Ազգային նկարագրի հիմնախնդիրները XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ // «Ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը» հոդվածների ժողովածու, Եր., 2016, էջ 136-147:
17. Ե. Ֆրանգեան, Քրիստոսի Միքայելեան. նրա կենսը եւ աշխարհայեցողությունը, Բաքու, 1917, էջ 87-88:

Բովանդակություն

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ 6

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔ 8

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ 12

ՔՆԱՐԻԿ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ
1918-1920 ԹԹ.
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ 14

ՀԱՅԱՐՓԻ ԱՐԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ 24

ՍՈՒՍԱՆՆԱ ՔՐԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 40

ԱԼԻՍԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 50

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

1918-1920 ԹԹ.
ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԴՐԱԴԱՐՁԸ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 57

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
ՁԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆՈՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ.
ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱԻԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 72

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԼԵՁՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ
«Ազգային կարծրացումի»
գաղափարաբանությունը 86

ԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ 94

ՎԱՀԱԳՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏԱԿԵՏՈՒՄ (1991-2018 ԹԹ.) 102

ԳԵՎՈՐԳ ԿԵՍՈՅԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 110

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻՑ՝
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ,
«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ԳՐԱՌՎԱԾ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ 118

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ 132

ՄՈՒՇԵՂ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՌԱԴԻՈՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 148

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԴԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1919թ.) 162

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ ՏԱՐԻՆԵՐԻՆ 170

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՅԱՆՔԸ 180

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՅԱՆ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ 194

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ
(1918-1920 թթ.) 202

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ
«ՆԱԿԸ ԼԵՒԱՆ ՎՐԱ» ՎԵՊՈՒՄ 212

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 232

ՈՌՈՒՐԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՑՐԱԾ,
ՔԱՅՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ
ՔԱՐՁՐ ՊԱՀԱԾ 248

ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ

ԴՈԿՏՈՐ ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆ՝
ՄՈՌԱՅՎԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՆ 264

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՅԻՍ 15-16 / 2018 / ԵՐԵՎԱՆ

© ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2018

Կազմեցին՝ Նարե Միքայելյանը
Մարի Մերտիսանեանը

Խմբագիր՝ Հայարիկի Խաչատրյան

Անգլերեն
տեքստերի
խմբագիր՝ Անուշ Այունց

Էջադրումը
& ձևավորումը՝ Արտակ Բաղդասարյանի



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZGAYIN
ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

www.hamazkayin.com